

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

ԼՐԱԲԵՐ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ВЕСТНИК
ОБЩЕСТВЕННЫХ
НАУК

HERALD
OF SOCIAL SCIENCES

2(659)
ՄԱՅԻՍ-ՕԳՈՍՏՈՍ
МАЙ-АВГУСТ
MAY-AUGUST

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն/Изд. «Гитутюн» НАН РА/“Gitutyun” Press NAS RA
ԵՐԵՎԱՆ/ЕРЕВАН/YEREVAN 2020

**ՔԱՌԱՄՍՅԱ ՀԱՆԴԵՍ, ԼՈՒՅՍ Է ՏԵՄԵՆՈՒՄ 1940 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻՑ
ЖУРНАЛ ВЫХОДИТ 3 РАЗА В ГОД, ИЗДАЕТСЯ С НОЯБРЯ 1940 ГОДА
JOURNAL IS PUBLISHED 3 TIMES IN A YEAR, SINCE NOVEMBER 1940**

Գլխավոր խմբագիր՝ **ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ**
Խմբագրի տեղակալ՝ **ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ**
Պատասխանատու քարտուղար՝ **ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Խմբագրական խորհուրդ

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ, ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ, ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ, ՎԱՐԴԱՆ
ԴԵՎՐԻԿՅԱՆ, ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ, ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ, ՌՈՒԲԵՆ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՎԱՉԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ,
ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ, ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ,
ԳԵՎՈՐԳ ՊՐՈՍՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ, ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ

Главный редактор – **ПАВЕЛ АВЕТИСЯН**
Заместитель редактора – **АРСЕН БОБОХЯН**
Ответственный секретарь – **ГАЯНЭ АРУТЮНЯН**

Редакционная коллегия

ԱՐՇՐԱՆ ԱՅԱԿՅԱՆ, ԱՐԱՐԱՏ ԱԳԱՅԱՆ, ՎԼԱԴԻՄԻՐ ԱՐՄԵՆՅԱՆ, ԳԱՄԼԵՏ
ԴԵՎՐԻԿՅԱՆ, ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ, ԳԱԳԻԿ ԿԱՅԻՆՅԱՆ, ՐԱՍԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՎԻԿՏՈՐ
ԿԱՏՎԱԼՅԱՆ, ԱՇՈՏ ՄԵԼԿՈՆՅԱՆ, ՎԱՇԵ ՕՎԱԿԻՄՅԱՆ, ՆԻԿՈԼԱՅ ՕԳԱՆԵՅԱՆ,
ԴԵՎՐԻԿ ՍՈՎՈՍՅԱՆ, ՐԱՍԵՆ ՏԱՖՐԱՏՅԱՆ, ՅՐԻԻ ՏՍՎԱՐՅԱՆ, ԱԼԲԵՐՏ ԽԱՐԱՏՅԱՆ

Editor-in-chief **PAVEL AVETISYAN**
Vice-editor **ARSEN BOBOKHYAN**
Responsible secretary **GAYANE HARUTYUNYAN**

Editorial Board

ԱՐԱՐԱՏ ԱԳԱՅԱՆ, ԱՐՏՐԱՆ ԱՎԱԳՅԱՆ, ԳԱՄԼԵՏ ԴԵՎՐԻԿՅԱՆ, ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ,
ԱԼԲԵՐՏ ԽԱՐԱՏՅԱՆ, ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ, ՐԱՍԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՎԼԱԴԻՄԻՐ
ԽԱՐԱՏՅԱՆ, ՎԱՇԵ ՕՎԱԿԻՄՅԱՆ, ՆԻԿՈԼԱՅ ՕՎԱՆՆԻՍՅԱՆ, ԳԱԳԻԿ ԿԱՅԻՆՅԱՆ,
ԱՇՈՏ ՄԵԼԿՈՆՅԱՆ, ԴԵՎՐԻԿ ՍՈՎՈՍՅԱՆ, ՐԱՍԵՆ ՏԱՖՐԱՏՅԱՆ, ՅՐԻԻ ՏՍՎԱՐՅԱՆ

© Հրաբեր հասարակական գիտությունների
© Вестник общественных наук
© Herald of Social Sciences

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ալբերտ Խառառյան – Դավիթ-Դանիելյան ներհակությունը Կոստանդնուպոլսում և Ջմյուռնիայում.....	9
Մհեր Հարությունյան – Արցախի պաշտպանության հարավային թևում 1993 թ. ամառային ռազմարշավի մարտավարական առանձնա- հատկությունների մասին.....	25
Վանիկ Վիրաբյան – Հայաստանի և Վրաստանի զինված ուժերը 1918-1921 թթ.	47
Վարդան Ալեքսանյան – Սյունյաց աթոռի մետրոպոլիտական աստիճանի վերահաստատումը XI դարում.....	69
Սարգիս Բալդարյան – Վաճառականական էթիկան ու խորհուրդները Կոստանդ. Զուլայեցու «Աշխարհաժողով» ձեռնարկում.....	89

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Ամալյա Հարությունյան – Իրավագիտակցությունը և իրավահարա- բերությունների սահմանադրականացման հիմունքները.....	107
--	-----

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

Հարություն Վերմիշյան, Վահան Ենգիդունյան – Սոցիալական կարգի քվադրաքսիոմատացման հարցի մասին.....	120
--	-----

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Յուրի Սուվարյան, Վարդան Սարգսյան – Կառավարչական որոշումների տեսության հարցերի շուրջ.....	130
--	-----

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Արմեն Պետրոսյան – Մասիս/Արարատը՝ հայոց Օլիմպոս և նրա առասպելները.....	158
Տորք Դալալյան – Հովհան Օձնեցու վիպական կերպարի համեմատական քննություն.....	179
Գոհար Կարազյուզյան – «Խավարի երկիր» մոտիվը Հեթում Պատմիչի «Ծաղիկ պատմությանց Արեւելից աշխարհի» երկասիրության մեջ.....	197

Հասմիկ Բաղդասարյան – Արդի թարգմանաբանության զարգացման որոշ միտումների շուրջ.....	208
Նաիրա Համբարձումյան – Միֆի և նշանի փոխներթափանցումները Ակսել Բակունցի «Մթնածոր» ժողովածուում.....	221
Մարատ Յավրումյան, Աննա Դանիելյան – Համընդհանուր կախվածություններ և հայերենի ծառադարանը.....	231

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հռիփսիմե Պիկիյան – Հայ երաժիշտների համբարությունների ներթնիկ և միջթնիկ հարաբերություններն ավանդական մշակույթում.....	245
---	-----

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Լուսինե Սահակյան – Կուրսանտների մասնագիտական կողմնորոշման դրդապատճառների հետազոտումը.....	262
--	-----

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արսեն Հարությունյան – Վաղխաչքարային արվեստի եզակի նմուշ Ճամբարակից.....	272
--	-----

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Վարդան Համբարձումյան – Երիտասարդաց քրիստոնեական ընկերակցության աշխատակից Ս.Ֆ.Հ. Քրաթերնի հաշվետվությունը Հայաստանի Հանրապետություն կատարած այցելության մասին (1920 թ.).....	285
--	-----

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արմինե Հակոբյան – <i>Գագիկ Սուքիասյան</i> , Գիրքը և գրադարանային տեղեկատվական մշակույթը Արցախում.....	294
Արթուր Անդրանիկյան – <i>Գևորգ Կարապետյան</i> , Երկերի ժողովածու....	297

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ

Ռադիկ Մարտիրոսյան, Յուրի Սուվարյան, Ռուբեն Սաֆրաստյան – Նիկոլայ Հովհաննիսյան. ականավոր գիտնականը և հասարակական գործիչը.....	300
Համլետ Հարությունյան – Հայրենական մեծ պատերազմի անխոնջ տարեգիրը (Կլիմենտ Հարությունյանի 80-ամյակի առթիվ).....	308

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ И ПОЛИТОЛОГИЯ

Альберт Харатян – Противостояние Давид-Даниэль в Смирне и Костантинополе	9
Мгер Арутюнян – О тактических особенностях летней кампании 1993 г. на южном фланге обороны Арцаха.....	25
Ваник Вирабян – Вооруженные силы Армении и Грузии в 1918-1921 гг. ...	47
Вардан Алексанян – Восстановление митрополитского статуса сюникского престола в XI веке.....	69
Саркис Балдарян – Коммерческая этика и советы в «Компендиуме» – пособия Константа Джугаеци.....	89

ФИЛОСОФИЯ И ПРАВО

Амалия Арутюнян – Правосознание и основы конституционализации правовых отношений.....	107
--	-----

СОЦИОЛОГИЯ

Арутюн Вермишян, Ваан Енгидунян – О вопросе квазиаксиоматизации социального порядка	120
--	-----

ЭКОНОМИКА

Юрий Суварян, Вардан Саркисян – К вопросам о теории управленческих решений.....	130
--	-----

ФИЛОЛОГИЯ

Армен Петросян – Масис/Арагат – армянский Олимп и его мифы.....	158
Торк Далалян – Сравнительный анализ эпического образа Ована Одзнеци..	179
Гоар Карагезян – Мотив «Страна мрака» в «Цветнике историй стран Востока» историка Хетума.....	197
Асмик Багдасарян – О некоторых тенденциях развития современного переводоведения.....	208
Наира Амбарцумян – Взаимопроникновение мифа и знака в сборнике Акселя Бакунца «Мтнадзор».....	221

Марат Яврумян, Анна Даниелян – Универсальные зависимости и трибанк армянского языка.....	231
---	-----

КУЛЬТУРА И ИСКУССТВОВЕДЕНИЕ

Рипсима Пикичян – Внутриэтнические и межэтнические отношения амкарств (братств) армянских музыкантов в традиционной культуре...	245
--	-----

ПСИХОЛОГИЯ

Лусине Саакян – Исследование мотивов профессиональной ориентации курсантов.....	262
--	-----

АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ

Арсен Арутюнян – Уникальный образец раннего периода искусства хачкара из Чамбарака.....	272
--	-----

ПУБЛИКАЦИИ

Вардан Амбарцумян – Отчет сотрудника Ассоциации молодых христиан С.Ф.Г. Кратерна о визите в Республику Армения (1920 г.).....	285
--	-----

РЕЦЕНЗИИ

Армине Акопян – <i>Гагик Сукиасян</i> , Книга и библиотечно-информационная культура в Арцахе.....	294
Артур Андраникян – <i>Геворг Карапетян</i> , Собрание сочинений.....	297

НАШИ ЮБИЛЯРЫ

Радик Мартиросян, Юрий Суварян, Рубен Сафрастян – Николай Ованнисян: выдающийся ученый и общественный деятель.....	300
Гамлет Арутюнян – Неутомимый летописец Великой Отечественной войны (к 80-летию Климента Арутюняна).....	308

CONTENTS

HISTORY AND POLITICAL SCIENCE

Albert Kharatyan – The Controversy Between Davit and Daniel in Smyrna and Constantinople.....	9
Mher Harutyunyan – On the Tactical Features of 1993 Summer Campaign of Artsakh Defense on the Southern Flank.....	25
Vanik Virabyan – Armed Forces of Armenia and Georgia in 1918-1921.....	47
Vardan Alexanyan – Restoration of the Metropolitan Status of the Syunik Throne of the XI Century.....	69
Sargis Baldaryan – Mercantile Ethics and Advices in "Compendium", a Manual by Constant of Julfa.....	89

PHILOSOPHY AND LAW

Amalya Harutyunyan – Legal Consciousness and the Basics of Constitutionalization of Legal Relations.....	107
---	-----

SOCIOLOGY

Harutyun Vermishyan, Vahan Yengidunyan – On the Issue of Quasi – Axiomatization of the Social Order.....	120
---	-----

ECONOMY

Yuri Suvaryan, Vardan Sargsyan – Around the Issues of Administrative Decisions Theory.....	130
---	-----

PHILOLOGY

Armen Petrosyan – Masis/Ararat: The Armenian Olympus and its Myths.....	158
Tork Dalalyan – Comparative Analysis of the Epic Image of Hovhan Odznetsi.	179
Gohar Karagyozyan – The Motiv of “The Land of Darkness” in “The Flower of the Stories of the Orient” by the Historian Hetoum.....	197
Hasmik Baghdasaryan – On some Tendencies in Development of Contemporary Translation Studies.....	208
Naira Hambardzumyan – Interpenetration of Myth and Sign in Axel Bakunts’ “Mtnadzor” Collection.....	221

Marat Yavrumyan, Anna Danielyan – Universal Dependencies and the Armenian Treebank.....	231
--	-----

CULTURE AND ART HISTORY

Hripsime Pikichian – Intra- and Inter-Ethnic Relationships between Armenian Musicians Amkarebi (Guild) in Traditional Culture.....	245
---	-----

PSYCHOLOGY

Lusine Sahakyan – Research towards Motives of Cadets' Professional Orientation.....	262
--	-----

ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Arsen Harutyunyan – A Unique Example of Early Cross-Stone Art from Chambarak.....	272
--	-----

PUBLICATIONS

Vardan Hambardsumyan – Employee of the Christian Youth Association S.F.H. Cratern's Report on the Visit to the Republic of Armenia (1920).....	285
---	-----

LITERARY REVIEWS

Armine Hakobyan – <i>Gagik Sukiasyan</i> , The Book and Library-Informational Culture in Artsakh.....	294
Arthur Andranikyan – <i>Gevorg Karapetyan</i> , Collection of Works.....	297

OUR JUBILEES

Radik Martirosyan, Yuri Suvaryan, Ruben Safrastyan – Nikolay Hovhannisyan: The Prominent Scientist and Public Figure.....	300
Hamlet Harutyunyan – Tireless Researcher of the Great Patriotic War (On the Occasion of Kliment Harutyunyan's 80th Birthday).....	308

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԴԱՎԻԹ-ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆԵՐՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԶՄՅՈՒՌՆԻԱՅՈՒՄ ԵՎ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ

Ալբերտ Խառատյան

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4
Էլ. հասցե՝ info@haygithimnadram.am
Հոդվածը ներկայացվել է 22.06.2020, գրախոսվել է 22.06.2020,
ընդունվել է տպագրության 05.08.2020

Ներածություն

Թանգիմաթի շրջանում և դրանից դեռ շատ առաջ, կազմակերպական ձևերի որոշակի տարբերությամբ հանդերձ, զմյուռնահայ համայնքի ազգային վարչությունը գլխավորապես կարգավորում էր գույքային-սեփականատիրական խնդիրները, դրամական հատկացումների բնագավառը՝ հիվանդանոցի ու վարժարանների նյութական ապահովման գործառույթները և մինչև XIX դ. 60-ական թթ.՝ նշված ավանդական կառույցների միջոցով: Եկեղեցական-համայնքային նյութական միջոցների վերահսկողության և իրացման գործը կատարում էին աշխարհիկ երևելիները կամ «իշխանները»՝ որպես կանոն, մեծահարուստ վաճառականներ, ինչպես և առաջնորդը և այլ՝ հանրությանը վստահություն ներշնչող մարդիկ: Սակայն այս, թվում է՝ ժամանակի քննության բոլոր անցած և հուսալիորեն գործող կարգուկանոնը կարող էր և անխուսափելիորեն շեղվել իր ընթացքից՝ համայնքի գործերում անհատների կամ վերնախավային խմբերի մրցակցության, առաջացած տարաձայնությունների, առաջնորդի և հանրության միջև առաջացող հակասությունների (հիմնականում հարկերի չափերը սահմանելու, ազգային դրամարկդի միջոցները տնօրինելու դեպքերում), և վերջապես, ընչաքաղցության ու սնափառության պոռթկումների պատճառով, որոնցից ապահովագրված չէ և ոչ մի հանրություն: Տարաձայնությունների տեղիք էին տալիս ոչ միայն սովորաբար մեծ ծախսեր պահանջող՝ եկեղեցու նորոգման կամ եկեղեցաշինության դեպքերը, այլև հանրային շինությունների կառուցմանն առնչվող հանգանակությունները: Այդպիսիք էին նաև նվիրականական տուրքերի և հարկերի գանձման գործընթացները, երբ նվիրակ-առաջնորդները Էջմիածնին հաճոյանալու կամ

սեփական նախասիրությունները գերադասելու տենչով գերազանցում էին գանձումների ողջամիտ չափերը և այլն, որոնցից, ի դեպ, նվիրակ-առաջնորդներին քանիցս սթափվելու կոչեր էին անում իրենք՝ Էջմիածնի կաթողիկոսները:

Երկպառակություններ զմյուռնահայ համայնքում

1775 թվականից արդեն ունենք եկեղեցու կառուցման առթիվ զմյուռնահայ համայնքում ծայր առած երկպառակությունների օրինակը, երբ բորբոքված կողմերին սթափեցնող կոնդակ ուղղեց Կ. Պոլսի Զաքարիա պատրիարքը. «Բայց այն գործ եկեղեցաշինութեան,- գրում է նա, - ոչ ի գլուխ ելանէ վարկպարագի գործադրութեամբ եւ անխոհեմ արարողութեամբ եւ կողմնական շարժողութեամբ, այլ նախապէս պատուէրս լիցի ձեզ ամենեցուն՝ թէ քահանայիցդ, թէ իշխանացդ եւ թէ գլխաւոր անձանցդ, որք ի միջի ձերումն, գլոյն խաղաղութեան ...պարտիք հաստատապէս պահելով միաբանութիւն անել...»¹:

Նկատի ունենանք, որ 1775 թ. Ջնյունիայում եկեղեցի չի կառուցվել, ուրեմն պատրիարքը աչքի առաջ կարող էր ունենալ կամ Ս. Ստեփանոս եկեղեցու նորոգումը, կամ էլ թեմի բնակավայրերից մեկում եկեղեցաշինական որևէ ձեռնարկ (նորոգում կամ կառուցում), որ տևական երկպառակություններ էր առաջացրել համայնքում, հակառակ դեպքում, դրան չէր միջամտի պատրիարքը խաղաղության հորդորով:

1790-ականի երկրորդ կեսին զմյուռնահայ համայնքում նոր, ոչ պակաս սուր ընդհարումների տեղիք տվեց Մանիսայի Վերին թաղի Ս. Լուսավորիչ եկեղեցու շինության գործը, որ պետք է իրականացվեր եկեղեցապատկան միջոցներով: Եկեղեցու կառուցման ֆերմանի հատուցումը՝ 3950 ղուրուշի չափով, նախապես վճարել էր համայնքի երևելիներից մեկը՝ Մարգար Ապրոյանը, թերևս, այս գումարն ազգային արկղից հետ ստանալու պայմանով: Ազգի ջոջերի մի մասն ընդդիմացել էր այս պարտքը վերադարձնելուն և, ինչպես գրում էր հետագայում Դավիթ կաթողիկոսն իր համախոհներին, Մարգարի կողմից ֆերմանի համար տրված գումարից նրանք անտեղյակ են եղել: Կնշանակի, ըստ նրա, Մարգարը գործել էր իր սեփական նախաձեռնությամբ և համայնքը կանգնեցրել կատարված

¹ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, 6/77:

փաստի առջև²: Ինչպես երևում է զմյուռնացիներին ուղղված՝ նույն Զաքարիա պատրիարքի կոնդակից (1796, 4 օգոստոսի) Մարգարի և նրա հակառակորդների վեճը լուծելու գործը օսմանյան իշխանությունները հանձնարարել էին Կ. Պոլսի պատրիարքարանին, որտեղ էլ կողմերի ներկայացուցիչների և «ալթը ջեմաաթ»-ի (վեց թաղ, այդպես էր կոչվում պոլսահայ համայնքը պաշտոնական գրագրություններում) տասնհինգ ամիրաների մասնակցությամբ քննվել էր գործը: Իրավարար այդ ժողովը հաստատել էր Մարգարի ծախսերի հիմնավորվածությունը և չափը, «վասն այնորիկ ևս վճռեցան բազմութեամբ ի դատաստանի ի յատենի ներկայութեան մերոյ զի եկեղեցին վճարեսցէ եւ հատուցէ զնոյն ֆերմանից մասրաֆն (ծախսը - Ա.Խ.) պրն Մարգարին»³:

Ուշագրավն այստեղ այն է, որ պատրիարքը չէր թաքցնում իր և իրավարարների ակնածանքը Ապրոյանների տոհմիկ գերդաստանը ներկայացնող Մարգարի նկատմամբ և սաստում էր նրա հակառակորդ «մեծամեծ ոմանց եղեալ հատկացեալ անձանց», որ հաշտվեն դատարանի վճռին և այլևս չբողոքեն՝ վկայակոչելով սուլթանի և մեծ վեզիրի գթասրտությունը, հակառակ դեպքում նրանք կարող էին խիստ պատիժներ տալ բողոքող կողմին: Պատրիարքը կոչ էր անում հաշվի առնել այն, որ «լուսահոգի նախնիք սորին (Ապրոյան տոհմը - Ա.Խ.) ի բնէ անտի աշխատաւորք են յոյժ ի վերայ ազգին մերոյ»⁴: Հարկ է նկատել նաև, որ զմյուռնացիների վեճի ամբողջ ընթացքում Մարգար Ապրոյանին պաշտպանում էր Զմյուռնիայի առաջնորդ արք. Դանիելը, որի դեմ պետք է տրամադրվեին նույն Ապրոյանի հակառակորդները:

² Դիան հայոց պատմութեան 1909, 393:

³ ՄՄ, Կաթողիկոսական դիվան 6/89: Պահպանվել է պատրիարքի նույն բովանդակությամբ կոնդակը, որտեղ նա զմյուռնացիներին զգուշացնում էր վեճը շարունակելու տխուր հետևանքներից, որ դրանով կտապալվի առհասարակ եկեղեցու շինության գործը (ՄՄ, Կաթողիկոսական դիվան 6/71):

⁴ ՄՄ, Կաթողիկոսական դիվան 6/71: Ղուկաս կաթողիկոսը խոհեմաբար գերադասում էր հանրային խաղաղությունը, որին ուղղված էին նաև պատրիարք Զաքարիայի ջանքերը, ուստի չեզոքություն պահպանելով հակառակորդ կողմերի նկատմամբ՝ ողջունեց նրա հաշտարար գործողությունները. «Եւ թեպէտ ցաւ է մեզ զարհամարհութիւնն կրելով տարագրելն... սակայն զի նազելի եղբայրդ (պատրիարքը - Ա.Խ.) ընդ բազմախորհուրդ օրհնեալ իշխանապետացն՝ իրաւասիրաբար քննութիւն առնելով իրաց նոցա զաղմկալիր վէճն հատեալ եք՝ զերծուցանելով յայլ եւ յայլ մեծամեծ վնասուց եւ վերջապէս հաշտութիւն արկեալ ի մէջ խռովելոցն, այնու դիրութիւն եղել սրտի մերում եւ շնորհակալ եղաք զձէնց», - գրում է նա (Դիան հայոց պատմութեան 1899, 744):

Ինչպես երևում է հետագա իրադարձություններից, Մարգար Ապրո-
յանի ընդդիմախոսները շարունակել են պայքարը մինչև 1799 թ., երբ
Կ. Պոլսում պատրիարքական աթոռն արդեն զբաղեցնում էր Դանիել
Սուրմառեցին՝ վերոհիշյալ վեճի ծավալման ժամանակ Ջմյուռնիայի առաջ-
նորդը։ Երևում է նաև, որ Մարգարը, իր հերթին, չի բավարարվել հակա-
ռակորդների հատուցման չափերից, որովհետև այս անգամ Մանիսայի
համայնքից պահանջել է 1000 ղուրուշ՝ եկեղեցու կառուցման դիմաց իր
ծախսած գումարի դիմաց։ Ջմյուռնիայի նոր առաջնորդ արք. Մարտիրոսը,
որը 1797 թ. փոխարինել էր Դանիելին, փորձել էր խանգարել այդ հատուց-
մանը, սակայն ապարդյուն այս վեճը ձգձգվեց մինչև Կ. Պոլսի պատրիարք
Գրիգոր Խամսեցու միջամտությունը, որի հրամանով գումարը վերադարձ-
վեց Մարգարին՝ հակառակ առաջնորդի և նրա կողմնակից երևելիների,
ինչի մասին տեղյակ էր պահում արք. Մարտիրոսը Դավիթ կաթողիկոսին՝
1802 թ. դեկտեմբերին⁵։ Այս արդեն վերաբերում է Դավիթ-Դանիելյան
տխրահոշակ հակամարտությանը, որի արձագանքները Ջմյուռնիայում ևս
երկար ժամանակ իրենց զգացնել տվեցին։

Ներհակության ընթացքն ու բնութագիրը

Դավիթ-Դանիելյան ներհակությունը հայ-եկեղեցու նոր շրջանի
պատմության ոչ փայլուն էջերից մեկն է, որ ցուցանում է հայ հոգևոր վեր-
նախավի մի մասի ապշեցուցիչ սնափառությունը, պաշտոնամոլությունն ու
իշխելու տենչը և դրանք բավարարելուն ուղղված՝ նսեմ գործելակերպով
հարուստ զինանոցը։ Դա մի պայքար էր երկու բարձրակարգ եկեղեցա-
կանների միջև, որ հիշեցնում էր XVII դ. Կ. Պոլսի պատրիարքական կոնվ-
ների տխուր ժամանակաշրջանը, որի ծանր հետևանքները երկար ժամա-
նակ կրեցին և՛ ժողովուրդը, և՛ նրան հովվող եկեղեցին։ Կաթողիկոսական
աթոռին տիրանալու համար, որի ընթացքում առավել ևս ընդգծվում էին
Դավթի բացասական հատկանիշները, արդեն կաթողիկոս ընտրված Դա-
նիելի դեմ ունեցվածություններն ու դավերը հակառակորդի օրինական իրա-
վունքները ոտնակոխ անելու միջոցով՝ կաթողիկոսական բաղձալի աթո-
ռին տիրելու համար։ Հարցի նախապատմությունը, առավել ևս դրա ծալքե-
րի ու հանգամանքների մանրամասները վերհանված են սկզբնաղբյուրի
արժեք ունեցող՝ Մանվել Կյումուշխանեցի վարդապետի հայտնի շարա-

⁵ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, 13/264:

դրանքում և դիպուկ բնութագրերով առավել քան աչքի ընկնող՝ Մ. Օրմանյանի աշխատության ծավալուն էջերում⁶: 1801-1807 թթ. երկարուձիգ հակամարտությունն ավարտվեց Դավիթ կաթողիկոսի գահագրկմամբ և Դանիելի՝ կաթողիկոսական աթոռին վերահաստատվելու ուշացած, բայց արդարացի ելքով: Նշված հակամարտության մեջ հասկանալի պատճառներով, սակայն և մեր ուսումնասիրության շրջանակի տրամաբանությամբ, շատ ավելի ուշագրավ է Զմյուռնիայի թեմի և նրա առաջնորդի ու համայնքի ներգրավվածությունը Դավիթ-Դանիելյան պայքարում: Հիմնավորապես ճիշտ էր Ա. Այվազյանը, երբ նկատում էր, որ հայաբնակ մյուս քաղաքների համեմատությամբ Զմյուռնիան շատ ավելի մեծ չափերով էր ընդգրկված այս կաթողիկոսական ներհակության մեջ⁷: Դրա պատճառները նշվեցին վերը, իսկ այստեղ կավելացնենք այն, որ Զմյուռնիայի և առափնյակի մյուս գաղթօջախները արդեն իսկ բաժանված էին խմբակցությունների՝ Դանիելի առաջնորդության տարիներին դրսևորվելով առավել ընդգծված (Մանիսայի եկեղեցու կառուցման, դրան հատկացված գումարների շուրջ տարածայնություններ) բորբոքումով: Դավիթ-Դանիելյան ներհակությունը, հետևաբար, պետք է խթաներ այդ գաղթօջախների վերնախավի և բնակչության մյուս հատվածների միջև առկա՝ տեղական բնույթի հակասությունները, երբ կողմերից մեկը պետք է պաշտպաներ Դանիելին, իսկ մյուսը՝ նրա հակառակորդին՝ նրանց անզիջում պայքարում: Ավելին. Զմյուռնիայի տերունի թեմի առաջնորդական թափուր տեղը զբաղեցնելու և Դավթի կողմնակիցներին այստեղ համախմբելու համար նոր առաջնորդը՝ Մարտիրոսը, պարտական էր նույն Դանիելին, որը 1797 թ. հեռացել էր Զմյուռնիայից՝ այդպես էլ հաշտության եզրեր չգտնելով իր ընդդիմախոսների հետ: Հենց Մարտիրոսի թևարկությամբ և հրահանգներով էր, որ 1801-1807 թթ. Զմյուռնիայի թեմի ժողովրդի մի զգալի մասը հարեց Դավթի կողմնակցությանը՝ ընդդեմ Դանիելյանների: Մարտիրոսն, ընդամին, իր պաշտոնատեղին էր եկել, շատ հավանական է, էջմիածնի միաբանությունում արդեն ձևավորված իր նախասիրություններով՝ թեմի ճանաչված մարդկանց նկատմամբ: Բավականաչափ իրազեկ Կ. վարդ. Շահնագարյանն այս առթիվ նկատում է. «Սոյն Մարտիրոս արիին եկաց յառաջնորդութեան Իզմիրու և իբրև հակառակորդ Դանիելի՝ բազմօք զինեցաւ ընդդէմ նորա»⁸:

⁶ Տե՛ս Դիան հայոց պատմութեան 1917, Օրմանեան 2001, 3786-3861:

⁷ Այվազեան 1900, 25 օգոստոսի/7 սեպտեմբերի:

⁸ Դիան հայոց պատմութեան 1899, 746:

Իր խառնվածքով և գործելակերպով Մարտիրոս եպ. բավական հիշեցնում էր իր պաշտպանյալ՝ կաթողիկոսական աթոռին հանդգնությամբ տիրացած Դավիթ Էնեգեթցուն: Իր առաջնորդական առաջին ժամկետի երեք տարիներին նա Զմյուռնիայում և թեմի մյուս բնակավայրերում կարողացավ ստեղծել յուրայինների մի նշանակալի խումբ, որին հենվելով՝ հաջողեց երկրորդ անգամ մնալ իր պաշտոնին: Այս առթիվ Դավիթը 1801 թ. գոհունակությամբ էր վկայակոչում իր և Մարտիրոսի կողմնակից քահանաներին և «իշխաններին», որոնք «խնդրեալ էին վասն սիրելւոյ (Մարտիրոսին - Ա.Խ.) կրկին կարգել ի գործս նուիրակութեան և առաջնորդութեան վիճակիդ»⁹:

Մարտիրոսի ազդեցությունը Զմյուռնիայում ավելի ամրապնդվեց, երբ նրան աջակցեցին Դավիթ կաթողիկոսի կողմնակիցները: Նրանք ճանաչված վաճառականներ էին, համայնքում հարգի մարդիկ, որոնց հետ նամակագրական կապեր ուներ Դավիթը, և որոնց էր պարտական նաև վերջինս՝ Կ. Պոլսի աշխարհիկ և կղերական վերնախավի մարդկանց աջակցությունը առնվազն բավարար չափով ստանալու և Դանիելի դեմ մարտնչելու համար: Այդ համակիրներն էին Մուքոֆ հորջորջված Հովհ. Սավալանյանը, Կ. Չելիկյանը, չթագործարանի տամղաճի (դրոշմահար) Ստ. Խաչատրյանը, նրանց հետ նաև բազմաթիվ այլ անձինք, որոնց անուններին կից «դի» նախդիրը վկայում էր նրանց՝ տոհմիկ վաճառական գերդաստաններից սերելը: Այդպիսի Դավթյաններից էին Հարություն դի Մուրատը, Պետրոս դի Պապին, Կարապետ դի Հարությունը, Պողոս դի Աղաճանյանը, Գեորգ դի Օհանը՝ համայնքի երևելի մարդիկ, և շատ ուրիշներ, մեծ մասամբ «մահտեսի» պատվանունով հանդերձ: 1803 թ. մայիսի 5-ին նրանք հավատարմագիր (համախոսական) են հղել Դավիթ կաթողիկոսին՝ ճանաչելով նրա հայրապետական իրավունքները¹⁰: Նրանց դիմակայում էին Մարգար Ապրոյանը, Մելիքբարմյանները՝ իրենց համախոհներով, որոնք սուր հակադրության մեջ էին վերոհիշյալ երևելիների մյուս խմբի հետ՝ դեռևս Մանիսայի եկեղեցու շինության շուրջ պառակտումների ժամանակներից ի վեր, 1790-ական թթ.:

Վտանգ ներշնչող զմյուռնացիներին մեղմացնելու կամ չեզոքացնելու նպատակով Դավիթը շինծու սիրալիրություն էր ցուցաբերում նրանց

⁹ Դիան հայոց պատմութեան 1904, 100:

¹⁰ ՄՄ, Կաթողիկոսական դիվան 14/56: Տե՛ս նաև Դիան հայոց պատմութեան 1904, 584-586:

նկատմամբ, ինչը երևում է Մարգար և Առաքել Ապրոյանների հետ նրա գրագրություններում¹¹: Հարկ եղած դեպքում, սակայն, երբ այլևս կարիք չկար խորամանկ խուսանավումների, Դավիթն անցնում էր հարձակման՝ հակառակորդին ջլատելու բացահայտ դիտավորությամբ. 1803 թ. նա զմյուռնացիներին գրգռում էր նույն Մարգար Ապրոյանի դեմ՝ հիշեցնելով նրանց՝ «եկեղեցու խարճագնացութեան» (ծախսերի հետ կապված – Ա.Խ.) վերոհիշյալ աղմկալի միջադեպը: Զմյուռնացիներին նա հորդորում էր պահանջել Ապրոյանից՝ վերադարձնելու, իբր, նրա խլած համայնապատկան գումարը¹²: Այս առթիվ Մարտիրոսը 1803 թ. մարտի 13-ին տեղեկացնում էր իր դաշնակից և հովանավոր Դավիթ կաթողիկոսին, որ Մարգար Ապրոյանը ցայժմ Էջմիածնին չի տվել իր եղբոր նվիրաբերած գումարը, ինչպես և եկեղեցու կառուցման ֆերմանի դիմաց բռնությամբ վերցրած փողերը¹³: Մարտիրոսն ավելի անհանդուրժող էր դարձել թեմում գտնվող իր հակառակորդների հանդեպ՝ այն ժամանակից, երբ Դավիթը իրեն կաթողիկոս էր հռչակել, իսկ պոլսահայ համայնքում, որ տարուբերվում էր Դավիթ-Դանիելյան երկպառակությունների մեջ, հաղթանակել էր յուրային՝ Հովհաննես պատրիարքը (Գրիգոր Խամսեցուց հետո): Բնականաբար, պատրիարքարանը անտարբեր դիտող չէր կարող մնալ այս իրադարձությունների ընթացքում, երբ Կ. Պոլսի պատրիարքները ընտրվում և պաշտոնանկ էին լինում այս պայքարի տրամաբանությամբ, նայած թե ամիրանների և բարձրակարգ կղերի խմբակցություններից որ կողմի օգտին էր թեքվում կշեռքի նժարը: Իսկ այս վերջինը շարժման մեջ էր դրվում կաշառքների և շահամետ դիտավորությունների այն ակնհայտ ազդեցությամբ, որոնք պոլսահայ վերնախավի համառ ուղեկիցներն էին դարձել դեռևս XVII դ. և XVIII դ. սկզբներին՝ տխրահռչակ պատրիարքական կոիվների ժամանակներում: Իսկ այժմ, Դավիթ-Դանիելյան հակամարտության ընթացքում, նախ Հովհաննես պատրիարքն իր տեղը զիջեց Գր. Խամսեցուն (1801, հոկտեմբեր), ապա վերջինս, մեկ տարի անց՝ դարձյալ Հովհաննեսին¹⁴: Այս փոխարինումների տրամաբանությունն այն էր, որ Հովհաննես պատրիարքը գլխավորում էր Դավթյանների, իսկ Խամսեցին՝ Դանիելյան-

¹¹ Տե՛ս Դիան հայոց պատմութեան 1899, 187-188, 234-238, Դիան հայոց պատմութեան 1904, 282-285:

¹² Դիան հայոց պատմութեան 1909, 394:

¹³ ՄՄ, Կաթողիկոսական դիվան 13/262:

¹⁴ Տե՛ս Օրմանեան 3814, 3832:

ների խմբակցությունը: Այն, որ այդուհետև, մինչև այս հակամարտության վախճանը (1807) և դրանից տարիներ հետո ևս Հովհաննեսը մնաց պատրիարքական գահին, վկայում է, որ Կ. Պոլսում հաղթանակել էր Դավթյան խմբակցությունը՝ օսմանյան կառավարության թելադրանքով՝ ի հակակշիռ ռուսական իշխանությունների քաղաքական համակրանքների: Այստեղ նկատենք, որ Դավթի հաջողությունները իր հակառակորդի նկատմամբ (այդ թվում նաև Մարտիրոսին՝ Զմյուռնիայում) պայմանավորված էին նաև պատրիարք Հովհաննեսի և նրա յուրային ամիրաների աջակցությամբ: Այս ամիրաններն էին, որ 1803 թ. ապրիլ-մայիսին դիմել էին ռուսաց դեսպան Վ. Տոմարովին՝ Դավթի ընտրությունը օրինավոր ճանաչելու հորդորով, ինչպես նաև համախոսականով՝ Թիֆլիսում գտնվող ռուսաց զորահրամանատարին՝ ունկնդիր չլինել Դանիելի օգտին աշխատող Եփրեմ եպ. և այլոց¹⁵:

Զմյուռնիայի համայնքում ևս ազգային վարչությանը տիրում էին մերթ Դանիելյանները, մերթ Դավթյանները՝ կախված այն բանից, թե էջմիածնում և Կ. Պոլսի պատրիարքարանում կողմերից որ մեկն էր առավելություն ստանում: Պրուսայի առաջնորդ Պողոս վարդ. ուղղած նամակում (1802, հուլիս) Դավթյանը գրում էր, որ Դանիելը հրովարտակ է հանել օսմանյան արքունիքից և առաքել Զմյուռնիա, «զի կալեալ զառաջնորդ նորին Մարտիրոս արքեպիսկոպոսն ...և ի վերայ մերկ երիվարի նստացեալ, իբրև մահապարտ շղթայեալ ոտիք բերցեն և հասուցանեն առ իւր՝ համաբարոյ ամբարիշտ Դանիելն որոյ աղագաւ և եղեալ է մեծ վնաս և գայթակղութիւն և յուսահատութիւնն խղճալի իզմիռնացոցն...»¹⁶:

Իրոք, թունդ Դանիելյան պատրիարք Գր. Խամսեցին ևս, 1802 թ. ապրիլին դիմել էր ռուսաց դիվանագիտական ծառայության մեջ գտնվող ոմն Աղաթոնին՝ հայտնելով, որ ժողովուրդն ամենուրեք ընդունում է կաթողիկոս Դանիելին, բայց Զմյուռնիայի առաջնորդ Մարտիրոսը արգելում է նրա անունը հնչեցնել տալ եկեղեցում, «ուստի խորհրդով իշխանաց մերոց

¹⁵ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, 13/263:

¹⁶ Դիան հայոց պատմութեան 1904, 543: Մարտիրոսին փրկեցին զմյուռնացի Դավթյանները և այս խնդրում առանձնապես ջանքեր գործադրած Մոսկոֆ Հովհաննես Սավալանյանը, որի շնորհիվ առաջնորդը կարողացել էր ազատվել, ինչպես Դավթյան է գրում 1802 թ. օգոստոսին՝ «ի բազմահնար մեքենայից չարի» (Դիան հայոց պատմութեան 1904, 568):

պատշաճ համարեցաւ թագաւորական հրամանաւ առաքել զնա ի սուրբ Աթոռն յորմէ եկեալն էր»¹⁷:

Հավանաբար, Դավիթը թանձրացնում էր Մարտիրոսին պատրիարք Խամսեցու կողմից հալածելու վերաբերյալ լուրերը՝ սրտաճմլիկ մանրամասներով, սակայն այն, որ իշխանությունները փորձել էին ի կատար ածել պատրիարքի ցանկությունը, վկայում է Տ. Պալյանի մեջբերած հետևյալ վավերագիրը. «1802 մարտի 26 ի Զմիռնիոյ Առաջնորդ Մարտիրոս արհի եպիսկոպոսի աքսորման հրովարտակ եկաւ չափուշով և սարկաւագ մը ի միասին Առաքել անվամբ, որ յառաջագոյն 2 օր յառաջ Առաջնորդ հայրն մեր զօդեալ էր ի տան Սաւալանեան Օհաննէս աղայի ռուսեցոյ (ակնարկում է Սավալանյանի՝ Մոսքոֆ մականունը - Ա.Խ.), որ համայն ընչիւքն, եկեալ ոչ գտին և մնաց ի տան յիշեալ աղային որ ի Պիոնովայ (կամ Բուռնովա՝ Զմյուռնիայի արվարձանը - Ա.Խ.) մինչ ի նոյեմբեր 8: Ի տօնի Ս. Հրեշտակացն եմուտ քաղաքս (Մարտիրոսը - Ա.Խ.) մեծաւ հանդիսի»¹⁸:

Հաջողությամբ խուսափելով աքսորից և վերստին սատարելով Դավթին՝ առաջնորդն այս ուղղությամբ ակտիվացրեց իր գործունեությունը համայնքում՝ ընդհուպ մինչև Դավթի հակառակորդ Դանիելի վերջնական հաղթանակը՝ 1807 թ.: Այս թվականի օգոստոսին և սեպտեմբերին Ներսես Աշտարակեցուն (ի սկզբանե Դանիելի կուսակիցն ու համախոհը, որը մեծապես նպաստել էր նրա հաջողություններին, հատկապես ռուսաց պաշտոնական բարձր շրջաններում) գրած նամակում զմյուռնացի Մելիք-զարմյանները գանգատվում էին այն հալածանքներից, որ իր հերթին սկսել էր Մարտիրոսը զմյուռնացի Դանիելյանների դեմ: Առաջնորդը եկեղեցու բեմից շանթ ու որոտ էր տեղում հակառակորդ կողմնակցությանը հարող մարդկանց գլխին, «մեծաւ կատաղանօք... իսպառ ջնջել և բառնալ կամենայր զճշմարտասէրս»¹⁹: Մելիքզարմյանների մեկ այլ նամակից պարզվում է, որ համայնքի ազգային պաշտոնները գտնվելիս են եղել Դավթյանների ձեռքին, որ նրանք ի չարն են գործադրել ընդդեմ հակառակորդների: Նրանք խնդրում էին Ներսես Աշտարակեցու օգնությունը՝ «սրբել զատեանն (համայնքի կառույցները - Ա.Խ.) որ կոռոյ է բազում ամաց հետէ և նենգաբանութեան տեղի»²⁰:

¹⁷ Դիւան հայոց պատմութեան 1902, 195:

¹⁸ Պալեան 1921, 2, 60:

¹⁹ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, 18/108:

²⁰ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, 18/133:

Դավիթ-Դանիելյան հակամարտությունը շատ ավելի սեղմ ժամկետներում կավարտվեր, եթե դուրս չգար զուտ հայկական շրջանակներից, Դավթի ու Դանիելի՝ կաթողիկոս դառնալու մեծ ցանկությամբ և չբորբոքվեր արդեն քաղաքական կերպարանք ստացած, ռուս-պարսկական և այս զույգին առնչվող՝ օսմանյան շահախնդրությունների անխուսափելի բախումների թելադրանքով: Հատկապես ակտիվ էին ռուսական քաղաքական ու դիվանագիտական շրջանները, որոնք, Անդրկովկասում ամրապնդվելու և ծավալվելու ռազմավարությունից ելնելով, ձգտում էին ընդլայնել իրենց ազդեցությունը Էջմիածնի կաթողիկոսության վրա՝ աչքի առջև ունենալով ապագա կաթողիկոսի քաղաքական համակրանքները դեպի Ռուսաստանը և նրա հուսալիությունը այդ համակրանքներում: Հայտնի են ռուս դիվանագետ Վ. Տոմարովի (հայկական աղբյուրներում՝ Թամարով, Թամար) և սրա մերձավոր Աղայեկովի եռանդուն գործողությունները՝ հօգուտ Դավթի, որ քիչ նշանակություն չունեցավ վերջինիս՝ կաթողիկոսական աթոռին հայտնվելու համար (1801, ապրիլ) այնուհետև, նույն տարվա սեպտեմբերից Դանիելին հովանավորելը, ապա դրան պաշտոնական տեսք տալը, երբ ռուսական կառավարությունը կտրուկ փոխեց իր վերաբերմունքը՝ ի նպաստ նրա²¹: Անշուշտ, այստեղ նշանակություն ունեցան և Դանիել, և Դավիթ կաթողիկոսների անձնական որակները և նրանց անունից գործող աշխարհիկ ու հոգևորական գործիչների նախաձեռնությունները: Սակայն դրանք չէին, որ պետք է ապահովեին Դանիելի հաղթանակն այս տևական հակամարտության մեջ (1807), այլ ռուսական իշխանությունների վերջնական խոսքը և պարսից պետության համակերպումն այդ հանգուցալուծմանը: Երկրորդական նշանակություն ունեցավ անգամ Դանիելի հակառակորդների գերադաս դիրքն այս ընդհարումների այն փուլում, երբ ի դեմս Կ. Պոլսի Հովհաննես պատրիարքի, նրանք ոգի ի բռին գործում էին պատրիարքարանում՝ ամրապնդելու իրեն կաթողիկոս հռչակած Դավթի ինքնազլխությունը (1802 թ. դեկտեմբերի հանրագիրը, որով Կ. Պոլսի հայ համայնքը ճանաչում էր վերջինիս կաթողիկոսությունը)²²:

²¹ Ալեքսանդր I-ը 1802 թ. սեպտեմբերի 26-ի գրությամբ արդեն կարգադրում էր Տոմարովին՝ փոխել նախկին ուղղությունը և Դավթի պաշտպանությունը դադարեցնել (Օրմանեան 2001, 3810):

²² Օրմանեան 2001, 3833:

Դավիթ-Դանիելյան հակամարտությունն ընդամենը կարող էր օգտագործվել Ռուսաստանի և Պարսկաստանի կողմից և ոչ ավելին. ոչ մեկը, և ոչ էլ մյուսը շահագրգռված չէին այդ հակամարտության անընդհատ շարունակականության մեջ, և Էջմիածնի կաթողիկոսի ընտրությունն այս պարագայում կարող էր ունենալ ընդամենը արդեն խոցված թիրախի նշանակություն: Մի հայտնի չափով հակամարտության բորբոքման գործն ինքնին կատարում էին իրենք՝ նշված կաթողիկոսների կողմնակիցները և Դանիելյան դատի պաշտպան Էջմիածնի միաբանությունը, հակառակ կողմերին սատարող՝ Կ. Պոլսի Հովհաննես և Գրիգոր պատրիարքները՝ իրենց ամիրայական խմբակցություններով ու նրանց նախապատվությունների հաշվառմամբ:

Զմյուռնահայ համայնքի երևելիները ևս ընդգրկված էին Դավիթ-Դանիելյան հակամարտության մեջ. կապող օղակ լինելով մի կողմից Էջմիածնի և եվրոպական շուկաներում գործող հայ դրամատերերի, և մյուս կողմից՝ այս վերջինների ու Կ. Պոլսի աշխարհիկ ու եկեղեցական վերնախավերի միջև, զմյուռնահայ համայնքը չէր կարող նշանակալիություն չունենալ այս տևական հակամարտություն ընթացքում: Այսուհանդերձ, Զմյուռնիայում, տեղական և թող որ ավելի միջնորդավորված նշանակությամբ, այդ վեճը բորբոքվում էր առաջնորդ Մարտիրոսի և նրա հակառակորդ աշխարհիկ երևելիների միջև՝ Էջմիածնի և Կ. Պոլսի պատրիարքարանի թելադրանքով: Այդ ներհակությունը բացասական նշանակություն ունեցավ Էգեյանի հայ համայնքների համար՝ ավելորդ պառակտումներ ու հուզումներ պարտադրելով նրանց, անպտուղ և ձգձգվող մի հակադրություն, որից չշահեց կողմերից և ոչ մեկը. թերևս, բացառությամբ արք. Մարտիրոսի, որը հաջողությամբ դուրս պրծավ այդ պայքարի թոհուբոհից: Նա պահպանեց իր պաշտոնը Դանիելի՝ արդեն չվիճարկվող կաթողիկոսության (1807-1808) պայմաններում՝ վերջինիս անհիշաչարության կամ նախկին Դավթյաններին Էջմիածնում և Կ. Պոլսում չգրգռելու խոհեմ վարքագծի շնորհիվ: Փաստն այն է, որ Մարտիրոս արք. Զմյուռնիայի թեմի ամենից երկար պաշտոնավարած առաջնորդներից մեկն է (1797-ից) որը հարատևեց նաև Եփրեմ կաթողիկոսի (կաթողիկոս՝ 1809-ից) ժամանակ՝ Էջմիածին վերադառնալով ոչ ուշ, քան 1816 թ. և իր տեղը զիջելով եպ. Փիլիպոսին:

Եզրակացություններ

Լինելով Էջմիածնի տերունի թեմ՝ Ջյուռնիայի հայ համայնքը ի սկզբանե ակտիվ մասնակցություն ունեցավ կաթողիկոսական աթոռի համար Դավիթ և Դանիել արքեպիսկոպոսների միջև ծավալված անգի-ջում պայքարին, որ տևեց շուրջ վեց տարի (1801-1807): Դրա հիմքում ընկած էին հակասությունները եկեղեցական վերնախավի տարբեր թևերի միջև, նրանց անձնական և խմբակցական որակները, և մյուս կողմից՝ կաթողիկոսական աթոռն իրենց ազդեցության ոլորտում պահելու նպատակով մրցակցական պայքարը Ռուսաստանի և Պարսկաստանի միջև: Ուշագրավ է նաև ներհակության նկատմամբ Կոստանդնուպոլսի պատրիարքության դիրքորոշումը, որ ուղղորդվում էր այս պայքարի ընթացքում իր սեփական շահերին հետամուտ օսմանյան կառավարության կողմից: Նշված ներհակության տարիներին Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքների փոփոխությունները (Հովհաննես և Գրիգոր Խամսեցի պատրիարքների՝ պատրիարքական աթոռին միմյանց հաջորդելու իրողությունը) ամենից առաջ պետք է բացատրել Դավիթ-Դանիելյան ներհակության կողմերի նկատմամբ Բ. դռան ոչ միանշանակ վերաբերմունքով, որ դրսևորվում էր Կ. Պոլսում ամիրայական խմբակցությունների կողմից մերթ Դավիթ կաթողիկոսի, մերթ Դանիել կաթողիկոսի ճանաչման գործում տեղի հայ համայնքի աշխարհիկ վերնախավի փոփոխական կողմնորոշումներով: Հովհաննես պատրիարքը պաշտպանում էր Դավթյանների, իսկ Գրիգոր Խամսեցի պատրիարքը՝ Դանիելյանների խմբակցությունը, և այն հանգամանքը, որ նրանցից առաջինը հերթական փոփոխությունից հետո պատրիարքական աթոռին մնաց մինչև ներհակության ավարտը և դրանից տարիներ հետո ևս, ցույց է տալիս, որ Կ. Պոլսում գերակշիռ դիրք էր ստացել, անշուշտ, օսմանյան կառավարության ներշնչանքներով, Դավիթ կաթողիկոսի կողմնակից ամիրաների խումբը:

Ջյուռնիայում ևս, ներհակության ողջ շրջանում առավել ազդեցիկը Դավիթ կաթողիկոսի յուրայիններն էին, որոնք գործում էին թեմական առաջնորդ արք. Մարտիրոսի եռանդուն ղեկավարությամբ: Ջյուռնիայի տերունի թեմն առհասարակ Էջմիածնի ամենահեղինակավոր և հարուստ վարչական կառույցներից մեկն էր Օսմանյան Թուրքիայում, որի միջոցով կաթողիկոսները ուժ և սատար էին գտնում ոչ միայն զմյուռնաբնակ հայ մեծահարուստների, այլև Արևմտյան Եվրոպայում, հատկապես Իտալիայում և Ավստրիայում հանգրվանած դրամատեր խոշոր վաճառականների

կողմից: Այդ էր պատճառը, որ ներհակությունը գլխավորող երկու կաթողիկոսներից յուրաքանչյուրը, հատկապես Դավիթ կաթողիկոսը, հատուկ նշանակություն էր տալիս Զմյուռնիայի թեմին և դրա առաջնորդարանին, որպես իրենց սոցիալական և կազմակերպական հենարանի: Բուն զմյուռնահայ համայնքը դեռևս 1790-ական թթ. սկսած, ի դեմս Մարգար Ապրոյանի, նրա կողմնակիցների ու հակառակորդների, որոնք սուր տարածայնություններ ունեին համայնքի եկամուտների վերահսկողության գործում և լքված էին միմյանց հանդեպ տաժած անհանդուրժողականությամբ, արդեն պատրաստ էր մասնակցելու կաթողիկոսական աթոռի համար սկսված ընդհարումներին: Ավելին, նշված ներհակությունը Զմյուռնիայում առավել հստակ դարձավ Դավթյանների ու Դանիելյանների տարաբաժանումով, որ դեռևս 1797 թ. նախապատրաստվել էր արք. Դանիելի՝ Զմյուռնիայի այն ժամանակվա առաջնորդի, իր այդ պաշտոնից հեռանալով և նրան այդտեղ փոխարինած՝ Դավթյանների խմբակցության ապագա պարագլուխ արք. Մարտիրոսի հայտնությամբ:

Դավիթ-Դանիելյան ներհակությունը բացասաբար ազդեց Էջմիածնի, ինչպես և Կոստանդնուպոլսի պատրիարքության և Զմյուռնիայի առաջնորդարանի ազգային-հոգևոր գործունեության վրա՝ ավելորդ պառակտումներ մտցնելով եկեղեցական գործիչների, ինչպես և աշխարհիկ վերնախավի ու ազգաբնակչության շրջաններում: Ներհակության մեջ ընդգրկված հայկական կողմերից և ոչ մեկը չշահեց այս հակադրությունից, որի բորբոքման գործում, մի կողմից, առաջ էին ընկել սնափառությունն ու անպտուղ պատվախնդրությունը, մյուս կողմից՝ այդ արատներն ու տարածայնություններն իրենց քաղաքական շահերին հմտորեն ծառայեցնող տերությունները:

Գրականություն

Այվազեան Ա. 1900, Յոնիական հայ գաղութին նահապետներէն, Կ. Պոլիս, Արեւելք, 25 օգոստոսի/17 սեպտեմբերի:

Դիւան հայոց պատմութեան 1899, գիրք Դ, Թիֆլիս, հրատ. Աղանեանց Գ., 803 էջ:

Դիւան հայոց պատմութեան 1902, գիրք Ե, Թիֆլիս, հրատ. Աղանեանց Գ., 684 էջ:

Դիւան հայոց պատմութեան 1904, գիրք Զ, Թիֆլիս, հրատ. Աղանեանց Գ., 752 էջ:

22 Դավիթ-Դանիելյան ներհակությունը Կոստանդնուպոլսում և Ջմյուռնիայում

Դիան հայոց պատմութեան 1909, գիրք Է, Թիֆլիս, հրատ. Աղանեանց Գ., 562 էջ:

Դիան հայոց պատմութեան 1917, գիրք ԺԲ, Թիֆլիս, հրատ. Աղանեանց Գ., 254 էջ:

ՄՄ (Մաշտոցյան Մատենադարան), Կաթողիկոսական դիվան, թղթ. 6, վավ. 71, թղթ. 6, վավ. 77, թղթ. 6, վավ. 89, թղթ. 14, վավ. 56, թղթ. 13, վավ. 262, թղթ. 13, վավ. 263, թղթ. 13, վավ. 264, թղթ. 18, վավ. 108, թղթ. 18, վավ. 133:

Պալեան Տ. 1921, Գաւազանագիրք առաջնորդաց Ջմյուռնիոյ, «Դավին», Ջմյուռնիա, թիւ 2, էջ 59-63:

Օրմանեան Մ. 2001, Ազգապատում, հ. Բ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 3893 էջ:

ԴԱՎԻԹ-ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆԵՐՀԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՋՄՅՈՒՐՆԻԱՅՈՒՄ ԵՎ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ

Ալբերտ Խառատյան

Ամփոփում

Դավիթ-Դանիելյան հակամարտությունը, որ առաջացել էր Դավիթ և Դանիել կաթողիկոսների միջև՝ կաթողիկոսական աթոռին վերջնականապես տիրելու համար, տևեց շուրջ վեց տարի (1801-1807): Հակամարտության հիմքում կային մի քանի հակասություններ, որպիսիք էին եկեղեցական վերնախավի տարբեր թևերի շահախնդրությունները, նրանց անձնական և խմբային տարածայնությունները, որոնք աջակցություն էին գտնում կաթողիկոսական աթոռն իրենց ազդեցության ոլորտում պահելու նպատակով մրցակցող Ռուսաստանի և Պարսկաստանի դիվանագիտական շրջանների կողմից: Այդ ներհակության նկատմամբ անուղղակի գործելակերպ էր ընտրել օսմանյան կառավարությունը, որ դրսևորվում էր այդ ժամանակաշրջանում Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքներ Հովհաննեսի և Գրիգոր Խամսեցու՝ պատրիարքական աթոռից հեռանալով, ապա վերստին վերադարձով: Միաժամանակ, այս հանգամանքն արտացոլում էր կաթողիկոսի ճանաչման գործում Կոստանդնուպոլսի հայ համայնքի վերնախավի փոփոխվող կողմնորոշումները Դավիթ և Դանիել կաթողիկոսների նկատմամբ:

Ջմյուռնիայում ևս հստակ նկատելի է Դավթյան և Դանիելյան խմբակցությունների հակադրությունը: Ինչպես Կոստանդնուպոլսի, այնպես էլ Ջմյուռնիայի

հայ համայնքների համար այս ներհակությունը բացասական նշանակություն ունեցավ՝ նրանց շեղելով բնականոն ազգային կյանքից և ավելորդ պառակտումներ մտցնելով ազգաբնակչության շրջաններում:

Բանալի բառեր՝ Դավիթ կաթողիկոս, Դանիել կաթողիկոս, Կ. Պոլսի պատրիարք Գրիգոր Խամսեցի, Մարգար Ապրոյան, դեսպան Վ. Տոմարով, Ջմյուռնիայի առաջնորդ Մարտիրոս արքեպ., Ս. Էջմիածնի միաբանություն:

ПРОТИВОСТОЯНИЕ ДАВИД-ДАНИЕЛЬ В СМЕРНЕ И КОСТАНТИНОПОЛЕ

Альберт Харатян

Резюме

Антагонизм, возникший между армянскими католиками Давидом и Даниэлем в связи с овладением католикосатским престолом, длился шесть лет (1801-1807). В основе антагонизма лежал ряд противоречий, связанных с корыстолюбием разных ветвей церковной элиты, их личными и групповыми разногласиями, что находило поддержку со стороны дипломатических кругов России и Персии, соперничавших друг с другом в вопросе подконтрольности католикосатского престола. В отношении этого противостояния косвенные действия предприняло османское правительство, что в этот период нашло отражение в отказе константинопольских патриархов Ованеса и Григора Хамсеци от патриаршего престола с последовавшим затем возвращением на престол. В то же время это обстоятельство отражало нестабильную ориентацию константинопольской армянской общинной элиты в отношении католикосов Давида и Даниэля.

Ключевые слова – католикос Давид, католикос Даниэль, константинопольский патриарх Григор Хамсеци, Маргар Апроян, посол В. Томаров, глава смирнинской епархии архиепископ Мартирос, конгрегация Св. Эчмиадзина.

THE CONTROVERSY BETWEEN DAVIT AND DANIEL IN SMYRNA AND CONSTANTINOPLE

Albert Kharatyan

Abstract

The conflict between the two Catholicoses Davit and Daniel started because of their desire to ascend to the throne of the Catholicosate which lasted about 6 years (1891-1897). The underlying issues of the conflict were conditioned by such factors as the self-interest of different members in the ecclesiastic elite, their interpersonal and in-group discords. The rivaling Russian and Persian diplomatic circles, wanting to keep their influence on the Catholicosate, fuelled the ongoing discords. Moreover, the Ottoman government pursued an indirect policy toward the conflict which was reflected in the fact that during that period the Patriarch Grigor Khamsetsi' succeeded the Catholicos Hovhannes after his forced resignation. At the same time, the given circumstance showed that the elite of the Armenian community in Constantinople had changing attitudes towards the two Catholicoses Davit and Daniel in terms of their recognition.

The existing controversy between the groups, supporting either Catholicos Davit or Daniel is also obvious. This controversy had a negative impact on the Armenian communities in both Constantinople and Smyrna. It disrupted the communities' normal life, leading to unnecessary disputes among the population.

Key words – Catholicos Davit, Catholicos Daniel, the Patriarch of Constantinople Grigor Khamsetsi, Margar Apoyan, Ambassador V. Tomarov, the leader of Smyrna Archbishop Martiros, the order of St. Etchmiadzin.

ԱՐՅԱԽԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԹԵՎՈՒՄ 1993 Թ. ԱՄԱՌԱՅԻՆ ՌԱԶՄԱՐՇԱՎԻ ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

Միեր Հարությունյան

Պատմական գիտությունների թեկնածու, պահեստագործի մայոր
«Կաճառ» գիտական կենտրոնի տնօրեն
Արցախի Հանրապետություն, Շուշի, Մուրացան 2
Էլ. հասցե՝ kachar.gk.shushi@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 24.01.2020, գրախոսվել է 23.01.2020, ընդունվել է
տպագրության 05.08.2020

Ներածություն

Արցախի հարավային սահմաններին մշտապես սպառնացող հակառակորդի ռազմական հենակետերի վնասազերծման օպերացիաները ռազմարվեստի տեսանկյունից վերաիմաստավորելու անհրաժեշտությունն ավելի քան հրատապ է ինչպես Պաշտպանության բանակի առաջավոր փորձի ընդհանրացման, այնպես էլ մեր տարածաշրջանում ռազմաքաղաքական իրադրության սրման պայմաններում Հայաստանի Հանրապետության ու Արցախի անվտանգային-պաշտպանական համակարգում հնարավոր մարտական գործողությունների ռազմավարությունն ընտրելու համար գիտատեսական հիմքեր ստեղծելու առումներով:

Սույն ուսումնասիրության նպատակն է ռազմագիտորեն քննության առնել ռազմաճակատի հարավային ուղղությունում 1993 թ. ամառային ռազմարշավի օպերացիաները և ներկայացնել դրանց մարտավարական առանձնահատկությունները: Առաջադրված նպատակին հասնելու համար խնդիր ենք ունեցել ներկայացնելու, մասնավորապես, Արցախի հարավային սահմաններին մշտապես սպառնացող Զաբրայիլի, Ֆիզուլիի, Կուբաթլուի ռազմական հենակետերի վնասազերծման նպատակով պլանավորված ու հաջողությամբ իրականացված օպերացիաները, դրանց մարտավարական առավել կարևոր յուրահատկությունները, մտահղացումների հնարամտորեն իրականացման եղանակները և հակառակորդի գերակշիռ ուժերին

*Հետազոտությունն իրականացվել է ԱՀ ԿԳՍ նախարարության տրամադրած ֆինանսական աջակցության շնորհիվ՝ N 18 AK-007. «Ռազմարվեստի զարգացման արդի փուլի առանձնահատկությունները Արցախում» գիտական թեմայի շրջանակում:

պարտության մատնելու ոչ դյուրին գործում ՊԲ ռազմիկների անհատական որակների ու բարոյահոգեբանական գերազանցության նշանակությունը**:

Թեմայի ուսումնասիրվածության աստիճանը

Թեմայի պատմագրությանն անդրադառնալով՝ կարող ենք փաստել, որ հիմնախնդիրը նման առաջադրմամբ, ըստ էության ու գիտականորեն ուսումնասիրված չէ: Արցախյան պատերազմի մասին գրած հեղինակները շոշափել են վերոհիշյալ օպերացիաների առանձին դրվագները և, մեծ մասամբ, ռազմաքաղաքական տեսանկյունները: Իսկ դա, բնականաբար, բավարար համարել չենք կարող, մանավանդ, որ բազմաթիվ նորահայտ փաստեր արդեն հնարավորություն են ընձեռում նորովի շարադրելու խնդրո առարկա օպերացիաները, ավելի հանգամանորեն անդրադառնալու հատկապես Արցախում ռազմարվեստի զարգացման գործում դրանց ունեցած նշանակությանը: Կարծում ենք՝ սույն թեմայի պատմագրության հակիրճ ներկայացումը կարտացոլի հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը:

Հարավային ուղղությամբ իրականացված ռազմական գործողություններին անդրադարձել է ՊԲ լրատվական ծառայության (2001-ից՝ լրատվության և քարոզչության բաժնի) պետ Սենոր Հասրաթյանը¹: Նշված աշխատանքներն ավելի շատ քարոզչական, ճանաչողական-տեղեկութային բնույթ են կրում, օպերացիաները ներկայացված են մակերեսայնորեն, բազմաթիվ անհարկի կրկնություններով, նկարագրություններում քաղաքական բաղադրիչը հաճախ գերազանցում է ռազմականին, բացակայում են ռազմագիտական վերլուծությունները և փաստերի հիման վրա արված եզրակացությունները: Որպեսզի մեր գնահատականներն ավելի առարկայական լինեն, բերենք դրանք հաստատող օրինակներ: Ներկայացնելով հարավային ուղղությամբ իրականացված օպերացիաներում ՊԲ հրետանավորների դերը՝ Ս. Հասրաթյանը գրել է. «...շնորհիվ նրանց կողմից իրականացված ճշգրիտ կրակային աջակցության, ինքնապաշտպանական ուժերը մեկը մյուսի հետևից ոչնչացրին Ֆիզուլու, Ջեբրայիլի,

** Առաջադրված ակնհայտ ոչ դյուրին խնդիրը լուծելուն օգտակար են եղել ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի գլխավոր խմբագիր, գնդապետ (պաշտոնաթող) Դավիթ Չիլինգարյանի խորհրդատվությունները:

¹ Հասրաթյան 1998, 2001, 2008, 2018 և այլն:

Ղուբաթլուի, Զանգելանի, Հորադիզի շրջաններում տեղակայված թշնամական հենակետերը և Արցախի պետական սահմանը հասցրին մինչև Արաքս գետը»² (տեղանունների ուղղագրությունը բնագրային է): Մեջբերված տողերը և ռազմական գործողության արդյունքը, որ հեղինակը համարել է սահմանների անվտանգության բարձրացումը և ՊԲ նյութատեխնիկական բազան ռազմավարի հաշվին համալրելը, նույնությամբ կրկնվել են նաև նրա այլ հրատարակություններում³:

Անհարկի կրկնությունների և ակնհայտ մակերեսայնության վկայություն է նաև հետևյալ անդրադարձը. «Այն իր շարունակությունն ունեցավ նաև օգոստոսից մինչև հոկտեմբերի վերջերը ռազմաճակատի հարավարևելյան և հարավային ուղղություններում իրականացված մարտական գործողությունների ընթացքում, երբ մեկը մյուսի հետևից հայկական ուժերը վնասազերծում էին Ֆիզուլիի, Ջեբրայիլի, Ղուբաթլուի, Զանգելանի և Հորադիզի տարածքներում տեղաբաշխված թշնամական ռազմահենակետերը»: Հակաօդայինների ներդրումն այդ օպերացիաներում արտահայտված է «Ֆիզուլի քաղաքի մերձակայքում» «երկու (օգոստոսի 16-ին և 17-ին), իսկ Ստեփանակերտի երկնքում՝ մեկ (օգոստոսի 31-ին) ինքնաթիռ» ոչնչացնելու փաստի արձանագրմամբ⁴:

Այդ օպերացիաները գիտականորեն փորձել ենք ներկայացնել մեր ատենախոսությունում⁵, ինչպես նաև առանձին հրապարակումներում⁶:

Խնդրո առարկա օպերացիաների մանրամասներին անդրադարձել են դրանց պլանավորմանն ու իրականացմանն անմիջապես մասնակցած ռազմական բարձրաստիճան առանձին գործիչներ կամ նրանց մասին պատմող հեղինակները: Հատկանշական են ՀՀ և ԼՂՀ ռազմական գերատեսչությունը ղեկավարած Ս. Սարգսյանի և Ս. Օհանյանի հեղինակությամբ լույս տեսած և գեներալ-լեյտենանտներ Մ. Գրիգորյանի, Ս. Բաբայանի և այլոց մասին պատմող կենսագրական ու հուշագրական բնույթի

² Հասարթյան 2009, 40:

³ Հասարթյան 2010, 75, հմմտ. 2-րդ հրատ. 2014, 75 և այլն:

⁴ Հասարթյան 2009, 96, հմմտ. Հասարթյան 2010, 126, ինչպես նաև 2-րդ հրատ., 125-126:

⁵ Հարությունյան 2001, 119-125, հմմտ. Հարությունյան 2015, 150-157:

⁶ Հարությունյան 2000, 40-42, Հարությունյան, Խաչատրյան 2004, 697-699, Арутюнян 2009, 56, Մարտիկ 1999, օգոստոս, N 33, Մարտիկ 1999, օգոստոս, N 34, Մարտիկ 2004, օգոստոսի 14-21 և այլն:

գործերը⁷: Նշվածներից միայն Ս. Բաբայանին նվիրված գրքում ենք հանդիպում հարավային ուղղությունում 1993 թ. ամառային ռազմարշավի օպերացիաների հանգամանալից նկարագրությունը, ինչը կարևորվում է դրանց մտահղացման, պլանավորման ու իրականացման վերաբերյալ մի շարք ուշագրավ տեղեկություններով:

Ընդհանրական ու հանրահայտ տեղեկությունների վերարտադրությամբ, իսկ ադրբեջանցիների դեպքում նաև իրականության նենգափոխմամբ հանդես են եկել մի շարք հեղինակներ⁸, որոնք, ցավոք, ըստ էության չեն նպաստել վերոնշյալ հիմնախնդրի գիտական մշակմանը:

1993 թ. ամառային ռազմարշավի հիմնական ուղղության փոփոխման նախադրյալները

Ջաբրայիլի, Ֆիզուլիի և Կուբաթլուի օպերացիաների անհրաժեշտությունը հասկանալու համար նախ ներկայացնենք 1993 թ. ամառային ռազմարշավի հիմնական ուղղության փոփոխման նախադրյալներն ու շարժառիթները: Մարտակերտ քաղաքի շրջակայքում և Ադդամի ռազմական հենադաշտում հակառակորդի հարվածային խմբավորումների ջախջախման, տիրապետող բարձունքների վրա նպաստավոր բնագծերի զբաղեցման շնորհիվ ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը (ԻՊՈԻ) Ստեփանակերտի ու Մարտակերտի օպերատիվ ուղղություններում կանխարգելեցին հակառակորդի ակտիվ գործողությունները՝ միաժամանակ անվտանգ դարձնելով ԼՂՀ հյուսիսարևելյան սահմանագիծը: Թվում էր, թե հակառակորդի հարձակման միակ հնարավորությունը մնացել էր օդուժը, սակայն ԼՂՀ հակաօդային պաշտպանության արդյունավետության բարձրացումը, ՀՕՊ միջոցների կատարելագործումը և հակաօդայինների մասնագիտական վարպետության բարձրացումը կաշկանդում էին հակառակորդի գործողությունները նաև օդում: Ստեղծված պայմաններում հակառակորդի նոր ակտիվացումն սպասելի էր հարավարևելյան և հարավային ճակատագծում, քանի դեռ մարտունակ էին Ֆիզուլիի, Ջաբրայիլի, Կուբաթ-

⁷ Սարգսյան 2002, 19, 58, Օհանյան 2012, 141-144, Հակոբյան 2006, 23-24, Հակոբյան 2013, 62-66, Խաչատրյան, Ղազարյան, Մարգարյան 2008, 126-137:

⁸ Арутюнян 1997, 171-184, Աբրահամյան 2007, 497-500, 88-90, Հակոբյան 2008, 254-256 և 561-562, ծան. 7, Հովհաննիսյան 2015, 121-128, Жирохов 2009, 88-90, Араслы 1995, 41-43:

լուի և Ջանգելանի ռազմական խմբավորումները: Փոխվրեժի նպատակով ադրբեջանական հրամանատարությունը հարվածի հիմնական ծանրությունը փոխադրեց հենց դեպի հիշյալ օպերատիվ ուղղությունը: Հիրավի, դա դժվար չէր կռահել, քանի որ Մարտունու ուղղությունը Աղդամի հենադաշտի կորստից ու այնտեղ գտնվող մարտունակ խմբավորման պարտությունից հետո այլևս չէր կարող գայթակղել կամ հաջողության հույս ներշնչել հակառակորդին: ԻՊՈՒ-ի բավարար քանակությամբ մարտունակ ուժերի ու միջոցների առկայությունն Աղդամի և Մարտակերտի ուղղություններում հակառակորդին զրկում էր հակահարձակման անցնելու հնարավորությունից, իսկ Օմարի և Լաչինի ուղղություններում ադրբեջանական զինված ուժերի առաջխաղացման բոլոր հուսահատ փորձերը կասեցվեցին:

Հաղորդի Պաշտպանական շրջանի (ՊՇ) ուղղությամբ հակառակորդի նոր ակտիվացումը պայմանավորված էր նաև Ֆիզուլիի, Ջաբրայիլի, Կուբաթլուի և Ջանգելանի շրջաններում ադրբեջանական մեծաքանակ ուժերի առկայությամբ և հետագա կենտրոնացմամբ, ինչպես նաև հայկական ուժերի պաշտպանության ճակատագծի ձգվածությամբ, ինչը մի որևէ հատվածում ճեղքում կատարելու հույս էր տալիս թշնամուն:

ԼՂՀ ԻՊՈՒ հրամանատարությունն իր հերթին շահագրգռված էր Հաղորդի ՊՇ-ում պաշտպանական համառ մարտերով հյուծելու հակառակորդի հարվածային խմբավորումներին, անցնելու վճռական հակահարձակման ու լուծելու հանրապետության հարավարևելյան ու հարավային սահմանների, ինչպես նաև Լաչինի մարդասիրական միջանցքի անվտանգության խնդիրը, որ ծառացած էր ինքնապաշտպանության ուժերի առջև դեռևս 1992 թ. աշնանային ռազմարշավից ի վեր:

Ինչպես և սպասվում էր Աղդամի խմբավորման պարտությունից հետո, հակառակորդը վիթխարի կենդանի ուժ և միջոցներ կուտակեց Ֆիզուլիի և Ջաբրայիլի շրջաններում՝ դրանով իսկ մատնելով հարվածի գլխավոր ուղղությունը ԼՂՀ հարավարևելյան ու հարավային շրջանները տեղափոխելու իր մտահղացումը: Դա արդեն ակնհայտ էր, որովհետև խախտելով կրակի դադարեցման վերաբերյալ երկկողմանի համաձայնության պայմանները՝ հակառակորդը ռազմաճակատային գծի ամբողջ երկայնքով շարունակում էր հայկական պաշտպանական դիրքերի և խոր թիկունքում գտնվող խաղաղ բնակավայրերի հրթիռահրետակոծությունները:

Հակառակորդը համառ, բայց ապարդյուն ջանքեր էր գործադրում Հադրութի ՊՇ Բախտիգ լեռան, Գովշաթլուի, Կավաք բարձունքի, Խծաբերդի և Մեծ Թաղերի ուղղություններում հարմար բնագծերի տիրելու նպատակով, ինչը հնարավորություն կտար Ադրբեջանի ԶՈՒ հարավային խմբավորմանը դուրս գալ օպերատիվ-մարտավարական նպաստավոր բնագծեր⁹:

Նմանապես, հակառակորդը ծախսողման էր դատապարտված նաև ռազմաճակատի այլ հատվածներում, մասնավորապես Ասկերանի ՊՇ-ի Նովրուզլուի, Յուսիֆջանլուի, Քենգերլի-Մաքսուդլու գծի երկայնքով¹⁰:

Այսպիսով, հակառակորդն անընդհատ լարված էր պահում իրադրությունը հակամարտության գոտում՝ չդադարող հրթիռահրետակոծություններով ու հարձակումներով ըստ ամենայնի ստիպելով ԼՂՀ ԻՊՈՒ-ի ստորաբաժանումներին պատասխան գործողությունների դիմել, ընդհուպ թշնամու կրակակետերի վնասագերծումը:

Հետ մղելով թշնամու հրթիռահրետանային ու հետախուզական շարժումակ խմբերի հարձակումներով ուղեկցվող ուժեղ ճնշումը՝ ԻՊՈՒ ստորաբաժանումները հակահարձակման անցան հարավային ռազմաճակատի ամբողջ գծի երկայնքով՝ նպատակ ունենալով ազատագրել Հադրութի շրջանի բնագավառված բնակավայրերը և ճնշել հակառակորդի կրակակետերը:

Հակահարձակում Հադրութի շրջանի հարավում

ԼՂՀ ԻՊՈՒ ստորաբաժանումների ընդհանուր հակահարձակումը Հադրութի շրջանի հարավում սկսվեց 1993 թ. օգոստոսի 15-ին¹¹: Ադրբեջանցի ռազմական փորձագետը, ջանալով ԼՂՀ ԻՊՈՒ հակազդեցությունը ներկայացնել որպես նախահարձակում՝ այն դրել է օգոստոսի 11-ի տակ¹²: Հրետանային նախապատրաստությունից հետո, ԻՊՈՒ գրահատեխնիկայի աջակցությամբ հարձակման անցան օպերացիայում ներգրավված ստորաբաժանումները: Հետախուզական և 11-րդ առանձին մոտոհրա-

⁹ ԼՂՀ ՊՆԱ, Приказы ПКСО, дело N 4. Приказ Председателя комитета Самообороны НКР N 031, л. 74:

¹⁰ ԼՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативного дежурного, РТ N 150, л. 33-37:

¹¹ ԼՂՀ ՊՆԱ, Приказы ПКСО, дело N 4. Приказ Председателя комитета Самообороны НКР N 031, л. 75:

¹² Араслы 1995, 41.

ծգային գումարտակների համահավաք խմբի նախապես կատարած դիվերսիոն արտագրոհը Քարագլուխ գյուղում տեղակայված հակառակորդի վաշտի հենակետի ուղղությամբ, պսակվեց հաջողությամբ: Ինչպես կենդանի ուժի, այնպես էլ տեխնիկայի կորուստներ կրած հակառակորդը ստիպված էր ճողոպրել Քարագլուխ գյուղից: Սակայն, ազատագրված բնագծերը պահելու և ամրապնդելու համար ուղարկված 11-րդ առանձին մոտոհրաձգային գումարտակը (ԱՄՀԳ) թողեց պահակակետերը, ինչից անմիջապես օգտվեց հակառակորդը և զբաղեցրեց նախկին դիրքերը¹³: Կենտրոնական պաշտպանական շրջանի (ԿՊՇ) ստորաբաժանումները տիրեցին Բանազուր (Բանաձոր) գյուղից հյուսիս ընկած 1042,0, 1139,4, 1008,5, 1004,0, 1064,0 նիշերով բարձունքներին: Դրանից ընդամենը 20 րոպե անց 12-րդ ԱՄՀԳ-ն դուրս եկավ 805,4 նիշով բարձունքի բնագիծը: 14-րդ և 15-րդ ԱՄՀԳ-ները գրագետ տարաշարժով շրջանցելով Մենգելենաթա (նիշ 720,3) բարձունքը՝ դուրս եկան հակառակորդի թիկունքը՝ 467,5 ու 467,0 նիշերով բարձունքների բնագիծը: 6-րդ ՊՇ ստորաբաժանումները Շիշդաղ լեռան (նիշ 1314.4) ելման բնագծից օգոստոսի 15-ին առաջխաղացում սկսեցին Ցոր, Բանաձոր, Առաքել գյուղերի ուղղությամբ: Մարտերի առաջին օրը նրանց հաջողվեց ազատագրել Ցոր գյուղը և Բանաձորից հյուսիս ընկած մի քանի բարձունքներ: Հաջորդ օրը հաջողվեց ազատագրել Բանաձոր գյուղը և ճնշել հակառակորդի մի քանի կրակակետ:

ԻՊՈՒ-ի հակահարձակման ձախ թևում Մարտունու ՊՇ 21-րդ և 22-րդ ԱՄՀԳ-ները մարտերով առաջացան Վերին Յաղլավենդ բնակավայրի ուղղությամբ, որի շուրջ, բարձունքներում հարկադրված խոր պաշտպանության էր անցել ադրբեջանական 831-րդ ԱՄՀԳ-ն: Օգոստոսի 15-ին Մարտունու ՊՇ մոտոհրաձգային ստորաբաժանումները մտան Վերին Յաղլավենդ և Կարամամեղի գյուղերում սարքավորված ադրբեջանական բանակի հենակետերը, ինչպես նաև տիրեցին Դովլաթյարը բնակավայրի վրա գերիշխող բարձունքներին: Մարտունու ՊՇ 23-րդ և 24-րդ ԱՄՀԳ-ները միաժամանակ հակահարձակում ձեռնարկեցին Ներքին Վեյսալու գյուղի ռազմական հենակետի ուղղությամբ և վերահսկողություն հաստատեցին այնտեղ: Այնուհետև, շարունակելով առաջխաղացումը, հայ մարտիկները

¹³ ԼՂՀ ՊՆԱ, Приказы ПКСО, дело N 4, Приказ Председателя комитета Самообороны НКР N 031, л. 75:

տիրեցին Նամազչալա լեռանը (նիշ 348,5) ու Կոբու Դիլադարդա գյուղի կաթնապրանքային ֆերմային (ԿԱՖ): Իսկ այդ գյուղում տեղակայված ադրբեջանական բանակի ստորաբաժանումները, հայտնվելով 23-րդ և 24-րդ գումարտակների և աջից գրոհող 21-րդ և 22-րդ գումարտակների արանքում, առանց լուրջ դիմադրության փախուստի դիմեցին: Հայ մարտիկները տիրեցին նաև Քարվենդի մոտակա՝ 318,0 նիշով բարձունքին:

Հետախուզական տվյալների վերլուծությունից հայտնի դարձավ, որ հայկական ստորաբաժանումների առաջխաղացումը կանգնեցնելու նպատակով, հակառակորդը մարտական տագնապով ուռքի է հանել Ջաբրայիլի, Ֆիզուլիի, Կուբաթլուի, Ջանգելանի հենադաշտերում կենտրոնացված բոլոր զինված ուժերը¹⁴: Իրացնելով այդ օպերատիվ տեղեկույթը և վերահասավորելով կենդանի ուժերն ու միջոցները՝ ԻՊՈՒ հրամանատարությունը շարունակեց զարգացնել հաջողությունը նշված օպերացիոն ուղղություններում: Մասնավորապես, Հադրութի ՊՇ ստորաբաժանումները մարտական գործողություններ սկսեցին Սուլեյմանլուի ուղղությամբ, իսկ Մարտունու և Շուշիի ՊՇ ստորաբաժանումները համապատասխանաբար ձախ և աջ թևերում նպաստավոր բնագծեր էին զբաղեցնում հարձակման անցնելու համար: Թերևս այդ վերախմբավորումներով պայմանավորված՝ ընդհանուր առմամբ, մարտերի թափն օրվա ընթացքում նկատելիորեն թուլացավ: Հայ մարտիկների հաջողություններն ստիպեցին Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությանը վերստին հրադադար ադերսել, ինչը, սակայն, թելադրված էր ոչ թե ադրբեջանական կողմի խաղաղասիրական ձգտումներով, այլ ուժերի վերախմբավորում կատարելու և ադրբեջանական բանակում առաջացած խուճապը վերացնելու անհրաժեշտությամբ: Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ հրադադարի վերաբերյալ առաջարկությունից շատ չանցած, օգոստոսի լույս 17-ի գիշերը հակառակորդը հարձակում սկսեց Հադրութի շրջանի սահմանամերձ բնակավայրերից Էդիլլուի (Ուխտաձոր) ուղղությամբ: Մյուս կողմից, սխալ կլիներ հնարավորություն տալ պայմանավորվածությունները մշտապես խախտող ագրեսիվ հակառակորդին վերախմբավորելու տեղ հասցված ուժերն ու միջոցները և հարձակման անցնելու ճակատային գծի ամբողջ երկայնքով, ուստի ԼՂՀ ԻՊՈՒ ստորաբաժանումները, առանց ժամանակ կորցնելու մի քանի ուղղություններով հակահարձակման անցան:

¹⁴ ԼՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативного дежурного, РТ N 150, л. 45:

Հարավային ճակատում հաջողությանը նպաստելու, ինչպես նաև Լաչինի միջանցքի անվտանգության ապահովման հիմնական խնդիրը լուծելու նպատակներով Լաչինի շրջանում հայ զինվորները մարտեր ծավալեցին «Կորբա» կոչվող բարձունքից մինչև Ուխտասար և թշնամուց մաքրեցին այդ տարածքը՝ հասնելով Ներքին Ֆարաջան գյուղին¹⁵։ Իսկ Հաղրուփի ՊՇ մարտիկները Կուբաթլուի շրջանում տիրեցին Վերին Կարակոյունլու բնակավայրի և 805,4 նիշով բարձունքի միջև ընկած՝ հակառակորդի կարևոր դիրքերին, Ֆիզուլիի շրջանում վերահսկողության տակ առան Վերին Ռաֆադինլիի շրջակայքը, 660,5, 539,5 և 493,3 նիշերով բարձունքները, գրավեցին Ջաբրայիլի (այժմ՝ Հաղրուփի) շրջանի Դաշքեսան գյուղի թռչնապրանքային ֆերման (ԹԱՖ)։ Երեկոյան հակառակորդը երեք տանկի և հրետանային կրակի աջակցությամբ հարձակում ձեռնարկեց Դաշքեսան լեռան (նիշ 602,1) կողմից։ Հայ մարտիկները, հետ շարժելով թշնամուն, անցան հակահարձակման և տիրեցին այդ կարևոր բարձունքին։ Ժամը 21.25-ին հայ մարտիկները հաստատվեցին նաև համանուն գյուղում։ Այսպիսով, սահմանված հնգօրյա հրադադարը խախտած ադրբեջանական կողմը, փաստորեն, ստացավ արժանի հակահարված¹⁶։

Օգոստոսի 20-ին, ձգտելով բեկում մտցնել մարտական գործողությունների թատերաբեմում, Մարտունու շրջանի ուղղությամբ գտնվող թշնամու զորակայանից փորձ արվեց ճեղքել ՊՇ-ի արևելյան պաշտպանական գիծը։ Հայ մարտիկները, կորուստներ պատճառելով հակառակորդին, ստիպեցին թողնել նրա իսկ հենակետերը։ Մարտական գործողությունները շարունակվեցին նաև Հաղրուփի ՊՇ և Լաչինի ուղղությամբ։ Մարտական գործողություններ սկսեցին նաև Մարտունու ՊՇ մյուս ստորաբաժանումները և սրընթաց գրոհով ժամը 20.15-ին տիրեցին 472 նիշով բարձունքին (Քավթաուլու) և Աղբուռուն լեռանը։

Նախապատրաստական ձեռնարկումներից հետո, 1993 թ. օգոստոսի 22-ին ԼՂՀ ԻՊՈՒ ստորաբաժանումները հակահարձակման անցան Ֆիզուլի-Ջաբրայիլ-Կուբաթլու օպերացիոն ուղղություններով¹⁷։ Հաղրուփի ՊՇ 13-րդ, 14-րդ, 15-րդ, Մարտունու ՊՇ 21-րդ, 22-րդ ԱՄՀԳ-ին և Հաղ-

¹⁵ ԼՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативного дежурного, РТ N 150, л. 47:

¹⁶ Հարությունյան 2001, 121-122, հմմտ. Հարությունյան 2015, 152:

¹⁷ ԼՂՀ ՊՆԱ, Հաղրուփի ՊՇ ՊԲ հրամանատարի վճիռը 15.08.1993 թ.-26.09.1993 թ., քարտեզ N 22, գույքահամար 210, Օպերատիվ բաժնի աշխատանքային քարտեզ. Հաղրուփի ՊՇ, հուլիս-օգոստոս, 1993 թ., քարտեզ N 21, գույքահամար 206:

րութի ՊՇ-ին օգնության եկած 83-րդ Առանձին մոտոհրաձգային բրիգադին (ԱՄՀԲր), ինչպես նաև կենտրոնական ենթակայության ականանետային դիվիզիոնին հաջողվեց նույն օրը մտնել Ֆիզուլի՝ դրանով իսկ լիովին անվտանգ դարձնելով ԼՂՀ արևելյան սահմանները¹⁸ (քարտեզ 1)¹⁹։ Վերոհիշյալ ադրբեջանցի հեղինակը ստիպված է խոստովանել, որ «հակառակորդի ուժերի ճնշման տակ ադրբեջանական 160-րդ գնդի և տեղի բրիգադի զորամասերը հարկադրված էին թողնել Ֆիզուլին և համանուն շրջանը՝ 1.050 կմ² ընդհանուր մակերեսով»²⁰։

Զուգահեռաբար ազատագրվեց նաև Սեյիդահմեդլի գյուղի մոտակա 378,7 նիշով բարձունքը։ Կուբաթլուի և Ջաբրայիլի շրջանների միջակայքում շրջապատվեց ադրբեջանական «Գորշ գայլեր» խմբավորումը և ջախջախվեց։ Գերի հանձնվեցին վեց գրոհայիններ։

Մարտական գործողությունների հիմնական թատերաբեմից ՊԲ հրամանատարության ուշադրությունը շեղելու նպատակով թշնամին օգոստոսի 22-ին փորձեց ճեղքել ԻՊՈՒ պաշտպանությունը Օմարի լեռնանցքի ուղղությամբ, բայց, կորուստներ կրելով, հետ շարվեց։ Այդուհանդերձ, օգոստոսի 23-ին մարտերը նշված ուղղություններում շարունակվեցին։ Մարտունու ՊՇ ստորաբաժանումները հակառակորդի զինված ուժերից մաքրեցին Կարախանբեյլի մեծ գյուղը և պաշտպանություն բռնեցին գյուղից դուրս։ Նույն օրը վերահսկողություն սահմանվեց Ալխանլը գյուղի մոտակա 236,0 նիշով բարձունքի ու ոչխարապրանքային ֆերմայի (ՈԱՖ), ապա այգիների շրջակայքի վրա։ Մարտունու ՊՇ զրահատեխնիկան մտավ Ալխանլու²¹։ Հայ մարտիկներին հաջողվեց հասնել Վերին Քյուրդմահմուդլու բնակավայրի հենակետերին։ Վերահսկողության տակ առնվեցին նաև Խորովլու բնակավայրը և նրա շրջակա բարձունքները։

Դեռևս օգոստոսի 20-ին Հադրութի շրջանում ազատագրելով Առաքել գյուղը և այդ տեղամասում հակառակորդին ամբողջությամբ հետ շարտելով ԼՂՀ տարածքից՝ 6-րդ ՊՇ մարտիկները օգոստոսի 23-ին հյուսիսից և արևմուտքից հակահարձակման անցան Ջաբրայիլի ուղղությամբ։

¹⁸ ԼՂՀ ՊՆԱ, Приказы ПКСО, дело N 4, Приказ Председателя комитета Самообороны НКР N 031, л. 75:

¹⁹ Այս և հաջորդ երկու դեպքերում օգտագործվել են Խաչատրյան, Ղազարյան, Մարգարյան 2008, գրքի համապատասխան քարտեզները։

²⁰ Араслы 1995, 41.

²¹ Ղարիբյան 2014, 129:

յամբ: Միաժամանակ, արևելքից առաջխաղացում սկսեցին 11-րդ, 12-րդ ԱՄՀԳ-ները Դաշքեսան լեռ - Չերեքեն - Խորովլու գծի ուղղությամբ և օրվա վերջում, 61-րդ, 62-րդ, 63-րդ ԱՄՀԳ-ների հետ միասին տիրեցին Զաբայիլ քաղաքին (քարտեզ 2):

Կուրաթլուի ուղղությունում Շուշիի ՊՇ ստորաբաժանումներին օգնության հասած ԻՊՈՒ այլ ստորաբաժանումների՝ համագործակցված գործողությունների շնորհիվ վերջապես կոտրվեց թշնամու կատաղի դիմադրությունը:

Հաջողությամբ շարունակելով առաջխաղացումը՝ ԼՂՀ ԻՊՈՒ ստորաբաժանումներն ազատագրեցին Կազանզամին բնակավայրը 134,0 նիշով բարձունքի (Սեյիդլի անբնակ գյուղի) մոտ, դուրս եկան Թումասասարի (Թումասասարի) (նիշ 1580,5) և 1322,8 նիշով բարձունքի բնագիծը: Այդտեղից շարժվելով Դաղ Թումաս-1 և Դաղ Թումաս-2 բնակավայրերի ուղղությամբ՝ օգոստոսի 25-ի երեկոյան կողմ հայ մարտիկները ծախ թևում տիրեցին գերիշխող՝ 1079,8 նիշով բարձունքին, իսկ աջում՝ Դաղմաշանլը բնակավայրին: Հակառակորդի կրակակետերը ճնշվեցին Դաշվեյսալի և Խավըսլը գյուղերում (Զաբայիլի շրջան), որից հետո հայկական կազմավորումները շարժվեցին Թումասասարի և համանուն բնակավայրի ուղղությամբ²²: Օրվա ընթացքում անընդհատ հրետակոծվեցին 83-րդ ԱՄՀԲր պաշտպանական դիրքերը: 360,4 և 341,0 նիշերով բարձունքների միջև ընկած տեղամասի վրա թշնամին գրոհ ձեռնարկեց մեկ վաշտի կազմով ու փորձեց մտնել Ալասկարլը գյուղը: Հետ մղելով գրոհը՝ հայ մարտիկները հակահարձակման անցան և, կոտրելով թշնամու դիմադրությունը, մտան Վերին Սեյիդահմեդլի և Կորգան գյուղերը:

Իսկ արդեն օգոստոսի 28-ին 83-րդ ԱՄՀԲր ստորաբաժանումները մտան Վերին Շուքուրբեյլի և Ներքին Աբդուռահմանլու, որով կանխվեց հակառակորդի հարձակումը Ֆիզուլիի օպերատիվ-մարտավարական ուղղությունում: Ինչպես ասում են՝ մարտադաշտը ցույց տվեց, որ հակառակորդի ռազմական ինքնաթիռների և ուղղաթիռների օդային հարձակումները ևս չէին կարող խանգարել հայ զինվորների անկասելի առաջխաղացմանը: Հետախուզության հայթայթած տեղեկությունների և գերիների ցուցմունքների համաձայն՝ մոտակա ադրբեջանական գյուղերը խուճապահար ու արագ լքվում էին:

²² ԼՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативного дежурного, РТ N 150, л. 56:

Հաջողությամբ էին զարգանում Կուբաթլուի շրջանում հակառակորդի կրակակետերի ճնշման նպատակով մղվող մարտական գործողությունները: Օգոստոսի 29-ին 5-րդ ՊՇ ստորաբաժանումները՝ Ն. Դանիելյանի հրամանատարությամբ, մարտական գործողություններ սկսեցին Կուբաթլուի շրջանում և մտան Կարակիշիյար գյուղը:

Օգոստոսի 30-ի մարտական գործողությունների շնորհիվ հայկական ստորաբաժանումները վերահսկողության տակ առան Կուբաթլուի շրջանի Խոջիկ, Բալա-Սոլթանլը և Խանդեկ բնակավայրերը:

Հադրութի ՊՇ մարտիկները շարունակեցին առաջխաղացումը Ֆիզուլիի շրջանի Ներքին Քյուրդահմեդլի գյուղի ուղղությամբ: Թշնամու գերակշիռ ուժերին հաջողվեց ծուղակի մեջ առնել հայ մարտիկներին: Սակայն անհապաղ ձեռնարկված միջոցների շնորհիվ հայ մարտիկներին հաջողվեց ճեղքել շրջապատման օղակը:

Արդեն օգոստոսի 31-ին հայ մարտիկները տիրեցին 835,0 նիշով բարձունքին: Նույն օրը 4-րդ ՊՇ ստորաբաժանումները տիրեցին Գյումբեզ լեռանը (նիշ 1004,4): Ավելի աջ գործող Հ. Բաղմանյանի ստորաբաժանումը թշնամուց մաքրեց Կուբանթեփե լեռը (նիշ 1762), Մելիքահմեդլի բնակավայրը, Խըղըրլը գյուղը և 4-րդ ՊՇ ստորաբաժանումների հետ շարունակեց առաջխաղացումը Աբդալանլը-Լեփեխեյրանը - 781,0 նիշով բարձունք գծով: Մարտունու ՊՇ ստորաբաժանումները ԹԱՖ-ից առաջացան 830,0 և 798,0 նիշերով բարձունքների ուղղությամբ²³:

Հադրութի շրջանի արևմտյան մասի և Կուբաթլուի շրջանի թշնամական կրակակետերի ոչնչացման մարտերին մասնակցեցին Շուշիի ՊՇ 51-րդ, 52-րդ, 53-րդ, Հադրութի ՊՇ 16-րդ ԱՄՀԳ-ները, ինչպես նաև 2-րդ և 4-րդ ՊՇ-ների առանձին ստորաբաժանումներ: Կարող է տպավորություն ստեղծվել, թե ԻՊՈՒ հաղթարշավը հեշտ ու սահուն էր ընթանում: Ամենակին: Հատկանշենք, որ Կուբաթլուի շրջանում մարտերը մղվում էին մեծ դժվարությունների հաղթահարմամբ: Միայն Շուշիի ՊՇ-ի և օգնության հասած ԻՊՈՒ այլ ստորաբաժանումների փոխհամագործակցված գործողությունների շնորհիվ հաջողվեց Կուբաթլուի ուղղությունում կոտրել հակառակորդի դիմադրությունը: Այս ճակատում, Բաշարաթ գյուղի ուղղությամբ Շուշիի ՊՇ-ի ձեռնարկված զորաշարժը մեծապես նպաստեց հակա-

²³ ԼՂՀ ՊՆԱ, Հադրութի ՊՇ ՊԲ հրամանատարի վճիռը 15.08.1993 թ.- 26.09.1993 թ., քարտեզ N 22, գույքահամար 210:

ռակորդի դիմադրության ընկճմանը, ուստի այն արժանի է հատուկ ուսումնասիրության²⁴:

Ադրբեջանական բանակի առանձին ստորաբաժանումների և տեղի բնակչության կատաղի դիմադրությամբ հանդերձ՝ հայկական կազմավորումները երեք ուղղություններով՝ Ջաբրայիլի, Գյուլեբիրդի և Հագարի գետի ձախափնյակի կողմերից խորացան Կուբաթլուի շրջանի տարածք՝ վերջնանպատակ ունենալով տիրել համանուն շրջկենտրոնին:

Այս օպերացիայի անհրաժեշտությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Կուբաթլուի շրջանում ամրացած հակառակորդը մշտապես սպառնում էր Լաչինի միջանցքի անվտանգությանը, կրակի տակ էր պահում Ստեփանակերտ-Երևան ավտոմայրուղին: Ջարմանալիորեն, այս փաստը չէն ուրանում անգամ ադրբեջանցի հեղինակները: Այսպես, օրինակ, վերոհիշյալ Ջ. Արասլը գրել է. «Դրանով (օգոստոսի 31-ին Կուբաթլու շրջկենտրոնին տիրելով - Մ.Հ.) վերացավ Լաչինի միջանցքն ադրբեջանական բանակի կողմից շրջափակելու մեկ և կես տարվա ընթացքում պահպանված սպառնալիքը»²⁵: Ձգտելով ապահովել ԼՂՀ հարավային սահմանների լիակատար անվտանգությունը՝ ԻՊՈՒ-ն հակահարձակման անցավ՝ օպերատիվ-մարտավարական խնդիր ունենալով ջախջախել Ադրբեջանի ՋՈՒ Կուբաթլուի խմբավորումը և ամսվա վերջին օրը վնասազերծեց Կուբաթլու շրջկենտրոնը²⁶ (քարտեզ 3):

Ընդհանրացնելով վերոհիշյալ մարտական գործողությունների վերաբերյալ ոչ գաղտնի տվյալները՝ կարող ենք փաստել, որ Հադրութի շրջանի բռնազավթված մասի ազատագրման, Ֆիզուլիի, Ջաբրայիլի, Կուբաթլուի շրջանների կրակակետերի ճնշման օգոստոսյան օպերացիան ռազմաքաղաքական մեծ նշանակություն ունեցավ: Վերացվեց ԼՂՀ հարավարևելյան ու հարավային սահմանների, ինչպես նաև Ստեփանակերտ-Գորիս ավտոմայրուղու վրա կախված մշտական սպառնալիքը, վնասազերծվեցին Ֆիզուլիի, Ջաբրայիլի, Կուբաթլուի ռազմակայանները, ջախջախիչ պարտության մատնվեցին համանուն շրջաններում կուտակված թշնամական խմբավորումները, Արցախի շուրջ ընդլայնվեց անվտանգության գոտին, և ԻՊՈՒ-ն հաստատվեց նպաստավոր բնագծերում: Ռազ-


²⁴ Հարությունյան 2019, 116:

²⁵ Араслы 1995, 41.


²⁶ ԼՂՀ ՊՆԱ, Приказы ПКСО, дело N 4. Приказ Председателя комитета Самообороны НКР N 031, л. 76:

մական ու բարոյահոգեբանական հարվածներ ստացած Ադրբեջանը ստիպված էր համաձայնել բանակցությունների սեղանի շուրջ նստելու ռուսական առաջարկություններին²⁷:

ԼՂՀ ԻՊՈՒ ստորաբաժանումները, հետապնդելով ճողոպրող թշնամուն, կանգ առան Իրանի սահմանից մի քանի կիլոմետր հեռավորության վրա, ինչը նշանակում էր, որ իրականություն էր դառնում ռազմաճակատի գիծը կարճելու մտահղացումը:



²⁷ Казимиров 2009, 99.



²⁸ ՀՀ ՊՆԱ, Приказы ПКСО, дело N 4. Приказ Председателя комитета Самообороны НКР N 031, л. 76:

և 13-րդ մեքենայացված բրիգադները²⁹: Ի պատասխան՝ Անդրկովկասյան ռուսական զորախմբի հրամանատարությունն սկսեց 127-րդ մոտոհրաձգային դիվիզիայի հրամանատարաշտաբային զորավարժությունները՝ Հայաստանի տարածք թուրքական ագրեսիայի կասեցման խնդիրների ճշգրտմամբ: Իրանի Իսլամական Հանրապետությունը համալրեց ու լիակատար մարտական պատրաստության բերեց սահմանի երկարությամբ ձգված կազմավորումները, սկսեց զորավարժություններ մարտական գործողությունների գոտու անմիջական հարևանությամբ³⁰: Արդեն պատմության գիրկն էր անցել մեր ազգային ու պետական շահերը ոտնակոխ անելու՝ այլ տերությունների ամոթալի գործելակերպը, այլևս հայ ժողովուրդը չէր հանդուրժելու դիվանագետների կամայականությունները և իր վճռական խոսքն ասելու էր հաղթական զենքի լեզվով՝ կանգնեցնելով հակառակորդներին կատարված փաստի առաջ³¹: Փորձը ցույց է տալիս, որ միայն այս կերպ կարող էր վերականգնվել պատմական արդարությունը:

Ռուսաստանի ԱԳՆ-ի միջնորդությամբ, օգոստոսի 31-ի հետմիջօրեին ԼՂՀ-ի և Ադրբեջանի պատվիրակությունների միջև ստորագրվեց հրադադարի համաձայնագիր, որն ուժի մեջ պիտի մնար մինչև սեպտեմբերի 10-ը ներառյալ, իսկ այդ ընթացքում պետք է հանդիպեին երկու հանրապետությունների ղեկավարները, սակայն, հիմնական պայմանավորվածությունները մնացին թղթի վրա՝ Ադրբեջանի ապակառուցողական քաղաքականության պատճառով:

Եզրակացություններ

Այսպիսով, 1993 թ. օգոստոսին Արցախի ԻՊՈՒ ձեռնարկած օպերացիաները հարավային սահմանների երկայնքով և հակառակորդի ռազմական հենադաշտերի վնասազերծումը Ջաբրայիլի, Ֆիզուլիի և Կուբաթլուի շրջաններում ունեցան ռազմաքաղաքական կարևոր նշանակություն ինչպես մեր հանրապետության անվտանգության ու պաշտպանունակության բարձրացման, այնպես էլ զինված ուժերի շինարարության համար: Այդ օպերացիաների վերափմաստավորումը կարող է նշանակալիորեն հարստացնել Արցախում կիրառված ռազմարվեստի առանձին տարրերն ընդհանրացնող պատմությունը և ոչ հեռու անցյալի փորձով նոր իմաստ հաղորդել

²⁹ Араслы 1995, 42.

³⁰ Խաչատրյան, Ղազարյան, Մարգարյան 2008, 136:

³¹ Մարտիկ 1999, օգոստոս, N 34:

ագրեսիվ հակառակորդին կանխիչ հարվածներով խաղաղություն պարտադրելու ռազմավարությանը:

Գրականություն

Աբրահամյան Հ. 2007, Մարտնչող Արցախը, գիրք Գ (1985-2000), Ստեփանակերտ, «Դիզակ պյուս», 700 էջ:

ԼՂՀ ՊՆԱ, Приказы ПКСО, дело N 4, Нач. 01.01.1993 г.-оконч. 30.12.1993 г., 99 л. (Инв. N 15/2-9), Приказ Председателя комитета Самообороны НКР N 031, л. 74-76:

ԼՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативного дежурного, 96 л., РТ N 150 (23.11.1996 г.), н. 16.07.93 г. -ок. 25.10.93 г., лл. 33-37, 45-47, 56:

ԼՂՀ ՊՆԱ, Օպերատիվ բաժնի աշխատանքային քարտեզ, Հաղորդի ՊՇ, հուլիս-օգոստոս, 1993 թ., քարտեզ N 21, գույքահամար 206:

ԼՂՀ ՊՆԱ, Հաղորդի ՊՇ ՊԲ հրամանատարի վճիռը 15.08.1993 թ. - 26.09.1993 թ., քարտեզ N 22, գույքահամար 210:

Խաչատրյան Հ., Ղազարյան Գ., Մարգարյան Ս. 2008, Հաղթանակներն ինչպես եղել են. ազդականչը 44, Երևան, «Հայկական Հանրագիտարան», 864 էջ:

Հակոբյան Թ. 2008, Կանաչ և սև. Արցախյան օրագիր, Թեհրան, «Ալիք», 584 էջ:

Հակոբյան Հ. (խմբ.) 2006, Զորավարը, Երևան, հրատ. նշված չէ, 208 էջ:

Հակոբյան Հ. (խմբ.) 2013, Զորավարը, գիրք 2-րդ, Երևան, «Էդիթ Պրինտ», 280 էջ:

Հասրաթյան Ս. 1998, Գոյամարտ (ԼՂՀ պաշտպանության բանակի մարտական ուղու պատմության համառոտ ուղեցույց), Ստեփանակերտ, Ստեփանակերտի պոլիգրաֆիկականության հրատարակչական կենտրոն, 64 էջ:

Հասրաթյան Ս. 2001, Ղարաբաղյան պատերազմ, Երևան, «Ամարաս», 254 էջ:

Հասրաթյան Ս. 2002, Մարտանցում (ՊԲ ԿՊՇ մարտական ուղու համառոտ պատմությունը), Երևան, «Ամարաս», 68 էջ:

Հասրաթյան Ս. 2008, Պաշտպանության բանակի պաշտպանական շրջանները Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս», 456 էջ:

Հասրաթյան Ս. 2009, Պաշտպանության բանակի հրթիռահրետանային և հակաօդային պաշտպանության զորքերը Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս», 144 էջ:

- Հասրաթյան Ս. 2010, Պաշտպանության բանակի զորատեսակները, ծառայությունները և առանձին ստորաբաժանումները Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, Ստեփանակերտ, «Ռիզակ պլուս», 256 էջ:
- Հասրաթյան Ս. 2018, Արցախյան ճակատում (1991 թ. ապրիլ-2016 թ. ապրիլ), Երևան, «Տիգրան Մեծ», 256 էջ:
- Հարությունյան Մ. 1999, Հակառակորդի չդադարող սադրանքները (օգոստոս, 1993 թ.), «Մարտիկ», օգոստոս, N 33, էջ 3, 6:
- Հարությունյան Մ. 1999, Պատմական հողերի ազատագրումը (օգոստոս, 1993 թ.), «Մարտիկ», օգոստոս, N 34, էջ 3:
- Հարությունյան Մ. 2000, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազատագրական մարտերը 1993 թ. օգոստոսին, Երիտասարդ գիտաշխատողների 27-րդ նստաշրջանի զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, էջ 40-42:
- Հարությունյան Մ. 2001, Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ.: Պատմ. գիտութ. թեկնածուի գիտակ. աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան (պահվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական և Հայաստանի ազգային գրադարաններում), 196 էջ:
- Հարությունյան Մ., Խաչատրյան Հ. 2004, Ֆիզուլիի, Ջաբրայիլի և Կուբաթլուի ռազմական գործողություն 1993, Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994: Հանրագիտարան 1 հատորով, Երևան, «Հայկական Հանրագիտարան», էջ 697-699:
- Հարությունյան Մ. 2004, Ռազմաճակատի հարավարևելյան ուղղությունում Արցախի ինքնապաշտպանության ուժերի հակահարձակումը հրահրված էր ադրբեջանցիների կողմից, «Մարտիկ», 14-21 օգոստոսի, N 35, էջ 3:
- Հարությունյան Մ. 2015, Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ., «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք), գիրք 5, Շուշի, «Կաճառ», էջ 150-157:
- Հարությունյան Մ. 2019, Արցախյան պատերազմի կարևոր օպերացիաների պատմագրական լուսաբանման որոշ վիճահարույց հարցերի մասին, «Հայկական բանակ» (ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի (ՊԱՀՀ) ռազմագիտական հանդես), N 4, էջ 111-120:
- Հովհաննիսյան Ա. 2015, Բանակաշինությունը Հայաստանի երրորդ հանրապետությունում, Երևան, Պատմության ինստիտուտ, 355 էջ:

- Ղարիբյան Գ. 2014, Իմ անցած մարտական ուղին, Կաճառ (ԿԳԿ-ի տարեգիրք), գիրք 3, Շուշի, «Կաճառ», էջ 120-134:
- Սարգսյան Ս. 2002, Հայկական բանակ (Բանակը մեր ժողովրդի և պետության անվտանգության գրավականն է), Երևան, «Ամարաս», 112 էջ:
- Օհանյան Ս. 2012, Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը (համառոտ ուրվագիծ), Երևան, 400 էջ:
- Араслы Дж. 1995, Армяно-азербайджанский конфликт (военный аспект), Баку, «Эргюн», 88 с.
- Арутюнян В. 1997, События в Нагорном Карабахе. Хроника, часть V. Январь 1993 г.- июль 1995 г., Ереван, «Гитутюн», 512 с.
- Арутюнян М. 2009, Азербайджан-НКР: краткая история военного конфликта, «Вестник» Университета Месроп Маштоц (сборник научных статей), N 3, с. 40-62:
- Жирохов М. 2009, Карабах: земля раздора, Киев, «Румб», 264 с.
- Казимиров В. 2009, Мир Карабаху. Посредничество России в урегулировании нагорно-карабахского конфликта, Москва, Международные отношения, 456 с.

ԱՐՑԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԹԵՎՈՒՄ 1993 Թ. ԱՄԱՌԱՅԻՆ ՌԱԶՄԱՐՇԱՎԻ ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Միեր Հարությունյան

Ամփոփում

Ինչպես և սպասվում էր, Աղդամի խմբավորման պարտությունից հետո հակառակորդը վիթխարի կենդանի ուժ և միջոցներ կուտակեց Ֆիզուլիի և Զաքրայիլի շրջաններում՝ հարվածի գլխավոր ուղղությունը տեղափոխելով ԼՂՀ հարավարևելյան ու արևելյան շրջաններ: Հետ մղելով հակառակորդի ուժեղ ճնշումը՝ ԻՊՈՒ ստորաբաժանումները հակահարձակման անցան հարավային ռազմաճակատի ամբողջ երկայնքով:

Հաղորդի շրջանի ազատագրման, Ֆիզուլիի, Զաքրայիլի, Կուբաթլուի շրջանների կրակակետերի ճնշման օգոստոսյան ռազմական գործողությունը ռազմավարական և բարոյական մեծ նշանակություն ունեցավ: Վերացվեց ԼՂՀ արևելյան ու հարավային սահմանների, ինչպես նաև Ստեփանակերտ-Գորիս ավտոմայրուղու վրա կախված մշտական սպառնալիքը, վնասազերծվեցին

Ֆիզուլիի, Ջաբրայիլի, Կուբաթլուի ռազմականները, ջախջախիչ պարտության մատնվեցին համանուն շրջաններում կուտակված թշնամական խմբավորումները, ընդլայնվեց Արցախի անվտանգության գոտին, և ինքնապաշտպանության ուժերը հաստատվեցին նպաստավոր բնագծերում: Ռազմական ու բարոյահոգեբանական հարվածներ ստացած Ադրբեջանը ստիպված նստեց բանակցությունների սեղանի շուրջ: Սակայն Ադրբեջանն ինչպես մարտական գործողությունների թատերաբեմում էր խախտում հրադադարի ռեժիմը, այնպես էլ դիվանագիտական ճակատում էր խափանում խաղաղարար գործընթացների դրական զարգացումները՝ ԼՂՀ-ի հետ հիմնախնդիրն ամեն կերպ մղելով ռազմական լուծման հուն: Ահա թե ինչու հարկ եղավ ևս մի քանի շնչոցից հարված հասցնել ադրբեջանական ռազմամոլներին, որպեսզի նրանք մի առ ժամանակ հրաժարվեն իրենց զավթողական նկրտումներից:

Բանալի բաներ՝ Արցախ, ազատագրում, զորակայան, Ֆիզուլի, Ինքնապաշտպանության ուժեր, հարավային ռազմաճակատ, անվտանգության գոտի:

О ТАКТИЧЕСКИХ ОСОБЕННОСТЯХ ЛЕТНЕЙ КАМПАНИИ 1993 Г. НА ЮЖНОМ ФЛАНГЕ ОБОРОНЫ АРЦАХА

Мгер Арутюнян

Резюме

Как и следовало ожидать, после поражения Агдамской группировки противник сосредоточил значительное число живой силы и средств в Физулинском и Джебраильском районах, тем самым перенеся направление главного удара на юго-восточные и восточные районы НКР. Отбив мощный натиск противника, подразделения Сил самообороны перешли в контрнаступление по всей линии южного фронта.

Августовская операция по освобождению Гадрутского района, подавлению огневых точек в Физулинском, Джебраильском, Кубатлинском районах имела большое стратегическое и моральное значение. Была ликвидирована постоянная угроза восточным и южным рубежам НКР, а также автомагистрали Степанакерт – Горис, были уничтожены военные базы Физули, Джебраила, Кубатлу, потерпели поражение сконцентрированные в одноимённых районах вражеские группировки, была расширена зона безопасности вокруг Арцаха, подразделения Сил самообороны заня-

ли выгодные позиции. Азербайджан, которому был нанесен военный и морально-психологический удар, вынужден был сесть за стол переговоров. Однако азербайджанская сторона как на арене военных действий нарушала режим прекращения огня, так и на дипломатическом фронте срывала позитивное развитие миротворческого процесса, всячески пытаясь решить карабахскую проблему силовыми методами. Именно поэтому потребовалось нанести сокрушительный удар азербайджанским милитаристам, чтобы они на какое-то время отказались от своих захватнических планов.

Ключевые слова – Арцах, освобождение, военная база, Физули, Силы самообороны, южный фронт, зона безопасности.

ON THE TACTICAL FEATURES OF 1993 SUMMER CAMPAIGN OF ARTSAKH DEFENSE ON THE SOUTHERN FLANK

Mher Harutyunyan

Abstract

As expected, after the defeat of Agdam group the enemy concentrated a large amount of manpower and equipments in the Fizuli and Jebrail regions, thereby shifting the direction of the main attack to the southeastern and eastern regions of the NKR. Having beaten off the enemy's strong blow, SDF units began a counterattack all along the southern front. The August operation to liberate the Hadrut region and to suppress the firing points in the Fizuli, Jabrail and Kubatlu regions was of great strategic and moral importance. The constant threat to the eastern and southern boundaries of the NKR, as well as to the Stepanakert-Goris highway was liquidated, military bases of Fizuli, Jabrail, Kubatlu were destroyed, the rival factions concentrated in these regions suffered a crushing defeat, the security zone around Artsakh was expanded, SDF units took favorable positions. Receiving military, moral and psychological strike, Azerbaijan was forced to come to the negotiating table. However, Azerbaijan was both violating the cease-fire regime on the battlefield and thwarting the positive development of the peacemaking process on the diplomatic front, strongly pushing the Karabakh problem to the military solution. That is why it became necessary to strike a number of punishing blows to the Azerbaijani militarists to make them abandon their invasive plans for a while.

Key words – Artsakh, liberation, military base, Fizuli, Self-Defense Forces, southern front, security zone.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ 1918-1921 ԹԹ.*

Վանիկ Վիրաբյան

Պատմական գիտությունների դոկտոր

ՀՀ ԽՍ. Արմավանի անվան ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոն

ՀՀ, Երևան, Տ. Մեծ 17

Էլ. հասցե՝ vanik.virabyan@mail.ru

Հոդվածը ներկայացվել է 14.10.2019, գրախոսվել է 11.10.2019, ընդունվել է
տպագրության 05.08.2020

Ներածություն

Հոկտեմբերյան հեղաբեկումից հետո Անդրկովկասում թուրքական ագրեսիայի ծավալմամբ ընթացան ուժերի վերադասավորումներ, որն արդյունք էր 1918 թ. մարտի 3-ին Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև կնքված Բրեստ-Լիտովսկի համաձայնության, որով Ռուսաստանից խլվում էին Բաթումի, Կարսի և Արդահանի մարզերի նկատմամբ նախկինում ունեցած իրավունքները: Ծանրագույն ռազմաքաղաքական իրադրությունում 1918 թ. ապրիլի 22-ին Անդրկովկասյան սեյմն ազդարարում է անկախ Անդրկովկասի Դեմոկրատական Հանրապետության հռչակման մասին՝ Բաթումում վերսկսելով բանակցությունները Թուրքիայի հետ, սակայն մայիսի 11-ին ներկայացվում են նոր և մասնավորապես հայերի համար անընդունելի պահանջներ: Վրացիների, հայերի և ադրբեջանցիների շահերի աններդաշնակությունն արագացնում է Անդրկովկասյան տան փլուզումը: Վրացիների պրոգերմանական, հայերի՝ պրոբրիտանական և առհասարակ արևմտամետ, ադրբեջանցիների՝ պրոթուրքական կողմնորոշումները խաղում են իրենց չարաղետ դերը: Գերմանիայի հետ գաղտնի համաձայնագրի կնքմամբ Վրաստանը երաշխիքներ է ստանում տարածքային ամբողջականության պահպանման մասին, իսկ Ազգային խորհուրդը 1918 թ. մայիսի 25-ին հռչակում է Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության անկախությունը, որին հետևում են ադրբեջանցիները և հապաղումով՝ նաև հայերը: Այդ գործընթացին հետևած Մ.Ա. Հարովը Բաքսթոնը գրում է. «Այն առավելությունները, որին տիրապետում էր Վրաս-

* Հետազոտությունը կատարված է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ թեմատիկ հայտի (18T-6A068 «Հայկական զինուժը 1914-1920 թթ.» շրջանակներում):

տանը, կայանում էին Սև ծովում նավահանգիստ ունենալու և աշխարհագրական միասնության մեջ, իսկ Ռուսաստանի փլուզումը նրա ձեռքերում թողեց հսկայական հարստություններ և կազմակերպված մեխանիզմ: Անկախության հռչակմամբ նա փաստորեն դարձավ անկախ պետության անհրաժեշտ բոլոր հատկանիշների կրողը»¹:

Զինված ուժերի ձևավորման գործընթացները: Զուգահեռներ

Կառավարության նախագահ է դառնում մենշևիկ Ն.Վ. Ռամիշվիլին (1918 թ. հունիսին նրան փոխարինում է Ն. Ժորդանիան), առաջին ռազմական նախարար՝ Գ. Գեորգաձեն, որին 1919 թ. մայիսին փոխարինում է Ն. Ռամիշվիլին (նա զգալի դեր է խաղում վրացական զինուժի ստեղծման գործում), 1920 թ. ապրիլից՝ Գ. Լորդկիպանիձեն, 1920 թ. դեկտեմբերից՝ Պ. Զիչինաձեն²: Բարձրագույն օրենսդիր մարմնի գործառնությունները դրվում են Վրաստանի Ազգային խորհրդի վրա, որին 1919 թ. մարտին հաջորդում է Սահմանադիր ժողովը. նախագահ է ընտրվում Ն. Զիսեիձեն, որի գերակշռող քաղաքական ուժը 1917 թ. աշնանը Սահմանադիր ժողովի ընտրություններում հաղթած մենշևիկներն էին (նրանք ստացել էին 640,2 հազար ձայն՝ իրենց ուղենիշ ընտրելով ռազմաշունչ ազգայնամոլությունը)³:

Ռազմուժի վրա հենքը ներքին և արտաքին հարցերի լուծման գործում Վրաստանի համար առաջնահերթություն դարձավ: Դրան նպաստեց այն, որ, ի տարբերություն Ադրբեջանի և մասնավորապես Հայաստանի, Վրաստանն օգտվեց Թիֆլիսում կենտրոնացված նախկին Կովկասյան բանակի զինապահեստներից, որն էլ կարևոր գործոն դարձավ Անդրկովկասում վրաց հեգեմոնիզմին առաջնություն տալուն և հայերի ճնշման համար: Առաջին քայլերն ազգային զինուժի կազմակերպման ուղղությամբ արվում են դեռևս 1917 թ. նոյեմբերին, սակայն դրանք ձախողվում են Կովկասյան բանակի քայքայմամբ: Կովկասյան բանակի հրամանատար Մ. Պրժևալսկու⁴ հրամանագրով անհրաժեշտ էր ձևավորել 2 հրաձգային դիվիզիա, 2

¹ St'u Безугольный 2009, 87-101:

² St'u Kaniбepдa 2015, հմմտ. նաև Уратадзе 1956, 77-78:

³ St'u Безугольный 2009, 87-101:

⁴ Պրժևալսկի Միխայիլ Ալեքսեյի (5.11.1859 - 13.12.1934, ցարական բանակի գեներալ (19.11.1916): 1917 թ. մայիսի 31-ից դարձել է Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարը: Դեկտեմբերի 5(18)-ին Պրժևալսկին Թուրքիայի հետ կնքել է Երզնկայի զինադադարը (Залесский 2003, 124, 464, 495-496, 527, 819, հմմտ. նաև Ганин 2009, 316-317, 421, 487, 584, 733, 877):

լեռնային հրետանային և հեծյալ բրիգադներ, հրասանդային դիվիզիոն և պահեստազորի գունդ: Վրացական կորպուսի հրամանատար է նշանակվում գնդապետ Ահմետելին (Ահմետելաշվիլին), շտաբի պետ՝ կապիտան Ի. Գեդևանիշվիլին: 1918 թ. փետրվարի 25-ի վիճակով կորպուսի ղեկավարությունը, հետևակային և հեծյալ զորամասերը, առանձին գործակալական ղեկավարությունը, հեծյալ հարյուրյակը և զորահանգրվանային վաշտը արդեն ձևավորված էին⁵: Ըստ Յ. Կալիբերդայի՝ վրացական կորպուսն 1918 թ. ուներ 11281 հոգի, այդ թվում՝ 924 սպա, 9476 հետևակ զինվոր, 641 հեծելակ⁶:

Սակայն ինչպես ՀՀ պարագայում, վրացական ազգային զորամասերի ձևավորումն ընթացավ լուրջ խոչընդոտների և քաշքշուկի ու միջոցների բացակայության պայմաններում⁷: Գ.Ի. Ուրուտաձեի կարծիքով, ազգային զորամասերի կազմավորման անհաջողությունները պայմանավորված էին նրանով, որ դրանք «ուժեղ վարակված էին բոլշևիկյան թույնով»⁸: Բոլշևիկների ազդեցության տակ ընկած զորամասերը դժկամությամբ էին ենթարկվում Ազգային խորհուրդների կարգադրագրերին կամ չէին ենթարկվում: Ըստ այդմ՝ Թիֆլիսի բանվորների պատգամավորների գործադիր կոմիտեն որոշում է կազմացրել ազգային զորամասերը, իսկ կորպուսի ղեկավարությունը լուծարվում է 1918 թ. մայիսի 26-ին⁹: Իսկ Ազգային խորհրդի նախաձեռնությամբ ստեղծվող Կարմիր գվարդիան ուներ ռազմականացված բնույթ, որը, սակայն, չէր բավարարում ազգային պաշտպանության պահանջները, այն ավելի շուտ ոստիկանական-պատժիչ գործառնությունների համար էր: 1917 թ. վերջին ազգային-հայրենասիրական ալիքի վրա առաջացած Գվարդիան չէր կամենում իր տեղը զիջել կանոնավոր զորամասերին. դա կրկնվում է նաև Հայաստանի Հանրապետությունում, որտեղ զորքի կազմակերպման ֆիդայական-ժողովրդական ոչ մեծ ենթարկվածություն ունեցող և կանոնավոր կառուցվածք չունեցող ձևը բախվեց զորքի կազմակերպման ընդունելի ձևի հետ, որի հետևանքով ՀՀ զինուժը լիարժեքորեն չկայացավ՝ չկարողանալով ապահովել պատշաճ մարտունակություն: Ինչպես հայկական ֆիդայական զինուժը, այնպես էլ վրաց Գվարդիան, որի զինվորները ամենաանկարգապահներն էին, ամ-

⁵ Տե՛ս Дерябин, Паласиос-Фернандес 2000, 38:

⁶ Տե՛ս Каліберда 2015:

⁷ Տե՛ս Безугольный 2009, 87-101:

⁸ Տե՛ս Урутадзе 1956, 42:

⁹ Տե՛ս Квиниатадзе 1985, 20:

րացան, նույնիսկ երբ կանոնավոր ազգային զորուժը կարծես թե քիչ թե շատ կայացել էր:

Ձևավորումից հետո Կարմիր գվարդիան վերանվանվեց Ժողովրդական գվարդիա: Դա պատճառաբանվեց 1918 թ. հունիսի 4-ի վրաց-թուրքական հաշտության պայմանագրով, որով թուրքերն իրավունք ունեին զինաթափելու զինված բանդաները, ինչպես, օրինակ, թուրքերի կողմից «բանդա» անվանված Անդրանիկի զորաջոկատը, որի կազմացրման հետ ՀՀ կառավարությունն արագ «համակերպվեց»: Եվ որպեսզի Կարմիր գվարդիան չընկներ «բանդա» անվանման տակ, Վրաստանի կառավարությունը օրինականացրեց նրա գոյությունը այլ անվան տակ՝ համապատասխանեցնելով օրենքի տառին և ոգուն¹⁰: Գեներալ Գ. Կվինիտաձեն նկատել է, որ վերանվանումը կատարվեց ի շահ Թիֆլիս ժամանած գերմանացիների¹¹: Դա իրականում զուգորդվեց Ռուսաստանի բոլշևիկյան զորաջոկատների հետ, որոնց հետ մենշևիկները չէին ցանկանում որևիցե ընդհանուր եզր ունենալ¹²: Եվ այսպես, կանոնավոր ուժերից զատ, Վրաստանի ղեկավարությունը զուգահեռաբար զարգացրեց նաև իրեն ենթակա պարտիզանական-անկանոն կառույցները և մասնավորապես սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամներից կամ հետևորդներից բաղկացած Ժողովրդական պահակազորը: Սկզբնապես Գվարդիան պետական մարմին չէր և հովանավորվում էր մասնավոր կերպով: 1918 թ. հուլիսի 2-ին ընդունված «Ժողովրդական գվարդիայի» վերափոխման մասին օրենքով այն վերածվեց պետական զինվորական կազմակերպության՝ ֆինանսավորվելով բյուջեից: Ըստ օրենքի՝ ձևափոխվեց նրա կառուցվածքը, բացի հետևակ զինվորներից, այն նաև ձեռք բերեց հրետանի, զրահապատ գնացքներ, ինժեներային խմբավորումներ և այլն: Գվարդիան համարվեց կամավորական կառույց, և զինվորները պարտավոր չէին մնալ զորանոցներում՝ ժամանակի մեծ մասը անցկացնելով տանը կամ աշխատավայրում. հավաքվում էին միայն պատերազմի կամ դասընթացների ժամանակ, իսկ նրանց ընտանիքները սոցիալական օգնություն էին ստանում: Աշխատավարձը հատկացվում էր միայն հրամանատարական և մատակարար

¹⁰ Жордания 1968, 96.

¹¹ Квиниатадзе 1985, 53.

¹² Ст'и Борьба за победу советской власти в Грузии 1958, 354-355:

րարման անձնակազմին: Գվարդիականների հրամանատարությունում որևիցե սպայական կոչում չկար¹³:

Կանոնավոր բանակի խնդիրները

1918-1920 թթ. վրաց բանակը և Ժողովրդական գվարդիան գործել են զուգահեռաբար՝ միայն պատերազմի ժամանակ միավորվելով մեկ ընդհանուր հրամանատարության ներքո: Խաղաղ ժամանակ բանակի և Գվարդիայի միջև իշխել է կոնսենսուս՝ կառավարության միջնորդությամբ ռազմական նախարարության և Ժողովրդական գվարդիայի Գլխավոր շտաբի միջև պայմանավորվածությամբ: Ինչպես ՀՀ զինուժում, որտեղ ֆիդայապետերի, անկանոն զորամասերի և կանոնավոր բանակի հրամանատարների միջև գոյություն ուներ խուլ հակամարտություն, այնպես էլ Վրաստանում Գվարդիայի և բանակի միջև առկա է եղել սուր բախումնային-հակամարտ իրավիճակ, և առավելապես ոչ կանոնավոր, հայդուկատիպ զորաջոկատների կողմից, որոնք ամեն կերպ ձգտել են ոչ միայն չենթարկվել ազգային բանակների հրամանատարությանը, այլև եսամոլաբար ձգտել են իրենց կամքը պարտադրել, որից երկու հանրապետություններում էլ բանակաշինության գործն էապես տուժել է: Վրաց պատմաբան Գ. Անչաբաձեն գտնում է, որ հենց վրաց մենշևիկներն են կազմակերպել «Կարմիր գվարդիան», որը 1917 թ. դեկտեմբերի 12-ին բռնագրավում է Թիֆլիսի զինապահեստը՝ զինաթափելով այնտեղի բոլշևիկյան գվարդիային¹⁴, և որի քննադատությամբ է հանդես եկել գեներալ Կվինիտաձեն¹⁵:

1918 թ. Վրաստանում գտնվող գերմանական ռազմական ներկայացուցիչները կառավարությանն առաջարկում են իրենց աջակցությունը ազգային զինված ուժերի կազմակերպման գործում, սակայն ոչ ադեկվատ վերաբերմունքի են արժանանում¹⁶: Վրաստանի ղեկավարությունը զորքը զինված միլիցիայով փոխարինելու Մարքսի թեզի հետևորդն էր և ավելի հակված էր շվեյցարական մոդելին¹⁷: Ըստ գերմանական ռազմական խորհրդականների ծրագրի՝ անհրաժեշտ էր ձևավորել երկու հրետանային և մեկ հեծելազորային ստորաբաժանումից բաղկացած կանոնավոր բա-

¹³ Anchabadze 2018, N 5, 104.

¹⁴ Anchabadze 2018, 103.

¹⁵ Квиниатадзе 1985, 46-47.

¹⁶ Anchabadze 2018, 103.

¹⁷ Anchabadze 2018, 103.

նակ: Վրաց զինվորականների մեծամասնության աջակցությամբ գերմանական մոդելը, որոշակի փոփոխություններով հանդերձ, ընդունվում է¹⁸: Սակայն Կարմիր գվարդիայի առնչությամբ կարծիքները բաժանվում են: Գերմանացիները, թերահավատորեն վերաբերվելով հեղափոխությամբ ծնված այդ կառույցին, դեմ են արտահայտվում միլիցիատիպ զինված կազմավորումներին, պնդելով, որ դրանք կխախտեն զինուժի ամբողջականությունը, սակայն խորհրդարանի ռազմական հանձնաժողովը միաձայն քվեարկում է կուսակցական ռազմական միավորումների օգտին: Ի վերջո, կողմերը համաձայնվում են, որ Գվարդիան բացառապես կգրադվի ներքին խնդիրներով, իսկ պատերազմի ժամանակ կլուծարվի, և գվարդիականները կմիանան բանակին: Գերմանացիների հեռանալուց հետո պայմանավորվածություններն անտեսվում են, և Գվարդիային իրավունք է վերապահվում մարտադաշտում հանդես գալու որպես առանձին միավոր¹⁹: Պատճառն ակնհայտորեն ի վերուստ Գվարդիային վերապահված արտոնյալ վիճակն էր, գվարդիական վերնախավի չչափավորված ձգտումը՝ ցանկացած գնով պահպանել անկախ կարգավիճակը, ինչպես և հայ հայդուկապետերի պարագայում: Իր հերթին, վրաց գեներալիտետը, որն արմատներով կառչած էր ռուսական բանակից, ինչպես դա առկա էր նաև հայ իրականությունում, մերժում է գվարդիականների ազգայնամոլական խաղարկումները: Վրաց կադրային գեներալները, որոնք ռուսական ռազմական կրթօջախներում ուսանած մարդիկ էին, Ժողովրդական գվարդիան անվանում էին «*ռազմական կազմակերպության անոմալիա*»²⁰:

Բանակի ընդհանուր նկարագիրը և ստեղծման բարդույթները

1919-1920 թթ. վրաց բանակը համալրվում էր համընդհանուր զինապարտությամբ 20 տարին լրացած զինապարտների հաշվին, ծառայությունը հետևակում 1,4 տարի էր, իսկ մնացած զորատեսակներում՝ 1,8 տարի, որը պատերազմի ժամանակ փոխվում էր, և զորակոչվում էին ինչպես ավելի կրտսեր, այնպես էլ այլ տարիքակազմի զինակոչիկները: Հետախուզության տվյալներով՝ զինապարտ բնակչության 525 հազար թվաքանակի պայմաններում կառավարությունը տեսականորեն կարող էր զորակոչել մոտ 160 հազար հոգու, սակայն նկատի ունենալով նախորդ զորակոչերի

¹⁸ Anchabadze 2018, 103.

¹⁹ Anchabadze 2018, 103.

²⁰ Квиниатадзе 1985, 7, 8, 62.

փորձը (զանգվածային խուսափում զորակոչից, ինչպես Հայաստանում, որտեղ դասավորությունը 1919 թ. դեկտեմբերին զանգվածային չափերի էր՝ կազմելով շուրջ 17.665 մարդ²¹, և դա այն պարագայում, երբ ըստ Հովհ. Քաջազնունու կողմից ԱՄՆ-ի Սենատին 1919 թ. նոյեմբերի 10-ին ներկայացված ՀՀ կառավարության հուշագրի՝ մահմեդականների թիվը (թաթար, թուրք, թուրքմեն, կարափափախ) կազմում էր 588.000 մարդ կամ ողջ բնակչության 27%-ը (1917 թ. վիճակով՝ 2.159 հազար հոգի, 1919 թ.՝ 961,7 հազար²²), որն արդյունք էր 1917 թ. հեղափոխությունից մինչև 1919 թ. սկզբի համեմատական կայունացման ժամանակաշրջանը տեղի ունեցած տեղաշարժերի²³), համարվում էր, որ ընդհանուր զորահավաքը կարող էր տալ առավելագույնը 65-80 հազար մարդ²⁴, թեև վրաց դեկավարները Դաշնակիցներին հավաստիացրին, թե կարող են մարտադաշտ դուրս բերել անգամ 200 հազար մարդ²⁵: Գ. Անչաբաձեն հավելում է նաև վրաց-մահմեդական միացյալ զորամասերը. «1919 թ. հունվարից մինչև ապրիլ վրաց զորքերը ստիպված էին դիմակայել մահմեդական վրաց անջատողականների զորամիավորումներին Ախալցխայում և Արդահանի շրջաններում: Ապստամբներին առաջնորդում էր քաղաքական-ռազմական առաջնորդ, հողատեր Օսման Սերվեր բեկ Աթաբեկովը, որը սերում էր մահմեդականացած վրաց ազնվականի ընտանիքից, և հանդիսանում էր անկախ Հարավ-Կովկասյան հանրապետության կողմնակից: Դա իշխանության քաղաքական որոշումն էր՝ ստեղծել վրաց-մահմեդական հեծելազորային գումարտակ («դիվիզիա»), որպեսզի մահմեդական և քրիստոնյա վրացիները միասին հանդես գան Ախալցխայի ռազմարշավում: 1920 թ. սեպտեմբերին վրաց-մահմեդական միացյալ գումարտակը բաղկացած էր 2 հեծելազորային ու հետևակային էսկադրոններից և դասակից՝ 26 սպաներով ու 276 զինվորներով: Հրամանատարը գնդապետ Բախշի բեկ Մաչաբելին էր, վրացի մահմեդական»²⁶:

1919 թ. աշնանը կառավարության հավանությանն է արժանանում գնդապետ Ա. Զախարիաձեի բանակի մասին նախագիծը, որը պետք է

²¹ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 199, ց. 1, գ. 29, թ. 348:

²² Հայկական հարց. Հանրագիտարան 1996, 212:

²³ Քաջազնունի 1993, 11:

²⁴ Безугольный 2009, 87-101.

²⁵ Борьба за победу советской власти в Грузии 1958, 355.

²⁶ Anchabadze 2018, 104.

բաղկանար 4 հրաձգային բրիգադից, որոնք էլ իրենց հերթին՝ 4 հրետանային գումարտակից («դիվիզիաներից») և լեռնային հրետանուց: Բանակը պետք է ունենար հրետանային բրիգադ, հեծելագունդ, գրոհային սավառնակախումբ, զրահապատ մեքենայացված միավոր, սահմանագունդ և այլ զորամասեր ու օժանդակ ստորաբաժանումներ: Սահմանված էին 6 նշանակվող զորակոչումներ՝ լեյտենանտ, ավագ լեյտենանտ, կապիտան, մայոր, գնդապետ և գեներալ, որոնք այլևս չեն նշանակվելու որոշակի ժամկետով կամ մարտում ստացած արժանիքների համար, այլ կապվելու էին սպայի գրաված դիրքի հետ, որի մասին փաստել է գեներալ Գ. Մազնիաշվիլին²⁷:

Պատմաքաղաքական զուգահեռներ

Վրաց զորքի առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ, ի տարբերություն հայկական բանակի, այն ոչ միայն որակյալ սպայակազմի պակաս չուներ, այլև ավելցուկ ուներ, պայմանավորված այն հանգամանքով, որ Թիֆլիսն այդ ժամանակ ոչ միայն Անդրկովկասի խոշորագույն քաղաքական-տնտեսական կենտրոնն էր, այլև ռուսական Կովկասյան բանակի, սպայական բարձրագույն հրամկազմի կենտրոնատեղին՝ որոշակի ռազմական ավանդույթներով²⁸: Վրաց սպաների մի մասն էլ ծառայության մտավ Ադրբեջանում²⁹: Կրտսեր սպայակազմի համար միակ ռազմաուսումնական կենտրոնը Թիֆլիսի երկամյա ռազմական դպրոցն էր: Եթե Վրաստանում ռազմական մինիստրը նշանակվում էր կառավարության կողմից, և այն քաղաքացիական անձ էր, ապա գլխավոր հրամանատարը անպայման պետք է լիներ արիեստավարժ: Գլխավոր շտաբի միջոցով իրականացվում էր զորքերի, այդ թվում՝ ռազմատեղագրական, հրետանային վարչության, ինժեներատեխնիկական և պետական-սահմանային պահակազորի, վրացական նավատորմի ղեկավարումը³⁰:

ՀՀ զինված ուժերի հայացման հետևանքները

Հայաստանում, որտեղ ՀՀ զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանի 1920 թ. հունիսի 26-ի N 1073 շրջաբերականի հիման վրա (որը բխում էր ՀՀ խորհրդարանի 1919 թ. դեկտեմբերի 26-ի և Նախարարների խորհրդ-

²⁷ Anchabadze 2018, 105.

²⁸ Квиниатадзе 1985, 16.

²⁹ Տե՛ս Стеклов 1927, 16, Борьба 1920, 10 июня:

³⁰ Տե՛ս Безугольный 2009, 87-101:

դի 1920 թ. մայիսի 30-ի օրենքներից) ոչ ուշ, քան մինչև օգոստոսի 1-ը գործավարությունը և գրագրությունը ռազմական հիմնարկներում և զորամասերում պետք է կատարվեն հայերեն³¹, կադրուժին զգալի հարված հասցվեց, քանզի հայ զինվորականության հատկապես բարձրաստիճան խավը ոչ իր մեղքով չէր տիրապետում հայերենին, ուստի դուրս մղվեց զորաշարքերից, այդ թվում՝ ռուսներ և այլազգիներ, ինչպես, օրինակ, Սարդարապատի հերոս գնդապետ Ա.Կ. Շնետորը և ուրիշներ, որը վկայում էր որոշման ժամանակավրեպ լինելու մասին: Վրաստանի ռազմաքաղաքական գերատեսչությունը ևս համանման խնդիրներ ունեցավ կուսակցական-քաղաքական ղեկավարության հետ, որն իր ոչ բանիմաց հսկողությամբ վնասեց բանակաշինական գործընթացները, որից բազմիցս բողոքել է գեներալ Գ. Կվինիտաձեն՝ դժգոհելով քաղաքացիական միջավայրից դուրս եկած ռազմական մինիստրների անկրթությունից և ռազմական գործում ոչ բանիմացությունից, տգիտությունից³²:

Ջորջերի համալրման և ապահովվածության խնդիրները

Վրացական բանակի տակտիկական հիմնական միավորը 4 գումարտակից բաղկացած բրիգադն էր՝ թեթև հրետանային դիվիզիոնով. Գումարտակը կազմված էր 5 վաշտից՝ 4 դասակներով, 40 սպայից, 617 զինվորից, 27 գերժամկետայիններից, իսկ գնդի կազմը ռազմական ժամանակ հասնում էր 2225 մարդու՝ 2 գնդացիներով: Հետևակային գումարտակների թիվը 1920 թ. վերջին հաշվվում էր 12 միավոր, որոնք կազմում էին 3 բրիգադ՝ իրենց շտաբներով գտնվելով Քութայիսում, Թիֆլիսում և Գորիում: Բացի այդ, ցամաքային ուժերը պետք է ունենային մեկ հեծելազորային բրիգադ (ռազմական ժամանակ՝ դիվիզիա), սակայն անհաղթահարելի դժվարությունների հետևանքով 1920 թ. վերջին հաջողվեց ծավալել միայն երկու հաստիքային հեծելազունդ և մեկ վրաց-մուսուլմանական գունդ՝ 1500 սվինով: Ռազմական մինիստրին էին ենթարկվում ինժեներական-սակրավորների վաշտերը, ռադիոհեռագրային զորամասերը, որոնք հագեցած էին գերմանական տեխնիկայով, և ավտոգրահատանկային զորաջոկատները (17 զրահամեքենա և 2 տանկ): Վրաց զորքն ուներ նաև ավիաջոկատ, որը համալրված էր Իտալիայից բերված 20 նորագույն սա-

³¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 290, ց. 1, գ. 9, թ. 28:

³² Квиниатадзе 1985, 8:

վառնակներով, ինչպես նաև 6 զրահագնացք և 7 սահմանապահ գնդեր, որոնք, կախված կազմակերպումից, ունեին 386-ից 461 մարդ³³:

Վրացական բանակի մատակարարումը հրազենով և ռազմամթերքով իրականացվում էր մի քանի աղբյուրների հաշվին: Առաջին հերթին Վրաստանն ուներ նախկին ռուսական Կովկասյան բանակից մնացած զինապահեստները, երկրորդ՝ զորքի համար զենքի ու ռազմամթերքի մի մասի հայթայթումը արտասահմանյան գնումների հաշվին էր, երրորդ ուղին սեփական արտադրության կազմակերպումն էր: Նախկին կովկասյան բանակի զինապահեստները Վրաստանի համար երաշխավորում էին զգալի առավելություններ, որից զրկված էին թե՛ Ադրբեջանը և թե՛ Հայաստանի Հանրապետությունը: Դա է՛լ ավելի բարդացավ 1918 թ. դեկտեմբերյան վրաց-հայկական պատերազմի ժամանակ: Այս առումով վրացիները նախընտրելի վիճակում էին, այն դեպքում, երբ ռազմական գույքը, ռազմամթերքն ու հրազենը հայերին անբավարար քանակով և զգալի ուշացումներով հասան, այն էլ փոքր չափաբաժիններով: Չինանոցի սարքավորումները թույլ էին տալիս ոչ միայն վերանորոգել, այլև արտադրել հրազեն ու ռազմամթերք:

Վրացական և հայկական բանակների քիչ թե շատ լիարժեք կայացմանը խոչընդոտեց նաև հումքի և վառելիքի սուր պակասը, որը կախված էր Ադրբեջանից: Հենց այդ վայրիվերումներն էլ ազդեցին զրահային, ավիացիոն և ավտոմոբիլային զորատեսակների ծավալման վրա: Այն առավել ցայտուն արտահայտվեց ՀՀ-ի դեպքում, որը գրեթե ամբողջապես կախված էր Վրաստանի հաղորդակցության ուղիներից և ադրբեջանական նավթից: Մենդամթերքի մեծ պակասություն ևս կար. վրաց զինվորների սննդապաշարը միանգամայն աղքատիկ էր, նրանց տրվում էր ընդամենը 2 ֆունտ հաց, իսկ Հայաստանում վիճակը շատ ավելի անմխիթար էր, զինվորների մի զգալի մասը ցեխահացով էր կերակրվում:

ՀՀ և ՎՀ զինված ուժերը վրաց-հայկական ռազմական բախման ժամանակ

Վրաստանը գրեթե բոլոր տարածաշրջանային սահմանաբախումներին մասնակցեց, որոնք աշխարհաքաղաքական հայեցակարգով պարտադրված իրողություններ էին: Վրաստանն ընտրեց պատմական տարածքի

³³ Ст'ю Безугольный 2009, 87-101.

միավորման ուղին՝ ներառյալ այն հողերը, որոնք երբևիցե գտնվելիս են եղել վրացական թագավորությունների և իշխանությունների կամ Թիֆլիսի նահանգի կազմում՝ ցանկացած առիթ օգտագործելով այսպես կոչված 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջման ցնցումներով առաջացած «*վիրագուրկ*» տարածքները գրավելու համար: Առաջին բախումներից էր 1918 թ. դեկտեմբերի երկշաբաթյա պատերազմը երկու սահմանամերձ շրջանների՝ Ախալքալաքի և Բորչալուի (Հյուսիսային Լոռու) համար: Կովկասյան օրացույցի տվյալներով 1912 և 1913 թթ. Ախալքալաքում ապրում էին 76 446 հայ, 6578 վրացի, իսկ Բորչալուում՝ 63 148 հայ և 7533 վրացի³⁴: Եվ, այնուամենայնիվ, Վրաստանը հավակնեց այդ տարածքներին՝ դրանք համարելով բուն վրացական տարածքներ, հենվելով այն կեղծ դրույթի վրա, որ ցարական իշխանությունների օրոք դրանք եղել են Թիֆլիսի նահանգի կազմում: 1918 թ. ամռանից մինչև նոյեմբեր այդ երկու շրջաններն էլ օկուպացրեց Վրաստանը: Այդ տարածքներից Թուրքիայի հեռանալուց հետո ռազմաքաղաքական բախումներն անխուսափելի դարձան, և գլխավորապես Վրաստանի բռնած կոշտ և անգիջում դիրքորոշմամբ: Այս առումով վրացամետ է Գ. Անչաբաձեի դիտարկումը. «Առաջին դիմակայությունը նախաձեռնել էին հայ դաշնակցականները, որոնք համարում էին իրենց Անտանտի միակ դաշնակիցները Անդրկովկասում: Հետևաբար, դաշնակցականները հավատում էին, որ հաղթող ուժերը կպաշտպանեն իրենց տարածքային պահանջները: 1918 թ. դեկտեմբերին հայկական բանակը ներխուժեց Վրաստանի սահմանամերձ շրջաններ՝ Բորչալու, ինչպես նաև Ախալքալաք, որի բնակչությունը հիմնականում հայեր էին, մարտերը շարունակվեցին մինչև հունվարի սկիզբը, որը համընկավ Անգլիայի զինվորական միավորների ժամանման հետ: Անգլիական գեներալ Ռայքրոֆտի բանակցությունների արդյունքում Բորչալուի մի մասը հայտարարվեց Չեզոք տարածք՝ անգլիացի սպայի ղեկավարության ներքո: Տարածաշրջանային հարցի վերջնական կարգավորումը, այնուամենայնիվ, հետաձգվեց՝ Փարիզի խաղաղության կոնֆերանսի շրջանակներում կարգավորելու սպասումով: Սակայն 1920 թ. աշնանը, երբ Հայաստանը կանգնած էր թուրքական օկուպացիայի սպառնալիքի առաջ, և անգլիական զորքերն արդեն հեռացել էին, Հայաստանի կառավարությունը վրացիներին առաջարկեց

³⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 452, թ. 2, գ. 16, թ. 31:

գբաղեցնել Չեզոք գոտին, ինչը և նրանք արեցին»³⁵: Պատերազմն սկսվել է դեկտեմբերի 13-ին և ավարտվել 1918 թ. դեկտեմբերի 31-ին, որում Հայաստանին ուղեկցել է ռազմական հաջողությունը, վրացիները կրել են պարտություն պարտության հետևից, նահանջել մինչև Թիֆլիս, իսկ դասալքության հետևանքով, կրիտիկական պահին, գեներալ Գ. Կվինիտաձեի գնահատմամբ, ընդամենը «ռեզերվում մնացել էին երեք գեներալ և Սահմանադիր ժողովի մեկ անդամ»³⁶: Իր դերը խաղաց նաև այն, որ հայկական զորքի հարձակման գոտում (Բորչալուի և Թիֆլիսի նահանգի հարավային մաս) գերակշռում էր հայկական բնակչությունը, որը մարտերի ընթացքում պատրաստակամ զինվորագրվում է զորքին՝ գազազած վրաց զինվորների սանձարձակություններից Լոռվա գյուղացիության նկատմամբ: Այդ կապակցությամբ նույնիսկ իրանական ծագման ադրբեջանամետ կոլկասագետ Ֆ. Կազեմզադեն խոստովանում է. «Բորչալուում բռնկվեց ապստամբություն ընդդեմ վրացական ռազմակալման»³⁷: Այդ իրավիճակում հնարավոր է՝ Վրաստանը ջախջախվեր, եթե չմիջամտեին դաշնակիցները, որոնք կասեցնում են հայկական զորքերի հարձակողականը: Դաշնակիցների պարենային և այլ աջակցությունից, Վրաստանի հաղորդակցության ուղիներից մեծապես կախված Հայաստանը հարկադրված էր համաձայնվել, առավել ևս, որ ֆրանսիական բաժնետիրական ընկերությունները տնտեսական շահեր ունեին Լոռվա Չեզոք գոտում: ՀՀ-ին պարտադրվեցին ոչ ձեռնադրող պայմաններ՝ Ախալքալաքը մնաց Վրաստանին, իսկ Բորչալուն հայտարարվեց Չեզոք գոտի, որին կտրականապես առարկեց Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Զամալյանը:

Վրաստանի և Հայաստանի զորքը հետպատերազմյան ժամանակ

Պատերազմից հետո Վրաստանն ամրապնդեց իր դիրքերը տարածաշրջանում՝ ձգտելով զորեղացնել զորքը: 1920 թ. վիճակով ժողովրդական գվարդիան կազմակերպված էր տարածքային-միլիցիոն սկզբունքով: Մշտական զորամասերը համալրվեցին զինվորացուներով կամ կամավորներով, որոնց ծառայությունը մեկ տարի էր: Տեղերում կազմվեցին Գվարդիայի մարզային և շրջանային շտաբներ, որոնց միջոցով կազմավորվեցին գումարտակներ և վաշտեր: Վրաստանը բաժանվեց 15 օկրուգների, որոնք

³⁵ Anchabadze 2018, 105.

³⁶ Квиниатадзе 1985, 62.

³⁷ Каземзаде 2010, 172.

զորահավաքից հետո ձևավորեցին 23 գումարտակ: Գվարդիային տրամադրվեցին ինժեներային, ճանապարհային և ավտոմոբիլային վաշտեր³⁸: Գվարդիայի բարձրագույն օրգանը 21 հոգուց բաղկացած Գլխավոր շտաբն էր, որի անփոխարինելի նախագահը եղել է բավական ճանաչված՝ անհանդուրժողամիտ անձ Վ. Զուդելին: Գվարդիականների մարտական պատրաստվածության մակարդակը էապես զիջում էր բանակայինին, որում կանոնավոր ռազմական ուսուցում չկար: Գվարդիականները բանակի զինվորներից ավելի լավ էին ապահովված սննդով և հանդերձանքով, ինչպես համանման էլիտար առաջնորդներ ունեցող ժողովրդական հայդուկապետերը կամ ինքնակոչ, ոչ մի կարգ ու կանոնի չենթարկվող առաջնորդները Հայաստանում³⁹:

Վրացական և հայկական զինված ուժերի քանակի հարցը պատմագիտության մեջ իրարամերժ գնահատումների է արժանացել, կապված այն հանգամանքի հետ, որ երկու հանրապետությունների զորքը մշտապես գտնվել է զորահավաքի կամ զորացրման վիճակում, և նրա թվաքանակը անընդհատ տատանվել է: Այսպես, որոշակի փաստամբ, 1920 թ. հուլիսի կեսերին վրաց զորքը հաշվվում էր 10450 սվին, 2750 սուր, 36 հրանոթ, 137 գնդացիր, իսկ ժողովրդական Գվարդիայի կազմում կար 3640, 24 հրանոթ, 63 գնդացիր: Վրաստանն ուներ 3 զրահագնացք և 5-10 զրահամեքենաներ⁴⁰: *Այն, որ 1918-1920 թթ. գոյություն ունեցած հայկական բանակի ընդհանուր թվաքանակից մարտունակ էր իրապես ընդամենը 16-18 հազարը*, դա հաստատում է Ս. Վրացյանը ՀՅԴ Ամերիկայի Կենտրոնական Կոմիտեին 1919 թ. մայիսի 18-ին հասցեագրված նամակում, ընդգծելով այն մասին, որ «մոյր 16-17-հազարանոց բանակը կարգապահ է և քաջ», ավելացնելով, որ «աշխարհել են սրերդծել նոր զորամասեր», որն էլ հենց կարելի է տեղավորել 40-50-հազարանոց բանակ ունեցած լինելու պատկերացումների շրջանակներում, եղածն ուռճացնել⁴¹:

1920 թ. հոկտեմբերի վերջին Վրաստանի զինուժի քանակը հասավ 38 գումարտակի, 10 էսկադրոնի (23 հազար սվին)՝ 543 գնդացրով, 83 թնդանոթով, 3 զրահագնացքով, 8 զրահամեքենայով և տանկով, 12 օդա-

³⁸ Безугольный 2009, 87-101.

³⁹ Безугольный 2009, 87-101.

⁴⁰ Безугольный 2009, 87-101.

⁴¹ Վրացեան 1962, 88:

նավով⁴²: Համեմատության համար նշենք, որ խորհրդային ռազմական հետախուզության տվյալներով, Ադրբեջանի զինուժը 1920 թ. մայիսին ուներ շուրջ 15 հազար սվին և մինչև 5 հազար սուր, 2-3 օդանավ, 1 հիդրոպլան, 2-3 զրահագնացք և 2 զրահամեքենա՝ միավորված երեք հետևակային դիվիզիաներում և մեկ հեծելազորային կորպուսում⁴³, իսկ ՀՀ զինված ուժերը 1920 թ. հոկտեմբերի վերջերին ունեին 40 գումարտակ, 15 էսկադրոն (9200 սվին և 1620 սուր), 208 գնդացիր, 65 հրետանի, 3 զրահագնացք և 10 օդանավ⁴⁴:

Վրաց զորքը խորհրդայնացման նախօրեին

1920 թ. քաղաքացիական պատերազմի ճակատներում իրադրությունը կտրուկ փոխվեց հոգուտ Խորհրդային Ռուսաստանի: «Մուսավաթը», ի տարբերություն հայ դաշնակցականների, ոչ միայն չընդդիմացավ, այլև հեռահար պլաններից ելնելով՝ ընդառաջ գնաց Ադրբեջանի անարյուն խորհրդայնացմանը: Անդրկովկաս մտած խորհրդային զորամասերում հաշվվում էր 60 հազար մարդ⁴⁵: Այդ իրավիճակում, 1920 թ. սեպտեմբերի 10-ի վիճակով, որը հաստատվում է խորհրդային հետախուզության տվյալներով, Վրաստանը կանոնավոր բանակում՝ ներառյալ սահմանային կայազորը, ուներ 9700 սվին և 1000 սուր՝ 52 թնդանոթներով, սակրավորական գումարտակը, ռադիոհեռագրային վաշտը, իսկ Ժողովրդական գվարդիան հաշվվում էր 15000 սվին, 16000 սուր՝ 76 թնդանոթներով, և գնդացրային գունդը՝ 72 գնդացիրներով: Բանակն ուներ 4-5 զրահագնացք, 3 զրահամեքենա, 2 տանկ, 18 օդանավից բաղկացած օդուժ: Այդ հաշվարկների համաձայն՝ վրացական զինուժը 7-10 օրվա ընթացքում կարող էր բանակի անձնակազմը հասցնել 50000-ի⁴⁶: Իսկ մեկ այլ հետախուզական աղբյուրի համաձայն՝ հոկտեմբերի 25-ի վիճակով մենշևիկյան Վրաստանի զորքն ուներ 38 գումարտակ և 10 էսկադրոն, այսինքն՝ 23090 սվին և 1250 սուր, 543 գնդացիր, 83 թնդանոթ, 3 զրահագնացք, 6 զրահամեքենա, 2 տանկ և 12 ինքնաթիռ: Զորքի ընդհանուր քանակը հասնում էր 30000-ի: Վրաց զորքը Աղնախի և Փոյլի ուղղություններում ուներ 3490 սվին, 100 սուր, 62

⁴² Российский государственный военный архив (РГВА), ф. 195, оп. 3, д. 515, л. 1-10.

⁴³ РГВА, ф. 195, оп. 3, д. 198, л. 15.

⁴⁴ РГВА, ф. 109, оп. 2, д. 64, л. 2.

⁴⁵ Ст'ю Директивы командования фронтов Красной армии 1978, 156-157:

⁴⁶ Кадишев 1960, 363.

գնդացիր, 24 թնդանոթ և 2 զրահագնացք⁴⁷: 1921 թ. փետրվարի 1-ի տվյալներով, Վրաստանի զինված ուժերը սահմանային գոտում հաշվվում էին 32800 սվին, 264 սուր՝ 521 գնդացիրներով, 56 թեթև և 18 ծանր թնդանոթներով⁴⁸: Գ. Անչաբաձեն ևս գրում է. «Ինչպիսի՞ն էին Վրաստանի զինված ուժերը 1921 թվականի սկզբին. զինված ուժերը բաղկացած էին երեք կառույցներից, 1) բանակից ու սահմանապահ զորամասից, 2) նավատորմից և 3) Ժողովրդական գվարդիայից: Բանակը և նավատորմը գտնվում էին Պաշտպանության նախարարության իրավասության ներքո, իսկ Ժողովրդական գվարդիան՝ Գլխավոր շտաբի հրամանատարության ներքո»⁴⁹: Վերջինս, գեներալ Գ. Կվինիտաձեի փաստամամբ, պատերազմի ժամանակ ապակառուցողական և բարոյալքող ազդեցություն ունեցավ բանակի վրա իր սանձարձակությամբ, մարտական բնագավառում կարգապահության և ինքնակառավարման վերահսկողության բացակայությամբ: Վրաց զինվորական որոշ շրջանների կարծիքով, պահեստային ուժերի ներգրավվածությունը կարող էր զգալիորեն բարձրացնել ակտիվ բանակի քանակը: Խաղաղության ժամանակ կանոնավոր բանակն ուներ 7500 հետևակ զինվոր և ավելի քան 1500 հեծելակ: Պատերազմի ժամանակ նրանց թիվը հասավ մինչև 27000-ի, իսկ հեծելազորինը՝ 3000-ից ավելի: Բանակի 90 տոկոսը բաղկացած էր վրացիներից, մնացած մասը՝ հայերից, ռուսներից, «թաթարներից»՝ նկատի ունենալով տեղական թուրքերին և անդրկովկասյան մահմեդականներին: 1921 թ. սկզբին վրացական ռազմածովային ուժերը բաղկացած էին մեկ նավատորմի կործանիչից, 4 փայտյա մարտական ինքնաթիռներից, 4 ականակիր նավակներից և տարբեր գործառնություններ ունեցող 10 շոգենավներից⁵⁰: Չինված ուժերը մի քանի ուսումնական հաստատություններ ունեին. 1) Թիֆլիսի զինվորական դպրոցները (երկամյա դասընթաց)՝ բոլոր տեսակի զորատեսակների սպաների համար, ինչպես օրինակ՝ 250-300-հոգանոց ենթասպաների դպրոցը, 2) վարորդների դպրոց, 3) մեքենայաշինական դպրոց և 4) Ժողովրդական գվարդիայի դպրոց: 1921 թ. նախատեսվում էր Թիֆլիսի պոլիտեխնիկական դպրոցում բացել ռազմաինժեներական բաժին՝ մի քանի ստորաբաժանումներով, իսկ բարձրագույն ռազմական դպրոցի համար ռեսուրսներ չկային, և նախա-

⁴⁷ Кадишев 1960, 363.

⁴⁸ Кадишев 1960, 363.

⁴⁹ Anchabadze 2018, 106-107.

⁵⁰ Anchabadze 2018, 106-107.

տեսվում էր վրացի սպաներին ուղարկել ֆրանսիական ռազմական ակադեմիա⁵¹, ինչպես դա Հայաստանում էր, երբ որ սպայական, օդաչուական և այլ կադրեր պատրաստելու համար որոնվեցին բրիտանական, ֆրանսիական և ամերիկյան տարբերակներ, որոնք միշտ չէ, որ համապատասխան արձագանք ստացան դաշնակիցների կողմից:

Բուլղարիայի Ռուսաստանի հետ բախման նախօրյակին՝ 1921 թ. սկզբին, վրացական զինված ուժերը կազմել են 25 հազար հետևակ և հեծելազոր: Գեներալ Ի. Օդիշելիձեն, խորհրդային ներխուժմանը սպասելով նույն տարվա գարնանը, անհրաժեշտ էր գտնում, որ բանակը համալրվի մինչև 60 000 հոգով (75000, ներառյալ՝ օժանդակ ծառայությունները), չնայած Վրաստանը բավարար չափով չուներ ո՛չ զենք և զինամթերք, ո՛չ էլ հագուստ և այլն⁵²: Զինված ուժերի մասին իր փաստարկներն է բերում գեներալ Գ. Կվինիտաձեն. «Իրապես, մենք ունեինք 12 բանակային գումարտակ, որոնք զորահավաքի դեպքում ծավալվում էին 36 գումարտակի՝ այսինքն մոտ 21-22 հազար սվին. Գվարդիան ուներ 20-24 գումարտակ՝ մոտ 10-12 սվինանուծով: Այսպիսով, մենք կարող էինք դուրս բերել ընդամենը 32-34 հազար սվին: Ա.Ի. Հեկկերը⁵³ ճիշտ էր հաշվարկել, որ արևելյան սահմանի վրա այդ թվից կարող ենք լավագույն դեպքում կենտրոնացնել միայն 2/3-ը, այսինքն՝ 22-23 հազարը: Այդ ուժերի մեկ երրորդը, եթե ոչ ավելին, կենտրոնացած էր մեր հյուսիսային սահմանի վրա: Մեր կազմակերպվածությունը թույլ չտվեց ներգրավել պահեստազորի մնացած ռեզերվը, այլ կերպ ասած՝ չէինք կարող օգտագործել դիմադրության ողջ ուժը: Հարկ է ընդունել, որ ուժերի հարաբերակցությունը «Փոքր Վրաստանի» և «Մեծ Ռուսաստանի» միջև հեռու էր համապատասխանելուց «Փոքր» և «Մեծ» հասկացություններին»⁵⁴:

1921 թ. հունվարի 26-ին Վրաստանի խորհրդայնացման հարցը քննարկվում է ՌԿ(Բ)Կ ԿԿ Քաղբյուրոյում, որում ԱԳ ժողկոմատին հանձնարարվում է ճշգրիտ տեղեկանալ Վրաստանի կողմից խորհրդային Ռուսաստանի հետ պայմանագրի խախտումների մասին: Եվ այդպիսի փաս-

⁵¹ Anchabadze 2018, 107-108.

⁵² Anchabadze 2018, 109.

⁵³ Հեկկեր Անատոլի Իլյիչի (25.08.1888-01.07.1937) - 1920 թ. մայիսի 7-ին Հանրապետության Ռազմահեղափոխական խորհրդի որոշմամբ մտցվել է Գլխավոր շտաբի մեջ, եղել է 11-րդ Կարմիր բանակի հրամանատար, գնդակահարվել է 1937 թ. (Ганин 2009, 141, 194, 491):

⁵⁴ Квиниатадзе 1985, 355.

տեր գտնվում են. վրացիների կողմից սպիտակգվարդիականներին օգնելու, զենքի մատակարարման փաստերը⁵⁵, Թիֆլիսում խորհրդային դիվանագիտական ներկայացուցչության աշխատակիցների իրավունքների ոտնահարումը և նույնիսկ ձերբակալությունները, պարենով շարժակազմերի երթևեկի արգելափակումը Հայաստան, որը սովի ճիրաններում էր: Խորհրդա-վրացական պայմանագրի խախտումներն ընդհանրացվեցին Վրաստանում ՌԽՖՍՀ լիազոր-ներկայացուցիչ Ս. Կիրովի ներկայացրած հատուկ գրության մեջ⁵⁶:

Եվ այսպես, կողմերն ունեին իրենց հաշվարկները և սպասելիքները, որի մասին կրկին հավաստում է Կվինիտաձեն. «Ես կարդացել եմ Հեկկերի զեկույցը, սակայն նրա մասին պատմություններից գիտեմ, որ, Հեկկերը Վրաստանի վրա հարձակվելու համար պահանջել է մոտ 35000 սվին: Եթե Մոսկովյան կառավարությունը կարողանար Ադրբեջանում կենտրոնացնել այդ ուժերը օգոստոս-սեպտեմբերին կամ 1920 թ. հոկտեմբերին, նա մեր վրա կհարձակվեր ավելի վաղ, այլ ոչ թե հաջորդ տարվա փետրվարին: Սակայն բանը նրանում է, որ տրանսպորտի սղությունը և, ընդհանրապես, բանակին դրանք հասցնելու միջոցների բացակայությունը խնդրահարույց վիճակ էին ստեղծել: Այդ պատերազմը ցույց տվեց, որ Հեկկերի նշած զորքերի թիվը հազիվ է հաջողվել կենտրոնացնել գործողությունների սկզբում, իսկ Խաշուրիի տակ բոլշևիկյան զորքերի մասնակցությունը հաստատեց իմ այդ միտքը»⁵⁷:

Փետրվարի 16-ին Կարմիր բանակի զորամասերը հատում են Վրաստանի սահմանը, որի համար առիթ է դառնում սահմանակից Բորչալուի գավառում «բարձրացված» հայ գյուղացիության ապստամբությունը⁵⁸: Հայտարարվում է, որ Կարմիր բանակը հրավիրվել է, որ կանխի գենոցիդը Բորչալուի գավառի բնակչության նկատմամբ (թե՛ հայեր և թե՛ ռուսներ). 1921 թ. մարտի 8-ին Օրջոնիկիձեն հայտարարում է. «Պարզ էր, իհարկե, որ Կարմիր բանակը չէր կարող սառնասրտորեն նայել, թե ինչպես ապստամբած գյուղացիներին մենշևիկները կարող են գնդակահարել, ծխացող գյուղերը՝ Վորոնցովկան և Պրիվոլնոյեն ազդանշան էին, որոնք օգնության

⁵⁵ Ст'у Безугольный 2009, 87-101:

⁵⁶ Ст'у Безугольный 2009, 87-101:

⁵⁷ Квиниатадзе 1985, 354.

⁵⁸ Ст'у Безугольный 2009, 87-101.

էին կանչում»⁵⁹: Փետրվարի 17-ին Կովկասյան ճակատի հրամանատար Վ.Մ. Գիտտիսի հրամանով Աբխազիայում հարձակման է անցնում 9-րդ Կուբանյան բանակը: Փետրվարի 18-ին Մ.Դ. Վելիկանովի գլխավորած զորախումբը գրավում է վրացական դիրքերը Կոջորի և Յաղուլջինյան բարձունքներում՝ ունենալով մասնակի հաջողություն: 11-րդ բանակը ջախջախիչ հարվածում է Մազնիսի զբաղեցրած դիրքերին, որն ուներ 2500 զինվոր, 5 մարտկոց, զրահագնացք և 2 զրահամեքենա:

Այս ամենը պարտադրում է գլխավոր հրամանատարին փոխարինել գեներալ Ի. Օդիշելիձեով, իսկ նախկինին մեղադրանք է ներկայացվում ՀՀ-ի հետ սահմանում զորքերի ոչ ճիշտ խմբավորման համար, որի հետևանքով պատերազմի առաջին իսկ օրերին վրաց զորուժի երեք քառորդ մասը՝ 4 բանակային, 13 ժողովրդական գվարդիայի գումարտակ կազմով, պարտություն էր կրել⁶⁰: Փետրվարի 24-ին արդեն մարտերը ծավալվում են Թիֆլիսի մատույցներում, որին հետևում է գեներալ Գ. Կվինիտաձեի հրամանը շուտափույթ նահանջի մասին: Փետրվարի 25-ին 11-րդ բանակի զորամասերը մտնում են Թիֆլիս⁶¹: Դաշնակիցները հապշտապ լքում են Անդրկովկասը՝ այն ճանաչելով որպես բոլշևիկյան ազդեցության ոլորտ: Միաժամանակ Անտանտի Գերագույն խորհուրդը 1920 թ. հունվարի 16-ին բանաձև է ընդունում Ռուսաստանի նկատմամբ տնտեսական բլոկադան վերացնելու մասին, իսկ 1920 թ. նոյեմբերին սկսվում է խորհրդա-բրիտանական առևտրական պայմանագրի ակտիվ քննարկումը, որը ստորագրվում է 1921 թ. մարտի 16-ին⁶²:

Եզրակացություններ

Այսպիսով, անկախ Վրաստանի և Հայաստանի հանրապետությունները իրենց գոյության 2,5-3 տարվա ընթացքում այդպես էլ չկարողացան ստեղծել ո՛չ կայուն տնտեսություն, ո՛չ էլ մարտունակ բանակ, որով ձգտում էին վճռել իրենց տարածքային հարցերը, ընդ որում՝ առավել ագրեսիվ նկրտումներ դրսևորվել են Վրաստանի կողմից: Այս առումով ուշագրավ է բրիտանացի հեղինակ Ռիչարդ Բեհովերի եզրահանգումը: Նա 1921 թ. արձանագրել է. «Վրաստանի ազատ և անկախ սոցիալ-դեմոկրատական պե-

⁵⁹ Տե՛ս Օրджоникидзе 1956, т. 1, 173:

⁶⁰ Տե՛ս Квиниатадзе 1985, 362:

⁶¹ Տե՛ս Квиниатадзе 1985, 362:

⁶² Мустафа-Заде 2006, 127-129.

տությունն ընդմիջտ իմ հիշողության մեջ կմնա որպես իմպերիալիստական «փոքր ազգության» դասական օրինակ, ինչպես արտաքին տարածքային նվաճումների, այնպես էլ երկրի ներսում բյուրոկրատական բռնապետության, ամեն չափ ու սահման անցնող շովինիզմի հարցում»⁶³:

Գրականություն

ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 29_ա, թ. 348:

ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 452, թ. 2:

ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 16, թ. 31:

ՀԱԱ, ֆ. 290, ց. 1, գ. 9, թ. 28:

Հայկական հարց. Հանրագիտարան 1996, Երևան, Հայկ. հանրագիտ. գլխ. խմբ., 528 էջ:

Վրացեան Ս. 1962, Հին թղթեր նոր պատմութեան համար, Բէյրութ, տպ. «Մշակ», 381 էջ:

Քաջազնունի Յովհ. 1993, Հայաստանի Հանրապետութիւն, Երեւան, «Մ. Վարանդեան», 32 էջ:

Безугольный А.Ю. 2009, Демократическая республика Грузия и ее вооруженные силы. 1918-1921 гг.: «Вопросы истории», N 10, с. 87-101. Ст'у http://istorja.ru/articles_html/caucasus/bezugolnyiy-a-yu-demokraticeskaya-respublika-gruziya-i-ee-vooruzhennyye-silyi-1918-1921-gg-r377 (02.10.20 19).

Беховер 1921, Деникинская Россия и Кавказ. 1919-1920, Лондон, с. 14. <https://h.ua/story/129099/>, <https://www.diary.ru/~15061981/p211859012.htm?oam> (05.10.2019).

Борьба за победу советской власти в Грузии. Документы и материалы (1917-1921 гг.) 1958, сост. С.Д. Беридзе, Тбилиси, «Сабчота Сакартвело», 786 с.

Борьба, орган Центрального Комитета Соц. Дем. рабочей партии Грузии, 1920 г., Тифлис, 10 июня, N 129.

Ганин А.В. 2009, Корпус офицеров Генерального штаба 1917-1922 гг., Справочные материалы, Москва, «Русский путь», 895 с.

Дерябин А., Паласиос-Фернандес Р. 2000, Гражданская война в России. 1917-1922: национальные армии, Москва, «Астрель», 48 с.

Директивы командования фронтов Красной армии 1978, т. 4, Москва, «Воениздат», 728 с.

⁶³ Беховер 1921, 14, հմմտ. նաև Ходжаа 2009, 11, 24:

- Жордания Н.Н. 1968, Моя жизнь [Текст], Ной Жордания, пер. с груз. Инны Жордания, Стенфорд, The Hoover Institution on War, Revolution and Peace, 130 с. (на рус. яз.).
- Залесский К.А. 2003, Кто был кто в Первой мировой войне. Биографический энциклопедический словарь, Москва, «Астрель», 894 с.
- Кадишев А.Б. 1960, Интервенция и гражданская война в Закавказье, Москва, Военное изд. Минобороны СССР, 510 с.
- Каземзаде Ф. 2010, Борьба за Закавказье (1917-1921), Институт стратегических исследований Кавказа (Баку, Азербайджан), Серия «История Кавказа», Стокгольм, SA&CC Press®, 328 с.
- Каліберда Юрій 2015, Армія Грузинської Демократичної Республіки у 1918-1921 рр., «Воєнна історія», 1 (79), 1-21, [ub'u shron1. chtyvo. org.ua/.../Armiiia_Hruzynskoi_Demokratychnoi_Res...](http://ub'u.shron1.chtyvo.org.ua/Armiiia_Hruzynskoi_Demokratychnoi_Res...) (05.10.2019).
- Квинитадзе Г.И. 1985, Мои воспоминания в годы независимости Грузии. 1917-1921, YMCA-PRESS 11, rue de la Montagne-Ste-Geneviève 75005, Paris, 472 с.
- Мустафа-Заде Р. 2006, Две республики. Азербайджано-российские отношения в 1918-1922 гг., Москва, изд. МИК, 356 с.
- Орджоникидзе Г.К. 1956, Статьи и речи, т. 1, Москва, гос. изд. полит. литературы, 516 с.
- Российский государственный военный архив (РГВА), ф. 195, оп. 3, д. 515, л. 1-10.
- РГВА, ф. 195, д. 198, л. 15.
- РГВА, ф. 109, оп. 2, д. 64, л. 2.
- Стеклов А. 1927, Армия мусаватского Азербайджана, Баку, «Азгиз», 62 с.
- Уратадзе Г.И. 1956, Образование и консолидация Грузинской демократической республики, Мюнхен, Исследования и материалы (серия 1-я, вып. 29), Институт по изучению СССР, 113 с.
- Ходжаа Р.В. 2009, Казаки-добровольцы в Отечественной войне народов Абхазии 1992-1993 гг., Сухум, «Алашарбага», 129 с.
- Anchabadze G. 2018, Armed Forces of Georgian Democratic Republic in 1918-1921, *Latvijas Universitātes Žurnāls*, Vesture, N 5, p. 100-115.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ 1918-1921 ԹԹ.

Վանիկ Վիրաբյան

Ամփոփում

Առաջին քայլերն ազգային զինուժի, այդ թվում՝ հայկական և վրացական բանակային կորպուսների կազմակերպման ուղղությամբ արվել են դեռևս 1917 թ. նոյեմբերին, սակայն դրանք գործնականում չպսակվեցին հաջողությամբ: 1918-1921 թթ. ծագեց բախում անկանոն զորամասերի հրամանատարների և կանոնավոր բանակի հրամանատարության միջև: Ճգնաժամը չըջանցեց և վրացական բանակը. տեղ գտան ռազմական բախումներ Ժողովրդական գվարդիայի և բանակի միջև, կապված Ժողովրդական գվարդիայի արտոնյալ վիճակի և գվարդիական հրամանատարության ցանկության հետ՝ պահպանել իր անկախությունը կանոնավոր բանակից, ինչը, սակայն առկա էր նաև հայկական բանակում:

Վրաց կադրային գեներալները, որոնք դաստիարակվել էին ռուսական ռազմական կրթօջախներում, Ժողովրդական գվարդիան անվանում էին «*ռազմական կազմակերպության անոմալիա*» և արտահայտվում կանոնավոր բանակի ստեղծման օգտին:

Բանալի բառեր՝ Հայաստան, Վրաստան, զինված ուժեր, Ժողովրդական գվարդիա, հետևակ, հեծելազոր, Խորհրդային Ռուսաստան:

ВООРУЖЕННЫЕ СИЛЫ АРМЕНИИ И ГРУЗИИ В 1918-1921 ГГ.

Ваник Вирабян

Резюме

Первые шаги по формированию национальных вооруженных сил, в том числе армянского и грузинского армейских корпусов, были предприняты в 1917 г., однако они не увенчались успехом из-за распада Кавказской армии. В 1918-1921 гг. в армянской армии возник конфликт между командующими, нерегулярными воинскими частями и командованием регулярной армии. Кризис не обошел и грузинскую армию: имели место военные столкновения между Народной гвардией и армией, вызванные привилегированным положением Народной гвардии и желанием гвардейского командо-

вания сохранить независимость от командования регулярной армии, что, впрочем, имело место и в армянской армии.

Грузинские кадровые генералы, обученные в российских военных училищах, называли Народную гвардию «аномалией военной организации» и выступали за создание регулярной армии.

Ключевые слова – Армения, Грузия, вооруженные силы, Народная гвардия, пехота, кавалерия, Советская Россия.

ARMED FORCES OF ARMENIA AND GEORGIA IN 1918-1921

Vanik Virabyan

Abstract

The first steps towards the organization of the national armed forces, including the Armenian and Georgian army corps, were taken in 1917. However, in practice they failed due to the collapse of the Caucasian army. In 1918-1921 in the Armenian army rose a conflict between the commanders of the irregular military units and the regular army commanding. The crisis didn't miss also the Georgian army: it took place a military conflict between People's Guard and the army, caused by privileged position of People's Guard and desiring of Guard command to maintain independence from the regular army, which also took place in Armenian army.

The Georgian generals, trained in Russian military schools, called the People's Guard "an anomaly of the military organization" and advocated for the creation of a regular army.

Key words – Armenia, Georgia, military forces, Peoples' Guard, infantry, cavalry, Soviet Russia.

ՍՅՈՒՆՅԱՑ ԱԹՈՒԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄԸ XI ԴԱՐՈՒՄ

Վարդան Ալեքսանյան

Պատմական գիտությունների թեկնածու
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոն
ՀՀ, Տավուշի մարզ, Իջևան, Ոսանողական 3
Էլ. հասցե՝ vardanalexanyan406@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 05.11.2019, գրախոսվել է 15.11.2019, ընդունվել է
տպագրության 05.08.2020

Ներածություն

Հայոց կաթողիկոսների թափառական վիճակը, կաթողիկոսական մշտական նստավայրի բացակայությունը¹ IX դարի վերջերից հանգեցրել էին հայրապետական աթոռի և ծայրամասային թեմերի միջև կապերի թուլացմանը: Հայոց Արևելից կողմանց և Սյունյաց աթոռները ձեռք էին բերել որոշակի ինքնուրույնություն, և նրանց միաբանված գործունեությունը վերածվել էր Հայ եկեղեցու միասնությանն ուղղված սպառնալիքի: Օգտվելով ստեղծված անկայուն իրավիճակից և խախտելով դարերով սրբագործված ավանդույթը՝ Սյունյաց մետրոպոլիտ Հակոբ Ա-ն (918-958) դադարեցնում է այցելությունները հայոց կաթողիկոսի նստավայր՝ հոգևորականների ձեռնադրության, օծման, ինչպես նաև մեռողի համար: Մեռողը նա այլևս ստանում էր Աղվանքի կաթողիկոսներից, իսկ սրբազան ծեսի նշանակություն ունեցող ձեռնադրությունն ու օծումը կատարվում էին Աղվանից եկեղեցում:

Սյունյաց հոգևոր առաջնորդի՝ Հայոց կաթողիկոսությունը շրջանցելու փորձերը, ինչպես նաև նահանգային իշխանների անջատողական քաղաքականության հետևանքները երկար սպասեցնել չտվին: Այդ ամենին հաջորդեց Հայոց կաթողիկոս Անանիա Մոկացու (946-958) պատժական բովանդակությամբ կոնդակը, որով նա Սյունյաց աթոռը զրկեց մետ-

¹ Այս իրադրությունը թելադրված էր արաբներից սպառնացող վտանգներից, այդ պատճառով Հայոց կաթողիկոսները «երբեմն բնակեին առ Գազկայ թագաւորին՝ ի Վասպուրական՝ ի Վանայ ծովն, ուր կայր սեղանն և աթոռն և գաւազանն սրբոյն Գրիգորի, երբեմն բնակեին ի Շիրակ գաւառի առ Շիրակաւանին՝ ի վանս Արգինայի. և այսպէս տարբերեալ լինէին» (Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական 1861, 200-201):

րոպոլիտական աստիճանից՝ հետ վերցնելով «զպատին ի տանէն Սիւնեաց, այսինքն՝ զխաչն որ զառաջն տանէին, և զգաւազանն բազմաձախ և մեծագին, և բազմականն ոսկեթել զորս ընդ ինքեանց շրջեցուցանէին, զսահմանեալն յառաջին թագաւորաց և ի հայրապետաց Հայոց»²: Սյունյաց աթոռի այս կարգավիճակը պահպանվեց մինչև Հայոց կաթողիկոս Սարգիս Ա Սևանցու (992-1019) աթոռակալության ժամանակաշրջանը:

Սյունյաց աթոռի մետրոպոլիտական աստիճանի վերահաստատումը XI դարում

X դ. վերջին և XI դ. սկզբին՝ Բագրատունյաց Հայաստանի տնտեսական, քաղաքական և մշակութային վերելքի շրջանում, Բագրատունիների և Սյունիների միջև ձևավորվել էին բարեկամական հարաբերություններ: 987 թ. Սյունիքում անկախ թագավորության կազմավորումով թեև որոշ չափով թուլացել էին քաղաքական կապերը Բագրատունիների և Սյունյաց իշխանների միջև, այնուամենայնիվ, շուտով նկատվում են հարաբերությունների վերականգնման միտումներ: Սյունիներն ընդունում էին Բագրատունիների գերագահությունը, և X դ. վերջին Սյունիքը «ամենայն տանն Հայոց»-ի կազմում էր³: Ենթադրվում էր, որ Սյունյաց ավատական ազդեցիկ թագավորությունը պետք է ունենա քաղաքական իշխանությանը համապատիվ հոգևոր-կրոնական իշխանություն: Այս տեսլականի մարմնավորումը նրա աշխարհիկ և հոգևոր տերերին մղում էր Սյունյաց աթոռի մետրոպոլիտական աստիճանի վերահաստատմանը, որի համար ստեղծվել էին նպաստավոր պայմաններ:

Հայոց թագավոր էր դարձել բազում շնորհներով օժտված, Հայաստանի արտաքին և ներքին քաղաքականությունը հմտորեն վարող Գագիկ Ա Բագրատունին (990-1020): Լինելով «այր սրամիտ եւ վարժ ի պատե-

² Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական 1861, 208: Այս մասին ակնարկված է նաև Սյունյաց նորընծա եպիսկոպոս Վահան Զևանշերյանի հավատարմագրում (Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից 1897, 141): Այս փաստի մասին հակառակն է հիշատակում XIII դ. պատմիչ Կիրակոս Գանձակեցին՝ ասելով՝ «հրամայեաց խաչ տանել առաջի արքեպիսկոպոսին Սիւնեաց, ուր և երթիցէ» (Կիրակոս Գանձակեցի 1961, 87): Այս կապակցությամբ, բնականաբար, առավել հավաստի է Սյունյաց պատմիչի հաղորդածը: Հավանաբար, Գանձակեցուն ծանոթ չի եղել Անանիա Մոկացու հայտնի գիրը: Հմմտ. Ալեքսանյան 2014, 195-209:

³ Մատթէոս Ուռհայեցի 1898, 4: Մաթևոսյան 1990, 220-221:

րազմի եւ առատաձեռն ի բաշխելն»⁴ Գագիկ Ա-ն փորձում էր վերամիավորել Հայաստանը և այդ հարցում չէր կարող անտեսել Սյունիքը: Ըստ Ասողիկի՝ նա բազմաթիվ բերդեր և գավառներ է գրավում «ի սահմանացն Վայոց ձորոյ, Խաչենոյ և Փառիսոսոյ»⁵: Փաստորեն, Սյունիներից խլվում են Վայոց ձորը, նրա սահմանակից Ճահուկը, Ծղուկի հյուսիսային մասն ու Աղահեջը⁶: Այս ամենը, սակայն, չէր խանգարում Բագրատունիների և Սյունիների միջև խնամիական հարաբերությունների հաստատմանը. Գագիկ շահնշահը կնության էր առել Սյունյաց Վասակ Սմբատյան թագավորի (998-1040) դուստր Կատրանիդեին, որն իր նշանավոր տատի՝ Սյունյաց Շահանդուխտ թագուհու⁷ շինարարական շնորհների կրողն էր և իր հայրենի երկրամասի՝ Սյունիքի հզորացման ջատագովը⁸: Այս բարեպատեհ հանգամանքը և Հայաստանի երկու ազդեցիկ տոհմերի միջև ընդհանուր շահերի ձևավորումը նպաստում էին Սյունյաց հոգևոր աթոռի երբեմնի առանձնաշնորհումները և պատվո խորհրդանշանները վերստին հաստատելու համար: Այդ ժամանակ Հայոց կաթողիկոսական գահին տիրում էր Սարգիս Սևանցին, որի վրա մեծ ազդեցություն ուներ Գագիկ Ա-ն՝ նրան ճանաչելով դեռ «յաւուրս մանկութեան իւրոյ»⁹:

Սյունյաց առաջնորդ Գրիգոր Գ-ի (1000-1006) վախճանից հետո եպիսկոպոս է ընտրվում «բազմերջանիկ և յոգներանեան այրն Աստուծոյ, կրկին լուսատրիչն և երկրորդ նորոգողն նուազեալ տանն այնմ և բոլոր աշխարհիս Սիսական» տեր Հովհաննեսը: Նա Հայոց կաթողիկոս Սարգիս Սևանցու (992-1019) ազգականն էր: Աղբյուրներում տեղեկություններ

⁴ Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ 2011, ԺԵ, 808:

⁵ Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ 2011, ԺԵ, 808:

⁶ Հակոբյան 1966, 63: Պատմաբան Տ. Սահակյանը կարծում է, որ Բագրատունիների և Սյունիների միջև պատերազմ չի եղել: Գագիկ Ա-ն ռազմական գործողություններ է վարել Սյունիքի Վայոց ձոր գավառին սահմանակից արևելյան շրջաններում, գրավել որոշ բերդեր և տվել Սյունյաց թագավորությանը (Սահակյան 1966, 224):

⁷ Աղվանից նշանավոր իշխան Սևադայի դուստրը, Սյունյաց Սմբատ Ա թագավորի (987-998) կինը:

⁸ Կատրանիդեն Վասակ թագավորի միակ ժառանգն էր (Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ 2011, ԺԵ, 808: Ստեփաննոսի Սինեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական 1861, 222): Մատթեոս Ուռհայեցին նրան սխալմամբ անվանում է վրաց Գէորգէ թագավորի դուստր (Մատթեոս Ուռհայեցի 1898, 9): Վարդան Արևելցին հայտնում է, թե հայոց թագավոր Գագիկի կին Կատրանիդեն Սյունյաց Սահակ թագավորի դուստրն է, մինչդեռ Սյունիքում Սահակ անունով թագավոր չի եղել (Վարդան Բարձրաբերդեցի 1861, 123):

⁹ Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ 2011, ԺԵ, 811:

չկան նրա ծննդավայրի և կրթության մասին: Սակայն ենթադրվում է, որ ծագումով սյունեցի էր¹⁰: Կրթություն, ամենայն հավանականությամբ, ստացել է Տաթևի վարդապետարանում, որից հետո, ձեռք բերելով եկեղեցական աստիճան, շարունակել է ծառայությունը եպիսկոպոսարանում:

Սյունյաց թագավոր Վասակը Հովհաննեսին պատկառելի շքախմբով և մեծարժեք ընծաներով ուղարկում է Անի մայրաքաղաք՝ «աթոռ հայրապետութեան տանն Հայոց», որտեղ Հայոց կաթողիկոսը պետք է ձեռնադրեր Սյունյաց նոր առաջնորդին: Դա սովորական հերթական ձեռնադրություն չէր: Սյունիքի արքան ձեռնարկել էր անհրաժեշտ բոլոր գործողությունները մետրոպոլիտական աստիճանն ու պատիվը վերստին ստանալու համար: Ենթադրելի է, որ Վասակը նախապես ստացել էր Գագիկ շահնշահի և թագուհի Կատրանիդեի բանավոր համաձայնությունը, որովհետև մինչ այդ նա «յուղարկեալ էր և նոցա արքունի ընծայս, և գրով ծանուցեալ զխնդիրն ի կաթողիկոսէն»¹¹: Իրավիճակն անհամեմատ դյուրին էր դարձնում նաև այն սուբյեկտիվ գործոնը, որ Հովհաննես Սյունեցին և Սարգիս Սևանցին ազգականներ էին:

Ընդառաջ գնալով Հայոց թագավորի և թագուհու թախանձանքներին՝ Սարգիս Սևանցին պատշաճ արարողակարգով Հովհաննեսին ձեռնադրում է Սյունիքի մետրոպոլիտ: Վերադարձնում է նրան «զսեպիական խաչն Սինեաց և զոսկէտուտն վառն և ըզմեծագին գաւազանն և զպատուական գահոյս բազմականին», որոնք խնամքով պահվում էին կաթողիկոսարանի գանձարանում: «Նորոգեն զաստիճան և զպատիւ մեծի և առաքելական աթոռոյն Սինեաց ըստ առաջնոյն օրինի», - արձանագրում է Սյունյաց աթոռի պատվին նախանձախնդիր բարձրաստիճան հոգևորական գործիչը¹²: Մեծ փառքով և բազում պարգևներով Հայոց թագավորն ու թագուհին ճանապարհում են Հովհաննեսին՝ նրան հանձնելով նաև Բյուզանդական Վասիլ II կայսեր ուղարկած՝ հրաշագործ զորությունով օժտված փրկչական փայտի սուրբ մասունքը:

Որքան էլ Սյունյաց աթոռի մետրոպոլիտական աստիճանի վերահաստատումը պայմանավորված լիներ Բարգրատունյաց Հայաստանում

¹⁰ Սյունյաց աթոռի պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Սյունիքի իշխանները շահագրգիռ էին, որ իրենց վիճակի աթոռակալ ընտրվի միայն սյունեցին (Գրիգորյան 1973, 157):

¹¹ Ստեփաննոսի Սինեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական 1861, 222:

¹² Ստեփաննոսի Սինեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական 1861, 222:

այդ ժամանակ ձևավորված քաղաքական և կրոնական իրողություններով, այնուամենայնիվ, Հայոց հայրապետը հատուկ կոնդակով պաշտոնականացնում է մետրոպոլիտական կարգի շնորհումը, հիմնավորում դրա օրինական պահանջը¹³։ Կոնդակը, որ կոչվում է շրջաբերական նամակ, գրվել է 1006 թ. և կնքվել կաթողիկոսի «սովորական մատանեաւ»։ Այն հասցեագրված է Սյունյաց Վասակ թագավորին, նրա եղբայր Սևադա իշխանին, քեռայր Աշոտ իշխանին և «առ այլ ազատսդ և յընդհանուր ժողովրդականսդ ըստ երկոտասան կարգեալ գաւազանացդ»¹⁴։ Կաթողիկոսը գրության մեջ ներկայացնում է մետրոպոլիտական կարգի շնորհման իրավական հիմքերը և շարժառիթները՝ շեշտելով, որ սա սոսկ իր պաշտոնական նախաձեռնությունը չէ։ Ըստ նրա՝ քննության են բերվել Հայոց եկեղեցու արխիվներում պահպանվող «զմեծափառ նամակս և զվճիռ պայմանի՝ գրեալ ձեռամբ նախնի հայրապետացն Հայոց, սկսեալ ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէ և յորդոց և ի թոռանց իւրոց»¹⁵։ Մինչև Սահակ Պարթև կաթողիկոս կազմած գրությունները գրվել են հունարենով, իսկ նրանից հետո՝ հայերենով։ Դրանք կնքված են համապատասխան կաթողիկոսների կնիքներով։ Ընդհանուր առմամբ, ներկայացվել է կաթողիկոսական 55 շրջաբերական գրություն, որոնցում շարադրված են եղել Սյունյաց աթոռի պատիվները և առաջնորդների տիտղոսները¹⁶։ Բացառություն է կազմել միայն Վահան Սյունեցի եպիսկոպոսին ուղղված Անանիա Մոկացու գրությունը, որում բացակայել են նախորդ թղթերում տեղ գտած պատվատիտղոսները¹⁷։ Կաթողիկոսական կոնդակով վերահաստատվում էին Սյունյաց աթոռի արտոնությունները, պաշտոնապես ճանաչվում էր նրա

¹³ Վաստակաշատ պատմաբան, բանասեր, Կ. Պոլսի հայոց պատրիարք Օրմանյանը Սյունյաց աթոռի՝ մետրոպոլիտական առանձնաշնորհումների վերահաստատման գործում մեծ նշանակություն է տալիս այնպիսի սուբյեկտիվ գործոնների, ինչպիսիք են Հայոց թագուհու՝ Կատրանիդեի՝ Վասակ Սյունեցու դուստր լինելը և Հովհաննես Սյունեցու ու Սարգիս Սևանցու ազգակցությունը (Օրմանեան 2001, 1360)։

¹⁴ Ստեփաննոսի Մինեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական 1861, 226։

¹⁵ Ստեփաննոսի Մինեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական 1861, 227։

¹⁶ Վ. Հացունին պարզունակ մեկնաբանություն է տալիս Սյունյաց մետրոպոլիտության վերականգնման փաստին, պայմանավորելով այն Սյունյաց եպիսկոպոսի խորամանկությամբ և Սարգիս Սևանցու պարզամտությամբ։ Նա նաև կասկածի տակ է դնում Սարգիս Սևանցու շրջաբերականի վավերականությունը, իր մոտեցումը հիմնավորում է այն փաստով, որ Օրբելյանը չի վկայակոչում 55 նամակներից զոնե մեկի բովանդակությունը (Հացունի 1927, 287-288)։

¹⁷ Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից 1897, 129-141։

«գերագոյն իշխանութիւնը» նահանգի բոլոր գավառների, եպիսկոպոսների և վանահայրերի վրա¹⁸: Վկայակոչելով առաքելական հայրերի հրամանները Սյունյաց աթոռի պատիվների վերաբերյալ՝ կաթողիկոսը հաստատում է Սյունյաց պահանջի օրինական լինելը և զգուշացնում, որ «զի մի ոք իշխեսցէ պակասեցուցանել ի սահմանադրեալ վիճակէ սոցա և կամ նաաստացուցանել և բառնալ ի պատուոյ և յաստիճանէ սոցա»¹⁹: Հայտնի է, որ կախված քաղաքական իրավիճակից և Սյունյաց աթոռի դիրքորոշումից՝ հայոց հայրապետները տարբեր ժամանակներում տարբեր վերաբերմունք են ցուցաբերել Սյունյաց թեմի նկատմամբ, երբեմն պատժելով և բարձր պատիվներից զրկելով, երբեմն խրախուսելով և արտոնություններ շնորհելով: Այս իրողությունների լույսի ներքո քննելով կաթողիկոսի՝ Սյունյաց աթոռը պատվից և աստիճանից այսուհետև չզրկելու պատվիրանը՝ պարզ է դառնում, որ այն ավելի շուտ կրում է արարողակարգային բնույթ, քանզի առաքելական հայրերի հրամանները Սյունյաց աթոռի վերաբերյալ պատմության ընթացքում բազմիցս անտեսվել և խախտվել են:

Շրջաբերականում հստակեցվում են Սյունյաց եպիսկոպոսության աշխարհագրական սահմանները և եպիսկոպոսի հոգևոր ենթակայության տակ գտնվող գավառները²⁰: Այդ տարածքների մեծ մասը համընկնում է Բաղաց կամ Կապանի թագավորության վարչաքաղաքական սահմանների հետ²¹: Սակայն ի թիվս այլ գավառների՝ ցուցակում տեղ են գտել Նախիջևանը, Ագուլիսը, Զուղան, Օրդվատը (Օրդուբադը), Երնջակը, Ճահուկը՝ որպես Սյունիքի հոգևոր թեմի հարկատու գավառներ: «Եկեղեցական վիճակների բաժանումն աշխարհագրորեն կարող էր չհամընկնել նահանգի վարչաքաղաքական բաժանվածության հետ», - նկատում է պատմաբան Գր. Գրիգորյանը²²:

Վերադառնալով Սյունիք՝ նորաօծ մետրոպոլիտը մեծաշուք ընդունելության է արժանանում. իշխանական մեծ խմբով նրան դիմավորում է

¹⁸ Օրմանեան 2001, 1360-1361:

¹⁹ Ստեփաննոսի Սինեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական 1861, 227:

²⁰ Ստեփաննոսի Սինեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական 1861, 227-228: XI դարում Բաղաց կամ Կապանի թագավորության կազմի մեջ ընդգրկվել են նախարարական շրջանի 12 գավառներից 7-ը (Գրիգորյան 2006, 135): Պատմիչը հիշատակում է տասնհինգ հարկատու գավառ, սակայն գոյություն ունեցող հոգևոր վիճակների թիվը եղել է տասներկու:

²¹ Հակոբյան 1966, 70-71, հմմտ. Գրիգորյան 2006, 136:

²² Գրիգորյան 2006, 137:

Վասակ թագավորը: Վերջինիս զորակցությամբ Հովհաննեսը ձեռնամուխ է լինում թեմի գործերի կարգավորմանը՝ առաջին հերթին վերադարձնելով եկեղեցական հաստատություններից հափշտակված կալվածքները: X-XI դդ. Սյունիքում տեղի ունեցած սոցիալական ցնցումները հանգեցրել էին նահանգի եպիսկոպոսական իշխանության թուլացմանը, եկեղեցական կալվածքների մասնատմանը և ապակենտրոնացմանը: Տաթևի եպիսկոպոսարանից հեռու գտնվող վանքապատկան գյուղերից շատերը զավթել էին աշխարհիկ ավատատերերը: Որոշ տիրույթներ խլվել էին այլ եպիսկոպոսների կողմից և այլևս հարկեր չէին մուծում Սյունյաց նախապատիվ աթոռին՝ Տաթևի վանքին²³: Մաքենյաց վանքի միաբանները սեփականել էին Գեղարքունիքը: Վայոց ձորում հայտնվել էր ինքնակոչ եպիսկոպոս, որը յուրացրել էր Վայոց ձորի կալվածքները: Մի հոգևորական զավթել էր Երնջակ գավառը և Երնջակի վանքում իրեն հռչակել եպիսկոպոս: Գողթնեցիները գրավել էին Բստենձորը, Բուստն²⁴ ու Օրդվատը: Օգտվելով ստեղծված վիճակից՝ իշխանները վանքապատկան գյուղերը բաշխել էին իրենց ենթակա հողատերերին:

Վասակ թագավորի աջակցությամբ Հովհաննեսը վանքին է վերադարձնում այլոց կողմից նախկինում յուրացված բազմաթիվ գյուղեր ու կալվածքներ²⁵:

Հովհաննես է Սյունեցու (1006-1058) աթոռակալությունը անցել է գերազանցապես խաղաղ պայմաններում: Ստեղծված խաղաղությունը հնարավորություն է տվել կարգավորելու թեմի տնտեսական, կազմակերպական խնդիրները և կրոնական գործերը: Կառուցվում են կրոնական և տնտեսական նոր շինություններ, գործատներ, որտեղ «կայր բազմութիւն երդոց և ամբոխութիւն իբրև հազար արանց»²⁶:

²³ Զարգացած ավատատիրության շրջանում իրարից վիճակներ հափշտակելը տարածված երևույթ էր Հայաստանում: Վիճակներ խլելու պրակտիկան լայն չափերով դրսևորվեց Սյունիքում XIII դարում, երբ Սյունյաց աթոռը տրոհվեց վեց եպիսկոպոսական անկախ վիճակների: Իրենց առաջնորդներ հռչակեցին Գեղարքունիքի, Վայոց ձորի, Երնջակի, Գողթնի ոչ միայն քրեեպիսկոպոսները, այլև վանահայրերը (Գրիգորյան 1973, 152-153):

²⁴ Հնում մտել է Գողթն գավառի մեջ: Տաթևի վանքին վճարում էր 12 միավոր հարկ: Մինչև XX դարի 70-80-ական թվականները Բիստը հայտնի հայաբնակ գյուղ էր Նախիջևանում:

²⁵ Ստեփաննոսի Սինեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական 1861, 223:

²⁶ Ստեփաննոսի Սինեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական 1861, 229:

Սակայն հարևան մահմեդական ցեղերի ավազակային հարձակումները ժամանակ առ ժամանակ խաթարում էին հաստատված խաղաղությունը: Ատրպատականի, Արդաբիլի, Ահարի, Թալիշի արաբական ամիրայությունների զորքերը 1044 թ.²⁷ հանկարծակի ներխուժում են Սյունիք: Նրանց գլխավոր թիրախը Տաթևն էր, որն իր գանձերով գայթակղում էր այլազգի կողոպտիչներին: Նրանք կողոպտում են վանքի թանկարժեք իրերը, հրո ճարակ դարձնում Սուրբ Գրիգոր Լուսավորչի եկեղեցին, ավերում եկեղեցականների կացարանները, արհեստանոցները, սեղանատունը: Փորձում են փլուզել նաև հանրահայտ ճոճվող սյունը, սակայն ձեռնպահ են մնում՝ զգուշանալով նրա անբացատրելի հրաշքից: Զոհվում են վանքում մնացած բազմաթիվ վանականներ: Անձնական անվտանգության նկատառումներից ելնելով՝ Հովհաննեսը Տաթևից ժամանակավորապես տեղափոխվում է այլ վայր:

Հովհաննեսը շարունակում է իր նշանավոր նախորդների շինարարական ավանդույթները, իրականացնում բազմաթիվ բարենորոգումներ: Մանավանդ որ այլազգի հրոսակների պատճառած ավերածություններից հետո թեմում իրապես զգացվում էր բարենորոգումների կարիքը: Վանքի մեծ դռան վրա սրբատաշ քարով կառուցում է կամար և երկու խորան՝ Սուրբ Կարապետի անունով: Վերակառուցում է կրոնավորների խցերը՝ նախկինից ավելի շքեղ և հարմարավետ, կառուցում է տներ հարակից տարածքներում ապրող մարդկանց համար: 1017 թ. ոսկուց պատրաստված, մարգարտազարդ սքանչելի և պատկառազդու խաչ է կանգնեցնում վանքի գլխին. «Որ էր իբր արեգակն ջահալորեալ յաշխարհիս Սիսական և հրահոսան ճառագայթիքն հիացուցանէր զամենայն մարդիկ»²⁸: Խաչի հակառակ երեսի արձանագրությունը տեղեկացնում էր. «Տեառն Յովհաննիսի Սիւնեաց եպիսկոպոսի է Սուրբ նշանս, ի թուականիս ՆԿԶ կազմեալ»²⁹: 1027 թ. Վասակ թագավորի աջակցությամբ, Սմբատ և Գրիգոր իշխանների³⁰ հորդորներով Հովհաննեսը վերականգնում է խոնարհված

²⁷ Հայ ժողովրդի պատմություն 1976, 124:

²⁸ Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական 1861, 231:

²⁹ Բարխուդարյան 1960, 37, հմմտ. Ալիշան 1893, 231:

³⁰ Սմբատը և Գրիգորը Վասակի քրոջ որդիներն էին, իշխանաց իշխան Աշոտի ժառանգները: Քանի որ Վասակն արու գավակ չունեի Սմբատն ու Գրիգորը ժառանգեցին իրենց քեռու գահը՝ հերթով թագավորելով Սյունիքում: Սրանք, ըստ պատմիչի, մեծ Աշոտի որդիներն էին, այդ պատճառով էլ կոչվեցին են Ավագ Աշոտյանք (Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական 1861, 233): Ծղուկ գավառի Սի-

Սուրբ Գրիգոր եկեղեցին, որը հիմնադրել էր Սյունյաց Փիլիպե իշխանը (822-848): Եկեղեցին ստանում է առաջվանից ավելի շքեղ տեսք՝ դառնալով հոգևոր գանձերի ամփոփման շտեմարան: 1043 թ. Սյունյաց Սմբատ Բ թագավորի (1040-1051)³¹ օժանդակությամբ Պողոս-Պետրոս եկեղեցու հարավային բակում հղկված քարով միաբանների հանգստի և աղոթքի պարապմունքների համար սրահ-գավիթ է կառուցում: Այդ կապակցությամբ Տաթևի սրահի հյուսիսարևմտյան մույթի վրա փորագրել է տալիս հետևյալ արձանագրությունը. «Դ ՅԱՄԻ ՅՈՐՈՒՄ ԷՐ ԹԻՎՆ ՆՂԲ Ի ԹԱԳԱԻՈՐՈՒ ԹԵԱՆՍ ՍՄՊԱՏԱ ՈՐԴՈ ԱՇՈՏՈ ԵՍ ՏՐ ՅՈՎԱՆԷՍ ՇԻՆԵՑԻ ԶՍՐԱՀՍ, ԱԻԳՆԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ՍՄՊԱՏԱ. ՈՐՔ ԱՂԱԻԹԷՔ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ...»³²: Եկեղեցու փոքր դռան մոտ, որտեղով անցնում էին դեպի գավիթ, կառուցում է խորան, որի վրա պահպանվել է հետևյալ արձանագրությունը. «ԶՏԷՐ ՅՈՎԻԱՆՆԷՍ ՍԻՆԵՏԱԳ ԵՎԻՍԿՈՎՈՍ շԻՆՈՂ ՍՈՒՐԵ ԵԿԵՂԵՑՈՅ յԻՉԵՑԷՔ Ի ՔՐԻՍՏՈՍ»³³: Վանքի վերականգնման աշխատանքները ամբողջությամբ ավարտվում են 1046 թ.:

Հովհաննես Է Սյունեցու օրոք Տաթևը դառնում է գիտության և արվեստի ներկայացուցիչների կենտրոն: Եպիսկոպոսարանը լցվում է «բազմութեամբ կրօնաւորոք, անյաղթ փիլիսոփայիք և աննման երաժշտօք և բանիբուն վարդապետօք և աստուածազգեաց ճգնաւորօք, նաև յոգնապատիկ արհեստաւորօք»³⁴: Կանոնակարգվում են միաբանության անդամների հարաբերությունները, մի քանի անգամ աճում է նրանց թիվը:

Հովհաննես Է-ն եղել է ժամանակի առաջադեմ վարդապետներից: Այս մասին է վկայում XI դ. նշանավոր փիլիսոփա, ռազմական և քաղաքական գործիչ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու հետ նրա ունեցած նամակագրությունը³⁵: Հովհաննես Է-ն գրել է «Թուղթ մխիթարական առ Գրիգոր Մագիստրոս» և նրանից ստացել երկարաբան պատասխան³⁶: Ցավոք, չի պահպանվել Հովհաննեսի Թուղթը, սակայն դատելով Գրիգոր

սիանի Սուրբ Հովհաննես եկեղեցու արևելյան կողմի հյուսիսային խորշի պատին արեգակնային ժամացույցի մոտ պահպանվել է Սմբատի արձանագրությունը (Բարխուդարյան 1960, 89, հմմտ. Ալիշան 1893, 214):

³¹ Գրիգորյան 2006, 138:

³² Բարխուդարյան 1960, 12, 19, հմմտ. Ալիշան 1893, 235, հմմտ. Կոստանեանց 1913, 23:

³³ Բարխուդարյան 1960, 38: Ալիշան 1893, 231:

³⁴ Ստեփաննոսի Սինեագ եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական 1861, 229:

³⁵ Գրիգոր Մագիստրոսի թղթերը 1910, 36-51:

³⁶ Աճառյան 1942, 568-569:

Մագիստրոսի պատասխաններից՝ կարելի ենթադրել, որ այն ունեցել է հոգևոր-փիլիսոփայական բովանդակություն, շոշափել է Հայ եկեղեցու վարդապետությանն առնչվող հարցեր³⁷: Գրիգոր Մագիստրոսը Սյունյաց հոգևոր առաջնորդին մեծարում է «արքեպիսկոպոս» և «աստուածապատիւ հոգևոր տէր» տիտղոսներով: Դա խոսում է Հայ եկեղեցում Հովհաննես մետրոպոլիտի բարձր կարգավիճակի, նաև ժամանակի գիտնականների և առաջադեմ գործիչների մեջ նրա՝ ճանաչված վարդապետ լինելու մասին:

Նշենք, որ Սյունյաց աթոռի արտոնությունների վերահաստատման գործում Հովհաննես Է-ն մեծ դեր է ունեցել: Նա ոչ միայն եկեղեցական գործերի հմուտ կազմակերպիչ էր, այլև խորագիտակ վարդապետ, որն արժարժել է Հայ եկեղեցու դավանաբանությանը վերաբերող հարցեր: Գրիգոր Մագիստրոս Պահլավունու հետ ունեցած նամակագրությունը վկայում է դավանաբանական հարցերում նրա ունեցած սկզբունքային դիրքորոշման մասին:

Ավելի քան հիսնամյա բազմարդյուն առաջնորդությունից հետո՝ 1058 թ., Հովհաննես Է-ն կնքում է իր մահկանացուն: Սյունյաց վիճակի նոր առաջնորդ է դառնում Գրիգոր Դ-ն: Ստ. Օրբելյանը վերջինիս բնութագրում է որպես «այր մի պատշաճաւոր՝ վկայեալ յամենեցունց, զարդարեալ ամենայն առաքինութեամբ և լի գիտութեամբ»³⁸: Գրիգորը ձեռնադրվում է Անիում Հայոց կաթողիկոս Պետրոս Ա Գետադարձի (1019-1058) կողմից: Գրիգորի երկարատև աթոռակալությունը նշանավորվում է վանական կալվածքների ընդարձակմամբ, թեմի հարստությունների ավելացմամբ և եկեղեցական շինարարության զարգացմամբ:

Տաթևի վանքի արևելյան դռան վրա քանդակում է կամարների շարք: 1087 թ. կառուցում է կրկնահարկ, կենտրոնազմբեթ եկեղեցի՝ Ս. Մարիամ Աստվածածնի անունով: Բարձրության պատճառով այն նմանվում էր դիտանոցի, «որ հայեր ի վերայ վանիցն»: Վանքի չորս կողմերում կառուցում է գավիթներ և բարձրասլաց սյուներով սրահներ: «Գմբեթաւոր,

³⁷ Գրիգոր Մագիստրոսը Հովհաննեսին ուղղված իր ԺԳ նամակում խիստ խոսքերով հիշատակում է ոմն Գրիգոր եպիսկոպոսի, որի ինքնությունն անհայտ է: Մեծանուն լեզվաբան Հր. Աճառյանը ենթադրում է, որ վերջինս եղել է Սյունյաց Հովհաննես մետրոպոլիտի հակառակորդներից (Գրիգոր Մագիստրոսի թղթերը 1910, 47-48, հմմտ. Աճառյան 1942, 551):

³⁸ Ստեփաննոսի Սինեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական 1861, 236:

գեղեցկայարմար» այս եկեղեցու հարավային պատին Գրիգորը փորագրել է տալիս բավականին ծավալուն հիշատակի արձանագրություն: Միաբանները գնահատում են Գրիգորի եկեղեցաշեն գործունեությունը և նրա հիշատակի համար ամենամյա քառասունքի արարողության սահմանում³⁹:

1062 թ. «Ի ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԱՊՍԱԿԵԱԼ ԱՐՔԱՅԻՆ ԳՐԻԳՈՐՈՒ⁴⁰» (1051-1072) Բղենո⁴¹ Նորավանքի համալիրում հայր Գեորգին և Հովհաննես քահանան կառուցում են նոր եկեղեցի՝ գավիթներով և հարակից սրահներով⁴²: Նորակառույց տաճարը բազալտակերտ էր և աչքի էր ընկնում «յոժ գեղեցիկ յօրինուածովք, և ի դրանն կամարք զարմանալիք ի սքանչելի ճարտարաց յարմարեալք մեծամեծ վիմօք և խարսխաւոր սեամբք»⁴³:

Արձանագրության մեջ հիշատակվում է, որ նոր եկեղեցին կառուցվել է «Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏՆ ՅՈՎԱՆՆՈՒ ՍԻՒՆԵԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ»: Այս փաստը թույլ է տալիս կարծել, որ եկեղեցու շինարարությունը կյանքի վերջին տարիներին նախաձեռնել է Հովհաննես Է-ն (1006-1058), բայց

³⁹ Բարխուդարյան 1960, 28, հմմտ. Ալիշան 1893, 236-237:

⁴⁰ Բարխուդարյան 1960, 45: Հիշատակված թագավորը Սյունյաց Գրիգոր Ա Աշոտյանն է (1051-1072):

⁴¹ Սյունիքի տասներկու գավառների շարքում Բղենո անունով միավոր չի հիշատակվում: Սակայն, ամենայն հավանականությամբ, XI-XII դդ. գոյություն է ունեցել այս անունով գավառ, որը հիշատակվում է Ստ. Օրբելյանի երկում: Այն զբաղեցրել է Տաթևից դեպի հյուսիս-արևելք ընկած տարածքը՝ Որոտան գետի աջ կողմը՝ Գորիսի Բարձրավան գյուղի շրջանը: Այդ ժամանակ Տաթևը ևս եղել է Բղենո գավառի մեջ (Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական 1861, 301: Բարխուդարյան 1960, 42): Պատմաբան Գ. Սարգսյանի կարծիքով՝ Բղենոն գտնվել է Բաղք գավառի հյուսիսային մասում (Սարգսյան 1952, 42):

⁴² Բղենո Նորավանքը գտնվում է Գորիսի Բարձրավան (Երիցաթումբ) գյուղից 3-4 կմ արևելք: Երեք կողմից շրջապատված է խոր և անտառապատ ձորերով: Տեղացիներն այդ վայրն անվանում են Զհաննամ-դարասի՝ դժոխածոր: Ըստ Սյունյաց պատմագրի՝ մինչ 1062 թ.՝ հիշյալ եկեղեցու կառուցումը, այս տարածքում կառուցվել են եկեղեցի, գավիթներ, սրահներ և կացարաններ կրոնավորների համար: Առաջին շինարարությունը կատարվել է 936 թ. Ստեփանոս քահանայի կողմից: Բուն եկեղեցին կոչվել է Ս. Ստեփանոս (Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական 1861, 180, հմմտ. Բարխուդարյան 1960, 42): Նշենք, որ *Նորավանք* անվանումով Սյունիքում գոյություն ունեն երեք վանք, որոնցից երկուսը՝ Վայոց Ձորում, մեկը՝ Բղենում: Դրանցից ամենահայտնին Ամաղուի Նորավանքն է:

⁴³ Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական 1861, 180: Պատմաբան Գր. Գրիգորյանը, առանց սկզբնաղբյուրը մատնացույց անելու, Վայոց Ձորում գտնվող Խոտակերաց վանքի (Քարկովի) վերականգնումը ևս վերագրում է Գրիգոր եպիսկոպոսին (Գրիգորյան 1999, 170):

ավարտին է հասցվել նրա մահից հետո, 1062 թ., երբ մետրոպոլիտական աթոռը զբաղեցնում էր Գրիգորը⁴⁴։ Այս եզրակացությունը ամրապնդվում է եկեղեցու գավթի կամարակապ մուտքի ճակատին արված երեք արձանագրություններով, որոնք վերաբերում են Սյունյաց առաջնորդ Հովհաննես Է-ին⁴⁵։ Վանքում ծաղկել է գրչության արվեստը, այնտեղ ստեղծագործել են վարպետ գրիչներ։ Նրանցից մեծ համբավ է վայելել Հովհաննես գրիչը։ 989 թ. Ս. Ստեփանոս եկեղեցում Հովհաննես գրիչը ընդօրինակել և նկարազարդել է հայ գրչության և մանրանկարչության լավագույն ձեռագիր մատյաններից մեկը՝ «Էջմիածնի Ավետարանը»⁴⁶։

Գրիգոր մետրոպոլիտի օրոք նոր շունչ է ստանում և ճարտարապետական արժեք ներկայացնող կառույցներով է հարստանում Սյունիքի երկրորդ հոգևոր կենտրոն Վահանավանքը՝ դառնալով շքեղ վանական համալիր։ 1086 թ. Շահանդուխտ թագուհու և նրա քույր Կատայի նախաձեռնությամբ «բազում և գեղեցիկ շինուածովք առաւել գեղեցկացուցին զվանսն Վահանու՝ կանգնեալ կամարս մեծամեծս, և ի վերայ՝ եկեղեցիս և սրահս բազմասիւնս բարձրաբերձ, հովանի և խրախարան իշխանացն»⁴⁷։ Վահանավանքի կրկնահարկ եկեղեցու հյուսիսային պատին պահպանվել է Շահանդուխտ թագուհու հետևյալ արձանագրությունը եկեղեցու կառուցման վերաբերյալ. «ԻՇԼԵ։ ԹՎԱԿԱՆԻՍ ԵՍ ՇԱՀԱՆԴՈՒԽՏ ԴՈՒՍՏՐ ՍԵԻԱԴԱԻ ԱՂՎԱՆԻՑ ԹԱԳԱԻՈՐԻ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԳՐԻԳՈՐ ԹԱԳԱԻՈՐԻ ՈՐԴՈ ԱՇՈՏԿԱ, ՎԱՍՆ ՈՉ ԳՈԼՈ ՄԵՐ Ի ՄԻԱՍԻՆ ԺԱՌԱՆԳ (Ը)ՍՏ ՄԱՐՄՆՈ, ԵՍ ԵՒ ՔՈՅՐՍ ԻՄ ԿԱՏԱՅՍ ՇԻՆԵՑԱՔ ՉՍԲ ԱԾԱԾԻՆՍ ՓՈԽԱՐԵՆ ԳԹՈՅ ՆՈՐԱ»⁴⁸։ Այդ օրերին Վահանավանքում ապաստան է գտնում Աղվանքի կաթողիկոս Տեր-Ստեփանոսը։ Ենթադրվում է, որ նա հալածանքների է ենթարկվել Գանձակի սելջուկյան էմիր Փաղլունի կողմից։ Որոշ ժամանակ անց՝ 1091 թ., նա վախճանվում է այստեղ և թաղվում Վահանավանքի տարածքում։

Սյունյաց թագավորության տնտեսական և քաղաքական վերելքի շրջանում շարունակում էին ավելանալ եկեղեցական հարստությունները,

⁴⁴ Սարգսյան 1952, 41։

⁴⁵ Սարգսյան 1952, 34, հմմտ. Բարխուդարյան 1960, 47։

⁴⁶ Բարխուդարյան 1960, 43։ Բացառիկ արժեքավոր կազմ ունենալու պատճառով այն հայտնի է նաև «Փղոսկրյա Ավետարան» անունով։

⁴⁷ Ստեփաննոսի Սինեաց եպիսկոպոսի Պատմություն Տանն Սիսական 1861, 176։

⁴⁸ Բարխուդարյան 1960, 138, հմմտ. Ալիշան 1893, 296։

ընդլայնվել վանքապատկան կալվածքները: Հոգևոր-մշակութային օջախների և գրչության կենտրոնների ստեղծման գործում Սյունյաց հոգևոր առաջնորդները վայելել են նահանգի թագավորների նյութական և բարոյական աջակցությունը: Պետք է նկատել, որ Սյունյաց բարեպաշտ թագավորները և թագուհիները XI դարում աչքի էին ընկնում առատաձեռնությամբ և մեծարժեք շնորհաբաշխումներ են անում Տաթևի եպիսկոպոսարանին: Հավաքվող հարկերից վանքն այնքան միջոցներ էր կուտակել, որ Ս. Աստվածածին եկեղեցին կառուցելուց հետո Գրիգորը փողով գնում է «զԲոլորաքարն Նորեաց բաժինն ի Դլենէ որդւոյ Խաղբակայ»⁴⁹:

Տաթևի կալվածքների ընդարձակման հարցում առատաձեռնությամբ աչքի է ընկնում նաև Սյունյաց բարեպաշտ արքա Սենեքերիմ Սևադյանը (1072-1094)՝ իր քրոջ Շահանդուխտ թագուհու⁵⁰ անմնացորդ աջակցությամբ: Ի դեմս Գրիգոր մետրոպոլիտի և նրա որդեգիր Ստեփանոսի՝ 1085 թ. Սենեքերիմն արքայական ընտանիքի սեփականություն համարվող Արիտ գյուղը⁵¹ «իւր ամենայն սահմանօքն շուրջանակի՝ հողով և ջրով և արտավարօք և զամենայն որ ինչ իւրն էր», որպես «հոգեցատուր» ընծա նվիրաբերում է Տաթևի եպիսկոպոսարանին: «Վճիռ-պայմանում» արքան հարկ է համարում շեշտել, որ Արիտը ընծայում է «առանց զոք զրկելոյ, առանց զուրուք յափշտակելոյ առանց ումեք տրտնջելոյ. Քանզի մեր սեփական էր և ոչ այլ ումեք»⁵²: Ենթադրելի է, որ այս մտքի մեջբերմամբ Սենեքերիմը փորձում է օրինակ լինել իշխանների համար, կանխել եկեղեցու ունեցվածքի նկատմամբ ոտնձգությունները⁵³:

Եկեղեցուն վերաբերող հարցերում Սյունյաց Սենեքերիմ թագավորը վարում էր նրա տնտեսական հզորության ավելացման, հողային տիրույթների ամբողջացման քաղաքականություն: Հրամայում է իշխաններին և ազատներին վերադարձնել Տաթևի վանքից տարբեր ժամանակներում

⁴⁹ Ստեփաննոսի Սինեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական 1861, 236:

⁵⁰ Սա Գրիգոր Ա Աշոտյան թագավորի (1051-1072) կինն է, Աղվանքի նշանավոր Սահակ-Սևադա Բ իշխանի դուստրը:

⁵¹ Արիտ գյուղը գտնվել է Ծղուկ գավառում, Հարժիք և Տամայեկք գյուղերի հարևանությամբ: Ըստ հարկացուցակի՝ Տաթևի վանքին վճարել է 6 միավոր հարկ:

⁵² Ստեփաննոսի Սինեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական 1861, 237, հմմտ. Գրիգորյան 1973, 127:

⁵³ Գրիգորյան 1973, 127: Արիտ գյուղը առաջին անգամ վանքին ընծայաբերվել էր 906 թ. Տաթևի գլխավոր եկեղեցու նավակատիքի ժամանակ: Հետագայում խլվել է իշխանների կողմից:

հափշտակված գյուղերը: Սենեքերիմ արքայի հրամանով նրա ազատներից Գրիգորի որդին՝ իշխան Հասանը, Գրիգոր մետրոպոլիտի միջոցով 1086 թ. Տաթևին է ընծայում Կովսական գավառի Նորաշինիկ գյուղը և Ձեռատիվանքը, «որք և վաղ ժամանակօք տուեալ էին ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն Տաթևոյ»⁵⁴: Կովսական գավառը, ինչպես երևում է կտակի բովանդակությունից, զավթված է եղել Գանձակի Փաղլուն ամիրայի կողմից: Ռազմական գործողություններ վարելով՝ Հասանին հաջողվում է հետ բերել այն և հիշյալ գյուղերը նվիրել վանքին: Նույն կտակագրով արքան վանքին է նվիրում նաև Խոշտատա տափ հանդամասը:

Օգտվելով Սենեքերիմ թագավորի՝ Տաթևի վանք կատարած այցելությունից, Գրիգոր մետրոպոլիտը ներկայացնում է այն կալվածքները, որոնք երբևէ պատկանելիս են եղել վանքին և խլվել են այլոց կողմից: Նրա առջև է դնում «զիին նամականին, որ տուեալ էր առաջին թագաւորացն անխախտ պայմանաւ»: Այդ ամենին ծանոթանալով՝ բարեպաշտ թագավորը 1091 թ. «հրամայէ դարձուցանել անդրէն իւրոց իշխանացն» Հարժիք⁵⁵, Բերդկաներեչի⁵⁶ և Յուրագետ⁵⁷ գյուղերը: Հիշյալ վերադարձված գյուղերը, որ ամենայն հավանականությամբ գրավվել էին X դարի կեսերին Տաթևի եպիսկոպոսական կենտրոնի ավերման և թուլացման ընթացքում, պատկանում էին իշխաններ Մահևանին և Գեորգին:

⁵⁴ Ստեփաննոսի Սինեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական 1861, 239: Գոյություն են ունեցել Նորաշինիկ անունով տարբեր գյուղեր Բաղք, Կովսական, Հաբանդ, Ճահուկ գավառներում: Հիշատակված Նորաշինիկը 844 թ. հատուկ վճռագրով՝ կնքված Սյունյաց տեր Գրիգոր իշխանի մատանիով, Կովսականի տեր Սահակի որդի Հրահատ իշխանը Դավիթ եպիսկոպոսի միջոցով առաջին անգամ (839-856) նվիրում է Տաթևին: Ըստ հին հարկացուցակի՝ վճարել է 8 միավոր հարկ: Ձեռատիվանքը եղել է գյուղ և նույնպես գտնվել է Կովսականում: Այս գյուղը առաջին անգամ նվիրել են Տաթևին Հակոբ Ա մետրոպոլիտի օրոք (918-958):

⁵⁵ Հարժիք գյուղը Տաթևի գլխավոր եկեղեցու նավակառուցի կապակցությամբ վանքին է նվիրել հայոց թագավոր Սմբատ Ա Բագրատունին (890-914): Համապատասխանում է Սյունիքի մարզի ներկայիս Հարժիս գյուղին, կոչվել է նաև Յայջի: Վանքին վճարում էր 10 միավոր հարկ:

⁵⁶ Բերդկաներեչ գյուղը՝ հարակից կառույցներով, Դավիթ եպիսկոպոսը գնել է 839 թ. գահերեց իշխան Փիլիպեից 10000 դրամով (Ստեփաննոսի Սինեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական 1861, 149): Հավանաբար եղել է ագարակ (Օրբելյան 1986, 465):

⁵⁷ Յուրագետ գյուղն ու վանքը և Յուրաբերդը 906 թ. Տաթևի վանքին է նվիրում Սյունյաց գահերեց իշխան Աշոտը (892-908): Ըստ Ղ. Ալիշանի՝ Յուրագետը համապատասխանում է Տաթևի ջուր կոչվող գետի վտակներից մեկին (Ալիշան 1893, 245): Համապատասխանում է Սյունիքի մարզի ներկայիս Սվարանց գյուղին:

Իշխանների ունեցությունները կանխելու և հափշտակված գյուղերը վերադարձնելու քաղաքականության արդյունքը Տաթևի նախաթոռ կենտրոնի տնտեսական կարողությունների երևելի աճն էր:

Սյունյաց առաջնորդի պաշտոնում Գրիգորի արգասավոր հովվապետությունը տևում է 58 տարի, ավելի երկար, քան իր նշանավոր նախորդ Հովհաննես Է-ի աթոռակալությունը: 1116 թ. «վախճանի յոգներանեան այրն Աստուծոյ» տեր Գրիգորը:

Այսպիսով, 1006 թ. վերահաստատվում է Սյունյաց աթոռի մետրոպոլիտական աստիճանը: Հայոց կաթողիկոսության կողմից վերադարձվում են նախկին առանձնաշնորհումներն ու պատիվները՝ խաչը, գահավորակը և գավազանը: Պաշտոնապես ամրագրվում են Սյունյաց թեմի սահմանները, հստակեցվում են հարկատու գավառները: Գրեթե ամբողջ XI դարում Սյունյաց աթոռը զբաղեցում են երկու նշանավոր հոգևորականներ՝ Հովհաննես Է-ն (1006-1058) և Գրիգոր Դ-ն (1058-1116): Ճիշտ է, նրանց աթոռակալությունը համընկնում է սելջուկ-թուրքերի՝ Հայաստան կատարած արշավանքների շրջանի հետ, սակայն իրենց առաջին երեք արշավանքների ժամանակ սելջուկները Սյունիք չեն մտնում⁵⁸: Դա բացատրվում է Սյունյաց ռազմական հզորության փաստով և գահակալների դիվանագիտական կարողություններով: Այս իրողություններով է պայմանավորված նաև Սյունյաց երկու աթոռակալների երկարատև աթոռակալության շրջանում վանական կալվածքների ընդարձակումը, եկեղեցաշինության զարգացումը, ինչպես նաև մշակութային և կրոնական նոր հաստատությունների ավելացումը:

Եզրակացություններ

XI դարում Սյունյաց աթոռի մետրոպոլիտական կարգավիճակի վերահաստատումն ամենից առաջ պայմանավորված էր Սյունիքի ավատական թագավորության հզորությամբ: Հայաստանի խոշոր և ռազմավարական դեր ունեցող Սյունիք նահանգը Բաղաց ազդեցիկ նախարարների գլխավորությամբ 987 թ. հռչակվել էր անկախ թագավորություն: Բազմաթիվ վանքերի, բերդերի և ամրոցների գոյությունը, նրանց տիրապետության տակ գտնվող կալվածքների ընդարձակությունը վկայում են թագավորության տնտեսական հզորության մասին: Իսկ տնտեսական մեծ ներ-

⁵⁸ Սահակյան 1966, 226:

ուժը ենթադրում է զգալի քաղաքական կշիռ և հզոր ռազմական ուժ: Այս գործոնների առկայությունը հնարավոր է դարձնում Սյունիքի հոգևոր իշխանության բարձր կարգավիճակը:

Հայոց կաթողիկոսության կողմից Սյունյաց հնավանդ աթոռին շնորհելով մետրոպոլիտական կարգավիճակ՝ ամբողջացվում էին Հայ եկեղեցու նվիրապետական ինն աստիճանները: Մետրոպոլիտական աստիճանի բացակայությունը խոցելի էր դարձնում Հայ եկեղեցին հայ-հույն և հայ-լատին եկեղեցաքաղաքական հարաբերություններում: Սյունյաց աթոռը Հայ եկեղեցու միակ մետրոպոլիտությունն էր:

Հայոց քաղաքական միասնության բացակայության պայմաններում, Հայ եկեղեցու նշանավոր աթոռին վերադարձնելով իր բարձր պատիվը և բավարարություն տալով նրա առաջնորդների հավակնություններին, կանխվում էր եկեղեցուն սպառնացող պառակտման վտանգը:

Առկա էին նաև որոշակի սուբյեկտիվ գործոններ, որոնք դյուրացնում էին հիշյալ գործընթացի սահուն իրականացումը.

XI դ. սկզբին Սյունի և Բագրատունի ընտանիքների միջև ձևավորվում են բարեկամական և խնամիական հարաբերություններ:

Էական դեր ունեւր ազգակցական կապի առկայությունը Սյունյաց առաջնորդ Հովհաննես Սյունեցու և կաթողիկոս Սարգիս Սևանցու միջև:

Գրականություն

Ալեքսանյան Վ. 2014, Հակոբ Ա եպիսկոպոս Սյունեցու գործունեության շուրջ (918-958), Պատմաբանասիրական հանդես, N 3, էջ 195-209:

Ալիշան Ղ. 1893, Սիսական, Վենետիկ, հրատ. նշված չէ, էջ 563:

Աճառյան Հր. 1942, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, ԵՊՀ հրատ., 633 էջ:

Բարխուդարյան Ս. 1960, Դիվան հայ վիմագրության, պր. II, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 240 էջ:

Գրիգոր Մագիստրոսի թղթերը 1910, բնագիրն յառաջաբանով և ծանոթագրություններով առաջին անգամ ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Աղէքսանդրապոլ, Տպարան Գէորգ Մաճոյեանցի, 352 էջ:

Գրիգորյան Գր. 1973, Սյունիքի վանական կալվածատիրությունը IX-XIII դարերում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 267 էջ:

- Գրիգորյան Գր. 1999, Սյունյաց եպիսկոպոսների շինարարական գործունեությունը, (IX-XIV դարեր), Պատմաքանասիրական հանդես, N 2-3, էջ 166-174:
- Գրիգորյան Գր. 2006, Սյունիքի թագավորությունը (X-XII դարեր), Պատմաքանասիրական հանդես, N 2, էջ 134-145:
- Կիրակոս Գանձակեցի 1961, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 426 էջ:
- Կոստանեանց Կ. 1913, Վիմական տարեգիր, Ս.-Պետերբուրգ, Տպարանն Գիտութեանց Ճեմարանի Կայսերականի, 292 էջ:
- Հակոբյան Թ. 1966, Սյունիքի թագավորությունը, Երևան, «Միտք», 220 էջ:
- Հայ ժողովրդի պատմություն 1976, հ. III, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1032 էջ:
- Հացունի Վ. 1927, Կարետր խնդիրներ հայ եկեղեցւոյ պատմութենէն, Վենետիկ, հրատ. նշված չէ, 588 էջ:
- Մաթևոսյան Ռ. 1990, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու պետական կարգը, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 296 էջ:
- Մատթէոս Ուռհայեցի 1898, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 448 էջ:
- Սահակյան Տ. 1966, Սյունյաց թագավորության հիմնումը և նրա քաղաքական դերը XI դարում, Պատմաքանասիրական հանդես, N 3, էջ 221-228:
- Սարգսյան Գ. 1952, Բղենո Նորավանք, Էջմիածին, N 6, էջ 41-46:
- Ստեփաննոսի Սինեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական 1861, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 386 էջ:
- Ստեփանոս Տարանեցի Ասողիկ 2011, Պատմութիւն Տիեզերական, Մատենագիրք հայոց, ԺԵ հատոր, Ժ դար, Պատմագրութիւն, գիրք Բ, Երևան, ԵՊՀ հրատ., 893 էջ:
- Ստեփանոս Օրբելյան 1986, Սյունիքի պատմություն, թարգմ., ներած. և ծանոթ. Աշ. Աբրահամյանի, Երևան, «Սովետական գրող», 616 էջ:
- Վարդան Բարձրաբերդեցի 1861, Պատմութիւն տիեզերական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մատենագրութիւնք նախնեաց, Մոսկվա, հրատ. նշված չէ, 217 էջ:
- Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից 1897, Արարատ, թիվ Գ, էջ 91-144:
- Օրմանեան Մ. 2001, Ազգապատում, հ. Ա, Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1870 էջ:

ՄՅՈՒՆՅԱՅ ԱԹՈՒԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄԸ XI ԴԱՐՈՒՄ

Վարդան Ալեքսանյան

Ամփոփում

Միջնադարյան նշանավոր մատենագիր Ստ. Օրբելյանի վկայությամբ՝ 1006 թ. Հովհաննես Է-ի առաջնորդության օրոք (1006-1058) վերականգնվում է Սյունյաց աթոռի մետրոպոլիտական աստիճանը: Հայոց կաթողիկոսության կողմից, ի դեմս կաթողիկոս Սարգիս Սևանցու (992-1019), Սյունյաց թեմին վերադարձվում են նախկին մետրոպոլիտական պատիվները և արտոնությունները: Սյունյաց աթոռը մետրոպոլիտական աստիճանից զրկվել էր X դ. կեսերին կաթողիկոս Անանիա Մոկացու (941-958) կոնդակով: Հովհաննես Է-ի օրոք Տաթևի նախաթոռ վանքին են վերադարձվում բազմաթիվ գյուղեր և կավաձքներ, որոնք մինչ այդ հափշտակել էին իշխանները և այլ ինքնահռչակ հոգևորականներ: Հովհաննես Է-ի աթոռակալությունը նշանավորվում է եկեղեցական շինարարությամբ և իսլամական ցեղերի կողմից ավերված վանքերի վերականգնումով: Հովհաննես Է-ի իրավահաջորդ Գրիգոր IV մետրոպոլիտի օրոք Սյունիքում բարձրացան նոր եկեղեցիներ, և հիմնադրվեցին կրոնական հաստատություններ: Հոգևոր-մշակութային օջախների հիմնադրման գործում Սյունյաց մետրոպոլիտները վայելել են Վասակ Սմբատյան (998-1040), Սմբատ Բ Աշոտյան (1040-1051), Գրիգոր Ա Աշոտյան (1051-1072), Սենեքերիմ Սևադյան (1072-1094) թագավորների աջակցությունը: Սյունյաց աթոռի մետրոպոլիտական աստիճանի վերահաստատումը ամենից առաջ պայմանավորված էր թագավորության տնտեսական և ռազմական հզորությամբ: Սյունյաց հնավանդ աթոռին շնորհելով մետրոպոլիտական կարգավիճակ՝ ամբողջացվում էր Հայ եկեղեցու նվիրապետական կառույցը, որ կարևոր էր հայ-հույն և հայ-լատին եկեղեցաքաղաքական հարաբերություններում: Համահայկական պետականության բացակայության պայմաններում Սյունյաց աթոռին շնորհելով բարձր կարգավիճակ, բավարարելով Սյունյաց հոգևորականության հավակնությունները՝ կանխվում էին Հայ եկեղեցու պառակտման վտանգները:

Բանալի բառեր՝ մետրոպոլիտ, Տաթևի վանք, նվիրատվություն, եկեղեցաշինություն, Սյունյաց աթոռ, վերահաստատում, առանձնաշնորհում:

ВОССТАНОВЛЕНИЕ МИТРОПОЛИТСКОГО СТАТУСА СЮНИКСКОГО ПРЕСТОЛА В XI ВЕКЕ

Вардан Алексанян

Резюме

По свидетельству известного средневекового историографа Ст. Орбеяна, в 1006 году усилиями епископа Иоаннеса VII (1006-1058) был восстановлен митрополитский статус Сюникского престола. Армянским католикосатом, возглавляемым в это время Саргисом Севанци (992-1019), Сюникской епархии были возвращены прежние митрополитские привилегии. Сюникский престол был лишен митрополитского статуса в середине X века по указу католикоса Анания Мокаци (941-958). При Иоаннесе VII Татевскому первопрестольному монастырю вновь были переданы многие деревни и поместья, которые до этого были захвачены князьями и самозванцами – священнослужителями. При Иоаннесе VII началось развернутое строительство церквей и восстановление разрушенных мусульманами монастырей. При преемнике Иоаннеса VII митрополите Григоре IV (1058-1116) в Сюнике были возведены новые церкви и основаны религиозные учреждения. В деле создания духовно-культурных очагов Сюникские митрополиты пользовались поддержкой сюникских царей Васака Смбатяна (998-1040), Смбата II Ашотяна (1040-1051), Григора I Ашотяна (1051-1072), Сенекерима Севадяна (1072-1094). Восстановление статуса митрополитства Сюникского престола прежде всего было обусловлено экономической и военной мощью царства. Присвоение Сюникскому престолу митрополитского статуса восстанавливало целостность иерархического строя армянской церкви, что было весьма важным фактором в армяно-греческих и армяно-латинских церковно-политических отношениях. При отсутствии армянской государственности присвоение высокого статуса сюникской епархии предотвращало угрозу раскола Армянской церкви.

Ключевые слова – митрополит, Татевский монастырь, пожертвование, церковное строительство, Сюникский престол, восстановление, привилегия.

RESTORATION OF THE METROPOLITAN STATUS OF THE SYUNIK THRONE OF THE XI CENTURY

Vardan Alexanyan

Abstract

According to the famous medieval historian St. Orbelian in 1006 under the leadership of Bishop Johannes VII (1006-1058), the metropolitan status of the Syunik throne was restored. The Armenian Catholicos, led by Sargis Sevanzi (992-1019), restored the old metropolitan honors and privileges to the Syunik diocese. The Syunik throne was deprived of a metropolitan degree in the mid of the 10th century by the decree of the Catholicos Anania Mokatsi (941-958). Under Johannes VII, many villages and estates were recaptured to the Tatev Monastery of the See, which had previously been captured by princes and other self-proclaimed clergymen. The leadership of Johannes VII is marked by church building and the restoration of monasteries destroyed by Islamic tribes. Under the successor of Johannes VII Metropolitan Grigor IV (1058-1116), new churches were erected in Syunik and religious institutions were founded. In the creation of spiritual and cultural centers, the Syunik metropolitans enjoyed the support of the Syunik kings Vasak Smbatyan (998-1040), Smbat II Ashotyan (1040-1051), Grigor I Ashotyan (1051-1072), Senekerim Sevadyan (1072-1094). The restoration of the metropolitan status of the Syunik throne was primarily due to the economic and military power of the kingdom. By assigning the Syunik throne the metropolitan status restored the integrity of the hierarchical system of the Armenian church, which was important in the Armenian-Greek and Armenian-Latin church-political relations. In the absence of all-Armenian statehood, the high status of the Syunik diocese granted the ambitions of the Syunik clergy and the risks of a split in the Armenian Church were averted.

Key words – metropolitan, Tatev monastery, donation, church building, Syunik church throne, restoration, privilege.

**ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԷԹԻԿԱՆ ՈՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ
ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ «ԱՇԽԱՐՀԱԺՈՂՈՎ»
ՁԵՌՆԱՐԿՈՒՄ***

Սարգիս Բալդարյան

Երևանի պետական համալսարան, ասպիրանտ

ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 1

Էլ. հասցե՝ sargis.baldaryan@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 07.01.2020, գրախոսվել է 29.01.2020, ընդունվել է
տպագրության 05.08.2020

Ներածություն

Նոր Զուլայի Ս. Ամենափրկիչ վանքի առևտրական դպրոցի դպրապետ Կոստանդ Զուլայեցին իր վաճառականական ձեռնարկ-դասագրքերից մեկում՝ «Աշխարհաժողով» երկում, հետևյալ խորհուրդն էր տալիս հայ վաճառականներին. «Զամենայն առըտ և տուրտ գրեա՛յ, գրեա՛յ և գրեա՛յ, էս օրէն վաղն մի՛ ձգեր և հմիկէս պախն մի՛ ձգեր»¹: Առևտրական գործարքների մասին ամբողջ տեղեկատվությունը գրի առնելու Կոստանդ Զուլայեցու այս հորդորը արձագանքն էր վաճառականական միջավայրում ձևավորված այն սովորությանին նորմի, որի համաձայն՝ վաճառականը հատուկ հաշվեմատյաններում պարտավոր էր գրանցել իր կատարած գործարքների, նույնիսկ՝ առօրյա ծախսերի ամեն մի մանրուքը: Բարոյագիտական ու առևտրական բնույթի համանման մի շարք խորհուրդներ մեկտեղելով իր ձեռնարկ-դասագրքում՝ Կոստանդ Զուլայեցին հայ վաճառականներին ապահովում էր «առևտրական գիտության»² մի այնպիսի ոլորտի մասին համապարփակ տեղեկատվությամբ, որը կարելի է բնորոշել որպես վաճառականական էթիկա:

Սեֆյան Իրանի մայրաքաղաք Սպահանի հայկական արվարձան Նոր Զուլայից սերող վաճառականները XVII-XVIII դդ. համաշխարհային առևտրում հասել էին «կախարդական հաջողության»³, և նրանց հաջողվել

* Խորին շնորհակալություն ենք հայտնում Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր Սեպուհ Ասլանյանին Կոստանդ Զուլայեցու՝ Նոր Զուլայում ու Օքսֆորդում պահվող ձեռագրերի թվային պատկերները տրամադրելու համար:

¹ Նոր Զուլայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. N 64, թ. 9բ:

² Բնորոշման համար տե՛ս Hoock 2008, 148:

³ Բնութագրումը՝ ըստ Braudel 1983, 158:

էր ստեղծել ամենակենսունակ ու ամենաընդարձակ առևտրական ցանցերից մեկը: Դրա սահմաններն այնքան ընդգրկուն էին, որ արևելքում Մանիլայից հասնում էին մինչև արևմուտքում Ամստերդամ ու Լոնդոն: Ըստ Սեպուի Ասլանյանի՝ հայկական առևտրական ցանցի այս հաջողությունը կարելի է բացատրել «շրջանառության տեսության»⁴ միջոցով: Դրա համաձայն՝ Նոր Զուլայի ու ցանցի կազմի մեջ մտնող տասնյակ բնակավայրերի միջև տեղի է ունեցել վաճառականների, ապրանքների, կապիտալի, տեղեկատվության, կանանց ու քահանաների անխափան շրջանառություն⁵: Թեպետ «առարկաների ու մարդկանց» այս շարքից⁶ յուրաքանչյուրն ունեցել է իր կարևորությունը, տեղեկատվության շրջանառության համակարգը առանձնահատուկ ընդգծման կարիք ունի: Հենց առևտրական մեծաքանակ տեղեկատվության փոխանցման ու ստացման գործուն համակարգի շնորհիվ է, որ հայ վաճառականները հաղթահարում էին տարածությունը կամ, ինչպես նշանավոր պատմաբան Ֆերնան Բրոդելն է ձևակերպել, «համար մեկ թշնամին» վաղ արդի դարաշրջանում⁷:

Նոր Զուլայի առևտրական ցանցում տեղեկատվությունը փոխանցվում էր մի քանի եղանակով: Նամակագրությունը, որը մեծ տարածում ուներ դեռևս միջնադարյան վաճառականների կյանքում, շարունակում էր պահպանել իր կարևորությունը նաև XVII-XVIII դարերում. ջուլայեցի վաճառականները մեծապես հենվում էին հենց նամակագրության վրա հսկայական տարածություններում առևտրական անհրաժեշտ տեղեկատվությունը փոխանցելու համար⁸: Դրանից բացի՝ նրանք հնարավորություն ունեին օգտվելու առևտրական ձեռնարկ-դասագրքերից, որոնցում ամփոփված էր զանազան երկրների մասին առևտրական բնույթի գիտելիքի այն շրջանակը, որը իր ձեռքի տակ պետք է ունենար վաղ արդի դարաշրջանի վաճառականը: Հատկանշական է, որ նմանատիպ ձեռնարկների գործածությամբ ջուլայեցի վաճառականները առանձնանում էին ասիական առևտրական այլ

⁴ «Շրջանառության տեսության» համար տե՛ս Markovits 2000, 25:

⁵ Aslanian 2011, 13-15.

⁶ Markovits 2000, 25.

⁷ Braudel 1972, 355. «Վաղ արդի դարաշրջան» հասկացության ներքո արևմտյան պատմագիտական հետազոտություններում միավորվում է մոտավորապես 1500-1800 թվականներն ընդգրկող ժամանակաշրջանը:

⁸ Aslanian 2011, 86-120.

համայնքներից, որոնք, ըստ երևույթին, գերազանցապես նամակագրական կապի միջոցով էին տեղեկատվություն փոխանակում⁹:

Վաղ արդի դարաշրջանի հայկական առևտրական ձեռնարկներից իրենց նշանակությամբ ու ամբողջականությամբ առանձնանում են Կոստանդնուպոլսի երկերը: Երևանի, Օքսֆորդի ու Նոր Զուլայի ձեռագրական հավաքածուներում մեզ են հասել ջուղայեցի այս հեղինակի երբևէ չուսումնասիրված «Աշխարհաժողով» ու «Դռներն ռաղամին» ձեռնարկների վեց գրչագիր ընդօրինակություններ: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 1675 թ. Մարսելում տպագրված «Արիեստ համարողութեան» երկը նույնպես պատկանում է Կոստանդնուպոլսի գրչին, թեև գրքի տիտղոսաթերթին բացակայում է նրա անունը¹⁰: Հետաքրքիր է արձանագրել նաև այն փաստը, որ ինքը հեղինակն է ծավալել առևտրական գործունեություն նախքան այսպիսի ձեռնարկներ շարադրելը¹¹: Հայկական վաճառականական այս դասագրքերը, փաստորեն, գրվել են առևտրական որոշակի փորձառություն ունեցող անձի կողմից: «Աշխարհաժողով» ձեռնարկ-դասագրքում է, որ Կոստանդնուպոլսից ի մի է բերել բարոյագիտական ու առևտրական բնույթի բազմաթիվ խորհուրդներ՝ դրանք հասցեագրելով իր ազգակից վաճառականներին:

«Աշխարհաժողով» առևտրական երկի խրատական հատվածների ուսումնասիրությունը թույլ է տալիս թափանցել վաճառականի բարոյական նկարագրի թեմայի խորքերը, ինչի քննարկումները սկիզբ են առել դեռևս XIV դ. իտալական ու իսպանական առևտրական ձեռնարկներում: Սքոլաստիկայի նշանավոր ներկայացուցիչ Թովմա Աքվինացին վաճառականներին համարում էր արհեստավորների ու գյուղացիների նկատմամբ ստորադաս խավ՝ իր մոտեցումը հիմնավորելով սուրբգրային մեջբերումներով¹²: Ընդամենը 1-2 հարյուրամյակ անց հասարակական կյանքում ունեցած դերակատարության շեշտակի մեծացումը վաճառականների համար ապահովեց սոցիալական ավելի բարձր դիրք: Ինչպես դիպուկ կերպով արձանագրել է Պիեռ Ժուանիքը, ուշ միջնադարում «կեղտոտ ոտքերով վաճա-

⁹ Baldaryan 2019.

¹⁰ Անասեան 1987, 671-674, Անայան 1976, 874-877: Հմմտ. Փաշայան 2005, 345-364:

¹¹ Կոստանդնուպոլսի վաճառականական գործունեությունն արտացոլող վավերագրեր են պահպանվել Վենետիկի պետական արխիվում ու Նոր Զուլայի Ս. Ամենափրկիչ վանքի դիվանում (մանրամասն տե՛ս Բալդարյան 2019, 66-78):

¹² Aurell 2009, 86-87.

ռականին փոխարինում էր գրիչը ձեռքին գործարարը»¹³: Ժակ Սավարին, որն իր առևտրական դասագիրքը¹⁴ շարադրել է Լյուդովիկոս XIV-ի դարաշրջանում՝ ֆինանսների նախարար Ժան Բատիստ Կոլբերի պատվերով ու հովանավորությամբ, արձագանքելով ընթացող փոփոխություններին, իր երկի թե՛ վերնագրում ու թե՛ բուն տեքստում շրջանառության մեջ դրեց բոլորովին նոր հասկացություն. իր ժամանակների վաճառականներին բնորոշելու համար նախորդ դարերի վաճառականներին հիշեցնող marchand գործածական բառի փոխարեն նա նախապատվությունը տվեց négociant բառին, քանի որ վերջինս վերաբերում էր միմիայն հեռագնա առևտրով զբաղվող վաճառականներին¹⁵: Պատահական չէ, որ արդեն «Վերածննդի ժամանակաշրջանում ոչ ոք չէր հիշում մասնագիտությունների աստիճանակարգությունը՝ հաստատված Թովմա Աքվինացու կողմից»¹⁶: Ուշ միջնադարի եվրոպական հասարակություններում վաճառականների սոցիալական դիրքի աննախադեպ բարձրացումն իր արտահայտությունն էր գտնում առևտրական երկերում, որոնցում էլ աստիճանաբար ծավալվում էին բարոյագիտական քննարկումներ վաճառականի կերպարի մասին: Այդ քննարկումներն ուղեկցվում էին յուրատեսակ բարոյական կոդեքսի ձևավորմամբ, որը շարունակեց արդիական թեմա մնալ նաև այն հեղինակների համար, որոնք առևտրական ձեռնարկներ էին շարադրում ավելի ուշ շրջանում՝ XVII-XVIII դդ.: Այս տեսանկյունից Կոստանդ Զուղայեցին բացառություն չէր: Բացի այդ, առևտրական ձեռնարկները դիտարկվել են որպես գերազանցապես տնտեսական պատմության աղբյուրներ, ինչի հետևանքով, ըստ ուսումնասիրողներից մեկի ձևակերպման, դրանց «արտատնտեսական» բովանդակությունը մնացել է ստվերում¹⁷: Նույնը վերաբերում է նաև Կոստանդ Զուղայեցու երկերին, որոնց հետազոտությունը պահանջում է համալիր մոտեցում ու պատշաճ ուշադրություն այդ տնտեսական աշխատությունների ոչ տնտեսական հատվածների նկատմամբ:

Եվ վերջապես, Կոստանդ Զուղայեցու խրատական խորհուրդները անհրաժեշտաբար պետք է ուսումնասիրվեն վաճառականի բարոյական նկարագրի՝ դեռևս ուշմիջնադարյան աշխատություններում սկիզբ առած

¹³ Jouanique 1996, 273.

¹⁴ Savary 1675.

¹⁵ Trivellato 2019, 100.

¹⁶ Aurell 2009, 86-87.

¹⁷ Aurell 2009, 76.

քննարկումների հետնախորքի վրա: Դա, իր հերթին, հնարավորություն է տալիս հայկական վաճառականական ձեռնարկի հետազոտությունը տեղափոխելու XIV-XVIII դդ. եվրոպական առևտրական երկերի հետ համադրության ու համեմատության հարթություն:

Վաճառականներին ուղղված խորհուրդներն ու «Աշխարհաժողովը»

«Աշխարհաժողով»-ը շարադրված է երկու վաճառականների միջև ընթացող երկխոսության ձևաչափով: Իր կուտակած առևտրական հսկայական տեղեկատվությունը Կոստանդ Ջուղայեցին ներկայացնում է որպես պատասխան այն հարցերին, որոնք իրար են ուղղում գրուցակից վաճառականները: Ընդ որում, երկի առաջին մասում պատասխանողի դերում հայտնված վաճառականը երկրորդ հատվածում հանդես է գալիս որպես ունկնդիր: Այդպիսով՝ մատուցվող նյութը հեղինակը գրեթե հավասարաչափ կիսել է, և վաճառականներից յուրաքանչյուրը դարձել է երկխոսության լիարժեք մասնակից: Ֆրանչեսկա Տրիվելլատոյի դիտարկումն այն մասին, որ «չնայած ամեն նամակի անհատական բնույթին՝ առևտրական նամակագրությունն իրականում պետք է կարդացվի որպես բազմաձայն խոսակցություն, ոչ թե երկխոսություն»¹⁸, ամբողջովին վերաբերում է նաև Կոստանդ Ջուղայեցու շարադրած վաճառականական գրույցին, որի երևակայական մասնակիցը Նոր Ջուղայի համաշխարհային առևտրական ցանցում ներգրավված ողջ հայ վաճառականությունն էր:

«Աշխարհաժողովն» անմիջապես սկսվում է գրուցակից վաճառականներից մեկի հարցով՝ «Ո՛վ եխպար, վաճառակա՞ն ես, թե՞ կուզես վաճառական լինես»¹⁹: Պատասխանն արդեն իսկ թույլ է տալիս հեղինակին անցնել ծրագրված նյութի ներկայացմանը. «Այո՛, եղբայր, վաճառականի որդի եմ, կամիմ, որ վաճառական լինեմ: Ունե՛ս ինչ մի խրատ օգտի վասն իմոյ շահաւետութեան»²⁰: Դրան հետևում են «Սուրբ Գրոց և բազմայշրջիկ ծերոց» բարոյախրատական խորհուրդները, որոնք մեծ ծավալ չեն զբաղեցնում: Զրուցակիցը, սակայն, չի բավարարվում ստացած պատասխանով և անմիջապես հղում է հաջորդ հարցը՝ «Բարի հրամայեցեր, եղբա՛ր բարի և հիմաստուն: Այլևս ունի՞ս ինչ մի խրատ վասն ի պէտս գնելոյ և

¹⁸ Trivellato 2007, 89.

¹⁹ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. N 64, թ. 7բ:

²⁰ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. N 64, թ. 7բ:

վաճառելոյ»²¹: Այս անգամ վաճառականն իր պատասխանում ներկայացնում է այնպիսի խորհուրդներ, որոնք անմիջականորեն առևտրական գործունեությանն են առնչվում:

Բարոյական ու առևտրական բնույթի խորհուրդներից հետո վաճառականների զրոյցը կենտրոնանում է զուտ առևտրական տեղեկատվության վրա, որի կարիքն ունեին հեռագնա առևտրում ներգրավված վաճառականները: Մասնավորապես՝ ձեռնարկի այս մասում ներկայացվում են համաշխարհային առևտրական ուղիների վրա գտնվող տարբեր երկրների չափի, կշռի, դրամական համակարգերը, որ ուղեկցվում են նաև այլ թեմաների ընդգրկմամբ, այդ թվում՝ տեղի ժողովուրդների էթնոմշակութային պատկերի նկարագրությամբ: Այսպես՝ արևելքից արևմուտք հաջորդականությամբ Կոստանդ Զուղայեցին հերթով ներկայացնում է Հեռավոր Արևելքից մինչև Արևմտյան Եվրոպա ընկած երկրների մասին բացառիկ տեղեկություններ՝ իր ձեռնարկը վերածելով վաղ արդի շրջանի յուրատեսակ հայկական հանրագիտարանի: Փաստորեն, «Աշխարհաժողովում» վաճառականները փոխանակում են ինչպես խրատական խորհուրդներ, այնպես էլ զանազան երկրների մասին հայտնում են բացառիկ տվյալներ: Հատկանշական է, որ վաճառականներից յուրաքանչյուրն իր խոսքն սկսում է խրատական խորհուրդներով, ապա անցնում ասելիքի առավել ծավալուն մասին՝ համաշխարհային առևտրական շուկաներին: Սա հիշեցնում է Եվրոպական վաճառականական ձեռնարկների բավական տարածված կառուցվածքը, որոնց ներածական հատվածները ևս նախատեսված էին բարոյագիտական խորհուրդների համար:

Բարոյախոսական խորհուրդները «Աշխարհաժողովում»

Ինչպես Եվրոպական, այնպես էլ հայկական վաճառականական ձեռնարկներում բարոյախոսական խորհուրդների առկայությունը պայմանավորված էր վաճառականական գործի՝ որպես արհեստի ընկալումներով, ինչը ենթադրում էր ոչ միայն գիտելիք, այլև հմտություններ ու անձնական որակներ: Պատահական չէ, որ XIV դ. մի իսպանական ձեռնարկում վաճառականական գործը սահմանվում էր որպես «արհեստ, որ նախորդում է բոլոր արհեստներին»²²: Անձնական հատկանիշներն ու առա-

²¹ Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. N 64, թ. 8բ:

²² Aurell 2009, 77.

քինությունները դիտարկվում էին որպես առևտրական հաջողությանը նպաստող գործոններ, ուստի ձեռնարկներում կարևոր տեղ էր հատկացվում բարոյական արժեքների արմատավորմանը վաճառականների մտածողության մեջ: Հետազոտողներից մեկի դիպուկ դիտարկման համաձայն՝ առևտրական ձեռնարկներում տարածվում էր ուղերձ այն մասին, որ «վաճառականական գործի մեջ բարոյական առաքինությունն ու մասնագիտական առաքինությունը նույն մետաղադրամի երկու կողմերն են»²³: Համապատասխանաբար՝ տնտեսական անհաջողություններն ուշմիջնադարյան աշխարհընկալմամբ բացատրվում էին վաճառականի բարոյական անկմամբ²⁴:

Իր բարոյական խրատներում Կոստանդ Ջուլայեցին երբեմն տալիս էր աստվածաշնչյան հղումներ: Ասվածի օրինակներ են նրա բարոյագիտական դատողությունները «կայ խրատ ի Սուրբ Գրոց»²⁵ և «քանզի Սողոմոն խրատ զամենեան»²⁶ արտահայտություններից հետո: Ինչո՞վ է պայմանավորված վաճառականական երկում սուրբգրային մեջբերումների առկայությունը: XVIII դ. սկզբին շարադրված ‘Speranders Negotiant’ («Վաճառական Սպերանդերսը») խորագրով գերմանական առևտրական ձեռնարկում նույնպես հեղինակը, ընդդիմանալով հանդերձ դրամական շահը մերժող եկեղեցական մոտեցմանը, օգտագործում է. «կրոնական երևակայություն»՝ հիմնավորելու համար առևտրական այս կամ այն վարքագիծը²⁷: Ինչպես նշում է Դանիել Ռաբուզզին, տվյալ դեպքում «կրոնական երևակայությունը ծառայում է վաճառականների շահերին»²⁸: Նույնը պետք է ասել նաև Կոստանդ Ջուլայեցու «Աշխարհաժողովի» մասին: Միևնույն ժամանակ, պետք է նկատի ունենալ, որ կրոնական մտածողությունը չէր նահանջել իր ազդեցիկ դիրքերից, ու կրոնական երկերն էլ ամենևին խորթ չէին վաղ արդի դարաշրջանի հայ վաճառականների համար: Իր առևտրական, ապա նաև դիվանագիտական գործունեությունը XVIII դ. առաջին քառորդին ծավալած Եղիա Կարնեցու գրադարանի ցուցակները հիանալի հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու հայ վաճառականի մտավոր ու գրական նախընտրությունների մասին: Նրա գրքերի ցանկում,

²³ Aurell 2009, 78.

²⁴ Todeschini 2008, 32.

²⁵ Նոր Զուլայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. N 64, թ. 8ա:

²⁶ Նոր Զուլայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. N 64, թ. 27բ:

²⁷ Rabuzzi 1995, 175.

²⁸ Rabuzzi 1995, 175.

մեծաքանակ բառարաններից, տոմարական ու առևտրական աշխատություններից բացի, փոքր թիվ չեն կազմում նաև կրոնական գրքերը²⁹: Այնպես որ՝ աստվածաշնչական մեջբերումները լիովին տեղավորվում էին XVII-XVIII դդ. վաճառականական ընկալումների տիրույթում:

Ինչ վերաբերում է բուն բարոյախոսական խրատներին, ապա դրանց մեջ, առաջին հերթին, ուշադրություն է գրավում հետևյալ շարքը. «Մի լինել ստայխոս, մի լինել քոֆրատու, մի լինել զրկող, մի լինել ուխտագանց, որ է եղրարագանց, մի լինել երդումնակեր, մի լինել բարկացող, մի լինել ինքնական և ինքնայիաճ»³⁰: Վաճառականի բարոյական նկարագրից, ըստ հեղինակի, պետք է բացառվեն որոշակի հատկանիշներ, որոնք թվում է, թե վերցված են Աստվածաշնչից, Կոստանդ Ջուղայեցու որոշակի ընտրությամբ: Հատկանշական է, որ աստվածաշնչյան պատվիրանների նմանողությամբ հեղինակն իր պատգամները ներկայացնում է արգելական հրամայական եղանակով և դրանք ձևակերպում որպես յուրօրինակ «վաճառականական պատվիրաններ»: Պետք է նկատել, սակայն, որ դրանք մեծ մասամբ համատեղելի չեն վաճառականական կյանքի հետ: Միջնադարյան զրույցներում հաճախ կարելի է հանդիպել այնպիսի դիպաշարերի, որոնցում վաճառականները հանդես են գալիս վերոհիշյալ մերժելի հատկանիշներով: Դրանցում վաճառականի կերպարի անբաժան մաս են համարվում ստախոսությունն ու սուտ երդվելը, որոնք «վասն սովորութեան առ վաճառականս թեթև համարին և կամ թե ոչինչ»³¹: «Ազնիու վաճառականք» զրույցում քահանային իրենց մեղքերը խոստովանելիս երկու վաճառական բացատրում են, որ ճշմարտախոսությունն ամենևին չի տեղավորվում առևտրի սահմաններում. «Ո՛վ հայր, եթե ի առ և տուրս ոչ երդուիմք և ոչ սուտ ասեմք, չկարեմք բնաւ ապրել... Քանզի կկտրուի աշխատանքն մեր, թե ոչ սուտ ասեմք երդում չուտեմք և սուտ չասեմք»³²:

Կոստանդ Ջուղայեցին իր ձեռնարկի հասցեատեր վաճառականությանը պատգամում է լինել խոնարհ, իմաստուն ու համբերաբար. «Լեր հեզ և խոնար երկանամիտ և համբերող և որչափ որ գիտուն լինես, հարց և ալոցն, որ առաւել ևս գիտենաս և որչափ որ բաժրանաս, դու քեզ խոնար

²⁹ Չուգասյան 1983, 69-74:

³⁰ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. N 64, թ. 8ա: Մի քանի բառեր ուղղվել են ըստ Օքսֆորդի Բողոքյան գրադարան, հայերեն ձեռագրեր, ձեռ. N f 14, թ. 34բ-ի:

³¹ Սրապյան 1969, 160:

³² Մելիք-Օհանջանյան 1957, 40-41:

կալ, քան զամենայն»³³: Այս անձնական որակները վաճառականի նկարագրի պարտադիր բաղադրիչներ են դիտարկվում նաև եվրոպական առևտրական գրականության մեջ: Այս տեսանկյունից դիտելի է, որ «Չորս ընկերք ճանապարհորդք» հայերեն միջնադարյան գրույցում «վասն գալեաց և պատահարաց» քննարկման ժամանակ վաճառականը հետևյալ միտքն է արտահայտում. «Իմաստութիւնն ու խելքն ի վեր է, քան զամենն»³⁴: 1632 թ. հոլանդացի Կասպար վան Բերլեն «Իմաստուն վաճառականը» ճառում նկատում էր, որ վաճառականը կարողանում է առաքինությունը չարիքից տարբերել այնպես, ինչպես լավ ապրանքը վատից³⁵:

«Աշխարհաժողովի» խորհուրդներից մյուսը վերաբերում է գինու չափավոր օգտագործմանը. «Եթէ գինի ամէնևին ոչ ըմպես, լավ ես, քան զամենայն ըմպող, բաց եթէ ըմպես, սակաւ ըմպեայ, քանզի բազումք են կորեալ ի արբեցութեան»³⁶: Գինու չարաշահման պատճառով առևտրական գործերը ծախողած «բազումք»-ի մեջ է, օրինակ, իր օրագրական երկով հայտնի Զաքարիա Ագուլեցու եղբայր Շմավոնը: Վերջինս Թավրիզում կորցնում է իր գումարը, քանի որ, ինչպես պատմում է Զաքարիան, «...խանս այս Շմաւոնս կու տանի, գինի խմեցնել կու տայ»³⁷: Եվրոպական առևտրական ձեռնարկները հորդորում են հեռու մնալ նաև որկրամոլությունից, քանի որ, ինչպես, օրինակ, XIV դ. իսպանական ձեռնարկում է նշվում, «որկրամոլությունը մի կաթսա է, որտեղ եփվում են բոլոր չարիքները»³⁸: Բենեդետտո Կոտրուլին ևս իր իտալերեն ձեռնարկում հորդորում է չափավոր լինել ուտելու ու խմելու մեջ³⁹:

Վաճառականներին ուղղված խորհուրդներում կարևորվում է նաև եռանդուն մասնակցությունը եկեղեցական արարողություններին ու հանգանակություններին. «Ժամի և աղօթքի ժիր կացիր, տուրսէ և ողորմութենէ մի՛ ձանձրանալ»⁴⁰: Այս իմաստով, որպես կրոնապաշտ ու առատաձեռն վաճառականների տիպական օրինակներ («գլուխ և փիր վաճառակա-

³³ Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. N 64, թ. 8ա-8բ:

³⁴ Մելիք-Օհանջանյան 1957, 48:

³⁵ Barlaeus 2019, 89.

³⁶ Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. N 64, թ. 27բ:

³⁷ Զաքարիա Ագուլեցի 1938, 160-161: Հմմտ. Խաչիկյան 1988, 122-123:

³⁸ Aurell 2009, 79.

³⁹ Cotrugli 2017, 137.

⁴⁰ Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. N 64, թ. 9ա: «Աղօթքի» բառը ճշտվել է ըստ Օքսֆորդի Բողեյան գրադարան, հայերեն ձեռագրեր, ձեռ. N f 14, թ. 35ա-ի:

նացն»⁴¹⁾ Կոստանդ Զուղայեցին իր երկի վերջում հիշատակում է Մարխաս և Կոսպար անուններով հայտնի վաճառականներին, որոնց մասին միջնադարյան գրույցը բազմիցս է հանդիպում հայերեն ձեռագրերում: Ավելին՝ նրանց պատմության հիման վրա Հակոբ Արծկեցին գրել էր նաև չափավոր ստեղծագործություն դեռևս XV դ. երկրորդ կեսին⁴²:

Այդ գրույցի դիպաշարը խիստ համառոտ գծերով ներկայացնելու դեպքում կստանանք հետևյալ պատկերը. Մարխասը, որը ծագումով Սսից էր ու զբաղվում էր վաճառականությամբ, մահից առաջ իր ունեցվածքը կտակում է Քրիստոսին: Նրա ընկեր Կոսպարը, որը, հակառակ գործընկերոջ եկեղեցասիրության, կռապաշտ էր, գնում է Անտիոք, որտեղ եկեղեցում Քրիստոսը նրան «երևեցաւ տեսեամբ» ու վերցրեց իր հասանելիքը: Այդուհետև Կոսպարը ևս մկրտվում է ու ջերմեռանդորեն հարում քրիստոնեական դավանանքին⁴³: Կոստանդ Զուղայեցին այս պատմության մանրամասների մեջ ամենևին չի խորանում, այլ բավարարվում է նշելով, որ Քրիստոսի գալուստից առաջ վաճառականական գործը չէր արժանացել Աստծո հավանությանը, և միայն «յետ Քրիստոսի Աստուծոյ մերոյ գալլստեան Մալխաս և Կոսպար հաճուացան Աստուծոյ վասն միայնտութեան և պարկեշտութեամբ, որ և յամ ամէ ամենայն վաստակոց իրեանց տասնայնորդս տային քահանայից և ախկատոց կարօտելոց»⁴⁴: Առանձին ուսումնասիրության կարիք ունեցող այս պատմության նպատակը թվում է պարզ՝ քրիստոնեության ու վաճառականության յուրատեսակ հաշտեցումը: Դրա հիմնական ուղերձն այն է, որ վաշխառության, դրամական շահի հետապնդման, այդպիսով նաև՝ առևտրական գործի նկատմամբ ժխտական վերաբերմունք ունեցող քրիստոնեությունը⁴⁵ բոլորովին այլ դիրքորոշում ունի եկեղեցասիրությամբ ու եկեղեցական առատաձեռնությամբ աչքի ընկնող վաճառականների նկատմամբ: «Քահանայից ու ախկա-

⁴¹ Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. N 64, թ. 45բ: Հմմտ. Օքսֆորդի Բողեյան գրադարան, հայերեն ձեռագրեր, ձեռ. N f 14, թ. 58բ:

⁴² Ակինեան 1938, 129-130:

⁴³ Աճառյան 1946, 263-264: Այս պատմությունը հանդիպում է նաև Հայսմավուրքում՝ Մինաս Եգիպտացու վարքի հետ մեկտեղ (տե՛ս, օրինակ, Մատենադարան, ձեռ. N 1511, թ. 149ա-151բ): Դա պատահական չէ, քանի որ միջնադարում Մինասը համարվում էր ճանապարհորդների ու վաճառականների հովանավոր:

⁴⁴ Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. N 64, թ. 45բ:

⁴⁵ Միայն XVI դարում աստվածաբաններից Ժան Կալվինը, մի քանի սահմանափակումներով հանդերձ, դրամական փոխառություններում ընդունեց շահի գաղափարը (Graafland 2010, 233-248):

տոց կարօտելոց» համար առևտրական եկամտից մասնաբաժին սահմանելով, փաստորեն, օրինականացվում էր դրամական շահի ցանկությունը: Ինչպես նկատում է Մայքլ Էնդրյուսը, վաճառականական շրջանակների համար «բարեգործությունը ծառայում էր որպես միջոց օրինականացնելու իրենց հարստությունը և հաստատելու իրենց նոր կարգավիճակը»⁴⁶:

«Աշխարհաժողովի» առևտրական խորհուրդները

Իտալացի Բենեդետտո Կոտրուլլին XV դարում հետևյալ խորհուրդն էր տալիս վաճառականներին. «Հիշի՛ր՝ ինչպես շատերն են ասել՝ առևտուրը չի փնտրում ոչ մի խորհուրդ, և ես ինքս որդեգրել եմ այս նշանաբանը»⁴⁷: Նա բացատրում է նաև, որ առևտրական որոշումները հիմնված են այնպիսի տեղեկատվության ու հաշվարկի վրա, որը տարածման ենթակա չէ, ուստի տնտեսական գործարքների միակ պատասխանատուն տվյալ վաճառականն է, իսկ առևտրական խորհուրդները կարող են միայն համընդհանրական բնույթ կրել: «Աշխարհաժողովի» խրատական հատվածներում ամփոփված են նաև այսպիսի առևտրական խորհուրդներ, որոնք թույլ են տալիս պատկերացում կազմել վաճառականի առօրյայի ու գործունեության որոշակի սկզբունքների մասին:

Կոստանդ Զուդայեցին, ինչպես տեսանք, իր դասագրքի ընթերցողներին հորդորում է գրի առնել բոլոր տեսակի գործարքները. «Ձամենայն առըտ և տուրտ գրեա՛յ, գրեա՛յ և գրեա՛յ, էս օրէն վաղն մի՛ն ձգեր և հիմիկէս պահ մի՛ ձգեր»⁴⁸: Հայ վաճառականները խստորեն հետևում էին այս կարգին՝ առևտրական գործառնություններն ամփոփելով մի քանի տեսակի հաշվեմատյաններում: Ինչպես Լևոն Խաչիկյանի ու Հակոբ Փափազյանի՝ Հովհաննես Զուդայեցու հաշվեթղթերի վրա հիմնված ուսումնասիրությունն է ցույց տալիս, հայ վաճառականները պահում էին արագ գրառումների համար նախատեսված հուշատետրեր, ամենօրյա գործարքներն արտացոլող օրհաշվի մատյաններ ու առանձին ապրանքների կամ անհատների վերաբերող հաշվեթերթեր: Հովհաննես Զուդայեցին սրանք համապատասխանաբար անվանում է «եայդաշտ», «ռուզլամայ» և «քաթա»: Դրանց հիման վրա գործակատարը պատրաստում էր խոջային ներկայացվելիք մայր մատյանը կամ, Հովհաննես Զուդայեցու խոսքով, «կար-

⁴⁶ Andrews 2011, 104.

⁴⁷ Cotrugli 2017, 56.

⁴⁸ Նոր Զուդայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. N 64, թ. 9բ:

միր շիլաւոր դըՖտար»-ը⁴⁹: Այս հաշվապահական փաստաթղթերի թվարկումից հետո պատահական չի թվում Ռոբերտ Լոպեսի դիտարկումը վաճառականներին «թղթի ու թանաքի ամենամեծ սպառողները» համարելու մասին⁵⁰: Նրա համոզմամբ՝ XIII դարից Իտալիայում, իսկ մի փոքր ավելի ուշ ժամանակներից սկսած՝ այլ երկրներում առևտրական գրութայունները գերազանցում էին ցանկացած այլ նպատակով գրված տեքստերին⁵¹: Այս գնահատականը կարելի է վերաբերելի համարել նաև հայոց պատմության համար, միայն թե ժամանակային հստակ սահմանափակմամբ՝ XVII դ. երկրորդ քառորդից մինչև XVIII դ. կեսերը:

Հասկանալի է, որ Կոստանդ Զուղայեցու այս հորդորն իր զուգահեռը պետք է ունենար նաև Եվրոպայում շարադրված առևտրական երկերում: Այսպես, օրինակ՝ արդեն հիշատակված Բենեդետտո Կոտրուլին նկատել է, որ եթե «վաճառականի համար գրիչը ծանրություն է», ապա նա վաճառական չէ⁵²: Իսկ Դինո Կոմպանյին «խնամքով ու վրիպումներից զերծ հաշիվներ գրելը» համարում էր վաճառականի ամենաբարձր առաքինությունը⁵³:

«Աշխարհաժողովում» արձանագրված առևտրական խորհուրդներից մյուսը վերաբերում է վաճառականական միջավայրում այնպիսի վճռորոշ գործոնի, ինչպիսին վաճառականի համբավն էր. «Անփորձ մարդոյ փող և ամանաթ մի՛ տալ: Եթէ դու ըստուգիւ գիտենաս, թէ լէվ ախտիբարի մարդ այ, ա, բ, գ հոգի էլ հարց և փո՛րձ արայ, ապայ թէ եա՛յ փող տուր, եա՛յ ամանաթ՝ թամասըկօվ և վկայիւ»⁵⁴: Կոստանդ Զուղայեցու մատնանշած «լէվ ախտիբար»-ը, այն է՝ լավ համբավը այն անհրաժեշտ պայմանն էր, որ հիմք էր ստեղծում առևտրական համատեղ գործունեության համար: Անվստահելի գործընկերոջ համբավ ունեցող վաճառականները մեկընդմիջտ զրկվում էին առևտրական գործարքների մաս կազմելու հնարավորությունից: Լիովին օրինաչափ է, որ նամակագրական հոսքերով տարածվող տեղեկատվության կարևոր խումբ էին կազմում տվյալներն այն առևտրա-

⁴⁹ Խաչիկյան, Փափազյան 1984, 58-59:

⁵⁰ Lopez 1969, 35.

⁵¹ Lopez 1979, 54.

⁵² Cotrugli 2017, 70.

⁵³ Lopez 1979, 58.

⁵⁴ Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. N 64, թ. 9բ:

կանների մասին, որոնք հանդես էին եկել որպես զանազան խարդախությունների դերակատարներ⁵⁵:

Վաճառականական կյանքի անբաժան մաս կազմող կողոպուտի ու ավազակության վտանգների առնչությամբ է «Աշխարհաժողովի» մյուս խորհուրդը. «Մի՛ երթիցես միայն ի ճանապարհ: Անփորձ և անճանանչ ընկերի հետ մի՛ նստցես և մի՛ քնիցես. գուցէ ըսպանանիցէ զքեզ և առցէ զինչս քո»⁵⁶: Դրամական միջոցների ապահովության մասին ևս Կոստանդ Ջուղայեցին հարկ է համարում հիշեցնել իր ընթերցողներին. «Եւ քիսակիտ բերանն բաց մի՛ թողուլ. կապէ՛ և մրէ՛»⁵⁷: Վաճառականի ապրելակերպի ու գործունեության նրբերանգների այս ծանոթությունը պայմանավորված էր առևտրական փորձառությամբ, որը Կոստանդ Ջուղայեցին կուտակել էր առնվազն 1660-ական թթ.⁵⁸ իր ձեռնարկը շարադրելուց երկու տասնամյակ առաջ⁵⁹:

Եզրակացություններ

Վաղ արդի դարաշրջանի ամենաընդարձակ առևտրական ցանցերից մեկը ստեղծած հայ վաճառականների համար առևտրական գիտելիքի ձեռքբերման միջոցներից մեկը տպագիր ու ձեռագիր տարբերակներով շրջանառվող մասնագիտական ձեռնարկ-դասագրքերն էին: Երբևէ չուսումնասիրված հայկական տնտեսական պատմության այս աղբյուրների շարքում առանձնանում են Կոստանդ Ջուղայեցու առևտրական երկերը:

«Աշխարհաժողով» ձեռնարկում, նրա ներկայացրած առևտրական արժեքավոր տեղեկատվությունից բացի, ուշադրություն են գրավում վաճառականներին ուղղված խորհուրդները: Խրատական այդպիսի հատվածները մեծ տարածում ունեին եվրոպական առևտրական երկերում՝ նպատակ ունենալով ձևավորելու վաճառականական էթիկայի ու բարոյական կոդեքսի նորմեր և այդպիսով նաև՝ ճանապարհի հարթելու Ժակ Սավարիի բնորոշած՝ «պատվարժան առևտրի» (“commerce honorable”) համար⁵⁹: Կոստանդ Ջուղայեցին իր բարոյախոսական խորհուրդներով միանում է ուշմիջնադարյան եվրոպական առևտրական ձեռնարկներում սկիզբ առած

⁵⁵ Aslanian 2011, 97, Aslanian 2008, 150-154.

⁵⁶ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. N 64, թ. 8բ:

⁵⁷ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. N 64, թ. 9բ:

⁵⁸ Բալդարյան 2019, 66-78:

⁵⁹ Hoock 1989, 113-23, Trivellato 2019, 105.

այն քննարկումներին, որոնք ծավալվում էին վաճառականական էթիկայի նորմերի ու վաճառականի բարոյական նկարագրի ընկալումների շուրջ: Հայկական ձեռնարկ-դասագրքի հեղինակը հստակ ծանոթություն է հանդես բերում այդ քննարկումներին: Աստվածաշնչյան պատգամների նմանողությամբ նա իր բարոյախոսական խորհուրդների մի մասը ձևակերպում է որպես յուրատեսակ «վաճառականական պատվիրաններ»: Ունենալով վաճառականական կենսագրություն ու հիմնվելով սեփական փորձառության վրա՝ իր առևտրական բնույթի խորհուրդներում Կոստանդ Զուղայեցին հմտորեն ներկայացնում է այն պայմանները, որոնք անհրաժեշտ էին հաջող առևտրական գործունեություն ծավալելու համար:

Գրականություն

- Ակինեան Ն. 1938, Մատենագրական հետազոտություններ: Քննություն եւ բնագիր, հ. Դ, Վիեննա, «Տպ. Մխիթարեան», 406 էջ:
- Աճառյան Հ. 1946, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երևան, ԵՊՀ հրատ., 740 էջ:
- Անասեան Յ. 1987, Հայերէն թուաբանական դասագրքերի պատմութեան համար, Մանր երկեր, հ. Ա, Լոս Անջելես, էջ 671-674:
- Անասյան Հ. 1976, Հայկական մատենագիտություն, Ե-ԺԸ դդ., հ. Բ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1546 էջ:
- Բալդարյան Ս. 2019, Մի քանի դիտարկում վաճառականական ձեռնարկների հեղինակ Կոստանդ Զուղայեցու մասին, Հայագիտության հարցեր, N 3, Երևան, էջ 66-78:
- Զաքարիա Ագուլեցի 1938, Օրագրութիւն, Երևան, Արմֆանի հրատ., 199 էջ:
- Խաչիկյան Լ., Փափագյան Հ. 1984, Հովհաննես Տեր-Դավթյան Զուղայեցու հաշվետումարը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 424 էջ:
- Խաչիկյան Շ. 1988, Նոր Զուղայի հայ վաճառականությունը և նրա առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ XVII-XVIII դդ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 224 էջ:
- Մելիք-Օհանջանյան Կ. 1957, Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 284 էջ:
- Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. N 64:
- Չուգասզյան Բ. 1983, Եղիա Մուշեղյանի (Կարնեցու) գրադարանը, Լրաբեր հասարակական գիտությունների, N 1, Երևան, էջ 61-74:

- Սրապյան Ա. 1969, Հայ միջնադարյան գրույցներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 414 էջ:
- Փաշայան Ա. 2005, «Արհեստ համարողութեան»-ը հայ հնատիպ գրքի պատմութեան հոլովոյթում, Հանդես ամսօրեայ, N 1-12, Վիեննա-Երևան, էջ 345-364:
- Andrews M. 2011, The Culture of Commerce Compared: A Comparative Study of the Ideal of the Businessman in China and England, c. 1600-1800, Thesis, London School of Economics and Political Science, 193 p. (<http://etheses.lse.ac.uk/151/>, accessed on 4/1/2020).
- Aslanian S. 2008, "The Salt in a Merchant's Letter": The Culture of Julfan Correspondence in the Indian Ocean and the Mediterranean, Journal of World History, vol. 19, N 2, p. 127-188.
- Aslanian S. 2011, From the Indian Ocean to the Mediterranean: The Global Trade Networks of Armenian Merchants from New Julfa, Berkeley, University of California Press, 392 p.
- Aurell J. 2009, Reading Renaissance Merchants' Handbooks: Confronting Professional Ethics and Social Identity, The Idea of Work in Europe from Antiquity to Modern Times, Edited by Josef Ehmer and Catharina Lis, London, Routledge, p. 71-90.
- Baldaryan S. 2019, An Armenian Trade Manual in Circulation: Constant of Julfa, His *Compendium* and the Dissemination of Information in the Julfan Trade Network, Paper Presented at the 17th Annual Graduate Student Colloquium in Armenian Studies, University of California, Los Angeles.
- Barlaeus C. 2019, The Wise Merchant, Critical text and translation by Corinna Vermeulen, Amsterdam, Amsterdam University Press, 120 p.
- Braudel F. 1972, The Mediterranean and the Mediterranean World in the Age of Philip II, vol. 1, London, Collins, 642 p.
- Braudel F. 1983, Civilization and Capitalism, 15th-18th Century, vol. 2: The Wheels of Commerce, New York, Harper & Row, 670 p.
- Cotrugli B. 2017, The Book of The Art of the Trade, Translated by John Francis Phillimore, Cham: Palgrave Macmillan, 244 p.
- Graafland J. 2010, Calvin's Restrictions on Interest: Guidelines for the Credit Crisis, Journal of Business Ethics, vol. 96, N 2, p. 233-248.
- Hook J. 1989, Le phénomène Savary et l'innovation en matière commerciale en France aux 17e et 18e siècles, Innovations et nouveaux techniques de l'Antiquité à nos jours, Actes du colloque international de Mulhouse (septembre 1987), Mulhouse, Publications de l'Association interuniversitaire de l'Est, p. 113-123.

- Hook J. 2008, Professional Ethics and Commercial Rationality, The Self-Perception of Early Modern Capitalists, Edited by Margaret Jacob and Catherine Secretan, New York, Palgrave Macmillan, p. 147-159.
- Jouanique P. 1996, Three Medieval Merchants: Francesco di Marco Datini, Jacques Coeur, and Benedetto Cotrugli, Accounting, Business and Financial History, vol. 6, N 3, p. 261-275.
- Lopez R. 1969, Stars and Spices: The Earliest Italian Manual of Commercial Practice, Edited by David Herlihy and al., Economy, Society, and Government in Medieval Italy, Kent, Kent State University Press, p. 35-42.
- Lopez R. 1979, The Culture of the Medieval Merchant, Medieval and Renaissance Studies, N 8, p. 52-73.
- Markovits C. 2000, The Global World of Indian Merchants, 1750-1947: Traders of Sind from Bukhara to Panama, New York: Cambridge University Press, 327 p.
- Rabuzzi D. 1995, Eighteenth-Century Commercial Mentalities as Reflected and Projected in Business Handbooks, Eighteenth-Century Studies, vol. 29, N 2, p. 169-189.
- Savary J. 1675, *Le parfait négociant* ou Instruction générale pour ce qui regarde le commerce des marchandises de France et des pays étrangers, Paris, Louis Billaine, 324 p.+table.
- Todeschini J. 2008, Theological Roots of Medieval/Modern Merchants' Self-Representation, The Self-Perception of Early Modern Capitalists, Edited by Margaret Jacob and Catherine Secretan, New York, Palgrave Macmillan, p. 17-46.
- Trivellato F. 2007, Merchants' Letters across Geographical and Social Boundaries, Cultural Exchange in Early Modern Europe, Edited by Francisco Bethencourt and Florike Egmond, vol. III, Correspondence and Cultural Exchange in Europe, New York: Cambridge University Press, p. 80-103.
- Trivellato F. 2019, The Promise and Peril of Credit: What a Forgotten Legend about Jews and Finance Tells Us about the Making of European Commercial Society, Princeton, Princeton University Press, 424 p.

ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԷԹԻԿԱՆ ՈՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ «ԱՇԽԱՐՀԱԺՈՂՈՎ» ՁԵՌՆԱՐԿՈՒՄ

Սարգիս Բալդարյան

Ամփոփում

Կոստանդ Ջուլայեցու «Աշխարհաժողով» ձեռնարկի բարոյախոսական պատգամներն ու առևտրական խորհուրդները ուրույն տեղ ունեն ուշ միջնադարի ու վաղ արդի դարաշրջանի վաճառականական գրականության լայն համապատկերում: Հիմնվելով «Աշխարհաժողովի»՝ Երևանում, Օքսֆորդում ու Նոր Զուլայում պահվող ձեռագրերի, ինչպես նաև եվրոպական առևտրական դասագրքերի վրա՝ կարելի է եզրակացնել, որ Կոստանդ Ջուլայեցին որոշակի ծանոթություն է ունեցել դեռևս ուշ միջնադարի եվրոպական առևտրական գրականության մեջ վաճառականական բարոյագիտական նորմերին առնչվող քննարկումներին: Հետևելով աստվածաշնչյան ավանդույթին՝ իր բարոյախոսական խորհուրդների մի մասը նա ձևակերպել է որպես յուրատեսակ «վաճառականական պատվիրաններ»: Որպես նախկին վաճառական՝ օգտվելով սեփական փորձառությունից՝ Կոստանդ Ջուլայեցին իր ձեռնարկի ընթերցողներին առևտրին վերաբերող արժեքավոր խորհուրդներ է տվել, որոնցում ներկայացրել է հաջող առևտրական գործունեության պայմանները:

Բանալի բառեր՝ Կոստանդ Ջուլայեցի, Նոր Զուլա, առևտրական ձեռնարկ, բարոյախոսական խորհուրդներ, առևտրական խորհուրդներ, վաճառականական պատվիրաններ, վաճառականական էթիկա:

КОММЕРЧЕСКАЯ ЭТИКА И СОВЕТЫ В «КОМПЕНДИУМЕ» – ПОСОБИИ КОНСТАНТА ДЖУГАЕЦИ

Саркис Балдарян

Резюме

Изучение армянских рукописей «Компендиума», хранящихся в Ереване, Оксфорде и Новой Джульфе, а также европейских коммерческих учебников явствует о том, что Константин Джугаеци был посвящен в дискуссии о правилах коммерческой этики. Следуя библейской традиции, он сформулировал некоторые из своих этических советов как своего рода «коммер-

ческие заповеди». Опираясь на свой опыт бывшего торговца, Константин Джугаеци делится с читателями ценными коммерческими советами.

Ключевые слова – Константин Джугаеци, Новая Джульфа, торговый учебник, этические советы, коммерческие советы, «коммерческие заповеди», коммерческая этика.

MERCANTILE ETHICS AND ADVICIES IN "COMPENDIUM" – A MANUAL BY CONSTANT OF JULFA

Sargis Baldaryan

Abstract

The essay aims to study the ethical advice and commercial tips in *Compendium*, a merchant manual by Constant of Julfa in the broader context of late medieval and early modern trade literature. Based on Armenian manuscripts of *Compendium* stored in Yerevan, Oxford, and New Julfa, as well as European commercial handbooks, the study shows that Constant of Julfa had some familiarity with discussions about the rules of mercantile ethics. Following the Biblical tradition, he formulated some of his instructions as a sort of "Mercantile Commandments." Relying on his own experience as a former merchant, Constant of Julfa provided readers of his manual with valuable commercial advice in which he presented the components of a successful commercial activity.

Key words – Constant of Julfa, New Julfa, trade manual, ethical advice, commercial tips, "Mercantile Commandments", Mercantile ethics.

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Ամալյա Հարությունյան

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ՀՀ, Երևան, Արամի 44

Էլ. հասցե՝ amalia77harutunyan@yahoo.com

Հոդվածը ներկայացվել է 04.03.2020, գրախոսվել է 04.03.2020, ընդունվել է

տպագրության 05.08.2020

Ներածություն

Իրավագիտակցության հետ ուղղակիորեն կապված են իրավական կարգավորման արդյունավետությունը և իրավահարաբերությունների սահմանադրականությունը:

Իրավական կարգավորման մեջ իրավագիտակցության դերը միանշանակ է:

Առաջին՝ իրավագիտակցությունը կարգավորիչ ազդեցություն է թողնում միջնորդավորված, այսինքն՝ իրավական նորմի՝ որպես իրավագիտակցության արտահայտման ձևերից մեկի միջոցով:

Երկրորդ՝ իրավագիտակցությունն ունակ է կարգավորիչ ազդեցություն թողնել նաև անմիջականորեն, քանի որ մարդկանց գործունեության անմիջական իրավաբանական շարժառիթ է և ընդունակ է կողմնորոշիչ ազդեցություն թողնել մարդկանց վարքագծի վրա:

Երրորդ՝ իրավագիտակցությունը միջոց է, որի շնորհիվ իրավունքն իրականացնում է իր կարգավորիչ ներգործությունը: Իրավունքի գործունեությունն ունի տեղեկատվական բնույթ: Այդ տեղեկատվությունն ազդում է մարդու իրավագիտակցության վրա:

Չորրորդ՝ իրավագիտակցությունը «միջոց» («գործիք») է իրավահարաբերությունների սահմանադրականացման համար:

Իրավաբանական գրականության մեջ գրեթե բացակայում է իրավագիտակցության կապը իրավահարաբերությունների սահմանադրականության խնդրում:

Խնդրի հարցը բավարար չափով լուծված է սահմանադրական իրավունքի տեսության կողմից¹:

Սահմանադրականություն. էությունը և հասկացությունը

Սահմանադրական մտքի և քաղաքական-իրավական գիտելիքի ժամանակակից մակարդակի տեսանկյունից սահմանադրականության տարբեր ասպեկտների արտահայտումների սինթեզի հիման վրա փորձ է արվում մշակել սահմանադրականության ընկալում սահմանադրական իրավագիտակցության տեսանկյունից:

Սահմանադրական իրավագիտակցությունը տեսական (գիտական) գիտելիքների համակարգ է, որով բացահայտվում է սահմանադրության էությունը, դերն ու նշանակությունը իրավական կարգավորիչների համակարգում սոցիումի բնականոն զարգացման խնդրի առումով:

Իրավահարաբերությունների սահմանադրականացման և սահմանադրականության բացահայտումը սահմանադրական իրավագիտակցության միջոցով հնարավորություն է տալիս դիտարկելու սահմանադրականությունը որպես քաղաքական և սոցիալական երևույթ, որն ապահովում է իրավունքի գերակայությունը իրավահարաբերությունների ոլորտում, պաշտպանում է մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները:

Իրավագիտակցության և իրավական մշակույթի ոլորտում հանդես է գալիս որպես սահմանադրական իրավագիտակցության և սահմանադրական մշակույթ². վերջիններիս տարածումը և յուրացման գործընթացները սերտորեն կապված են հասարակության քաղաքական և իրավական գործընթացների արդիականացման հետ:

Ազգային իրավական համակարգի վերլուծությունը ցույց է տալիս, որ սահմանադրականությունը՝ որպես իրավական կատեգորիա, արտահայտվում է հատուկ գծերով, որոնք վկայում են ինտեգրատիվ սահմանադրականության ձևավորման վերաբերյալ. վերջիններս համակցում են սահմանադրական-իրավական սկզբունքները և համապարփակ, ազգային և ավանդական-տարածաշրջանային ինստիտուտները: Ժամանակակից սահմանադրականությունն ինտեգրում է տարբեր իրավական ավանդույթ-

¹ Մանրամասն տե՛ս Հարությունյան 2016, 672, Кресс 2016, Добрынин 2017, 41-52, Обзеев 2017, 5-15:

² Մանրամասն տե՛ս Հարությունյան 2016, 672:

ներ և ինստիտուտներ, որոնք ծագել են սահմանադրական իրավագիտակցության զարգացման ընթացքում:

Սահմանադրականությունը ներառում է գաղափարների, սկզբունքների և կանոնների հանրագումար, որը ենթադրում է, թե ինչպես զարգացնել իրավական և քաղաքական համակարգերը, որ բացառվեն կամայականությունները, որքան դա հնարավոր է, և կերաշխավորի անհատի հիմնական իրավունքները և ազատությունները, անհատի հանրային և մասնավոր կյանքը³: Այս առումով սահմանադրականությունը կարելի է սահմանել որպես իրավական կարգի պայմաններում լավ կազմակերպված հասարակության կառավարում: Նման կառավարումը սահմանափակված է սահմանադրված կանոններով, որոնք ստեղծվել են նախքան վերջիններիս ազդեցությունը: Այդ իսկ պատճառով սահմանադրականությունը սերտորեն առնչվում է սահմանադրական գիտակցության և իրավունքի գերակայության հայեցակարգի հետ⁴:

Սահմանադրականությունն իրականացնում է իրավունքի գերակայությունը նոր և նորագույն ժամանակների պայմաններում՝ հանգեցնելով անհատների, պետության և անհատի միջև հարաբերություններում կանխորոշվածության և անվտանգության, ստեղծելով սահմանափակումներ պետական իշխանության համար և միևնույն ժամանակ տարբեր ոլորտներում սահմանելով դրա գործունեության իրավական պարամետրերը:

Սահմանադրականության ժամանակակից հասկացության համար իրավաձևավորող նշանակություն ունեն դասական սկզբունքներն իրենց էվոլյուցիոն նշանակության, նոր սահմանադրական ինստիտուտների նկատմամբ իրականացման ազգային առանձնահատկությունների հաշվառմամբ, որն էլ ստացել է լայն տարածում XX դարի երկրորդ կեսին և XXI դարի սկզբներին:

Սահմանադրականության հիմնական սկզբունքներն են երաշխավորված իրավունքների և ազատությունների առկայությունը, իշխանությունների բաժանման այս կամ այն չափով իրականացումը, իրավունքի գերակայությունը, հանրային ծառայողների պատասխանատվությունը, ինչպես նաև սահմանադրության ստեղծման, վերանայման, մեկնաբանության և իրականացման նկատմամբ սկզբունքները:

³ Кутафин 2011, 7-8.

⁴ Кутафин 2011, 7-8.

Որպես ազատականության քաղաքական-իրավական ծրագիր՝ սահմանադրականությունը սկզբունքների և ինստիտուտների համախումբ է, որը հանգեցնում է ամբողջատիրության և ավտորիտարիզմի ոչնչացման, կառավարման ներկայացուցչական տեսանկյունների ծագման, հասարակական կյանքի ժողովրդավարացման և հասարակական հարաբերությունների կարգավորման իրավական մեթոդների ներածման: Պատմականորեն սահմանադրականությունը կապված է քաղաքացիական հասարակության ծագման, քաղաքական ոլորտում ընդհանուր ընտրական իրավունքի, իսկ քաղաքականում՝ քաղաքացիական իրավունքների և իրավահավասարության պայքարի հետ:

Սահմանադրականությունը՝ որպես քաղաքական երևույթ, արտահայտում է իրեն և որպես քաղաքական շարժում, առաջադրելով իրավական պետության և քաղաքակիրթ քաղաքացիական հասարակության կառուցման նպատակ, և որպես քաղաքական պրակտիկայի, քաղաքականության ընդհանուր պարտադիր կանոնների համախումբ, որոնք նպաստում են պետական գործերի կառավարման մեջ զանգվածների լայն քաղաքական մասնակցությանը, ինչպես նաև կառավարողների և կառավարվողների միջև ներդաշնակ հարաբերություններին դեմոկրատական կամքի ձևավորման և համաձայնեցման հիման վրա:

Սահմանադրականությունը հանդես է գալիս նաև սոցիալական երևույթի որակով, քանի որ կազմում է առավել լայն սոցիալական կարգի հատված: Սահմանադրականության շնորհիվ պետությունը ձեռք է բերում իրավական բնույթ և միևնույն ժամանակ չի գերակայում հասարակության նկատմամբ, չի ճնշում նրան: Սահմանադրականությունը երաշխավորում է նաև քաղաքացիական հասարակության ինստիտուտների ինքնազարգացումը և ապահովում պետության, հասարակության և անհատի միջև փոխհամագործակցության իրավական ձևերը, որոնք փոխգործունեության գործընթացում ապահովում են անհատների անձնական կյանքը: Սահմանադրականության սոցիալական հենք դառնում է քաղաքացիական հասարակությունը: Տեղեկատվական հասարակությանը անցման ժամանակ սահմանադրականության սոցիալական բազան ընդլայնվում է սոցիալական խմբերի հաշվին, որոնք զբաղված են ծառայությունների տարբեր ոլորտներում, մասնակցում են տեղեկատվության փոխանակությանը և ապահովում դրանց տարածումը հանրային և մասնավոր ոլորտներում:

Սահմանադրականությունը՝ որպես քաղաքական-իրավական և մշակութային երևույթ, առավել լայն է իր նորմատիվային հիմքերից և սահմանադրական իրավունքից: Սահմանադրականության և սահմանադրական իրավագիտակցությունն ունի բազմասպեկտ բնույթ: Այս փոխկապվածության բացահայտման ժամանակ կարելի է դիտարկել, թե ինչպես է ձևափոխվում սահմանադրականության հասկացությունը, ինչպես սահմանադրականությունն իր արտահայտման տարբեր նիստերով նպաստում է սահմանադրական գիտակցության ձևավորմանը և նրա հետագա զարգացմանը:

Սահմանադրականություն և սահմանադրական գիտակցություն

Սահմանադրականության և սահմանադրական գիտակցության փոխկապվածության առավել կարևոր հայեցակետեր դրսևորվում են ըստ գաղափարական, պատմական, նորմատիվային և սոցիալական գծերի:

Գաղափարական հայեցակետը ունակ է բացահայտելու սահմանադրականության գաղափարների ազդեցությունը սահմանադրական իրավունքի կայացման, զարգացման և ժամանակակից իրավիճակի գործընթացի վրա: Պատմական հայեցակետը բացահայտում է սահմանադրական-իրավական ակտերի, ինստիտուտների և սկզբունքների զարգացման ակունքները, որի ընթացքում աստիճանական և հեղափոխական կերպով տեղի է ունենում սահմանադրականության պատմական ձևերի և տեսակների փոփոխություն: Սահմանադրականության յուրաքանչյուր պատմական ձևի սահմաններում զարգանում են սահմանադրական նորմեր, սկզբունքներ և ինստիտուտներ, որոնք տարբերվում են բովանդակությամբ, կազմակերպչական կառուցվածքով, ազատությունների և իրավունքների ապահովման աստիճանով, կիրառվող ընտրական գործառնությունների դեմոկրատությամբ:

Նորմատիվային հայեցակետը սահմանադրականության և սահմանադրական գիտակցության փոխկապվածության առավել կարևոր առումն է սահմանադրական իրավունքի համար: Գոյություն ունեն սահմանադրականության նորմատիվության երկու կողմեր: Առաջին կողմը՝ բնական-իրավական, որը կանխորոշում է իրավունքի և սահմանադրության (սահմանադրական նորմերի մեկնաբանություն դրանց էթնիկ գնահատման տեսանկյուններից) նկատմամբ դեոնտոլոգիական մոտեցումը: Երկրորդ կող-

մը սահմանադրականության պոզիտիվ նորմատիվությունն է, որը հենվում է իրավաբանական պոզիտիվիզմի ուսմունքի վրա:

Նորմատիվային հայեցակետը ձևավորում է երկրի սահմանադրական զարգացման իդեալն այն դեպքում, երբ սահմանադրականության պոզիտիվային նորմատիվությունը սահմանափակվում է երկրի սահմանադրական օրենսդրության մեջ վարքագծային պարտադիր կանոնների հաստատմամբ: Այդ իսկ պատճառով պոզիտիվ նորմատիվային հատկություններ սահմանադրականությունը ձեռք է բերում սկզբունքների և կանոնների շնորհիվ, որոնք ամրագրված են սահմանադրության և այլ իրավական ակտերում:

Սոցմշակութային հայեցակետը արտացոլում է երկրի բնակչության, տարբեր սոցիալական խմբերի ընկալողունակությունը սահմանադրական իրավունքի նոր ինստիտուտների նկատմամբ, ժամանակակից սահմանադրականության բազային արժեքներին նրանց հավատարմության աստիճանը, սահմանադրության իրականացման գործընթացներում իրավունքի և ազատությունների համարժեք կիրառման ունակությունները: Տվյալ հայեցակետը սահմանում է ներկա փուլում հասարակության սահմանադրական մշակույթի և սահմանադրական իրավագիտակցության ձևավորման հնարավորությունները և բարդությունները:

Ա.Գ. Պարխոմենկոն բացահայտում է «սահմանադրականություն» կատեգորիան սահմանադրական պետություն հասկացության և սահմանադրական իրավագիտակցության միջոցով: Նրա կարծիքով՝ սահմանադրականությունը դեպի իրավական սահմանադրական պետություն շարժումն է, որում սահմանադրությունը (հիմնական օրենքը) ամրագրում է դեմոկրատական սահմանադրական կառուցվածքի հիմնական սկզբունքները. ժողովրդավարություն, հասարակության կյանքում իշխանության գերակայում, պետության իր գործունեության մեջ իրավական օրենքներով սահմանափակվածություն, անհատի իրավունքների և ազատությունների անբեկանելիություն, պետական ինքնավարություն, ֆեդերալիզմ, քաղաքական բազմակարծություն, տնտեսական գործունեության ձևերի բազմազանություն, պետության աշխարհիկ բնույթ, տեղի ինքնակառավարման ինքնուրույնություն⁵:

⁵ Лихобабы, Пархоменко 2001.

Ս.Ա. Ավագյանը դիտարկում է սահմանադրականությունը որպես բարդ հասարակական-քաղաքական և պետաիրավական կատեգորիա, որի հիմքերն են սահմանադրական իրավագիտակցության գաղափարները (այսինքն՝ դեմոկրատիայի, որը հենվում է սահմանադրության՝ որպես պետության և հասարակության հատուկ փաստաթղթի առկայության վրա), իշխանության որոշակի ինստիտուտների, ժողովրդավարական արժեքների և համապատասխան քաղաքական ռեժիմի սահմանադրության, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների, ամբողջ սահմանադրական կառույցի պաշտպանության համակարգի առկայության վրա⁶:

Նա համարում է, որ սահմանադրականությունը, ընդհանուր առմամբ, իդեալ է, որին պետք է ձգտի սոցիալական առաջընթացի ուղով ընթացող հասարակությունը: Դրա հիմնական բաղադրիչներն են՝

1) սահմանադրական իրավագիտակցության գաղափարները, մասնավորապես՝ իրավունքի, օրենքի հետ պետության և հասարակության կապվածության ընդունումը, մարդկային անհատականության առաջնությունը, նրա արժանապատվության հարգանքը, ժողովրդի անմիջական մասնակցությունը իշխանության գործառույթների իրականացմանը, ոչ թե որոշակի պետական մարմինների առկայությունը, այլ դրանց ձևավորման ժողովրդավարական կարգը, ժողովրդի շահերին այդ մարմինների գործունեության ենթակայումը, քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության ընթացակարգային մեխանիզմների, տեղի ինքնակառավարման մարմինների առկայությունը և պետական-քաղաքական գործերում հասարակական միավորումների մասնակցությունը, հասարակական գիտակցությունը, որը կառուցված է իշխանության ինստիտուտների և պետական օրենքների, դրանց ձևավորման անհրաժեշտության և օգտակարության համոզմունքների վրա, իրավունքի նորմերի վրա հենված սեփական գործողությունների և իշխանությունների քայլերի միջոցով սոցիալական արդարության և հիմնավորված շահերի պաշտպանության ձեռքբերման հնարավորությունները,

2) նորմատիվ-իրավական հիմքերի առկայությունը, որը նախ արտահայտվում է սահմանադրական-իրավական ինստիտուտների համակցությունն ամրագրող պաշտոնական սահմանադրության ստեղծմամբ և ընդունմամբ: Վերջիններս համախմբում, ստեղծում են դեմոկրատական հա-

⁶ Авакьян 2000, 304-305, Авакьян 2000, 228-232.

սարակությունը և պետությունը, անհատի ազատությունը, քաղաքացիների դեմոկրատական իրավունքները և ազատությունները, իշխանության գործիքակազմը, որը համակցում է անմիջական ժողովրդավարություն և իրենց վրա ժողովրդի ազդեցությունը կրող, միմյանց վրա ազդելու միջոցներով և իրավասություններով օժտված դեմոկրատական ուղով ձևավորվող մարմիններ, ընտրությունների համընդհանրության, ազատության և մրցակցության վրա հիմնված ընտրական համակարգ, քաղաքական բազմակարծություն և բազմակուսակցական համակարգ:

Ակադեմիկոս Վ.Ս. Ներսիսյանցը համարում է, որ իրավական պետության և քաղաքացիական հասարակության նախադրյալների զարգացումն ուղղակիորեն կախված է սահմանադրականության կայունությունից: Նա դիտարկում է սահմանադրականությունը որպես սահմանադրության հարգման, պահպանման և պաշտպանության, որպես ցանկացած իրավական պետության վերկուսակցական գաղափարախոսություն:

Նա ընդգծում է, որ սահմանադրականության՝ որպես ընդհանուր պետական, վերկուսակցական գաղափարախոսության և ինտեգրատիվ համահասարակական գաղափարի հաստատումը հատկապես արդիական է ժամանակակից Ռուսաստանում, ընդհանուր արժեքների և աշխարհընկալումային կողմնորոշիչների բացակայության, տարբեր նեղ կուսակցական գաղափարախոսությունների սուր պայքարի պայմաններում⁷:

«Իհարկե, - գրում է Վ.Ս. Ներսիսյանցը, - սահմանադրականությունը որպես ընդհանուր պետական, վերկուսակցական գաղափարախոսություն (պետաիրավական գիտակցություն, դիրքորոշում և կողմնորոշում) չի հակասում Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության դրույթներին (մ. 2, հոդ. 13), որ «որևէ գաղափարախոսություն չի կարող հաստատվել պետականի կամ պարտադիրի որակով»: Բացարձակ ակնհայտ է, որ այս արգելքը վերաբերում է բոլոր կուսակցական գաղափարախոսություններին, սակայն ոչ սահմանադրականությանը՝ հենց Սահմանադրության ընդհանուր պետական և ընդհանուր պարտադիր բնույթի ուժով: Ամբողջ պետությունը, բոլոր պետական մարմինները և պաշտոնատար անձինք, Սահմանադրության և սահմանադրական-իրավական կառուցվածքի բոլոր կողմնակիցները պետք է ժամանակին աջակցեն Սահմանադրության դերի և դրա նկատմամբ հարգանքի բարձրացմանը՝ որպես երկրի Հիմնական օրենքի,

⁷ Нерсисянц 1999, 6-8.

դրա կարգավիճակի իրական հաստատմանը, դրա նորմերի, սկզբունքների և արժեքների հետևողական իրականացմանը»⁸:

Վ.Ս. Ներսիսյանցը գտնում է, որ սահմանադրականության այս իրավագիտակցությամբ պետք է ամենից առաջ ներծծված լինի իրավական պետականության արդեն ձևավորված և ձևավորվող ինստիտուտների ամբողջ գործունեությունը: Նա համարում է, որ սահմանադրականության իրական հաստատման համար անհրաժեշտ է ձևավորել սահմանադրական նորմերի, գործընթացների և իրավակարգի խախտումների, Սահմանադրության չհարգման համար իշխանության բոլոր ճյուղերի և մակարդակների բոլոր պաշտոնատար անձանց հանրային-իրավական պատասխանատվության պատշաճ նորմատիվ-իրավական բազա և բոլոր իրավախախտումներից սահմանադրական կառուցվածքի պաշտպանության մեխանիզմներ⁹:

Զարգացման ժամանակակից փուլում միջազգային մակարդակով հայտնի փորձագետ-քաղաքագետների կողմից կոնկրետ պետության մեջ սահմանադրականության հաստատման հիմնական չափորոշիչների որակով առաջին տեղում առաջադրվում են հետևյալ պայմանները՝ քաղաքացու և մարդու իրավունքների և ազատությունների ապահովումը, անկախ արդարադատություն և ժողովրդի ու օրենքի առջև պատասխանատու պետական իշխանությունը: Միայն սահմանադրականության պայմանների երկրորդ մակարդակի որակով կարող են հանդես գալ ազատ ընտրությունները, օրենսդիր և գործադիր իշխանությունների հակակշիռների և ճնշման համակարգերը, զանգվածային լրատվական միջոցներով սեփական կարծիքի արտահայտման ազատությունը և քաղաքական բազմակարծությունը:

Սահմանադրական իրավագիտակցության գաղափարներն ունակ են իրականացնելու հասարակության և պետության սահմանադրական տեսական մոդելի դերը, եթե դրանք արմատավորվել են հասարակական գաղափարախոսության հետ՝ հասարակական գիտակցության և հոգեբանության առավել խոր շերտերում: Սահմանադրական իրավագիտակցության գաղափարների օրինականացումը ոչ թե դրանց հանրային-իշխանական սանկցիավորումն է, այլ այդ գաղափարների ընդունումն անհատա-

⁸ Нерсисянц 1999, 6-8.

⁹ Нерсисянц 1999, 6-8.

կան և զանգվածային գիտակցությամբ և դրանց վերածումը անհատական, խմբային և հասարակական իրական վարքագծի:

Եզրակացություններ

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ սահմանադրական իրավագիտակցությունը կամ իրավագիտությունն ընդհանրապես դիտարկել որպես՝

1. սահմանադրական-իրավական գաղափարախոսություն (գաղափարների, հայացքների, հայեցակարգերի համակարգ), իրավահարաբերությունների սահմանադրական տեսական ու գործնական կառուցակարգ (մեխանիզմ),

2. սահմանադրական զարգացումների գործընթաց (սահմանադրական հարցերի շուրջ քաղաքական գործընթացներ, այս կամ այն սահմանադրության ընդունմանը դեմ կամ կողմ, ինչպես նաև ըստ սահմանադրության ընդունման և կիրառության քաղաքական-իրավական գործընթաց),

3. քաղաքական-իրավաբանական իրականության արտացոլում (որոշակի սահմանադրական կառուցվածքի, սահմանադրության առկայության, դրա սոցիալական նշանակության),

4. իրավաբանական արդյունք (սահմանադրական նորմերի, սկզբունքների և սահմանադրության ինստիտուտների իրականացում),

5. միջոց (քաղաքական ճգնաժամերի լուծման, ընդդիմության ոչ սահմանադրական ձևերի ճնշման, իշխանության և ժողովրդի միջև երկխոսության ձևերի հաստատման),

6. երկրի իրավական համակարգի նորմատիվ հիմքերի կատարելագործման տեսական-գաղափարական հիմք (սահմանադրական կարգավորումների ելք հիմնական օրենքի տեքստի շրջանակներից և սահմանադրական մակարդակների վերաբերյալ խնդիրների առաջադրման հնարավորություն):

Գրականություն

Հարությունյան Գ. 2016, Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները: Վերահրատարակություն՝ լրամշակումներով, Երևան, «Նժար», 672 էջ:

Авакьян С.А. 2000, Конституционализм. Конституционное право, Энциклопедический словарь, Москва, «Норма М», 468 с.

Авакьян С.А. 2000, Конституция России: природа, эволюция, современность.

- 2-е изд., Москва, «Сашко», 574 с.
- Верховенство права и проблемы его обеспечения в правоприменительной практике 2000, Москва, «Статут», 498 с.
- Добрынин Н.М. 2017, Размышление о российском конституционализме и политико-правовом режиме в государстве: правовая аксиология и авторский взгляд, Государство и право, N 2, с. 41-52.
- Крусс В.И. 2016, Конституционализация права: основы теории, Москва, «Норма: НИЦ ИНФРА-М», 226 с.
- Кутафин О.Е. 2014, Российский конституционализм, Москва, «Проспект», 483 с.
- Лихобабы В.А., Пархоменко А.Г. 2001, Идеи российского конституционализма и их реализация в конституционном (государственном) праве, Москва, «Статут», 246 с.
- Нерсесянц В.С. 1999, Конституционализм как общегосударственная идеология, Конституционно-правовая реформа в Российской Федерации. Сб. ст. отв. ред. Ю.С. Пивоваров, Москва, «Норма», с. 6-8.
- Эбзеев Б.С. 2017, Глобализация и становление транснационального конституционализма, Государство и право, Москва, N 1, с. 5-15.

ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՑՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Ամայլա Հարությունյան

Ամփոփում

Սահմանադրական իրավագիտակցությունը տեսական (գիտական) գիտելիքների համակարգ է, որով բացահայտվում են սահմանադրության էությունը, դերն ու նշանակությունը իրավական կարգավորիչների համակարգում սոցիումի բնականոն զարգացման խնդրում:

Ազգային-իրավական համակարգի վերլուծությունը ցույց է տալիս, որ սահմանադրականությունը՝ որպես իրավական կատեգորիա, արտահայտվում է հատուկ գծերով, որոնք վկայում են ինտեգրատիվ սահմանադրականության ձևավորման մասին. վերջիններս համակցում են սահմանադրական-իրավական սկզբունքներ և համապարփակ, ազգային և ավանդական-տարածաշրջանային ինստիտուտներ: Ժամանակակից սահմանադրականությունն ինտեգրում է տարբեր իրավական ավանդույթներ և ինստիտուտներ, որոնք ծագել են սահմանադրական իրավագիտակցության զարգացման ընթացքում:

Բանալի բառեր՝ սահմանադրություն, սահմանադրականություն, իրավագիտակցություն, իրավաբանական գրականություն, իրավական պետություն, քաղաքացիական հասարակություն, իրավահարաբերությունների սահմանադրականություն:

ПРАВОСОЗНАНИЕ И ОСНОВЫ КОНСТИТУЦИОНАЛИЗАЦИИ ПРАВОВЫХ ОТНОШЕНИЙ

Амалия Арутюнян

Резюме

Конституционное правосознание – это система теоретических (научных) знаний, раскрывающая сущность, роль и значение конституции в системе правовых регуляторов в развитии общественного порядка.

Анализ национальной правовой системы показывает, что конституционность как юридическая категория находит отражение в определенных сферах, свидетельствующих о формировании интегративного конституционализма, в котором сочетаются конституционно-правовые принципы и комплексные национальные и традиционно-региональные институты. Современный конституционализм объединяет различные правовые традиции и институты, возникшие в процессе развития конституционно-правового сознания.

Ключевые слова – конституция, конституционализм, правосознание, юридическая литература, правовое государство, гражданское общество, конституционность правовых отношений.

LEGAL CONSCIOUSNESS AND THE BASICS OF CONSTITUTIONALIZATION OF LEGAL RELATIONS

Amalya Harutyunyan

Abstract

A constitutional legal consciousness is a system of theoretical (scientific) knowledge that reveals the essential role and significance of the Constitution in the system of legal regulators in the issue of the normal development of the society.

The analysis of the national legal system demonstrates that the constitutionality, as a legal category is expressed in specific lines that testifies to the formation of an integrative constitutionality, the latter combines constitutional legal principles and comprehensive, national and traditional – regional institutions. Modern constitutionality integrates different legal traditions and institutions, that arise during the development of constitutional legal consciousness.

Key words – the Constitution, constitutionality, legal consciousness, legal literature, legal state, civil society constitutionality of legal relations.

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՔՎԱԶԻԱՔՍԻՈՄԱՏԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ
ՄԱՍԻՆ**

Հարություն Վերմիշյան

Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու
Սոցիոլոգիայի տեսության և պատմության ամբիոնի վարիչ
Երևանի պետական համալսարան
ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 1
Էլ. հասցե՝ harutyunvermishyan@ysu.am

Վահան Ենգիդոնյան

Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետ
ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 1
Էլ. հասցե՝ engidunyan-vahan@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 02.05.2020, գրախոսվել է 18.06.2020, ընդունվել է
տպագրության 05.08.2020

Ներածություն

Սոցիալական կարգի խնդիրը շարունակում է իր ուրույն տեղն ունենալ սոցիոլոգիայի հիմնարար խնդիրների շարքում: Սոցիալական կարգի համատեքստում է սոցիոլոգիան թիրախավորում սոցիալական կառուցվածք-սոցիալական գործողության հարաբերակցման հիմնահարցը¹: Սոցիոլոգիան այս հարցը քննում է հարացուցային մակարդակում: Հարացույցներում, սակայն, առկա են տեսություններ, որոնց համատեքստում կարգը պայմանավորող ֆենոմենների հետ կապվող մոտեցումների միջև առկա են գիտելիքի ֆրագմենտարության և փոխբացառման հարաբերություններ²: Դրանք խնդրահարույց են դարձում սոցիալական կարգի գոյության համընդհանուր սկզբունքների առաջադրման հնարավորությունները³: Մասնավորապես, հստակ չէ ներտեսական կառուցվածքային տիրույթում սոցիալական կարգի որոշակի տիրույթը քննող ֆենոմենների

¹ Archer 1988, IX.

² Тернер 1985.

³ Кильдюшов 2016, 122-149.

միջև փոխհարաբերման մեխանիզմը, որը թույլ կտա հետազոտական տարրական միավորների և դրանցից կառուցվածքային առավել բարդ միավորների անցման հնարավորությունները (մասնավորապես կառուցվածքային ֆունկցիոնալիզմի և համակարգային տեսության փոխառնչությունները, որտեղ անորոշ են տարրական գործողության⁴, կրկնակի կոնտինգենտության⁵ միջև փոխազդեցության ձևերը)⁶: Նշյալ մեխանիզմի բացակայությունը մի կողմից պայմանավորում է սոցիալական կարգի գոյության անառարկելիության շեշտադրում, սակայն մյուս կողմից դրա որոշակի տիրույթը պայմանավորող բաղադրիչների ու վերջիններիս միջև առկա փոխկապվածությունների սահմանման բացակայություն՝ քվազիաքսիոմատացում⁷: Սոցիալական կարգի գոյության հիմնահարցի շրջանակներում ուշադրության է արժանի, հատկապես, Զ. Թյորների «Սոցիոլոգիական տեսության կառուցվածքը» աշխատությունը⁸, որտեղ սոցիալական կարգի գոյության հնարավորությունները դիտարկվում են դրանց ինստիտուցիոնալացման համատեքստում: Առաջադրվող տեսական մոտեցումներում կանխորոշվում է սոցիալական կարգի հնարավոր քվազիաքսիոմատիկ բնույթը, որի հետագա պարզաբանումը հողվածում կապվում է սոցիոլոգիական հարացույցների և միջտեսական փոխազդեցությունների հետազոտության հետ: Սոցիոլոգիայի քվազիաքսիոմատացման առանձնահատկությունների հետազոտությունը ենթադրում է նաև սոցիոլոգիական գիտելիքի տեսական կողիֆիկացում և կոնցեպտուալ ստանդարտացման հետազոտություն: Չնայած սոցիալական կարգի ընդհանրական հետազոտությունների առկայության (Կիլդյուշով⁹, Սոբոլևսկայա¹⁰)՝ առկա է կարգի քվազիաքսիոմատիկ ավանդույթի հետազոտական սղություն, որն անհրաժեշտ է դարձնում սոցիալական կարգի գոյության տարբեր տիրույթներ հետազոտող սոցիոլոգիական ներհարացուցային և միջհարացուցային փոխառնչությունների տեսական վերլուծության անցկացումը կարգի քվազիաքսիոմատացվածության թեզի շրջանակներում:

⁴ Парсонс 2000.

⁵ Луман 2007.

⁶ Парсонс 2000.

⁷ Тернер 1985, 385-418.

⁸ Тернер 1985.

⁹ Кильдюшов 2016, 122-149.

¹⁰ Соболевская 2013, 794-798.

Սոցիալական կարգի աքսիոմատացման խնդրահարույց բնույթը սոցիոլոգիական հարացույցերում

Սոցիոլոգիայի, որպես գիտության, զարգացման հիմքերը սերտորեն կապված են սոցիոլոգիական հետազոտական օբյեկտային և առարկայական տիրույթները գեներացնող սուբստանցիոնալ հիմնախնդիրների պարզաբանման հետ: Վերջիններս դիտարկվում են կարգաբանական տիրույթում: Իրականության կարգավորված բնույթի ընդունումը նշանակում է ներգիտական սուբստանցիոնալ հիմնախնդիրների կարգավորվող իրողություններով պայմանավորվածության ընդունում: Եթե բնական գիտություններում «ինչպե՞ս է հնարավոր բնությունը» հարցը պատասխան է ստանում սուբյեկտի կողմից բնություն հասկացություն ճանաչողական տարրերի սինթեզ իրականացնելով, ապա հասարակական գիտությունների և մասնավորապես սոցիոլոգիայի տեսանկյունից գործածելի չէ նմանատիպ տրամաբանությունը: Վերոնշյալ հարցի շրջանակներում հասարակություն հասկացությունը սինթեզող տարրերը կրում են ապրիորի պայմաններ¹¹: Այս հարցերը գոյություն ունեն սոցիալական կարգի շրջանակներում: Դրանք ենթադրում են սոցիալական կարգը քննող փաստերի և սահմանումների հարացույցերում¹² ձևավորված տեսական մոտեցումների վերանայման անհրաժեշտություն: Փաստերի հարացույցում սոցիալական կարգի հետազոտությունները մասամբ պայմանավորված են հասարակություն հասկացությունը սինթեզող տարրերի ապրիորի բնույթի ընդունմամբ: Սա նշանակում է, որ սոցիալական կարգը և վերջինիս առկայությունը նույնպես մեկնաբանվում են որպես ապրիորի իրողություն: Այն դիտարկվում է sui generis-ի շրջանակներում՝ համարվելով սոցիալական փաստ, որի, «...հիմնարար առանձնահատկությունը՝ անհատական գիտակցության վրա արտաքին ազդեցության հնարավորությունն է...»¹³: Սոցիալական կարգի ապրիորիության ընդունումը աքսիոմատացնում է սոցիոլոգիական գիտելիքը՝ այն դնելով աբստրակցիայի առավել բարձր մակարդակի վրա: Բխելով սոցիալական կարգի գոյության անառարկելիության դրույթի գերակայությունից՝ նշանակում է ներհարացուցային աքսիոմատիկ մեթոդի կիրառում՝ հասկացության տարրական միավորների առաջադրմամբ:

¹¹ Зиммель 1996, 508-526.

¹² Փաստերի և սահմանումների հարացույցերի մոտեցումը առկա է Ритцер 2002 աշխատությունում:

¹³ Дюркгейм 1991, 492.

Սակայն փաստերի հարացույցում խնդրահարույց են աքսիոմատիկ մեթոդի՝ սոցիալական իրականություն ներմուծման և դրանով կարգի մեկնաբանման հնարավորությունները: Մասնավորապես, խնդրահարույց են պարսոնայան համակարգային տեսության շրջանակներում առաջադրվող տարրական գործողության¹⁴ որպես սոցիալական կարգը ձևավորող տարրական միավորից հասկացությանին առավել բարդ ձևերի անցման հնարավորությունները: Առկա են նաև հասկացությունների իմաստային ինքնաբավության խնդիրներ (արդյոք «տարրական գործողություն» հասկացությունը ենթակա չէ՞ հետագա տարանջատման)¹⁵: Նշյալների առկայությունը շեշտադրում է փաստերի հարացույցում սոցիալական կարգի գոյության աքսիոմատացման խնդրահարույց բնույթը¹⁶: Տեղի է ունենում կարգի գոյության ընդգծում, առանց այդ գոյությունը պայմանավորող առավել ցածր կարգի ֆենոմենների միջև փոխազդեցությունների համապարփակ մեկնաբանման: Քվազիաքսիոմատացված սոցիալական կարգով պայմանավորված հետազոտության արդյունք հանդիսացող գիտելիքի համակարգը, այսպիսով, մեկնաբանում է սոցիալական կարգի առկայության հնարավորությունները: Հարց է ծագում՝ ինչպես է հնարավոր ընդհանրապես քննության ենթարկել հետերոգեն կարգի գործառնման հնարավորությունները: Նմանատիպ հարցադրումները գոյություն ունեն հասարակական համերաշխության հիմնարար տիպերի համատեքստում, որտեղ վերլուծական միավոր է տարրական գործողություն-կրկնակի կոնտինգենտություն փոխազդեցությունը: Եթե ընդունենք տարրական գործողությունից կրկնակի կոնտինգենտության բխեցման հնարավորությունը պարսոնայան տրամաբանությամբ՝ կրկնակի կոնտինգենտությունը համարելով որպես իրադարձություններից կրկնակի կախվածություն, որտեղ «...Մի կողմից էգոյի բավարարումը կախված է նրանից, թե գոյություն ունեցող այլընտրանքներից որոնք է նա ընտրում: Մյուս կողմից՝ ուրիշի ռեակցիան կախված կլինի էգոյի ընտրությունից և կպայմանավորի ուրիշի ընտրությունը...»¹⁷, ապա հասկացությանին առավել բազմաբարդ միավորի՝ հասարակական համերաշխության պարզաբանման տիրույթում առաջ կգան կրկնակի կոնտինգենտություն-հասարակական համերաշխություն-սոցիա-

¹⁴ Парсонс 2000.

¹⁵ Тернер 1985, 385-418.

¹⁶ Степин, Абушенко, Непейвода 2020, URL: <https://gtmarket.ru/concepts/6995>.

¹⁷ Парсонс 2000, 436-437.

լական կարգ փոխառնչությունների հետ կապվող դժվարություններ: Եթե համերաշխության մեխանիկական տիպում սոցիալական կարգի գոյության ընդունումը, որպես աքսիոմ, մասամբ ընդունելի է, քանզի նշյալ տիպը դավանող հասարակություններում «...ինտերնալիզացված արժեքներն ու նորմերը ընդհանուր են բոլորի համար...»¹⁸, ապա նույնը չենք կարող ասել ժամանակակից հետերոգեն հասարակությունների մասին¹⁹: Հետերոգեն իրականության որոշակի տիրույթում անգամ առկա է կրկնակի կոնտինգենտության շրջանակներում գործառուղ սուբյեկտների փոխազդեցություն՝ ընտրության բազմաբարդ մեխանիզմների կիրառմամբ: Կրկնակի կոնտինգենտությունն այստեղ գոյություն չունի միայն սոցիալական կոնտեքստում, քանզի «...Առկա են ...օրինակ՝ ժամանակային չափումը: Դեռ անորոշ իրավիճակում ուրիշը սահմանում է՝ իր վարքը...: Նա անում է... Ժեստ և սպասում՝ կընդունվի արդյոք այն և թե ինչպես կընդունվի: Սրանից բխող յուրաքանչյուր քայլ համարվում է գործողություն որոշակի էֆեկտով՝ ...նվազեցնելով կոնտինգենտությունը»²⁰: Ժամանակային անորոշությունը առավել խնդրահարույց է դարձնում այն թեզը, ըստ որի՝ յուրաքանչյուր կարգ ձևավորվում է միայն կոնտինգենտության խնդրի հիման վրա, որտեղ սոցիալական կարգի կոնտինգենտացումը հանգեցնում է սոցիալական կարգի կանոնացման²¹: Դա նշանակում է սոցիալական կարգի էության օրինաչափական դրույթների առանձնացման և գիտելիքի ինքնաբավության սկզբունքի առկայություն: Իրականում առկա է ճանաչողության խնդիր՝ կապված «ի՞նչ է սոցիալական կարգը» և «հնարավո՞ր է արդյոք սոցիալական կարգ» հարցերի պարզաբանման հետ: Այս խնդիրը սուր է արտահայտված մասնավորապես սահմանումների հարացույցում շրջանառվող իմաստների ձևավորման շրջանակներում: Եթե ընդունենք թեզն այն մասին, որ կրկնակի կոնտինգենտության խնդրի առկայությունն է հնարավոր դարձնում խոսելու սոցիալական կարգի գոյության մասին, ապա սահմանումների հարացույցում հարց է առաջանում՝ ինչ իմաստ է դրվում սուբյեկտների միջև վերոնշյալ գործողություններում: Գործողության իմաստային տարրերի դուրսբերումը ենթադրում է, որ սոցիալական

¹⁸ Hechter, Horne 2003, 329.

¹⁹ Дюркгейм 1991.

²⁰ Луман 2007, 153-154.

²¹ Луман 2007.

կարգը մշտապես սահմանվող և կառուցակցվող ֆենոմեն է²²։ Այն իր արտահայտումն է ստանում էթնոմեթոդաբանությունում²³։ Էթնոմեթոդաբանությունը կենտրոնացած է մարդկային գործունեությամբ պայմանավորված ֆենոմենների հետ կապվող ինտերսուբյեկտիվորեն վերիֆիկացվող տվյալների միջոցով տեսության կառուցման վրա²⁴։ Ինտերսուբյեկտիվ վերիֆիկացիայի գործընթացը նաև վերջինիս վերիֆիկացիա է՝ ձևավորելով վերիֆիկացիոն պարբերափուլ։ Ստեղծվում է իրավիճակ, երբ վերիֆիկացիայի անընդհատությունը հարցականի տակ է դնում սոցիալական կարգի առկայության սահմանման հնարավորությունները։

Իրավիճակն առավել խնդրահարույց է դառնում, երբ հաշվի է առնվում այն, որ սոցիալական կարգի գոյությունը, որպես ճշմարտության հայեցակարգ, որն սահմանված է տեսության նկատմամբ, տվյալ տեսության միջոցով հաճախ բացատրելի չէ²⁵։ Տվյալ հարցադրումների հետ կապվող խնդիրները բխում են սոցիոլոգիական գիտելիքի օնտոլոգիական և էպիստեմոլոգիական մակարդակներից։ Ընդունելով այն, որ օնտոլոգիան «...ռեֆլեկտիվացնում է գոյության ունիվերսալ հիմքերը, կառուցվածքը, սկզբունքները, կազմակերպումը և դինամիկան»²⁶, պարզ է դառնում գոյության դրսևորման հիմքի վերհանման անհրաժեշտությունը։ Եթե գոյության դրսևորման հիմք համարենք մատերիան, ապա սոցիալական կարգը դիտելի է իբրև մատերիայի սոցիալական ձևի դրսևորում։ Այստեղ սոցիալական կարգը օժտվում է այն հատկություններով, ինչով, ըստ Իլյինի, օժտված է մատերիան. այն է՝ դինամիզմով, տարածաժամանակայնությամբ, կառուցվածքով, անդրադարձման՝ իմաստավորման հնարավորությամբ²⁷։ Սակայն սոցիալական կարգի հետ կապվող սոցիոլոգիական գիտելիքում առկա հակասությունները, որոնք հետևանք են գիտելիքի քվազիաքսիոմատացման, հանգեցնում են օնտոլոգիական միջուկի ոչ միանշանակության։ Վերջիններս վերաբերում են սոցիալական կարգի իմաստավորման շրջանակներում ձևավորվող գիտելիքի ինքնաբավության, սահմանների, կառուցվածքի անորոշության, որոնք գործառում են էպիստեմոլոգիական

²² Тернер 1985.

²³ Гарфинкель 2002, 42-70.

²⁴ Тернер 1985, 419-430.

²⁵ Тарский 1948.

²⁶ Ильин 2006, 112.

²⁷ Ильин 2006, 119-166.

դաշտում: Օրինակ՝ եթե սոցիալական կարգը համարենք իբրև սոցիալական կազմակերպման համընդհանուր մեխանիզմ, ապա հարց է ծագում, թե որոնք են այն հիմնարար նմուշները, որոնք բնութագրում են սոցիալական կազմակերպումը: Դրանք կարող են համարվել իմպերատիվորեն համակարգված ասոցիացիաներ, սոցիալական համակարգ կամ էլ դերերի ամբողջություն, որոնք, սակայն, չեն բացատրում, թե ինչպես է յուրաքանչյուր սոցիալական իրողություն տարբերվում մյուսներից՝ ըստ հիմնարար առանձնահատկությունների²⁸:

Այսպիսով, առկա է իրավիճակ, որտեղ սոցիալական կարգի գործառնման օրինաչափությունների բացահայտմանն ուղղված հետազոտությունները միայն որոշակի միտումների դուրսբերման խնդիր են լուծում: Այս համատեքստում, եթե անգամ ընդունենք կարգի կառուցվածքայնությունը, ապա, ըստ Գիդենսի, այն «...նման չէ նյութական կառուցվածքին, որը գոյություն ունի մարդկային գործունեությունից անկախ...»²⁹: Նշյալը շեշտադրում է սոցիալական կարգի քվադրաքսիոմատացումից հրաժարման կարևորությունը, որը հաղթահարելի չէ միայն փաստերի կամ սահմանումների հարացույցի շրջանակներում ձևավորված սոցիոլոգիական ավանդույթի որդեգրմամբ:

Եզրակացություններ

Վերլուծությամբ պարզ դարձավ, որ սոցիալական կարգի գոյության տեսական հիմքերում առկա է ներգիտական ճանաչողության խնդիր, որն առավելապես բնորոշվում է սոցիոլոգիայում առկա քվադրաքսիոմատացման ավանդույթով: Այն դիտելի է թե՛ ներտեսական, թե՛ միջտեսական փոխազդեցությունների տիրույթում առկա մոտեցումների միջև փոխառնչությունների առանձնահատկություններում և պայմանավորում է սոցիալական կարգի տեսական համընդհանուր սկզբունքների բացակայությունը, որոնք պայմանավորված են սոցիալական կարգի նկատմամբ հասկացությային միավորների դիրքավորվածության անորոշությամբ: Հետևաբար, առանձին միավորների միջև փոխկապվածություններում առկա խնդիրները գիտելիքի ֆրագմենտարության պայմաններում հարցականի տակ են դնում սոցիալական կարգի գոյության աքսիոմն ընդհանրապես:

²⁸ Тернер 1985, 385-418.

²⁹ Гидденс 2005, 19.

Գրականություն

- Гарфинкель Г. 2002, Исследование привычных оснований повседневных действий (перевод с английского Турчаниновой Ю.И., Гусинского Э.Н.), Социологическое обозрение, т. 2, N 1, с. 42-70.
- Гидденс Э. 2005, «Социология», при участии К. Бердсолл: пер. с англ., изд. 2-е, полностью перераб. и доп., Москва, «Едиториал УРСС», с. 19.
- Дюркгейм Э. 1991, Метод социологии, Дюркгейм Э. О разделении общественного труда. Метод социологии, пер. с франц. А.Б. Гофмана, Москва, «Наука», с. 492.
- Дюркгейм Э. 1991, О разделении общественного труда. Метод социологии, пер. с франц. А.Б. Гофман, под редакцией Чибисенкова Л.С., Санкт-Петербург, «Наука», 575 с.
- Зиммель Г. 1996, Как возможно общество? пер. с нем. А.Ф. Филиппова, Зиммель Г. Избранное, т. 2: Созерцание жизни, Москва, «Юрист», с. 508-526.
- Ильин В.В. 2006, Философия: учебник. В 2 т., т. 1 (Высшее образование), Ростов н/Д., «Феникс», с. 112.
- Кильдюшов О. 2016, Проблема социального порядка (Гоббсова проблема): к эвристике и прагматике конститутивного вопроса современной теории обществ, Социологическое обозрение, т. 15, N 3, с. 122-149.
- Луман Н. 2007, Социальные системы. Очерк общей теории, пер. с нем. Газиева И.Д., под редакцией Головина Н.А., Санкт-Петербург, «Наука», 641 с.
- Парсонс Т. 2000, О структуре социального действия, Москва, «Академический проект», 880 с.
- Ритцер Дж. 2002, Структура социологической теории, Санкт-Петербург, «Питер», 688 с.
- Соболевская М. 2013, Проблема социального порядка в современной социологической теории: от дискурса порядка к порядку дискурса, «Молодой учёный», N 12 (59), г. Казань, декабрь, с. 794-798.
- Степин В.С., Абушенко В.Л., Непейвода Н.Н. Метод аксиоматический. Гуманитарная энциклопедия: концепты [Электронный ресурс]//Центр гуманитарных технологий, 2002-2020 URL: <https://gtmarket.ru/concepts/6995> (последняя редакция: 01.02.2020) (дата обращения 20.04.2020).
- Тарский А. 1948, Введение в логику и методологию дедуктивных наук, Москва, Государственное изд. иностранной литературы, 327 с.

Тернер Дж. 1985, Структура социологической теории, Москва, «Прогресс», 464 с.

Archer M. 1988, Culture and Agency: The Place of Culture in Social Theory, Cambridge, Cambridge University Press, 384 p.

Hechter M. & Horne C. 2003, Theories of Social Order. A Reader, Stanford Social Sciences, 329 p.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՔՎԱԶԻԱՔՍԻՈՄԱՏԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Հարություն Վերմիշյան, Վահան Ենգիդունյան

Ամփոփում

Սոցիոլոգիական գիտելիքի համակարգում խնդրահարույց է համարում սոցիալական կարգի հնարավոր քվազիաքսիոմատացման ավանդույթը: Սոցիալական կարգի գոյության տեսական սոցիոլոգիական մեկնաբանումները հիմնականում կիրառվում են կարգի քվազիաքսիոմատացման տիրույթում: Մասնավորապես, գոյություն ունեն սոցիալական կարգը բնութագրող կոնցեպտուալ համակարգի տարրերի միջև փոխազդեցության խնդիրներ, որոնք սոցիոլոգիական գիտելիքի օնտոլոգիական և էպիստեմոլոգիական մակարդակում վերածվում են կարգի անառարկելիության ընդունմանը՝ առանց դրա հետ կապվող գիտելիքի միջգիտակարգային փոխկապվածությունների ձևավորման:

Բանալի բառեր՝ սոցիալական կարգ, քվազիաքսիոմատացում, կոնտինգենտություն, օնտոլոգիա, էպիստեմոլոգիա, հարացույց, կառուցվածք:

О ВОПРОСЕ КВАЗИАКСИОМАТИЗАЦИИ СОЦИАЛЬНОГО ПОРЯДКА

Арутюн Вермишян, Ваан Енгидунян

Резюме

Целью данной работы является изучение традиции возможной квазиаксиоматизации социального порядка, что считается проблематичным в системе социологических знаний. Анализ вопроса подтверждает тезис о том, что социологические теоретические интерпретации существования социального порядка в основном используются в области квазиак-

сиоматизации последнего. В частности, существуют проблемы взаимосвязи между элементами концептуальной системы, характеризующей социальный порядок, которые на онтологическом и эпистемологическом уровне социологического знания превращаются в принятие неоспоримого порядка без формирования междисциплинарных взаимосвязей связанных знаний.

Ключевые слова – социальный порядок, квазиаксиоматика, контингентность, онтология, эпистемология, парадигма, структура.

ON THE ISSUE OF QUASI – AXIOMATIZATION OF THE SOCIAL ORDER

Harutyun Vermishyan, Vahan Yengidunyan

Abstract

The aim of the work is to study the tradition of possible quasi-axiomatization of the social order, which is considered problematic in the system of sociological knowledge. As a result of the analysis, the thesis is confirmed that the sociological theoretical interpretations of the existence of social order are mostly used in the field of order quasi-axiomatization. There are problems of interconnection between the theoretical elements characterizing the social order. At the ontological and epistemological level these develop into the acceptance of the indisputability of order, without the formation of interdisciplinary interrelationships.

Key words – social order, quasi-axiomatization, contingency, ontology, epistemology, paradigm, structure.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Յուրի Սուվարյան

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր
ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի
ակադեմիկոս-քարտուղար
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղդամյան 24
Էլ. հասցե՝ suvryan@sci.am

Վարդան Սարգսյան

Տնտեսագիտության դոկտոր
Տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի վարիչ
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
ՀՀ, Երևան, Նալբանդյան 128
Էլ. հասցե՝ varsarg@yahoo.com
Հոդվածը ներկայացվել է 25.05.2020, գրախոսվել է 15.07.2020, ընդունվել է
տպագրության 05.08.2020

Ներածություն

Կառավարչական գործունեությունը թե՛ հանրային, թե՛ գործարար կառավարման ոլորտներում անընդհատ որոշումների ընդունման, դրանց իրագործման ապահովման գործողությունների ամբողջություն է: Իրական կյանքն ապացուցում է, որ առանձին երկրների և կազմակերպությունների գործունեության արդյունքները բացառապես պայմանավորվում են ընդունվող կառավարչական որոշումների հիմնավորվածությամբ և որակով: Իսկ այդ որոշումները վերաբերում են իրավակարգավորման դաշտի ստեղծմանը, ռազմավարական ծրագրերին, ռեսուրսների հայթայթմանը և նպատակահարմար բաշխմանը, կազմակերպակառուցվածքային խնդիրների լուծմանը, օպերատիվ կառավարմանը, մոտիվացիոն միջավայրի ստեղծմանը, վերահսկողության ապահովմանը, ընդհանուր առմամբ՝ կառավարման բոլոր գործառույթներին՝ պլանավորմանը (ծրագրավորմանը), կազմակերպմանը, մոտիվացիային և վերահսկողությանը: Հայտնի է, որ կառավարչական որոշումների ընդունումը հնարավոր այլընտրանքներից հա-

րաբերաբար լավագույնի ընտրությունն է: Պարզ թվացող այդ գործընթացը, սակայն, ուղեկցվում է լրջագույն խնդիրների լուծման բարդություններով: Դրանք առաջին հերթին վերաբերում են որոշման առարկային՝ լուծման ենթակա հիմնախնդրին, դրա ճշգրիտ ախտորոշմանը, հետապնդվող նպատակին, նրա որակական ու քանակական չափանիշներին: Հաջորդ կարևոր խնդիրն առնչվում է որոշման ընդունման և իրագործման օրենսդրանորմատիվային և ռեսուրսային սահմանափակումներին:

Կառավարչական որոշումների ընդունման և իրագործման մեթոդաբանությունը հայտնի է որպես որոշումների ընդունման տեսություն: Այն հասարակական-տնտեսական կյանքի, հատկապես՝ գիտության, կրթության և դրանցով պայմանավորված տեխնոլոգիաների զարգացման շնորհիվ հարստանում է հայեցակարգային նոր սկզբունքներով և գործիքակազմով: Մասնավորապես XX դարում և XXI դարի սկզբում կառավարչական որոշումների տեսությունը հարստացել է հետևյալ նոր դրույթներով և գործիքներով.

- քաղաքացիական հասարակության կայացմանը զուգընթաց՝ ձևավորվեց հանրային կառավարման համակարգը և առանցքային ու տիրապետող դարձավ կառավարման, ուստի նաև՝ որոշումների ընդունման ժողովրդավարական ոճը՝ ի հակառակ ավտորիտարի.

- կրթության և գիտության զարգացման հետևանքով գրեթե համահարթվեցին կազմակերպություններում աշխատող մասնագետների կրթական մակարդակները, որը դրական երևույթ է, և որն օբյեկտիվորեն հանգեցրեց խմբային (մասնակցային) կառավարման և որոշումների ընդունման կոլեկտիվ եղանակի անհրաժեշտության.

- այլընտրանքներից լավագույն տարբերակի ընտրության համար մշակվեցին տնտեսամաթեմատիկական մոդելներ մակրոմակարդակի (միջճյուղային կապերի ստատիկ ու դինամիկ մոդելներ, Կոբբ-Դուգլասի արտադրական ֆունկցիա) և միկրոմակարդակի (տրանսպորտի խնդիր, պաշարների և ռեսուրսների օպտիմալ կառավարման մոդելներ և այլն) համար.


- գիտատեխնիկական սրընթաց առաջադիմության հետևանքով հասարակական-տնտեսական հարաճուն փոփոխություններին արագ արձագանքելու նպատակով կառավարման ավանդական կայուն կառուցվածքներից անցում է կատարվում հարմարվողական (ճկուն) կառուցվածքների, հանգեցնելով կառավարչական որոշումների ընդունման մեթոդների զար-

գացմանը, որոնք դրսևորվում են իշխանության և առաջնորդման ժողովրդավարական ոճերի գործադրման միջոցով.

– XXI դարի սկզբում կառավարչական որոշումների ընդունման ու իրագործման սկզբունքների և մեթոդների զարգացման նոր հնարավորություններ է ընձեռում թվայնացումը, որոնք կդիտարկվեն ստորև:

Կառավարչական որոշման ընդունման տրամաբանությունը անցյալ դարի կեսերից հետո ձևակերպվել է իբրև տնտեսամաթեմատիկական խնդիր կամ մոդել՝ նպատակային ֆունկցիա-օպտիմալություն չափանիշ-սահմանափակումներ սխեմայով: Թեև միշտ չէ, որ նման խնդիր մաթեմատիկորեն ձևակերպվում ու լուծվում է, սակայն կառավարչական որոշման ընդունման յուրաքանչյուր գործողություն իրագործվում է այդ տրամաբանությամբ: Նույնը վերաբերում է նաև մարդկային կյանքի առօրյայում կայացվող նշանակությամբ փոքր ու մեծ, անգամ բախտորոշ որոշումներին: Կառավարչական որոշում ընդունելու համար անհրաժեշտ է ունենալ ռելեվանտ ճշգրիտ տեղեկություններ որոշման առարկայի, դրան առնչվող սահմանափակումների, կազմակերպության (երկրի) ներքին ու արտաքին միջավայրերի ցուցանիշների վերաբերյալ: Այս առումով որոշման ընդունումը և կատարման ապահովումը շաղկապվում են կոմունիկացիոն գործընթացի հետ (տե՛ս գծ. 1)¹:

Գծանկար 1



¹ Տե՛ս Մենեջմենթ 2016, 90:

Գծանկարից ակնհայտ է, որ կառավարման գործառույթների վերաբերյալ որոշումներն ընդունվում են կոմունիկացիոն կապերով ստացված տեղեկությունների հիման վրա. այդպիսով նաև ապահովվում է կառավարման գործընթացի ամբողջականությունը:

Կառավարչական որոշումների ընդունման և դրանց իրագործման ապահովման առումներով արդի ինտենսիվ թվայնացման գործընթացները* կառավարման կատարելագործման հնարավորություններ են ստեղծել հետևյալ ուղղություններով.

– կառավարման օպերատիվության և ընդունվող որոշումների հիմնավորվածության (ճշգրտության) աճ որոշումների ընդունման ընթացքում ներքին և արտաքին միջավայրի վերաբերյալ համակողմանի տեղեկությունների ստացման, արագ մշակման ու մաթեմատիկական մեթոդներով օպտիմալ տարբերակի հաշվարկման շնորհիվ.

– քանի որ ընդունվող բոլոր որոշումները միտված են ապագային, իսկ ապագան ավելի անորոշ է, քան ներկան, ուստի կարևոր է կանխատեսումային ճշգրիտ հաշվարկներով հաղթահարել ապագայի անորոշությունը, կանխորոշել հնարավոր ռիսկերը, իսկ այդ գործողություններն ավելի արդյունավետորեն կարող են կատարվել թվային տեխնոլոգիաներով, քան վիճակագրական վերլուծություններով.

* Թվային տնտեսության սկզբնավորումը սկսվել է 1990 թվականից, ստեղծվել են էլեկտրոնային առևտրի, ծառայությունների, գործարարության շուկաներ, լայն տարածում է ստացել էլեկտրոնային մարկետինգը, արմատավորվել են էլեկտրոնային հաղորդակցության հայտնի միջոցները (քջջային կապ, սկայպ, ֆեյսբուք, յութուբ և այլն), հանրային կառավարման համակարգերը, էլեկտրոնային գրադարանները, հանդեսները, գրքերը (տե՛ս Жар холодных чисел, «В мире науки» 2020, N 3, 58-61): Թվայնացման տեխնոլոգիաներից են տվյալների բազայի ժամանակակից համակարգերը, որոնք հնարավորություն են ընձեռում հավաքելու, մշակելու, համակարգելու և պահպանելու տեղեկատվությունը, տեղեկությունների որոնման ու նպատակահարմար ներկայացման տեխնոլոգիաները, տեղեկատվության ցանցային հասանելիության, համակարգման և խմբավորման ինտերնետ տեխնոլոգիաները, մոբիլ տեղեկատվական տեխնոլոգիաները (տե՛ս Дешко, Ковалев и др. 2005), որոնց շնորհիվ հնարավոր է ունենալ տեքստի էլեկտրոնային տարբերակը՝ արտահայտված սիմվոլներով, տեղեկատվության հասանելիությունը՝ առցանց, հաշվարկների կատարման և տեսախորհրդաժողովների զանազան ծրագրեր, գիտական գրականությունը՝ առցանց: Թվային արդի տեխնոլոգիաները Փ. Դրաքերն անվանել է չորրորդ տեղեկատվական հեղափոխություն, որին նախորդել են գրավոր խոսքի սկզբնավորումը (առաջին հեղափոխություն), գրքի ստեղծումը (երկրորդ հեղափոխություն), գրատպման տեխնոլոգիայի արմատավորումը (երրորդ հեղափոխություն) (Տե՛ս Друкер 2001, 138-139):

– որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության արդյունավետության բարձրացում՝ թվայնացման շնորհիվ մոնիտորինգի հնարավորությունների ընդլայնման հետևանքով.

– կառավարչական որոշումների ընդունման ընթացքում խմբային ու մասնակցային կառավարման ապահովում և ընդլայնում՝ հաղթահարելով մասնակիցների աշխարհագրական հեռավորությունը:

Նշված ուղղություններով որոշումների ընդունման գործընթացի զարգացման հնարավորությունները ստորև կլուսաբանվեն ռացիոնալ մեթոդով դրանց կայացման փուլային դրսևորումների միջոցով², ինչպես նաև կբնութագրվեն առաջնորդման ոճերի և կառավարչական որոշումների փոխառնչությունները, հանրային կառավարման և գործարարության ոլորտներում վերջինիս ազդեցության գնահատման սկզբունքները: Սակայն նախ հանգամանորեն կդիտարկվեն որոշումների ընդունման արդի տեղեկատվական տեխնոլոգիաները:

Կառավարչական որոշումների կայացման տեղեկատվական տեխնոլոգիաները և մաթեմատիկական լուծումները

Կառավարման տարբեր ոլորտներում և մակարդակներում տեղեկատվության ծավալների և փոխանցման արագության աճը կառավարման գործընթացում պահանջում է արագ արձագանք, մեծածավալ տվյալների պարագայում կառավարչական որոշումների առավել հիմնավորվածության անհրաժեշտություն, և որոշումների ընդունման ավանդական տեխնոլոգիաները որոշ դեպքերում բավարար արդյունավետություն չեն կարող ապահովել: Նոր գործիքների կիրառությունը անհրաժեշտություն է դառնում: Դրանք տեղեկատվական ինտելեկտուալ տեխնոլոգիաներն են, որոնք ունեն մաթեմատիկական վերլուծական հենք: Իհարկե, տնտեսամաթեմատիկական ավանդական գործիքները հաջողությամբ ծառայում են կառավարչական որոշումների ընդունմանը, սակայն ներկայումս առաջարկվում են այդ մեթոդների այնպիսի զարգացումներ և լուծումներ, որոնք առավել հարմարեցված են ագրեսիվ տեղեկատվական միջավայրին և բարձր անորոշության պայմաններին: Համապատասխան մաթեմատիկական ապա-

² Կառավարչական որոշումների ընդունման փուլային մեթոդաբանությունը նկարագրված է մենեջմենթի վերաբերյալ շատ աշխատություններում: Տե՛ս, օրինակ, Мескон, Альберт, Хедоури 2000, 202-207, Дафт 2013, 276-280, Герчикова 1995, 111-118, Кунц 1981, 252-300, Մենեջմենթ 2016, 263-272:

րատը իր կիրառությունն ստանում է համակարգչային հավելվածների միջոցով, որոնք արդեն լայնորեն կիրառվում են բիզնեսի և նաև հանրային կառավարման ոլորտներում: Տեղեկատվական համակարգերի էվոլյուցիոն զարգացումը տանում է դեպի արհեստական բանականության կիրառումներ կառավարչական գործունեության մեջ, և այդ ճանապարհին արդեն իսկ սկսում են կիրառվել այնպիսի համակարգեր, ինչպիսիք են գիտելիքների հենքով համակարգերը (KBS Knowledge Based Systems) և որոշումների կայացմանը նպաստող համակարգերը (DSS, Decision Support Systems): Վերջիններս կարող են դիտարկվել որպես արհեստական բանականության տարրեր, որոնք արդեն իսկ ունեն կիրառություններ, հատկապես գործարարության կառավարման ոլորտում:

Որոշումների կայացմանը նպաստող համակարգերը համակարգչային հավելվածներ են, որոնք օգնում են անհատներին և կազմակերպություններին կայացնելու որոշումներ, ներառյալ՝ լուծումների դասակարգումը, առաջնահերթությունը կամ մի շարք տարբերակներից մեկի ընտրությունը: Այդպիսի համակարգերի կիրառումն սկսվել է պարզագույն լուծումներից և զարգացել մինչև բարդ տրամաբանական լուծումներ ապահովող մաթեմատիկական գործիքների կիրառումը:

DSS համակարգերի առաջին կիրառությունները նկարագրվել են դեռևս 1970-ականներին: Առաջին նմանատիպ համակարգերը, նախքան ինտերնետ տեխնոլոգիաները, հիմնված էին աղյուսակային միջավայրերի վրա³: Գլոբալ ցանցը կամ ինտերնետը, 1990-ականներից սկսած, ընդլայնեց նմանատիպ համակարգերի հնարավորությունները՝ որոշումների կայացման գործընթացներում ապահովելով նաև արտաքին տեղեկատվական ազդեցությունները և ցանցային պլատֆորմները⁴:

Ներկայումս կիրառվող DSS ծրագրային հավելվածների ապահովման մեծ մասը կենտրոնացած է կառավարչական որոշումների ընդունման գործընթացներում լուծումների դասակարգման և գերակայությունների ընդգծման կամ մի քանի այլընտրանքային տարբերակներից մեկի ընտրության չափանիշների բացահայտման վրա⁵: Այսպիսով, կարող ենք փաս-

³ Dyer 1973, 1379-83, Wallenius, Dyer, Fishburn, Steuer, Zionts and Deb 1992, 645-54.

⁴ Koksalan, Wallenius and Zionts 2011, Weistroffer, Li 2016, Oleson 2016, Ishizaka, Nemery 2013, Multi-Criteria Decision Analysis. doi:10.1002/9781118644898. ISBN 9781118644898.

⁵ Weistroffer, Li 2016.

տել, որ այս միջոցները հիմնված են այսպես կոչված «որոշումների ընդունման բազմագործոն վերլուծության» մեթոդաբանության վրա⁶:

DSS համակարգերը նպաստում են որոշումների կայացմանը, ինչպես օրինակ, կառավարչական խնդիրների ուսումնասիրության և մեկնաբանության, այլընտրանքային լուծումների նույնականացման ու նախապատվությունների ձևավորման և փոխզիջումային որոշումներ ընդունելու գործընթացներում: Այսպիսով, DSS համակարգչային հավելվածները նպաստում են կառավարչական վերլուծությանը, այլ ոչ թե կառավարման սուբյեկտին փոխարինող այլընտրանք են, և այն կարող է կիրառվել գործընթացին աջակցելու համար⁷:

Տեղեկատվական համակարգերը կառավարիչներին ազատում են գործունեության իրականացման տեխնիկական հատվածներից, որը թույլ է տալիս նրանց կենտրոնանալ հիմնարար բովանդակային դատողությունների վրա⁸: Նշենք նաև, որ այդպիսի համակարգերը լայնորեն սկսել են կիրառվել հանրային կառավարման, մասնավորապես կրթության կառավարման ոլորտներում՝ որոշումների կայացման համար⁹: Որոշումների կայացման մեթոդները, որոնք կիրառվում են DSS մոդուլներում, բազմաթիվ են, ինչպես օրինակ՝

- համախմբված ինդեքսների մեթոդ (AIRM),
- վերլուծական հիերարխիա (AHP),
- վերլուծական ցանցային գործընթաց (ANP),
- իրականություն արտահայտող ընտրություն (ELECTRE),
- գրավչության չափում ըստ կատեգորիկ գնահատման մեթոդի (MACBETH),
- որակական գնահատում՝ ըստ մեկ կամ մի քանի ցուցանիշների (MAGIQ),
- բոլոր հնարավոր այլընտրանքների զույգային համեմատում (PAPRIKA),
- ռեյտինգային գնահատման կազմակերպում (PROMETHEE),
- հիբրիդային անորոշության պայմաններում ապացույցների վրա հիմնված մոտեցում:

⁶ Oleson 2016, "Decision analysis software survey", OR/MS Today 43(5).

⁷ Belton, Stewart 2002.

⁸ Belton, Stewart 2002.

⁹ Семочкина, Прокофьев 2013, 11, 133-140, Прокофьев, Семочкина 2010, 80-85.

Վերոնշյալ մեթոդների միջև առկա են էական տարբերություններ¹⁰, որոնք արտահայտվում են այդ մեթոդների հենքի վրա կառուցված համակարգերում: Նման տարբերությունները ներառում են հետևյալ գործոնները՝

- կառավարչական խնդիրը պարունակող ենթախմբերին վերաբերող մանրամասնությունների աստիճանը,
- արդյո՞ք այլընտրանքների և (կամ) չափանիշների զույգ համեմատությունները օգտագործվում են որոշումներ կայացնողների նախապատվությունների հիման վրա,
- կիրառվող չափանիշների քանակը,
- գնահատված այլընտրանքների քանակը, որը կարող է տատանվել է մի քանիսից մինչև անսահմանություն,
- որքանով են քանակական գնահատականները օգտագործվում այլընտրանքները գնահատելու և (կամ) դասակարգելու համար,
- ալգորիթմը, որով կառուցվում են այլընտրանքների թերի վարկանիշները (ի տարբերություն ամբողջական վարկանիշների օգտագործման),
- աստիճանը, որով անորոշությունը մոդելավորվում և վերլուծվում է:

Տեղեկատվական տեխնոլոգիաների շուկայում առաջարկվում են տասնյակ ծրագրային հավելվածներ, որոնք նպաստում են այս կամ այն ոլորտում կամ կառավարման մակարդակում որոշումների կայացման գործընթացներին: Այդ համակարգերի հասցեատերերի շրջանակը տարբեր է՝ ֆիզիկական անձանցից մինչև խոշոր կորպորացիաներ և հանրային կառավարման բազմապիսի օբյեկտներ: Դիտարկենք այդ համակարգերը, դրանցում կիրառվող կառավարչական որոշումների ընդունման մեթոդները և մաթեմատիկական լուծումները: Այդ համակարգերից որոշներն ունեն կիրառման բավական հարուստ պատմություն, մյուսները ներդրվել են համեմատաբար վերջերս: Այդ համակարգերը, որոնք ներկայումս լայն կիրառություն ունեն, կարելի է բաժանել երկու խոշոր խմբի՝ WEB պլատֆորմում աշխատող և կորպորատիվ լոկալ ցանցերում կիրառվող, ինչպես նաև առանձին համակարգերում գործող: WEB պլատֆորմներում գործող առավել հայտնի համակարգերից են՝ 1000minds, Ahoona, Altova MetaTeam Analytica D-Sight DecideIT Decision Lens, Expert Choice, Intelligent Decision System, Super Decisions համակարգերը, որոնցում կիրառվում են տարբեր

¹⁰ Belton, Stewart 2002.

մեթոդներ: Լոկալ ցանցերում կիրառվող համակարգերից են Criterium DecisionPlus, Hiview3, Logical Decisions, MMACBETH, PriEsT AHP և մի շարք այլ համակարգեր: Վերոնշյալ համակարգերը բնութագրվում են նաև զգայունության վերլուծությունների, զույգային համեմատությունների, ինչպես նաև թիմային աշխատանքի հնարավորություններով:

1000 minds-ը որոշումների կայացման և համակարգային վերլուծության WEB պլատֆորմի վրա աշխատող համակարգ է, որի հեղինակն է 1000minds Ltd-ն, և որը կիրառվում է 2002 թվականից: 1000minds-ը իրականացնում է PAPRIKA մեթոդը և օգնում է բիզնեսին, կառավարություններին և ոչ առևտրային կազմակերպություններին, ինչպես նաև անհատ օգտագործողներին որոշումներ կայացնել՝ մի քանի նպատակներ կամ չափանիշներ (բազմաչափանիշային որոշումներ կայացնելիս) հաշվի առնելով: 1000 minds համակարգված վերլուծությունը ենթադրում է հարցումներ կատարել մարդկանց՝ իրենց նախասիրությունների վերաբերյալ արտադրանքի կամ հետաքրքրությունների թիրախ հանդիսացող այլ առարկաների բնութագրերի կամ հատկանիշների հարաբերական նշանակության վերաբերյալ: Բացի այդ, 2016-ին թողարկվեց սպառողի վրա հիմնված անվճար վեբ հավելված, որը հիմնված է 1000minds տեխնոլոգիայի վրա՝ օգնելու ամենօրյա որոշումների կայացմանը, որը հայտնի է որպես MeenyMo¹¹: Այս համակարգի միջոցով այլընտրանքների դասակարգումը, առաջնահերթությունը կամ ընտրությունը կատարվում են այն դեպքում, երբ անհրաժեշտ է միևնույն ժամանակ հաշվի առնել մի քանի չափանիշ: Կախված հարցումից՝ բյուջեները կամ այլ սահմանափակ ռեսուրսները կարող են բաժանվել նաև մրցակցային այլընտրանքների միջև՝ որոշման առավելագույն արժեքը բնորոշելու համար: PAPRIKA մեթոդը օգտագործվում է այլընտրանքները դասակարգելու ժամանակ չափանիշների կամ հատկանիշների հարաբերական կարևորությունը որոշելու համար և հիմնված է զույգ համեմատությունների վրա: 1000minds-ը նախատեսված է նաև խմբային որոշումների կայացման համար, որին կարող են մասնակցել 100-ից 1000 մասնակիցներ՝ անհատապես կամ միասին, և դրանց արդյունքները համակցված են: 1000minds-ը համատեղ վերլուծություն է իրականացնում սպառողների կամ այլ շահագրգիռ կողմերի նախասիրությունների վերա-

¹¹ <https://www.1000minds.com/>.

բերյալ՝ համեմատական կարևորության հատկանիշների կշիռները բնորոշելու առումով:

Ներկայումս կառավարչական որոշումների կայացման համակարգերն օգտագործում են նաև գլոբալ ցանցի սոցիալական հնարավորությունները, ինչպես հայտնի և բավական տարածված ցանցերի, այնպես էլ առանձին նշանակություն ունեցողների կիրառմամբ: Նմանատիպ համակարգերը առավելապես կիրառվում են հանրային կառավարման ոլորտում:

Ahoona-ը¹² անվճար սոցիալական ցանց է, որը հիմնված է «քրաուդսորսինգի»¹³ տարրերի վրա՝ օգնելով անհատներին ավելի լավ որոշումներ կայացնել իրենց առօրյա կյանքում: Որպես համակարգի մաթեմատիկական մոդել՝ կիրառվում է որոշումների կայացման ծառը: Սա որոշում կայացնող վեբ նախագիծ է, որում կառավարիչը որոշումների կայացման համար անհրաժեշտ տեղեկատվություն է ստանում, այնուհետև տալիս է առաջարկություններ: Համակարգում կիրառվող՝ այսպես կոչված «քրաուդսորսինգային» տարրերը ներառում են առավել լայն տեղեկատվություն, այլընտրանքներ, նախասիրություններ, անորոշություններ, դրական և բացասական տեղեկատվություն:

Որոշում կայացնելու վերաբերյալ առաջարկություն է արվում այն բանից հետո, երբ որոշման որակի տարրերը ստացվում են քրաուդսորսինգի միջոցով՝ որոշումների ընդունման ծառի հիման վրա, կիրառելով նաև «կշիռների» և արագության գործոնները: Ahoona-ն պահանջում է, որ մասնակիցները գրանցվեն իրենց իրական անուններով: Համակարգ մուտք գործելուց հետո օգտագործողը կարող է հրապարակել իր որոշումը: Կամայական առաջարկություններ կամ խորհրդատվություններ ստանալու փոխարեն հարցվողներին տրվում են որոշ կատեգորիաներին վերաբերող հստակ հարցեր, որոնց վերաբերյալ որոշում կայացնելու հետ կապված նրանք տալիս են պատասխաններ: Այս կատեգորիաները ներառում են որոշումների որակի վեց տարրերը. ընդհանուր պատկեր, այլընտրանք, նախապատվություններ, անորոշություններ, տեղեկատվության հստակեցում, դրական և բացասական տեսակետներ: Համակարգը մուտքային տվյալներն ստանալուց հետո կառուցում է որոշումների ծառը և հանրային

¹² Ahoona.com.

¹³ «Քրաուդսորսինգ»-ը բառացիորեն կարելի է թարգմանել ամբոխային տեղեկատվության աղբյուր: Այս տերմինը կիրառվում է նաև հանրային կառավարման տեսության մեջ:

կառավարման համակարգի համար մշակում որոշումների կայացմանը նպաստող առաջարկություններ:

Analytica¹⁴-ն վիզուալ ելքով ծրագրային փաթեթ է, որը մշակել է Lumina Decision Systems-ը՝ որոշումների կայացման քանակական մոդելներ ստեղծելու, վերլուծելու և փոխանցելու համար: Որպես մոդելավորման միջավայր՝ այս համակարգն ուշագրավ է նրանով, որ այն համատեղում է հիերարխիկ ազդեցության դիագրամները՝ վիզուալ մոդելների ստեղծման և դիտման, բազմաչափ տվյալների հետ աշխատելու համար «խելացի» տվյալների զանգվածների ստեղծման, Մոնտե Կառլոյի մեթոդի միջոցով ռիսկի և անորոշության վերլուծության և օպտիմալացման համար՝ ներառելով նաև գծային և ոչ գծային ծրագրավորման գործիքները: Ազդեցության դիագրամների ձևավորմանը ծառայող գծապատկերները և անորոշության մեկնաբանումները հիմնված են «կառավարչական որոշումների վերլուծության» ոլորտի գաղափարների վրա:

Վերլուծական մոդելները կազմակերպվում են ազդեցության դիագրամների տեսքով: Փոփոխականները գծապատկերում ցուցադրվում են սլաքներով միացված տարբեր ձևերի հանգույցների տեսքով, որոնք ապահովում են կախվածության վիզուալ ներկայացումը: Analytica ազդեցության դիագրամները կարող են լինել հիերարխիկ, որում դիագրամում գտնվող մեկ մոդուլային հանգույց ներկայացնում է մի ամբողջական ենթամոդել: Analytica համակարգում հիերարխիկ ազդեցության գծապատկերները ծառայում են որպես հիմնական կազմակերպչական գործիք: Համակարգի վիզուալ հնարավորությունները, անշուշտ, պարունակում են ավելի շատ և կառավարչական ստորաբաժանումների համար առավել ընկալելի տեղեկատվություն, քան այլ համակարգերում ներդրված էլեկտրոնային աղյուսակները և մաթեմատիկական արտահայտությունները:

Մոդելի արդյունքներում անորոշության գործոնի ներառումը օգնում է ապահովելու առավել իրատեսական և ինֆորմատիվ կանխատեսումներ: Համակարգում անորոշ քանակական ցուցանիշները հստակեցվում են բաշխման գործառնությունների միջոցով: Բաշխումը գնահատելիս ընտրվում են Մոնտե Կառլոյի ընտրանքները:

Կառավարչական որոշումների ընդունումը հաճախ հենվում է դինամիկ գործընթացների վրա: Մաթեմատիկական մոդելավորման գործիքա-

¹⁴ <https://lumina.com/>.

կազմը ներառում է դինամիկ ծրագրավորման մեթոդներ, մասնավորապես՝ հայտնի Բելլմանի մեթոդը, որը լայնորեն կիրառվում է որոշումների կայացման համար՝ ծրագրավորելով որոշում ընդունողի վարքագիծը որոշակի ժամանակահատվածում, կիրառելով կառավարող փոփոխականի արդեն իսկ հաշվարկված արժեքը դիտարկվող ժամանակահատվածում յուրաքանչյուր տարվա կամ ամսվա համար:

Criterion Decision Plus¹⁵-ը որոշումների կայացմանը նպաստող բազմագործոն համակարգ է: Ծրագրային ապահովումն իրականացնում է հիերարխիայի վերլուծական գործընթաց (AHP)՝ մի քանի հատկանիշների գնահատման մի պարզ մեթոդ (SMART), և օգտագործվում է այնպիսի ոլորտներում, որոնք են նյութագիտությունը և շրջակա միջավայրի պաշտպանությունը:

D-Sight¹⁶-ը ընկերություն է, որը մասնագիտացած է որոշումների աջակցման ծրագրային ապահովման և հարակից ծառայությունների վրա, մասնավորապես նախագծերի գերակայության բնորոշման, մատակարարների ընտրության և համատեղ որոշումների կայացման ոլորտում: D-Sight-ը մշակել է մի շարք ծրագրային լուծումներ, որոնք նպատակ ունեն աջակցել բարդ որոշումների կայացման գործընթացներին: Այս ծրագրային արտադրանքն օգտագործվում է արդյունաբերության բազմապիսի ոլորտներում՝ էներգետիկայում, բնական պաշարների արդյունահանման, քիմիական և դեղագործական արդյունաբերության մեջ և այլն:

D-Sight պորտֆոլիոն վաղաժամկետ որոշումների կայացման նախագծերի կառավարման պլատֆորմ է (PPM): Այն շահառուներին թույլ է տալիս հավաքել և կենտրոնացնել նախագծային հայտերի վերաբերյալ տվյալները և ստեղծել բիզնես-քեյս, իրականացնել նախագծային առաջարկների առաջնահերթություն և գնահատումներ,

ոեսուրսները բաշխել այն առաջարկների համար, որոնք առավելագույն օգուտ են բերում կազմակերպությանը՝ դրանով իսկ օպտիմալացնելով ծրագրի պորտֆելը:

D-Sight Sourcing-ը ռազմավարական հարթակ է մատակարարի ընտրության գործընթացը ստանդարտացնելու և հիմնավորելու համար: D-Sight համատեղ որոշումների կայացումը (CDM) ծրագրային ապահով-

¹⁵ https://en.wikipedia.org/wiki/Criterion_DecisionPlus.

¹⁶ <http://www.d-sight.com/>.

վածություն է, որն առաջարկում է տվյալների վրա հիմնված կառուցվածքային մոտեցում թիմի որոշումներին, որոնք կայացնելու համար հաշվի են առնում բազմաթիվ գործոններ:

Այդ գործոնները համատեղում են քանակական և որակական տեղեկատվությունը և հնարավորություն տալիս կայացնելու հիմնավորված, այլ ոչ թե ինտուիտիվ որոշումներ: D-Sight լուծումները կիրառում են նախապատվության գնահատման կազմակերպման մեթոդը (PROMETHEE)¹⁷՝ օգտագործելով ինտերակտիվ որոշումների կայացման համար երկրաչափական վերլուծություն (GAIA), ինչպես նաև բազմակի ատրիբուտների (MAUT) տեսությունը և վերլուծական հիերարխիայի գործընթացը (ANR):

DecideIT¹⁷-ը որոշումների կայացման առցանց ծրագիր է, որը հիմնված է բազմագործոն որոշումների կայացման վրա (MCDM): Ծրագիրն իրականացնում է Delta MCDM մեթոդը և օգտագործվում է համատեղ որոշումներ կայացնելիս, ինչպես նաև էներգետիկայում:

Decision Lens¹⁸-ը որոշումների կայացման առցանց համակարգչային ծրագիր է, որը հիմնված է բազմամակարդակ չափանիշների վրա: Այս համակարգերն իրականացնում են վերլուծական հիերարխիկ գործընթաց (AHP) ու վերլուծական ցանցային պրոցես (ANP) և օգտագործվում են այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են էներգետիկայում, բժշկական հետազոտությունները, նաև խմբային որոշումներ կայացնելու գործընթացում:

Expert Choice¹⁹-ը որոշումների կայացման բազմագործոնային համակարգ է: Expert Choice-ն իրականացնում է վերլուծական հիերարխիայի գործընթացը (AHP) և օգտագործվում է այնպիսի ոլորտներում, որոնք են արտադրությունը, շրջակա միջավայրի վերահսկողությունը, նավաշինությունը և գյուղատնտեսությունը: Այս համակարգում կարևորվում է ռիսկերի կառավարման տրամաբանությունը:

Hiview3²⁰-ը նույնպես բազմագործոնային չափանիշների լուծման (MCDM) ծրագիր է: Ծրագրակազմն օգտագործում է MCDM մեթոդներ: Համակարգն օգտագործվում է այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ճարտարագիտությունը և առողջապահությունը:

¹⁷ https://en.wikipedia.org/wiki/Criterion_DecisionPlus.

¹⁸ <https://www.preference.nu/decideit/>.

¹⁹ <https://www.expertchoice.com/2020>.

²⁰ <http://www.catalyzeconsulting.com/software/hiview3/>.

Intelligent Decision System-ը (խելացի որոշումների համակարգ) մի քանի չափանիշներով որոշումները վերլուծող ծրագրային փաթեթ է²¹։ Այն մշակման գործընթացում կարող է օգտագործել տարբեր տեսակի անորոշություններ, ներառյալ՝ հավանականային գնահատումները, բացակայող տվյալները, սուբյեկտիվ դատողությունները, ինտերվալային տվյալները և անորոշությունների ցանկացած համադրություն։ Այս համակարգը ատրիբուտների համախմբման նպատակով կիրառում է ապացուցողական հիմնավորումների վրա հիմնված մոտեցում։ Վերլուծության արդյունքները ներառում են ոչ միայն այլընտրանքային գործողությունների դասակարգումը՝ ելնելով միջին գնահատականներից, այլև թափանցիկ որոշումների ընդունման նպատակով այլընտրանքային լուծումների համախմբված բաշխումը։

Logical Decisions-ը որոշումների կայացման ծրագրային ապահովվածություն է, որը կիրառվում է բազմաչափանիշային որոշումների կայացման համար։ Տրամաբանական որոշումներն ընդունվում են բազմաբնույթ հատկությունների ուտիլիտետների տեսության (MAUT) կամ հիերարխիկ վերլուծական գործընթացի (AHP) միջոցով և օգտագործվում այնպիսի ոլորտներում, որոնք են առողջապահությունը և շրջակա միջավայրի կառավարումը։

Կատեգորիկ գնահատման մեթոդների օգտագործմամբ գրավչությունը չափելը MACBETH համակարգի հիմնական նպատակն է։ Դիտարկվում են գրավչության յոթ չափանիշներ՝ այն բացակայում է, շատ թույլ է, թույլ է, չափավոր է, ուժեղ է, շատ ուժեղ է, ծայրահեղ գրավչություն ունի։ MACBETH-ի վրա հիմնված համակարգը թույլ է տալիս գնահատել ընտրանքները՝ ըստ մի քանի չափանիշների։ MACBETH-ի և որոշ բազմագործոն որոշումների վերլուծության մեթոդների հիմնական տարբերությունն այն է, որ այստեղ անհրաժեշտ են երկու տարրերի միջև գրավչության տարբերությունների միայն որակական գնահատումները, որպեսզի յուրաքանչյուր չափանիշում տարբերակների համար թվային գնահատականներ ստեղծվեն և ապահովվի չափելիությամբ։

PriEsT-ը թարգմանաբար «առաջնահերթությունների գնահատման գործիք» անվանումն է, որը որոշումների կայացման բաց ելքային կոդով (open source) ծրագիր է։ Վերջինս իրականացվում է վերլուծական հիերար-

²¹ <http://www.intelligentdecisionsystems.com/>.

խիայի մեթոդով (AHP)՝ որպես խնդիրների լուծման համապարփակ կառուցվածք: PriEsT-ը կարող է օգնել որոշում կայացնողներին առաջնահերթություն տալ տվյալ սցենարում առկա տարբերակներից որևէ մեկին, նաև ապահովում է դրանց ավելացման ճկունությունը: PriEsT-ն լայնորեն կիրառվում է առողջապահության, տրանսպորտի, հեռահաղորդակցության ոլորտներում, ինչպես նաև քաղաքական որոշումներ կայացնելու համար:

PriEsT-ի հետ առնչվում են երկու կառավարչական հիմնախնդիրներ՝ դասակարգում և բյուջետավորում: Իր բաց լինելու շնորհիվ գործիքը հարմար է նաև գիտական հանրության համար:

PriEsT- ի հիմնական առանձնահատկություններն են՝

- զույգային համեմատությունների լայնորեն կիրառվող մեթոդաբանությունը՝ հիմնավորված դատողության ապահովման համար.
- առաջարկում է մի քանի ոչ գերիշխող լուծումներ՝ բազմանպատակային էվոլյուցիոն օպտիմիզացիայի միջոցով.
- կիրառում է հետազոտական նպատակներով գերակայությունները որոշելու համար լայնորեն օգտագործվող բոլոր մեթոդները.
- գրաֆիկորեն ներկայացնում և կարգաբերում է զույգային համեմատական դատողությունները:

Super Decisions-ը²² որոշումների կայացման համակարգ է, որն աշխատում է որոշումների ընդունման երկու բազմամակարդակ մեթոդների հիման վրա: Համակարգն իրականացնում է վերլուծական հիերարխիկ (AHP) և ցանցային (ANP) գործընթացներ: Այն օգտագործվում է բազմաթիվ հետազոտական և գործնական ոլորտներում (արտադրություն, շրջակա միջավայրի կառավարում, ավիացիա, փոքր հիդրոէլեկտրակայաններ և գյուղատնտեսություն):

Որոշումների կայացման տեղեկատվական համակարգերի վերը ներկայացված վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգելու, որ կառավարչական որոշումների ընդունման գործընթացն արդեն իսկ թվայնացվում է, և մաթեմատիկական ու ծրագրային ապահովումը օրվա հրամայական է: Կառավարման թվայնացման գործընթացը թվային տնտեսության կայացման կարևորագույն փուլերից է:

²² <https://www.superdecisions.com/downloads/>.

Կառավարչական որոշումների ընդունման և իրագործման տրամաբանությունը

Սովորաբար կառավարչական որոշումներն ընդունվում են հեռանկարային զարգացումների վերաբերյալ, իսկ ավելի հաճախ՝ իրավիճակային լուծումների և օպերատիվ կառավարման ընթացիկ խնդիրների կարգավորման նպատակով: Երկու դեպքում էլ նախքան որոշման կայացումը հարկ է հանգամանորեն ճշգրտել որոշման առարկան կամ ինչպես ընդունված է տեսության մեջ՝ **ախտորոշել հիմնախնդիրը**: Այս հարցում էական է լուծման ենթակա ընթացիկ իրավիճակի կամ ապագայի վերաբերյալ ճշգրիտ և համակողմանի տեղեկություններ ունենալը: Դրանք հաճախ կարող են վերաբերել թե՛ ներկազմակերպական, թե՛ արտաքին (շուկա, տեխնոլոգիաներ, սոցիալ-տնտեսական, քաղաքական գործոններ) միջավայրերին: Հանրային կառավարման և գործարարության ոլորտում որոշման առարկա յուրաքանչյուր գործընթաց պայմանավորված է մեծաթիվ գործոններով: Այս առումով տեղեկություններ հավաքելը, դրանք արագ մշակելը, գլխավորը երկրորդականից տարբերելը խնդիրներ են, որոնց ճշգրիտ լուծումը հնարավոր է թվային տեխնոլոգիաների լայն կիրառմամբ: Համեմատաբար նվազ բարդություններ կարող են առաջանալ իրավիճակային լուծումների պարագայում, քանի որ նման դեպքերում հարկ է լինում որոշումներով շտկել փաստացի շեղումները ծրագրային ցուցանիշներից, իսկ այդ իրավիճակներում հարաբերաբար քիչ են ու կանխատեսելի երևույթի վրա ազդող գործոնները: Առավել բարդ է հեռանկարային ծրագրերի վերաբերյալ որոշումների ընդունումը, քանի որ անորոշությունը և հնարավոր ռիսկերը նշանակալի են: Թվային տեխնոլոգիաներով և մաթեմատիկական մեթոդներով վերլուծությունները, որոնք ավելի հարուստ են ու ճշգրիտ, քան վիճակագրական նյութերը, հնարավորություն ընձեռելով նվազեցնելու անորոշության միջավայրը ու կանխատեսելու ռիսկերը, հիմք են հանդիսանում ճշգրտելու ապագայի հիմնախնդիրները, կանխագուշակելու դրանց լուծումների տարբերակները և ընդունելու ռազմավարական նշանակության որոշումներ:

Չափանիշները, որ սովորաբար վերաբերում են որոշումների որակին, սահմանվում են՝ հիմք ընդունելով կառավարման մարմինների նպատակները: Վերջիններս որոշվում են՝ գնահատելով կազմակերպության ներուժը, շուկայական միջավայրը, նորամուծական կանխատեսումները,

որոնք ավելի հստակ կարող են սահմանվել՝ գործադրելով թվային տեխնոլոգիաները:

Կառավարչական որոշումների ընդունման համար գերազանցապես կարևորվում են ռեսուրսային (նյութական, մարդկային, ֆինանսական), շուկայական (տարողություն, գներ, որակ) մրցակցային **սահմանափակումները**, որոնց ցուցանիշները քանակական մեթոդներով և ըստ տարբերակների՝ կարող են կանխատեսվել թե՛ կարճաժամկետ, թե՛ երկարաժամկետ հորիզոններով:

Հիմնախնդրի ախտորոշումից և սահմանափակումների սահմանումից հետո կարևոր է բացահայտել դրա լուծման հնարավոր **այլընտրանքները, որոնցից ընդունվելու է մեկը**: Այլընտրանքների ամբողջական բացահայտումը ճշգրիտ և նպատակահարմար որոշման ընդունման էական նախադրյալ է: Հաճախ կառավարչական գործունեության ընթացքում ժամանակը «չի հերիքում», հարկ է լինում արագ արձագանքել ստեղծված իրավիճակներին, նաև զգացվում է տեղեկությունների պակաս. միշտ չէ, որ այլընտրանքների բացահայտման գործում կիրառվում է մասնակցային կառավարման, նույնն է, թե ուղեղային գրոհի մեթոդը, և այդ ու նման պատճառներով չեն դիտարկվում բոլոր հնարավոր այլընտրանքները: Թվային տեխնոլոգիաները՝ հարուստ տեղեկատվական բազան, տեսախորհրդաժողովները և այլն, այս խնդրի լուծման գործում նույնպես չափազանց կարևոր են և հնարավորություն կարող են ընձեռել հաղթահարելու վերը նշված պատճառները և բացահայտելու այլընտրանքների անհրաժեշտ տարբերակները:

Ռազմավարական ծրագրերի մշակման պարագայում այլընտրանքների բացահայտումն առնչվում է ապագայի անորոշությունը մեղմելու համար տեղեկատվության ստացման, մասնավորապես՝ նյութական, մարդկային, ֆինանսական ռեսուրսների գնահատման, ներքին ու արտաքին միջավայրերի գործոնների հաշվառմամբ տարբերակների կանխատեսումային հաշվարկների և հնարավոր արդյունքների կանխատեսման հետ: Նշված բարդագույն հաշվարկները կարող են կատարվել կանխատեսման հայտնի մեթոդների համախմբի (էքստրոպոլյացիա, փորձագիտական եղանակներ, մաթեմատիկական մեթոդներ) և թվային տեխնոլոգիաների զուգակցմամբ:

Հիմնավոր կառավարչական որոշումների ընդունման համար էական է բացահայտված այլընտրանքների համեմատական գնահատումը: Այդ

նպատակով համադրվում են այլընտրանքային տարբերակների գործադրման ելքային արդյունքները միմյանց և նախապես սահմանված չափանիշների հետ: Ելքային արդյունքները հաշվարկվում են վերը նշված կանխատեսումային մեթոդների և թվային տեխնոլոգիաների միջոցով: Առավել պարզ, ոչ բազմագործոն խնդիրների դեպքում բավարար կարող են լինել նաև ֆինանսավիճակագրական մեթոդները: Նախապատվությունը տրվում է այն տարբերակին, որն ապահովում է հիմնախնդրի արդյունավետ ու սահմանված չափանիշներին համապատասխան լուծումը:

Կառավարչական որոշման ընդունումը կառավարչի (ղեկավարի) կամ կոլեգիալ մարմնի լիազորությունն է, որը կատարվում է այլընտրանքների գնահատման արդյունքների հիման վրա:

Թեև տրամաբանական է այն, որ ընտրվի լավագույն տարբերակը, և ըստ այդմ ընդունվի որոշումը, սակայն հաճախ նախապատվությունը տրվում է կոմպրոմիսային տարբերակին, քանի որ կազմակերպությունը համակարգ է, ուստի հարկ է հաշվի առնել տարբեր ենթահամակարգերի շահերը և ընդունել փոխհամաձայնեցված կառավարչական որոշում:

Այլընտրանքներից կատարվող ընտրությունը մեծապես կախված է նաև ղեկավարի առաջնորդման ոճից, որին դեռ կանդրադառնանք:

Կառավարչական որոշումն ընդունելուց հետո կարևորվում է **դրա կատարման ապահովումը**, որը ենթադրում է կատարել հետևյալ պարտադիր գործողությունները.

– ընտրել որոշումը կատարողների կազմը՝ հաշվի առնելով նրանց մասնագիտական կարողությունները, փորձը: Ցանկալի է, որ որոշման կատարմանը ներգրավվեն նաև նրանք, ովքեր մասնակցել են դրա ընդունմանը,

– սահմանել որոշման կատարման ժամանակացույցը, փուլային և վերջնական արդյունքները,

– ապահովել որոշման կատարման գործընթացն անհրաժեշտ նյութական, ֆինանսական և տեղեկատվական ռեսուրսներով, կատարողների համար մոտիվացիոն խթաններով,

– իրականացնել վերահսկողություն որոշման կատարման ընթացքի նկատմամբ՝ հընթացս ճշգրտելով պահանջվող ռեսուրսների և ստացվելիք արդյունքների ցուցանիշները: Թվային տեխնոլոգիաները էականորեն կարող են բարձրացնել նման հետադարձ կապի արդյունավետությունը:

Կառավարչական որոշումների ընդունման սուբյեկտները և առաջնորդումը

Կառավարչական որոշումների ընդունման լիազորությունները մակրոմակարդակի համար սահմանվում են երկրի սահմանադրությամբ և ոլորտային օրենքներով, միկրոմակարդակի համար՝ օրենսդրական ակտերով և կազմակերպությունների կանոնադրությամբ: Իբրև որոշումների ընդունման առաջին սուբյեկտներ են այն կոլեգիալ մարմինները, որոնք ունեն գծային լիազորություններ: Այդպիսիք են, օրինակ, մակրոմակարդակում՝ կառավարությունը, կենտրոնական բանկի խորհուրդը, տեղական ինքնակառավարման համակարգում՝ համայնքի ավագանին, որի որոշումները ենթակա են կատարման համայնքի տարածքում, գործարարության ոլորտում՝ բաժնետիրական ընկերության տնօրենների խորհուրդը, կրթության բնագավառում՝ բուհերի կառավարման (հոգաբարձուների) խորհուրդը և այլն:

Կառավարչական որոշումների ընդունման հաջորդ պատասխանատու սուբյեկտներն են գործադիր իշխանության, գերատեսչությունների, մարզերի, համայնքների և կազմակերպությունների ղեկավարները, որոնք երկրի հիմնական օրենքով, առանձին ոլորտային օրենքներով և կազմակերպությունների կանոնադրությամբ օժտվում են իրենց վերապահված գործունեության բնագավառը ինքնուրույն և անձնական պատասխանատվությամբ ղեկավարելու իրավասություններով:

Քանի որ մեծավ մասամբ նշված ղեկավարները նաև գլխավորում են կոլեգիալ մարմինների գործունեությունը, ուստի նրանց առաջնորդման ոճի հատկանիշները հիմնականում պայմանավորում են ընդունվող բոլոր կառավարչական որոշումների որակը և դրանց կատարման ապահովումը: Հետևաբար, բացի օբյեկտիվ հանգամանքներից, որոնք կարող են ունենալ հասարակական-քաղաքական, տնտեսական, արտադրական, գիտատեխնիկական, շուկայական, մրցակցային բնույթ, կառավարչական որոշումների ընդունման որակի վրա ներազդում են ղեկավարի անձնական հատկանիշները (գիտելիքները, հմտությունները, փորձը), վարքագիծը ենթակաների հանդեպ, իրավիճակի գնահատման կարողությունը, որոնք պայմանավորում են առաջնորդելու իրեն յուրահատուկ ոճը: Կառավարման տեսության մեջ այդ առումով առանձնացվում է չորս ոճ՝ դիրեկտիվ, վերլուծական, հայեցակարգային, վարքաբանական²³: Նշված ոճերը նման են

²³ Տե՛ս Дадт 2013, 281-282:

առաջնորդման հայտնի վարքաբանական և իրավիճակային տեսություններով բնութագրվող լիբերալ կամ ազատական ժողովրդավարական և ավտորիտար կամ միահեծան առաջնորդման ոճերին²⁴։ Վերջինին նման է դիրեկտիվ ոճը, որը, ըստ Ռ.Լ. Դաֆտի, բնութագրվում է նրանով, որ ղեկավարը նախընտրում է հիմնախնդրի լուծման պարզ եղանակները, չի սիրում վերլուծել մեծածավալ տեղեկատվությունը, որոշումներն ընդունում է արագ, դիտարկում է հարցի լուծման մեկ-երկու տարբերակ, գործում է արդյունավետ և ռացիոնալ՝ օգտվելով գործող կանոններից և սահմանված կարգերից²⁵։ Վերլուծական ոճի ղեկավարը տարբերվում է նախորդից նրանով, որ նա ձգտում է վերլուծել կառավարման համակարգից և արտաքին աղբյուրներից ստացվող տեղեկատվությունը, դիտարկում է խնդրի լուծման բոլոր տարբերակները և ընդունում համալիր որոշում։ Ի տարբերություն նախորդ երկուսի՝ հայեցակարգային և վարքաբանական ոճ նախընտրող ղեկավարները գնահատում են ոչ միայն տեղեկատվության վերլուծության նշանակությունը, այլև քննարկում են հիմնախնդիրը ենթակայների հետ, հաշվի առնում կոլեկտիվի անդամների շահերը²⁶։ Այս ոճն ակնհայտորեն իր բովանդակությամբ ժողովրդավարական է՝ խմբային կառավարման հատկանիշներով։ Ի դեպ, նման ոճի գործադրումը հնարավորություն է ընձեռում բացառելու կամ կրճատելու Ռ. Դաֆտի ձևակերպած կառավարչական որոշումների ընդունման ընթացքում մենեջերներին բնորոշ վեց հետևյալ բացթողումները²⁷։

– առաջին տպավորության ազդեցությունը՝ իբրև առաջինը ստացած տեղեկատվություն կամ նախորդ տարիների միտումները,

– ձգտումը արդարացնելու նախապես ընդունված ոչ ճիշտ որոշումները,

– ցանկալին իրականության տեղ ընդունելու հակումը,

– ստատուս-քվոյի պահպանումը,

– էմոցիաների ազդեցությունը,

– ավելորդ ինքնավստահությունը։

Ինչպես նշվել է, XXI դարում փոխվում է մենեջմենթի՝ որպես հասարակական գիտակցության դրսևորման եղանակի և կառավարման պրակտիկայի պարադիգման, մասնավորապես տիրապետող են դառնում կա-

²⁴ Ст'у Мескон, Альберт, Хедоури 2000, 490-510:

²⁵ Ст'у Дафт 2013, 281:

²⁶ Ст'у Дафт 2013, 282:

²⁷ Ст'у Дафт 2013, 282-284:

ռավարման կազմակերպչական ճկուն կառուցվածքները (նախագծային, մատրիցային), խմբային և մասնակցային կառավարումը, ցանցային համակարգչային տեղեկատվական համակարգերը՝ իբրև կառավարման գործիքներ, կապիտալային ռեսուրսներին զուգընթաց՝ առաջին պլան են մղվում տեղեկատվական ռեսուրսները, մեխանիկական տեխնոլոգիաներին փոխարինում են էլեկտրոնային համակարգերը, հիմնական ակտիվը դառնում է ինտելեկտը, համընդհանրացման պայմաններում մենեջմենթի շրջանակները չեն սահմանափակվում առանձին կազմակերպություններով կամ երկրներով, այլ դառնում են միջազգային²⁸: Այս պայմաններում առաջնորդումը դառնում է ժողովրդավարական, խիստ սահմանափակվում է ավտորիտար կառավարման ոլորտը, ղեկավարներին ներկայացվող պահանջների մեջ կարևորվում են բարձր ինտելեկտը, սոցիալական և համընդհանրացման պահանջներին արձագանքելու կարողությունները: Այսպիսով, արդի պայմաններում և ապագայում կառավարչական որոշումների ընդունման տեղեկատվական-տեխնիկական հնարավորությունների ընդլայնումը հարկ է զուգակցել ղեկավարների մտավոր կարողությունների ավելացման և առաջնորդելու ժողովրդավարական-մասնակցային ոճի արմատավորման հետ թե՛ հանրային կառավարման, թե՛ գործարարության ոլորտներում:

Ինչպես գնահատել կառավարչական որոշումների ազդեցությունը հանրային կառավարման և գործարարության ոլորտներում

Ընդունվող և իրագործվող կառավարչական որոշումները պայմանավորում են երկրի և առանձին կազմակերպությունների զարգացման ուղղությունները, տնտեսական ու սոցիալական մակարդակը, ռազմավարական-մրցակցային դիրքը և անվտանգային համակարգը:

Կառավարչական որոշումները բազմաբնույթ են. դրանք վերաբերում են ռազմավարությանը, կառավարման կազմակերպմանը, ռեսուրսների օգտագործմանը, օպերատիվ կառավարմանը և այլն:

Պարզագույն մոտեցմամբ կառավարչական որոշումների ազդեցության գնահատականը ստացվող արդյունքներն են. եթե դրանք բարձր են, ապա որոշումների ազդեցությունը դրական է, և հակառակը: Նման մոտեցումը, սակայն, խիստ ընդհանուր է, մանավանդ արդյունքների բարձր

²⁸ Տե՛ս մանրամասն Մենեջմենթ 2016, 632-635:

կամ ցածր լինելը հարաբերական է: Հարկ է նաև հաշվի առնել, որ յուրաքանչյուր որոշում իր գինը կամ ծախսատարությունն ունի, հետևաբար անհրաժեշտ է համադրել արդյունքը կատարված ծախսերին: Այս առումով հանրային կառավարման և գործարարության բնագավառներում կառավարչական որոշումների ազդեցությունը գնահատելու տարբերակ է կառավարման քանակական և որակական արդյունավետության ցուցանիշների համակարգը²⁹: Քանակական արդյունավետությունն արտահայտում է համախառն ներքին արդյունքի (կազմակերպություններում՝ վաճառքի ծավալի) և կատարված ծախսերի հարաբերակցությունը: Եթե արդյունավետությունը բարձր է, ապա կառավարչական որոշումները դրսևորել են դրական ազդեցություն: Որակական արդյունավետության ցուցանիշը արտացոլում է սահմանված նպատակների կատարման արդյունքները: Եթե փաստացի արդյունքների և նպատակների համադրումը դրական է, ապա քանակական արդյունավետության բարձրացումը ապահովել է կառավարչական որոշումներով ամրագրված նպատակների իրագործումը: Մնում է պարզել, թե արդյոք ճիշտ են սահմանվել նպատակները, որքանով է հիմնավոր իրականացվող տնտեսական, սոցիալական, գիտատեխնիկական և անվտանգային քաղաքականությունը: Այս խնդիրը մեթոդաբանական առումով կարող է լուծվել հետևյալ մոտեցումներով.

– գնահատել երկրի (կազմակերպության) ռեսուրսային ներուժը և համադրել սահմանված նպատակների հետ: Մասնավորապես՝ մակրոմակարդակում ներուժը գնահատելու համար ներառել հողային, անտառային, ջրային ռեսուրսները, ընդերքի երկրաբանական գնահատականը, մարդկային ռեսուրսները, գիտական ու նորամուծական հնարավորությունները, արտադրական և ծառայությունների կարողությունները,

– հանրային կառավարման առումով կիրառել միջազգային պրակտիկայում հայտնի միջերկրային համեմատությունների ինդեքսային մեթոդը (օրինակ՝ մարդկային զարգացման ինդեքսը),

– գործարարության ոլորտում բաղդատել համադրելի կազմակերպությունների համար շուկայական ցուցանիշները (վաճառքի ծավալ, շահութաբերություն, մասնաբաժինը շուկայում, արտադրանքի որակ և այլն):

²⁹ Այդ ցուցանիշների հաշվարկման սկզբունքները մանրամասն տե՛ս Սուվարյան, Սարգսյան, Սուվարյան 2019, 93-120:

Կառավարչական որոշումների հետևանքների գնահատումը հետագարձ կապի կարևոր միջոց է՝ դրանց ընդունման ու իրագործման հիմնավորվածությունը գնահատելու և մեթոդաբանությունը կատարելագործելու համար:

Եզրակացություններ

XX դարում և XXI դարի սկզբում կառավարչական որոշումների տեսությունը հասարակական-տնտեսական կյանքի, մասնավորապես՝ գիտության, կրթության, գործադրվող տեխնոլոգիաների զարգացման հիման վրա հարստացել է հայեցակարգային նոր սկզբունքներով ու գործիքակազմով, որոնցից հատկապես ուշագրավ են տնտեսամաթեմատիկական մեթոդների և մոդելների կիրառությունը որոշումների ընդունման գործընթացում ու դրա ժողովրդավարացումը՝ իշխանության և առաջնորդման առաջադիմական ոճերի գերակայության միտումների շնորհիվ:

Ներկայումս կառավարչական որոշումների ընդունման ու իրագործման սկզբունքների և մեթոդների զարգացման նոր հնարավորություններ են ընձեռում թվայնացումը, հատկապես՝ տեղեկատվական տեխնոլոգիաները և մաթեմատիկական լուծումները: Տեղեկատվական համակարգերի արդի զարգացումները տանում են դեպի կառավարչական գործունեության մեջ արհեստական բանականության կիրառումների, որոնցից են գիտելիքների հենքով և որոշումների կայացմանը նպաստող համակարգերը: Դրանց գործադրմամբ էականորեն բարեփոխվում և ավելի հիմնավոր են դառնում կառավարչական որոշումների փուլային ընդունման և իրագործման ապահովման գործընթացները: Միաժամանակ օբյեկտիվ անհրաժեշտություն է կառավարման միկրո և մակրո մակարդակներում կառավարչական որոշումների կայացման տեղեկատվական տեխնոլոգիաների և մաթեմատիկական լուծումների նոր հնարավորությունները զուգակցել առաջնորդման ժողովրդավարական-մասնակցային ոճի արմատավորման հետ:

Հանրային կառավարման և գործարարության ոլորտներում կառավարչական որոշումների ազդեցության գնահատումը հնարավոր է կառավարման քանակական ու որակական արդյունավետության ցուցանիշների, ինչպես նաև տնտեսական, սոցիալական, գիտատեխնիկական և անվտանգային քաղաքականության ռազմավարական նպատակների հիմնավորվածության վերլուծության արդյունքների համադրմամբ:

Գրականություն

- Մենեջմենթ 2016, Յու. Մ. Սովարյանի ընդ. խմբ., Երևան, «Տնտեսագետ», 672 էջ:
- Սովարյան Յու.Մ., Սարգսյան Վ.Ա., Սովարյան Ա.Ս. 2019, Հանրային կառավարման մեթոդաբանական հիմնախնդիրներ, Երևան, «Գիտություն», 239 էջ:
- Герчикова И.Н. 1995, Менеджмент, Москва, «Банки и биржи», 480 с.
- Дафт Р.Л. 2013, Менеджмент, СПб., «Питер», 656 с.
- Дешко И.П. Ковалев С.Н. и др. 2005, Информационные и коммуникационные технологии, под ред. проф. Сигова А.С., Москва, «МГУПЭА», 148 с.
- Друкер П.Ф. 2001, Задачи менеджмента в XXI веке, Москва, «Вильямс», 272 с.
- Жар холодных чисел 2020, «В мире науки», N 3, с. 58-61.
- Кунц Г., О’Доннел С. 1981, Управление: системный и ситуационный анализ управленческих функций, т. 1, Москва, «Прогресс», 496 с.
- Мескон М., Альберт М., Хедоури Ф. 2000, Основы менеджмента, Москва, «Дело», 704 с.
- Прокофьев О.В., Семочкина И.Ю. 2010, Управление профессиональной социализацией выпускников вуза на рынке труда. Современные информационные технологии, N 12, с. 80-85.
- Семочкина И.Ю., Прокофьев О.В. 2013, Воздействие на профессиональное самоопределение выпускников рынка труда и факторов социально-экономического развития. Современные информационные технологии, N 18, с. 133-140.
- Dyer J.S. 1973, A time-sharing computer program for the solution of the multiple criteria problem, Management Science, 19: 1379-83.
- Wallenius J., Dyer J.S., Fishburn P.C., Steuer R.E., Zionts S. and Deb K. 1992, Multiple Criteria Decision Making, Multiattribute Utility Theory: The Next Ten Years, Management Science, N 38, 645-54.
- Koksalan M., Wallenius J., Zionts S. 2011, Multiple Criteria Decision Making: From Early History to the 21st Century, World Scientific Publishing, Singapore, 197 p.
- Weistroffer H.R., Li Y. 2016, Multiple Criteria Decision Analysis Software, Ch 29 in: Greco S., Ehrgott M., Figueira J. (eds), Multiple Criteria Decision Analysis: State of the Art Surveys Series, New York, Springer, p. 969-1009.
- Oleson S. 2016, Decision Analysis Software Survey, OR/MS Today 43(5), <https://pubsonline.informs.org/doi/10.1287/orms.2016.05.13/full/>.

Belton V, Stewart T.J. 2002, Multiple Criteria Decision Analysis: An Integrated Approach, Boston, Kluwer, 372 p.

<https://www.1000minds.com/>.

Ahoona.com, <https://en.wikipedia.org/wiki/Ahoona>, This page was last edited on 28 September 2019, at 01:25 (UTC).

https://en.wikipedia.org/wiki/Criterium_DecisionPlus, This page was last edited on 16 September 2019, at 20:16 (UTC).

<http://www.d-sight.com/>, created 2015.

<https://www.preference.nu/decideit/>, created 2018.

<https://www.decisionlens.com/>, created 2020.

<https://www.expertchoice.com/>, created 2020.

<http://www.intelligentdecisionsystems.com/>, created 2015.

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Յուրի Սուվարյան, Վարդան Սարգսյան

Ամփոփում

XX դարում և XXI դարի սկզբին կառավարչական որոշումների տեսությունը գիտության, կրթության և դրանցով պայմանավորված տեխնոլոգիաների զարգացման շնորհիվ հարստանում է հայեցակարգային նոր սկզբունքներով և գործիքակազմով. տիրապետող է դառնում կառավարման ժողովրդավարական ոճը՝ հակառակ ավտորիտարի, մասնագետների կրթական մակարդակի համահարթեցումը օբյեկտիվորեն հանգեցնում է դրանց կայացման խմբային (մասնակցային) եղանակին, մշակվել և կիրառվում են այլընտրանքներից լավագույն տարբերակի ընտրության տնտեսամաթեմատիկական մոդելներ, թվային տեխնոլոգիաներ, որոնց շնորհիվ աճում են կայացվող որոշումների հիմնավորվածությունը, օպերատիվությունը, դրանց կատարման նկատմամբ վերահսկողության և հետադարձ կապի արդյունավետությունը:

Տեղեկատվական համակարգերի զարգացումը կառավարման գործընթացներում հանգեցնում է դեպի արհեստական բանականություն կիրառման, և արդեն իսկ սկսում են կիրառվել գիտելիքների հենքով (KBS) և որոշումների կայացմանը նպաստող (DSS) համակարգերը: Ներկայումս կիրառվող DSS ծրագրային հավելվածների ապահովման մեծ մասը կենտրոնացած է կառավարչական որոշումների ընդունման գործընթացներում լուծումների դասակարգման և գերակայությունների կամ այլընտրանքային տարբերակներից մե-

կի ընտրության չափանիշների բացահայտման վրա: DSS ծրագրային ապահովման ծանրակշիռ հատվածը հիմնված է բազմագործոնային և բազմամակարդակ որոշումների կայացման մաթեմատիկական մեթոդների վրա:

Բացի օբյեկտիվ գործոններից, որոնք կարող են ունենալ հասարակական-քաղաքական, տնտեսական, արտադրական, գիտատեխնիկական, շուկայական, մրցակցային բնույթ, կառավարչական որոշումների որակի վրա ներազդում են ղեկավարի անձնական հատկանիշները, վարքագիծը ենթակաների հանդեպ, իրավիճակի գնահատման կարողությունը, այսինքն՝ առաջնորդելու իրեն յուրահատուկ ոճը: Այդ առումով կառավարման տեսության մեջ հայտնի չորս ոճերից (դիրեկտիվ, վերլուծական, հայեցակարգային, վարքաբանական) կառավարման պարադիգմատիկ փոփոխությունների շնորհիվ և թվային տեխնոլոգիաների տիրապետման պայմաններում կարևորվում է կառավարչական որոշումների ընդունման ժողովրդավարական-մասնակցային ոճի արմատավորումը թե՛ հանրային կառավարման, թե՛ գործարարության ոլորտներում:

Կառավարչական որոշումների ազդեցությունը հանրային կառավարման և գործարարության ոլորտների գործունեության արդյունքների վրա կարելի է գնահատել կառավարման քանակական և որակական արդյունավետության ցուցանիշներով՝ հաշվի առնելով երկրի (կազմակերպության) սահմանված ռազմավարական նպատակների և ներուժի հարաբերակցությունը:

Բանալի բառեր՝ կառավարչական որոշումներ, տնտեսամաթեմատիկական մեթոդներ, թվային տեխնոլոգիաներ, առաջնորդման և որոշումների ընդունման ոճեր, խմբային ու մասնակցային կառավարում, կառավարման արդյունավետություն, կառավարչական որոշումների ազդեցության գնահատում:

К ВОПРОСАМ О ТЕОРИИ УПРАВЛЕНЧЕСКИХ РЕШЕНИЙ

Юрий Суварян, Вардан Саркисян

Резюме

На протяжении XX века и в начале XXI века теория принятия управленческих решений в результате развития науки, образования и обусловленных ими технологий обогащается концептуально новыми принципами и инструментариями: вопреки авторитарному доминирует демократический стиль управления. Нивелирование образовательного уровня специалистов объективно приводит к групповому (партиципативному)

способу их принятия, разработке и применению экономико-математических моделей и цифровых технологий принятия оптимального варианта из возможных альтернатив, позволяющих повысить обоснованность и оперативность решений, а также эффективность контроля над их выполнением и обратной связи.

Развитие информационных технологий приводит к использованию в процессах управления элементов искусственного интеллекта, в частности, уже внедряются системы, основанные на знаниях (KBS) и способствующие принятию решений (DSS). Применяемая в настоящее время большая часть программных приложений DSS направлена на классификацию возможных решений и выявление приоритета и критериев выбора из множества альтернатив в процессе принятия управленческих решений. Существенная часть программного обеспечения DSS основана на математических методах принятия многофакторных и многоуровневых решений.

Кроме объективных факторов, которые имеют общественно-политический, экономический, производственный, научно-технический, рыночный, конкурентный характер, на качество управленческих решений оказывают влияние также личностные характеристики (свойства) руководителя, манера поведения в отношении подчиненных, умение оценить ситуацию, т.е. свойственный ему стиль лидерства. С этой точки зрения в теории управления известны четыре стиля принятия решений (директивный, аналитический, концептуальный, поведенческий), из которых благодаря парадигматическим изменениям в управлении и в условиях доминирования цифровых технологий важное значение придается внедрению в сферах общественного управления и бизнеса демократического-партиципативного стиля принятия управленческих решений.

Влияние управленческих решений на конечные результаты сфер общественного управления и бизнеса можно оценить показателями эффективности управления с учетом соотношения установленных целей и потенциала страны (организации).

Ключевые слова – управленческие решения, экономико-математические модели, цифровые технологии, стили лидерства и принятия решений, групповое и партиципативное управление, эффективность управления, оценка влияния управленческих решений.

ARROUND THE ISSUES OF ADMINISTRATIVE DECISIONS THEORY

Yuri Suvaryan, Vardan Sargsyan

Abstract

In the XX century and at the beginning of the XXI century, the theory of administrative decisions was enriched with new conceptual principles and tools due to the development of science, education and technologies. In contrast to the authoritarian, the democratic style of governance is becoming dominant. The leveling of the educational sphere of specialists objectively leads to the group (participatory) method of decision-making process. Applied economic-mathematical models, digital technologies were developed, which increases the decisions justification, efficiency, control over their implementation and feedback efficiency.

The development of information systems in management process leads to the applications of artificial intelligence, the knowledge-based (KBS) and decision support systems (DSS) systems that are already being used. Most of the DSS software applications focus on classifying and prioritizing solutions or identifying one of the alternatives in management decision-making processes. The bulk of DSS software is based on mathematical methods of multi-factor and multi-level decision making. In addition to the objective factors that can have socio-political, economic, industrial, scientific, technical, market, competitive nature, the quality of management decisions is influenced by personal characteristics, behavior towards subordinates, ability to assess the situation, that means unique style of leadership. In this sense, due to the paradigmatic changes in governance from the four well-known styles of management theory (directive, analytical, conceptual, behavioral), in the conditions of mastery of digital technologies, in the areas of public and business administration democratic-participatory style of decision-making is underlined. The impact of administrative decisions on the results of public administration and business activities can be assessed by quantitative and qualitative indicators of management efficiency, taking into account the ratio of strategic goals and potential of the country (organization).

Key words – management decisions, economic-mathematical methods, digital technologies, styles of leadership and decision-making, group and participatory management, management efficiency, impact assessment of management decisions.

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍԻՍ/ԱՐԱՐԱՏԸ՝ ՀԱՅՈՑ ՕԼԻՄՊՈՍ ԵՎ ՆՐԱ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ*

Արմեն Պետրոսյան

Բանասիրական գիտությունների դոկտոր

ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, գլխավոր գիտաշխատող

ՀՀ, Երևան, Չարենցի փ. 15

Էլ. հասցե՝ alpehist@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 13.01.2020, գրախոսվել է 13.01.2020, ընդունվել է
տպագրության 05.08.2020

Բարձրանում է նա տիեզերքի սրտին՝

Ալեգարդ գլուխը Աստծու կրծքին...

Ավետիս Ահարոնյան, «Մասիս»

Ներածություն

Մասիսը Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր լեռն է: Վերջին տվյալներով, նրա բարձրությունը 5137 մ է (առաջ նշվում էր 5165 մ), սակայն, հաշվի առնելով գագաթի հաստ ծյունածածկույթը, լեռան իրական բարձրությունը կարող է ավելի փոքր լինել՝ մինչև 5125 մ: Ներկայումս հանգած հրաբուխ է, որը վերջին անգամ գործել է 1840 թ.: Հարաբերական բարձրությամբ (ստորոտից մինչև գագաթ) աշխարհի ամենաբարձր լեռն է (4300 մ հյուսիս-արևելքում), միակը Հայկական լեռնաշխարհում, որ ծածկված է հավերժական ձյունով: Լեռան հյուսիսարևելյան լանջին՝ ստորոտից մինչև գագաթ, շուրջ 10 կմ ձգվում է «Վիհ Մասեաց» խորխորատը (առավելագույն խորությունը գագաթի մոտ՝ 1000 մ): Մասիսը գտնվում էր Հայքի արքայանիստ Այրարատ նահանգի կենտրոնական Արարատյան դաշտի (Արաքսի հովտի) հարավում, այսինքն՝ պատմական Հայաստանի բուն սրտում: Ակնհայտ է, որ այն իր վիթխարի բարձրությամբ, հավերժական ձյուններով, կենտրոնական դիրքով և վեհաշուք գեղեցկու-

* Հոդվածը հրատարակվում է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ 18Դ-6Բ286 թեմատիկ ֆինանսավորման գիտական թեմայի շրջանակում:

թյամբ հզոր ազդեցություն պետք է ունենար երկրի հին բնակիչների վրա և նշանակալի դեր կատարեր նրանց առասպելաբանական պատկերացումներում:

Վահագնը «Վիպասանքում»

Մասիսի հետ կապված հայոց հին առասպելները, մշակված և վիպականացած տարբերակով, հայտնի են «Վիպասանք» էպոսից՝ ավանդված Խորենացու պատմության մեջ: Էպոսի առաջին մեծ հերոսը հայոց Տիգրան արքան է, հակառակորդը մարաց Աժդահակ արքայի (իրանական առասպելաբանության վիշապ Աժի Դահակայի պատմականացած կերպարն է): Աժդահակը խորհրդականներին պատմում է իր երազը՝ հերոսի ծնունդը Հայաստանի մի բարձր գագաթին, որը «սաստկութեամբ սառնամանեաց թուեր պատեալ» (Խորենացի, Ա. իգ):

*Եւ[...] կին ոմն ծիրանագգեստ, երկնագոյն ունելով զիրեաւ
տեռ («քող» - Ա.Պ.), նստեալ երևեցաւ ի ծայրի այնպիսոյ բարձրու-
թեան, աչեղ, բարձրահասակ և կարմրայտ, երկանց ըմբռնեալ
ցաւովք: Եւ [...] ծնաւ յանկարծ կինն երիս կատարեալս ի դիցազանց
հասակաւ և բնութեամբ:*

Երազի եովորյակներից երրորդը, վիշապ սանձած, հարձակվում է Աժդահակի վրա և սպանում նրան (հետագայում նրան սպանում է Տիգրանը): Ակնհայտ է, որ վիշապ սանձած և վիշապ Աժդահակին սպանող այս կերպարը «վիշապաքաղ» Վահագն աստծվածն է¹: Ահա և Վահագնի ծնունդը պատմող հիմնը (Խորենացի, Ա. լա):

Երկներ երկին, երկներ երկիր,
Երկներ և ծովն ծիրանի.
Երկն ի ծովուն ունէր և զկարմրիկն եղեգնիկ.

...

Նա հուր հեր ունէր,
Բոց ունէր մօրուս,
Եւ աչկունքն էին արեգակունք:

¹ Աբեղյան 1966, 138, Պետրոսյան 2008:

Դրանից հետո երգի մեջ պատմվել է, թե նա կովել է վիշապների դեմ ու հաղթել: Բերված երկու տեքստերի նմանություններն ակնհայտ են: Աչքի են զարնում կրկնվող բառերը, արմատները և պատկերները՝ երկին և երկնագոյն, աչկունք և աչեղ, կարմրիկ և կարմրայտ, ունէր և ունելով, երկնէր և երկանց ցաւ, ծիրանի ծով և ծիրանազգեստ, այսինքն, «Վիպասանքի» պատկերը ուղղակի Վահագնի հիմնի վերաշարադրանքն է (Պետրոսյան 2008): Ծիրանի ծովը կամ արյուն-ծովը, ըստ ժողովրդական պատկերացումների, գտնվում է ամպերում՝ երկնքի և երկրի միջև: Դա երկնային ծովն է ամպրոպի ժամանակ, ամպրոպի աստծու և նրա հակառակորդ վիշապի մարտադաշտը² (Խորենացու մոտ հերոսի և Աժդահակի կռվի ընթացքում Աժդահակի ապարանքի՝ արեգակի նման փայլող երեսը դառնում է արյան ծով): Ծիրանի ծովի դիցաբանական անձնավորումն է Ծովինարը³, որի անունը բարբառներում նշանակում է «փայլակ, կայծակ», և նա ինքն էլ ամպրոպի աստծու կանացի մի համապատասխանությունն է ու զուգակիցը: Ծովինարը բանահյուսության մեջ հանդես է գալիս որպես երկնքում բնակվող և դեմքին քող կրող կին⁴, իսկ «Սասնա ծռերում»՝ որպես առաջին երկվորյակ հերոսների մայր: Հայոց վեպերում երկվորյակներին կարող են փոխարինել կամ հաջորդել եովորյակ կամ երեք եղբայրները, իսկ հնդեվրոպական վաղնջական երկվորյակները կարող են լինել եովորյակներ⁵: Ըստ այդմ՝ «Վիպասանքի» եովորյակների մայրը փաստորեն նույնանում է «Սասնա ծռերի» երկվորյակների մոր՝ Ծովինարի հետ:

Եովորյակների ծնունդն այսպիսով կրկնում է Վահագնի ծնունդը՝ տեղայնացած բարձր, սառնամանիքով պատած, պետք է կարծել՝ ձյունածածկ լեռան գագաթին: Ընդ որում, վիշապամարտիկ հերոսը, այսինքն՝ Վահագնը այստեղ հանդես է գալիս որպես «երրորդ հերոս» և կարող է համարվել եովորյակներից երրորդը⁶: Իսկ լեռը, իհարկե, Մասիսն է. «Վիպասանքի» գործողությունները կենտրոնացած են Մասիսի շուրջը՝ այստեղ են բնակվում վիշապազունները, այստեղ են կենտրոնացած էպոսի հերոսների կռիվները նրանց դեմ, և այստեղ է փակվում էպոսի վերջին

² Աբեղյան 1966, 80-81, Աբեղյան 1975, 66, Հարությունյան 2000, 80-81:

³ Հարությունյան 2000, 80, Petrosyan 2002, 14:

⁴ Աբեղյան 1975, 70-72:

⁵ Иванов 1986, 20, Petrosyan 2002, 15-20:

⁶ Топоров 1977, Պետրոսյան 2008:

հերոսը՝ Արտավազդը: Երկգագաթ Մասիսը հեշտությամբ կարող էր պատկերացվել որպես դիցաբանական երկվորյակների ծննդավայր: Հատկանշական է, որ տարածաշրջանի ամպրոպի հին աստվածներից Թեշուբը պատկերվել է կանգնած երկու կամ երկգագաթ լեռան վրա⁷, ընդ որում, Թեշուբն ինքն էլ եռվորյակ է⁸: Իսկ հայ. *Մասիս* ձևը ծագում է հին միջագետքյան էպոսի սրբազան լեռ Մաշուի «Երկվորյակ» անվանումից (աքադերենի ասորեստանյան տարբերակում *Māšu*-ն հնչել է *Māsu*, որը տեղանուններին բնորոշ հնդեվրոպական *-iyā ածանցով հայերենում դարձել է **Masiyā*, հոգնակի՝ Մասիք, սեռ. Մասեաց, հայց. Մասիս): Մասիսի շրջանի երկիրը ուրարտական աղբյուրներում կոչվում է *Erkuah*⁹, որը կարող է մեկնաբանվել ըստ հայ. «երկու արմատի» (տեղանվանակերտ *ā* հիմքով)¹⁰:

«Վահագնի երգը» համարվում է հնդեվրոպական պոեզիայի հնագույն և վառ արտահայտված նմուշներից մեկը¹¹: Սակայն Վահագնը իրանական անուն է՝ փոխառված միջին իրանական դարաշրջանում: Այսինքն, «Վահագնի երգը» ներկայացնում է հին, բնիկ հայկական անունով մի աստծու ծնունդը, որը հետագայում է միայն իրանական ազդեցության դարաշրջանում վերանվանվել իրանական «Վահագն» անվամբ: Եվ «Վիպասանքի» վիշապամարտիկ հերոսի ծնունդը, այսպիսով, վերապատմում է Վահագնի այդ հայկական նախորդի ծնունդը, որը տեղայնացվել է Մասիսի վրա:

Արտավազդի առասպելը

Մասիսի վրա, ինչպես ասվեց, իբր բնակվել են վիշապներ և վիշապազուններ, որոնց Խորենացին (Ա.յ), առասպելը «ճշմարտելով» և պատմականացնելով, համարում է մարաց Աժդահակ թագավորի սերունդը: Արտաշես արքայի ժամանակ վիշապազունների առաջնորդն էր Արգավանը, որը երկրի երկրորդ իշխանն էր արքայից հետո: Արտաշեսի որդի Արտավազդը կարողանում է խլել երկրի երկրորդ գահը Արգավանից: Սա

⁷ Dijkstra 1991.

⁸ Hoffner 1990, 40-41.

⁹ Арутюнян 1985, 260-261.

¹⁰ Петросян 2006, Պետրոսյան 2017, 190:

¹¹ Иванов 1969, 47-56, 1983, Топоров 1977, 100-103, Ivanov 2011, Հարությունյան 1987, 53-54, Petrosyan 2002, 34-36:

արքային հյուրընկալելիս դավ է լարում նրա դեմ «ի տաճարին վիշապաց»։ Արտաշեսը պատժում է նրան, իսկ Արտավազդը, ի վերջո, սպանում է նրան ու նրա որդիներին։ Արտաշեսի մահվան ժամանակ, երբ «հեթանոսական սովորությամբ շատ կոտորածներ էին լինում», Արտավազդը ասում է հորը. «Մինչ դու գնացեր, և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար, ես աւերակացս *ո՛ւմ թագաւորեմ*»։ Սրա համար Արտաշեսը անիծում է որդուն. «Եթե դու յորս հեծցիս յԱզատն ի վեր ի Մասիս, զքեզ կալցին քաջք, տարցին յազատն ի վեր ի Մասիս, անդ կացցես եւ զլոյս մի տեսցես»։ Այդպես էլ լինում է՝ նա շղթայված փակված է Մասիսի վիհի մի քարանձավում։ Նրա երկու շները կրծում-մաշեցնում են շղթաները, բայց դարբինների կռանահարության ծայնից կապանքներն ամրանում են և նրան խանգարում ազատվել ու վերջ տալ աշխարհին (Խորենացի, Բ. կա)։

Արտավազդը, ըստ Եզնիկ Կողբացու (Ա. իե), հայոց կռապաշտների կողմից համարվել է բանտարկված դևերի կողմից, և անհավատները սպասել են նրա գալստյանը, ինչպես հրեաները Դավիթ թագավորին, թե նա կգա, կվերաշինի Երուսաղեմը, կհավաքի հրեաներին և կթագավորի նրանց վրա։ Այսինքն՝ կարելի է կարծել, որ նա ավանդված է և՛ որպես բացասական՝ կործանարար, և՛ դրական կերպար, մարդկության կամ հայության փրկիչ¹²։ Ըստ Աբեղյանի, Արտավազդը, որն առասպելի սկզբում կռվում և ոչնչացնում է վիշապազուններին, ի սկզբանե դրական հերոս է եղել՝ հայերը նրան սպասել են, որ գերությունից ազատվի և տիրի Հայաստանին։ Հետագայում այս գրույցը ազդվել է շղթայված Աժդահակի առասպելից, որը հին ժամանակներում հայերը փոխառել էին Իրանից և տեղայնացրել Մասիսի վրա։ Ընդ որում, դրական տարբերակի դեպքում նրան շղթայում են չար ոգիները՝ դև/վիշապները, իսկ բացասականում՝ քաջ(ք)երը (սրանց՝ հնում վիշապամարտիկ աստծու հետևորդներ լինելու վերաբերյալ տե՛ս ստորև)։

Քննությունը ցույց է տալիս, որ վիպական Արտավազդի պատմական նախատիպը Արտավազդ 2-րդն է՝ Տիգրան Մեծի որդին (իշխել է մ.թ.ա. 55-34 թթ.)։ Ըստ Պլուտարքոսի («Կրասոս», XXXIII.2), նա լուսավորյալ միապետ էր, ողբերգությունների, ճառերի և պատմական ստեղծագործությունների հեղինակ, որին Մարկոս Անտոնիոսը դավադրաբար գերում, շղթայում և տանում է Եգիպտոս։ Այնտեղ, նրա հաղթահանդեսի ժամա-

¹² Աբեղյան 1966, 146-148, Հարությունյան 2000, 447-452։

նակ, Արտավազդը, ընտանիքի հետ, շղթայված ոսկե կապանքներով, անցկացվում է Կլեոպատրա թագուհու առջևից: Նրանք չեն աղերսում և չեն երկրպագում թագուհուն, թեև նրանց շատ էին հուսադրում՝ ազատություն խոստանալով: Դրանով նրանք վեհամիտ մարդկանց համբավ են շահում, բայց և ենթարկվում խիստ չարչարանքների, իսկ հետագայում (մ.թ.ա. 31 թ.) Արտավազդը մահապատժի է ենթարկվում (Դիոն Կասիոս, XLIX.39-40, տե՛ս և Ստրաբոն, XI.14.15, Տակիտոս, «Տարեգրություններ» II.3, Հովսեփոս Փլավիոս «Հրեական հնախոսություն», XV.4.3): Այս իրադարձությունները ակնհայտորեն կարող էին առասպելականանալ արքայի՝ հպարտ ու ըմբոստ հերոսի և լեռան մեջ գերված-շղթայված առասպելական կերպարի համադրությամբ¹³:

Լեռներում շղթայված հերոսների կերպարների քննությունը ցույց է տալիս, որ նրանք հանգում են բացասական՝ առասպելական օձ-վիշապի խթոնիկ կերպարին¹⁴: Մյուս կողմից, պետք է կարծել, որ քրիստոնեությունը, որը դիվականացնում էր հին պաշտամունքները, իր դերն է կատարել Արտավազդի կերպարի այդ զարգացման գործում: Աբեղյանի վերլուծությունը գալիս է այն ժամանակներից, երբ հայկական առասպելաբանության և ընդհանրապես մշակույթի վրա իրանական ազդեցության դերը չափազանցվում էր: Դրա համար կային օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ: Հայերենը մինչև XIX դ. վերջին քառորդը համարվում էր իրանական լեզու, և հայագիտության եվրոպական դպրոցի ներկայացուցիչները հիմնականում իրանագետներ էին: Հայոց հին աստվածների ու պատմական դեմքերի անունների (Արամազդ, Վահագն, Միհր, Տիր, Արտաշես, Տիգրան, Արտավազդ, Տրդատ և այլն) ճնշող մեծամասնությունն էլ իրանական ծագում ունի: Բայց հին Մերձավոր Արևելքի հնագույն լեզուների և առասպելաբանական տեքստերի հրապարակումը, ժամանա-

¹³ Աբեղյան 1966, 147, Հովհաննիսյան 1990, 110-114, Պետրոսյան 2006, 273-274: Արտավազդը ոչ միայն հայոց օտարալեզու գրականության և թատերգության հիմնադիրն էր: Նրա հետ է կապվում Հայաստանում առաջին հայտնի թատերական ներկայացման տեղեկությունը. ըստ Պլուտարքոսի («Կրասոս», XXXIII.1-4)՝ Արտավազդի քրոջ և պարթևական արքայի որդու ամուսնության տոնակատարությանը Արտաշատում եվրիպիդեսի «Բաքոսուհիների» ներկայացման ժամանակ բեմ է նետվում Խառանի ճակատամարտում պարտված հռոմեական եռապետ Կրասոսի գլուխը: Հատկանշական է, որ հենց Արտավազդը՝ առաջին հայ գրողն ու թատերագիրը, որը Հայաստանում առասպելականացել էր առավել, քան որևէ ուրիշ պատմական անձ, դառնում է նաև հայկական ավանդական դրամայի հերոսը (Պետրոսյան 2006, գրականությամբ):

¹⁴ Миллер 2008, 834, Абрамян 2013, 11-12.

կակից գիտության զարգացումը և հայկական առասպելներում բնիկ հնդեվրոպական և հինարևելյան էական շերտերի բացահայտումը փոխում են մեր պատկերացումները հայկական առասպելներում իրանական տարրի գերակայության վերաբերյալ¹⁵:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ հայոց բոլոր էպոսներն ավարտվում են համանման՝ «մեռնող և հառնող» տիպի հերոսներով¹⁶: Առաջինը նրանցից ազգածին ավանդության Արա Գեղեցիկն է, որը զոհվում է կռվում, բայց նրան, իբր, լիզում-վերակենդանացնում են շնից սերված դիցաբանական կերպարները՝ արալեզները: Արան զոհվում է Արարատյան դաշտում, և Այրարատն ու այդ դաշտը կոչվել են «դաշտն Արայի» (Խորենացի, Ա. Ժա, Սեբեոս, Ա): Երկրորդն Արտավազդն է, վերջին հերոսը «Վիպասանքի», որի գործողությունները ևս կենտրոնացած են Հայաստանի՝ Արարատյան դաշտում գտնվող մայրաքաղաքներում և մերձակա լեռան՝ Մասիսի վրա: Երրորդը «Սասնա ծռերի» Փոքր Միերն է: Այս էպոսի գործողությունները, ի տարբերություն առաջին երկուսի, կենտրոնացած են լեռնաշխարհի հարավում՝ Սասունում և մերձակայքում, իսկ Միերը փակվում է Վանա ժայռի «Միերի դռան» հետևում: Արտավազդը և Միերը չափազանց նման կերպարներ են՝ երկուսն էլ ունեն և՛ դրական և՛ բացասական հատկանիշներ և փակվում են լեռան կամ ժայռի մեջ՝ հայրերի անեծքի պատճառով: Արան տարբեր է. նա չունի բացասական հատկանիշներ, նրա լեզգենդում չկա հոր անեծքը, նա ժայռում չի փակվում, այլ զոհվում է ճակատամարտում, ապա ենթադրվում վերածնված արալեզների միջոցով: Արային և Արտավազդին միավորում է նրանց պատմությունների կենտրոնացվածությունը Արարատյան դաշտում և շների միջոցով մահվան աշխարհից վերածնվելու մոտիվը (Արային լիզելով վերակենդանացնում են շնից սերված արալեզները, իսկ Արտավազդի շղթաները կրծում-լիզում են՝ ձգտելով ազատել նրան անդրաշխարհից, նրա շները):

Ազգածին ավանդության քննությունը ցույց է տալիս, որ այն ձևավորվել է հնդեվրոպական հնագույն մոդելներին համապատասխան և, այսպիսով, նշանակալի չափով բնիկ հայկական՝ հնդեվրոպական ժառանգություն է¹⁷: Պետք է կարծել, որ Արան այս հերոսի նախնական, վաղնջա-

¹⁵ Petrosyan 2002.

¹⁶ Պետրոսյան 1997, 29-33:

¹⁷ Ahyan 1982, Dumézil 1994, 133-141, Պետրոսյան 2017, 27-36:

կան հայկական տիպն է, որը հաջորդ էպոսներում վերափոխվել է լեռան մեջ կամ ժայռում փակված և այնտեղից ազատվելու ձգտող կերպարի հետագա զարգացումների և ազդեցությունների շնորհիվ: Այս տիպի հերոսների մահվան պատճառը հաճախ հոր հետ ունեցած կոնֆլիկտն է (տե՛ս ստորև), բայց հոր անեծքի և դարբինների կռանահարության ծայնից հերոսի կապանքների ամրացումը Արտավազդի և Փոքր Միերի սյուժեներում հետագա ձեռքբերումներ են:

Լեռան տակ թաղված օձ-վիշապի առասպելը

Լեռան կամ ժայռի քարանձավում փակված կամ լեռներում շղթայված հերոսը և նրա նախորդ օձ-վիշապը ունեն բազում զուգահեռներ հատկապես Կովկասում և Փոքր Ասիայում և, հավանաբար, շարունակում են հին տեղական, ոչ հնդեվրոպական ավանդույթը: Վիշապի մի տարբերակն է հին իրանական Աժի Դահակա/Աժդահակը, «Շահնամեի» Զոհակը, որը շղթայվում է Դեմավենդ լեռան քարանձավում (Կասպից ծովի հարավում): Ստորև ներկայացնենք մի քանի համանման հին առասպել Հայկական լեռնաշխարհից և Փոքր Ասիայից: Խուռիական առասպելաբանության մեջ, երբ ամպրոպի աստված Թեշուրը դառնում է աստվածների արքա, նախորդ արքան՝ նրա ծնող Կումարբին, դավեր է նյութում՝ փորձելով գահընկեց անել նրան: Կումարբին բեղմնավորում է «սառը լճի» «մեծ ժայռը», որը ծնում է քարե հրեշ Ուլլիկումմիին: Աստվածները կռվում են հրեշի դեմ, բայց նա այնքան մեծ է, որ չեն կարողանում վնասել նրան: Առասպելի վերջը չի պահպանվել, բայց այն, հավանաբար, պետք է ներկայացներ Թեշուրի վերջնական հաղթանակը¹⁸: Այս առասպելի մի դրվագը տեղայնացվում է Կիլիկիայում, բայց քանի որ խուռիների հին հայրենիքը եղել է Հայկական լեռնաշխարհում, ապա այն պետք է ունենար տեղայնացումներ նաև այնտեղ: Եվ ամենահավանական տեղայնացումները պետք է լինեին Նեմրուքը Վանա լճի արևմուտքում¹⁹ և Գեղամա լեռները Գեղա(ր)քունիքում (ուրարտ. Ueliku-ni/hi երկրում, որի անունը համադրելի է Ուլլիկումմիի անվան հետ, իսկ կերպարը հիշեցնում է նրա տարածքներում կենտրոնացած վիշապ քարակոթողները)²⁰:

¹⁸ Güterbock 1951, Hoffner 1990, 52-60, Иванов 1977, 125-140:

¹⁹ Haas 1994, 83, Բոքոխյան 2019:

²⁰ Абрамян 2013, 19-20, Պետրոսյան 2019, 149, գրականությամբ:

Շատ ավելի հանրահայտ է Տիփոնի և Ջևաի հունական առասպելը: Տիփոնը մի հրեշ է՝ օձ-վիշապ, որին Ջևաը հալածում և ի վերջո կայծակնահարում ու թաղում է Էտնա հրաբխի տակ (որտեղից նա դեռ պիտի հրե գետեր ժայթքի), իսկ լեռան գագաթին Հեփեստոսը կռանահարում է հալված երկաթը (Էսքիլոս, «Շղթայված Պրոմեթևս», 365-370): Ջևաի և Տիփոնի կռիվը տեղայնացվել է տարբեր վայրերում, բայց հիմնականում՝ Փոքր Ասիայում, Հայկական լեռնաշխարհից ոչ հեռու²¹, և առասպելն ինքն էլ ծագումով հիմնականում փոքրասիական՝ խեթական է²²:

Ինչպես ասվեց, հայոց ամենավաղնջական առասպելները պահպանվել են ազգածին ավանդության մեջ: Հայոց նախնի Հայկը իր հակառակորդ Բելին սպանելուց հետո նրա մարմինը տանում է իր ոստանը՝ Հարք գավառ, և թաղում «ի բարձրաւանդակ տեղւոջ» (Խորենացի, Ա. Ժ): Ժողովրդական լեգենդները նույնացնում են այդ տեղը Հարքի հարավում գտնվող Նեմրուֆ լեռան վրա²³: Նեմրուֆը եղել է մի հսկայական գործող հրաբուխ (լեռան վերջին արտաժայթքումները տեղի են ունեցել 1352 և 1441 թվականներին), որի խառնարանը ամենամեծն է արևելյան կիսա-գնդում²⁴: Այդ ահռելի հրաբուխը, անկասկած, հզոր ազդեցություն պետք է ունենար հին մարդկանց վրա: Եվ Բելը ևս, ակնհայտորեն, Տիփոնի կերպարի մի տարբերակն է:

Ազգածին ավանդության մեջ նման մի դրվագ կարելի է գտնել նաև Արամ նահապետի զրույցներում: Արամը, ըստ Աբեղյանի արտահայտության, «Հայկի երկրորդ տիպարն» է²⁵, իսկ նրա երրորդ հակառակորդ Պայապիս Քաղյան՝ «տիտանյան»՝ Բելի տոհմի առասպելական մի հրեշ: Ըստ այդմ, նրանց կարելի է համարել Հայկի և Բելի կերպարների երկրորդ դրսևորումները: Նրանց կռիվը տեղի է ունենում Կապադովկիայում, հետագայում կառուցվելիք Կեսարիա քաղաքի տեղում, այսինքն՝ Փոքր Ասիայի ամենաբարձր լեռան՝ Արգեոս հրաբխի շրջանում: Այդտեղ է, ըստ

²¹ Vian 1960, 19-23, Fox 2008, 288-289:

²² Watkins 1995, 448-459.

²³ Ղանալանյան 1969, 72-73:

²⁴ Հակոբյան և այլք 1991, 976:

²⁵ Աբեղյան 1966, 55:

մի կարծիքի, տեղայնացվել Ջևսի և Տիփոնի առասպելը²⁶, որը Յոզեֆ Մարկվարտը նույնացրել է Արամի և Պայապիսի կոմի հետ²⁷:

Ընդհանրապես, լեռներում բանտված և ազատվել ձգտող առասպելական հերոսների կենտրոնացման հիմնական շրջաններն են Կովկասը, Հայկական լեռնաշխարհն ու մերձակայքը: Եվ պետք է կարծել, որ լեռնաշխարհի ամենամեծ և հանրահայտ հրաբուխը՝ Մասիսը, վաղուց ի վեր համարվել է Տիփոնի և Ուլիկումմիի տիպի մի խթոնիկ հրեշի կամ օձ-վիշապի տեղայնացման վայր, որտեղ, հետագայում նրա հատկանիշներն իր վրա է վերցրել Արտավազդը²⁸:

Ըստ կեղծ-Պլուտարքոսի (De Fluviiis, XXIII. 4)՝ Միթրա աստվածը, ասելով կանանց, բեղմնավորում է ժայռը, որը Դիորփոս անունով մի որդի է ծնում: Վերջինս մարտահրավեր է նետում Արեսին և, սպանվելով նրա կողմից, վերածվում համանուն լեռան Արաքս գետի մոտ: Գեղամա կամ Գեղարքունյաց լեռները, իհարկե, հեռու չեն Արաքսից, բայց և ակնհայտ է, որ այդ լեռը կարող է նույնացվել հենց Մասիսի՝ Արաքսի հովտի ամենանշանակալի լեռան հետ: Չէ՞ որ այդ լեռան տակ պետք է գնդանված լիներ այն օձ-վիշապը, որին փոխարինել է Արտավազդը:

Միթրան իրանական աստված էր, որի պաշտամունքը անցել է Իրանի քաղաքական և մշակութային ազդեցության տակ գտնվող երկրներ՝ մեր թվականության սկզբին հասնելով մինչև Հռոմեական կայսրություն, որտեղ աննախադեպ տարածում է ստացել: Նրա անվան միջին իրանական ձևն է Միհրը, որն անցել էր հայոց նախաքրիստոնեական դիցարան: Եվ մեր տարածաշրջանում լեռնային քարանձավներում փակված կամ լեռներում շղթայված և այնտեղից ազատվել ձգտող հերոսները կապվել են Միհրի հետ: Այդպիսիք են մեր Փոքր Մհերը և վրացական Ամիրանին, որոնցից առաջինն ուղղակի ծագում է Միհրից, իսկ երկրորդն անվան հնչողությամբ ակնարկում է Մի(հ)ր անունը²⁹: Փոքր Մհերի՝ ապագայում ժայռից վերածնվելու հավատը միանգամայն համապատասխանում է հռոմեական *petra genetrix* «ժայռից ծնվող» Միթրայի կերպարին³⁰: Մասիսում շղթայված Արտավազդը հայոց վիպական ավանդույթի առաջին այդօրինակ «միթրա-

²⁶ Partsch 1888, 111.

²⁷ Markwart 1928, 216-217, Petrosyan 2002, 45-46.

²⁸ Այս հարցի մասին տե՛ս և Миллер 2008:

²⁹ Ամիրանի անվան վերաբերյալ տե՛ս Чиковани 1966, 27-30, 116-119, գրականությամբ:

³⁰ Петросян 2004.

յական» կերպարն է: Եվ կարծիք կա, որ Արտավազդի պատմական նախատիպը՝ Արտավազդ 2-րդ արքան, «Վիպասանքում» հանդես է գալիս որպես լեռան մեջ փակված «միթրայական» կերպար, որովհետև իր կյանքի ընթացքում աստվածացվել էր որպես Միթրա/Միհր, ինչպես իր հայր Տիգրան Մեծը՝ որպես Վահագն³¹:

Դիորփոսի՝ Միթրայի կողմից բեղմնավորված ժայռից ծնվող կերպարի պատմության մեջ կարելի է տեսնել Միթրայի՝ ժայռից ծնվելու առասպելի մի ձևափոխությունը: Բայց այստեղ կարծես կան ավելի շոշափելի կապեր: Միթրա/Միհրը Իրանում և մերձակա երկրներում հանդես է գալիս որպես արևի աստված՝ նույնացված հունական Ապոլոնի և Հելիոսի հետ: Մինչդեռ հայոց Միհրը նույնացվել էր հունական Հեփեստոսի՝ ստորերկրյա կրակի և դարբնության աստծու հետ: Դարբնության մոտիվը, ինչպես տեսանք, պարզ ներկայացված է Արտավազդի առասպելում: Հիշենք և վերևում էսքիլեսի ներկայացրած պատկերը. Հեփեստոսը, Տիփոնի վրա դրված էտնա լեռան գագաթին կռանահարում/կոփում էր երկաթը: Դարբինների կռանահարության ծեսը հիշվում է տարբեր ժողովուրդների՝ լեռներում զննանված օձ-վիշապների առասպելների առնչությամբ³²: Հատկանշական է, որ Ֆիրդուսու «Շահնամեում» ևս Աժդահակի վիպական կերպարի՝ Զոհակի դեմ հերոսը կռվում է դարբին Կավիի հետ դաշնակցած: Ընդհանրապես, առասպելական դարբինը հաճախ է հանդես գալիս որպես վիշապամարտիկ կերպար, ամպրոպի աստծու օգնական³³:

Մյուս կողմից, Ուլիկումմիի և Դիորփոսի ծննդյան առասպելները բեղմնավորված ժայռից ուղղակի նույնական են, իսկ նրա մարտահրավերը Արեսին և պարտությունը՝ միանգամայն համապատասխան Ուլիկումմիի և Թեշուբի կռվին: Եվ պետք է կարծել, որ Դիորփոսի լեգենդն ուղղակի մի ուշ հիշողությունն է Ուլիկումմիի առասպելի, որտեղ Միթրան փոխարինել է Կումարբին, Դիորփոսը՝ Ուլիկումմին, իսկ Արեսը՝ Թեշուբին: Ըստ այդմ, Մասիսը հնագույն ժամանակներից կարող էր լինել Ուլիկումմիի առասպելի տեղայնացման մի վայր³⁴:

³¹ Սարգսյան 1966, 57, Պետրոսյան 2006, 272-274:

³² Миллер 2008, 835.

³³ Иванов, Топоров 1974, 58-64, 148-149, 158-163, Иванов 1982.

³⁴ Հմմտ. Schwartz 1975, 416-417:

Եզրակացություններ

Կարելի է ասել, որ Մասիսը՝ Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր, ամենահզոր և ամենագեղեցիկ լեռը, ամենախոր հնությունից ի վեր սրբացվել է։ Նրա բարձունքում տեղայնացվել է մեծ աստվածը, իսկ խորխորատում, ստորոտում և լեռան տակ՝ աստծու հակառակորդ խթոնիկ կերպարը՝ Վիշապը և նրա հետևորդները։ Հնդեվրոպական առասպելներում լեռների բարձունքում է տեղայնացվում ամպրոպի աստվածը, որն իր զենքով՝ կայծակով խփում է ներքևում, լեռան տակ տեղայնացվող իր հակառակորդ օձ-վիշապին³⁵։ Սա ցույց է տալիս, որ Մասիսը հայոց ավանդույթում հանդես է գալիս որպես «աշխարհի կենտրոնում» տեղայնացած սրբազան «տիեզերական լեռ», որի միջով է պատկերացվել երկինքը, երկիրը, ստորերկրայքը և նրանց բնակիչներին միացնող «աշխարհի առանցքը»³⁶։

Առասպելաստեղծ մտածողության մեջ տարածությունը և ժամանակը միատարր, համասեռ չեն։ Առավելագույն արժեքով և սրբությամբ օժտված են այն կետը և պահը, որտեղ և երբ տեղի է ունեցել աշխարհի ստեղծումը՝ տիեզերածնությունը կամ արարչագործությունը։ Այդ առասպելներն ընդհանրապես տեղայնացվում են «աշխարհի կենտրոնում», որտեղ՝ «ժամանակի սկզբում», սկսվում է արարումը։ Այդ կետից են ծագում տիեզերքն ու ժամանակը, և այդ առասպելներից են ծագում ու դրանք են կրկնում մյուս առասպելները³⁷։ Մասիսի առնչությամբ քննված առասպելները կարող են անմիջականորեն կապվել տիեզերածնության հետ։ Այսպես, հնդեվրոպական ամպրոպի աստծու և օձ-վիշապի կռվի առասպելն իր էությամբ մի տիեզերածին առասպել է (օձ-վիշապը քառսի մարմնավորումն է, և նրա պարտությունից հետո է միայն ձևավորվում տիեզերքը)։ Իսկ ըստ Բ. Լինկոլնի՝ հնդեվրոպական արարչագործության առասպելի կենտրոնական կերպարներն են եղել մարդկության նախնի *Manu-ն («Այր, Մարդ»), նրա եղբայր *Yemo-ն («Երկվորյակ») և Ցուլը։ «Այրը» զոհաբերում է Ցլին և «Երկվորյակին», ինչի շնորհիվ ի վերջո ստեղծվում են տիեզերքը և մարդկային հասարակությունը³⁸ (հատկանշական է, որ Լ. Աբրահամյանը երկվորյակային համատեքստում է դիտում ամպրոպային առասպելի հակա-

³⁵ Ст'я орինակ Иванов, Топоров 1974, 7-14, Топоров 1980, Puhvel 1987, 226-227:

³⁶ Պետրոսյան 2005, «տիեզերական լեռան» վերաբերյալ տե՛ս Элиаде 2000, 30-34:

³⁷ Элиаде 2000, 33-34, Топоров 1988.

³⁸ Lincoln 1986, 69.

դիր կերպարներին)³⁹: Ասվաճը ցույց է Մասիսի՝ «տիեզերական լեռ», «աշխարհի կենտրոն» համարվելու նախադրյալները, որոնք վերջնականապես մարմնավորվեցին Մասիսի և Արարատի՝ աստվածաշնչյան երկրորդ տիեզերածնության ու մարդածնության կենտրոնի նույնացումից հետո: Պետք է ավելացնել, որ Մասիսի հետ կապված առասպելներն ունեն բնիկ հայկական՝ հնդեվրոպական ակունքներ, և ըստ հայոց ազգածագման մեր վարկածի, Մասիսը գտնվել է հայոց սկզբնական հայրենիքի՝ «նախնական Հայաստանի» տարածքում⁴⁰:

Ահա և Մասիսի հիմնական առասպելը (ըստ «Վիպասանքի» տվյալների): Լեռան գագաթին՝ բարձունքում, երկնքի, երկրի և երկնային ծիրանի ծովի շփման սահմանագծին է ծնվում հին հայոց ամպրոպի և ռազմի եռվորյակ աստվածը՝ Վահագնի նախորդը, որը, ծնունդից անմիջապես հետո կռվում է խթոնիկ հրեշի՝ Վիշապի դեմ: Վիշապը պարտվում է, և աստվածը նրան, ինչպես Ջևաղ Տիփոնին, փակում է Մասիսի տակ, վիհում, խառնարանի ներսում: Այնտեղից նա, ինչպես Տիփոնը և Աժի Դահական, հրաբուխ է ժայթքում և երկրաշարժեր առաջացնում: Վիշապի հետ լեռան ստորոտում են բնակվում նրա հետևորդները՝ վիշապները կամ վիշապազունները:

Կարելի է վերականգնել նաև որոշ առասպելաբանական մանրամասներ: Այսպես, հավանական է, որ Մասիսը եղել է ոչ միայն ամպրոպի աստծու, այլև այլ աստվածների կացարանը և հավաքատեղին, ինչպես Օլիմպոսը Հունաստանում: Ասվեց, որ «Վիպասանքում» Մասիսի վիշապազունների առաջնորդ Արգավանը հյուրընկալում է Արտաշեսին «վիշապների տաճարում»: Եզնիկ Կողբացու մոտ ևս հիշվում են վիշապների, իսկ Գրիգոր Պարթևին վերագրվող «հարցման» մեջ՝ «քաջաց և վիշապաց տաճարս ի լերինս բարձունս»⁴¹: Քաջքերը բանահյուսության մեջ հանդես են գալիս որպես չար ոգիներ, բայց հնում քաջը եղել է Վահագնի մակդիրը (Ագաթանգեղոս, 127), և քաջ(ք) են կոչվել Վահագնի հետևորդները՝ պատանեկան ռազմական եղբայրությունների անդամներն ու նրանց դիցաբանական մարմնավորումները⁴²: Նրանք են, որ բռնում են Արտավազդին

³⁹ Абрамян, Демирханян 1984.

⁴⁰ Պետրոսյան 2017, 181-199:

⁴¹ Արեղյան 1975, 65, Խաչիկյան 2012, 57:

⁴² Պետրոսյան 2018:

Մասիսում, այսինքն, Մասիսի վրա է տեղայնացվել ոչ միայն ամպրոպի աստվածը, այլև նրա հետևորդները (ինչպես Վիշապն իր հետևորդներով):

«Տաճար» բառը հնում ունեցել է մի քանի նշանակություն, և բերված համատեքստերում այն թարգմանում են որպես «ապարանք, պալատ»: Սակայն քրիստոնյա հեղինակները հին աստվածներին և նրանց քրմերին նույնացրել են դևերի հետ, որոնք որոշ առումներով նույնական են վիշապներին⁴³, և այդ տաճարները տեսականորեն կարող էին պատկերացվել որպես հին աստվածների սրբարաններ:

Հնում, մինչև տաճարների ի հայտ գալը, կրոնական ծեսերը կատարվել են զոհասյուն-կոթողների և քարակույտերի մոտ կամ սուրբ պուրակներում: Հայտնի է *kar- «քար» արմատի ածանցյալ *kar-k- «քարակույտ» նախածնը, որից որոշ հնդեվրոպական լեզուներում ունենք «քարակույտ, սրբավայր» և «հեթանոսական տաճար, կուռք» նշանակությամբ բառեր: Սրանց հետ համադրելի է Քարքէն, անվանումը Տարոնի այն լեռան, որի վրա է գտնվել Վահագնի գլխավոր մեհյանը, Անահիտի և Աստղիկի հետ միասնական տաճարական համալիրում (Ագաթանգեղոս, 809)⁴⁴: Այս համատեքստում պետք է դիտվի նաև Եկեղյաց գավառում Անահիտի գլխավոր սրբավայր Երէզ ավանի անվանումը, նույնական՝ հայ. երէզ «քարակույտ» բառի հետ⁴⁵:

Ըստ լեգենդի, Տրդատ 3-րդը հռիփսիմյան սրբերի տաճարները կառուցելիս Մասիսի բարձունքներից, թիկունքին դրած, «հայկաբար» բերում է ութ անմշակ, մեծամեծ քարեր, որոնք դրվում են այդ վկայարաններում (Ագաթանգեղոս, 767): Ընդհանրապես նոր կրոնի տաճարները հաճախ կառուցվել են հին կրոնի տաճարների հիմքի վրա⁴⁶, և կարելի է ենթադրել, որ Տրդատի բերած քարերը վերցված են համարվել Մասիսի վրայի հին սրբարաններից⁴⁷: Ազգածին ավանդության նահապետները փոխարինել

⁴³ Աբեղյան 1966, 148:

⁴⁴ Այս տեղանվան հնդեվրոպական զուգահեռների վերաբերյալ տե՛ս Petrosyan 2002, 153-154:

⁴⁵ Մարտիրոսյան 2019, 476:

⁴⁶ Պետրոսյան 2006ա, 4-5:

⁴⁷ Ութը հայկական դիցարանի կարևոր թվային հաստատուններից է թվում: Նախաքրիստոնեական դարաշրջանում հայտնի էին աստվածների ութ հիմնական տաճարներ, ընդ որում, նրանց մեջ «ութերորդ» է կոչվել հենց Վահագնինը (Ագաթանգեղոս, 809): Վահագնին հիշեցնող «ութերորդ» աստծու հետքեր կարելի է գտնել նաև Հայաստանի դիցարանում (Պետրոսյան 2004, 224):

են հնագույն հայոց աստվածներին, և Հայկը՝ հայոց առաջին նահապետը, հին աստվածների ընտանիքի նահապետի՝ հունական ամպրոպային Ջևսի համապատասխանության վիպականացած կերպարն է⁴⁸: Ըստ այդմ, Տրդատը կարծես հանդես է գալիս որպես հին կրոնի մեծ աստված, որը հին տաճարների քարերով հիմք դնելով նոր կրոնի տաճարներին՝ ապահովում է երկրի նոր մշակույթի ժառանգորդությունը հնից:

«Վիպասանքում» ամպրոպի և ռազմի վիշապամարտիկ աստծու դերում հանդես է գալիս Տիգրան արքան: Տիգրան Մեծը, ամենայն հավանականությամբ, իր կյանքի օրոք աստվածացվել էր որպես Վահագն-Հերակլես⁴⁹: Եվ թերևս արդեն Տիգրանի կենդանության օրոք պալատական գուսան-վիպասանները երգեր են հորինել նրա հաղթանակների մասին, որտեղ Տիգրանը նույնացվել է Վահագնի, իսկ նրա հակառակորդներից հատկապես մարաց արքան՝ վիշապի հետ, որին, իր հերթին, նույնացրել են իրանական առասպելաբանության Վիշապի՝ Ափրահակի հետ: Վերջինիս Խորենացին, իր հերթին, պատմականացնում է որպես Մարաստանի հին թագավոր Աստիագես⁵⁰:

Ինչպե՞ս է Արտավազդը, հայոց վիշապամարտիկ արքայազնը, որը վերացնում է վիշապազունների տոհմը, ինքը վերածվել վիշապի: Ասվեց, որ ժամանակին թերևս սպասել են, որ Արտավազդը գերությունից ազատվի և վերստին տիրի Հայոց աշխարհին⁵¹: Եգիպտոսում շղթայված Արտավազդը որոշ առումներով հիշեցնում էր լեռան մեջ շղթայված վիշապի կերպարը, որը և հիմք է դարձել նրանց նույնացման համար: Դա հեշտ է բացատրել նաև պատմականորեն՝ քրիստոնեությունը դիվականացնում էր հին դիցաբանական կերպարներին: Բայց եղել է նաև առասպելաբանական հիմք: Ե՛վ Արտավազդը, և՛ Միերը փակվում են քարանձավում իրենց հայրերի հետ ունեցած բախման և նրանց անեծքի պատճառով: Ընդհանրապես, մեր տարածաշրջանի «մեռնող և հառնող» աստվածներն ու հերոսները (Թամմուզ, Ադոնիս, Ատտիս և այլն) հաճախ պատժվում՝ զոհվում են իրենց հոր հետ ունեցած բախման պատճառով: Հնդեվրոպական ամպրոպային առասպելում ևս վերականգնվում է աստծու որդու՝ հոր

⁴⁸ Պետրոսյան 2013:

⁴⁹ Саркисян 1966, Սարգսյան 1966, 55-56:

⁵⁰ Կարծիք կա, որ այդ թագավորի դիվականացումը արդեն հնից տեղի էր ունեցել Իրանում, տե՛ս Schwartz 2012:

⁵¹ Աբեղյան 1966, 147:

կողմից պատժվելու առասպելությամբ⁵²։ Պետք է կարծել, որ Արտավազը փոխարինել է Մասիսի վիհում բանտված վիշապին՝ այս երկու՝ առասպելաբանական և պատմական գործոնների պատճառով։

Հին օտարազգի և հայ հեղինակները Նոյի փրկության լեռ են համարում Հայկական լեռնաշխարհի ծայր հարավում գտնվող Կորդվաց Արարատը (Բերոսոս, Հովսեպոս Փլավիոս, Եպիփանոս, Փավստոս Բուզանդ, Մովսես Խորենացի, Թովմա Արծրունի և այլն)։ Բայց կային նախադրյալներ, և արդեն XII-XIII դդ. Մասիսը վերջնականապես նույնացվեց Արարատի հետ⁵³։

Գրականություն

Աբեղյան Մ. 1966, Երկեր, հ. Ա, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 572 էջ։

Աբեղյան Մ. 1975, Երկեր, հ. Է, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 604 էջ։

Բոբոխյան Ա. 2019, Կունտարա սրբավայրը և կունկունուցի քարը, Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին, Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., 450-461։

Խաչիկյան Լ. 2012, Գրիգոր Պարթևին վերագրված «հարցումը» որպես հայ մատենագրության երախայրիք, Աշխատություններ, հ. Ա, Երևան, «Նաիրի», 53-99։

Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ. 1991, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երևան, ԵՊՀ հրատ., 992 էջ։

Հարությունյան Ս. 2000, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, «Վ. Սեթյան տպարան», 528 էջ։

Հովհաննիսյան Հ. 1990, Հայ հին դրաման և նրա պայմանաձևերը, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 299 էջ։

Ղանալանյան Ա. 1969, Ավանդապատում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 930 էջ։

Մարտիրոսյան Հ. 2019, Բացօթյա սրբավայրեր հին Հայաստանում. Տիր և Անահիտ, Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին, Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., էջ 476-481։

Պետրոսյան Ա. 1997, Հայկական էպոսի հնագույն ակունքները, Երևան, «Վան Արյան», 96 էջ։

⁵² Иванов, Топоров 1974, 115, Судник, Цивьян 1978։

⁵³ Պետրոսյան 2005, Петросян 2006։

- Պետրոսյան Ա. 2004, Հայկական դիցարանի հնագույն ակունքները, Պատմա-բանասիրական հանդես, N 2, էջ 205-233:
- Պետրոսյան Ա. 2006, Հայկական ավանդական դրամայի ակունքների շուրջ. Պատմա-բանասիրական հանդես, N 2, էջ 256-284:
- Պետրոսյան Ա. 2006ա, Արամազդ. պաշտամունք, կերպար, նախատիպեր, Երևան, «Վան Արյան», 116 էջ:
- Պետրոսյան Ա. 2008, Տիգրան Մեծի առասպելաբանական կերպարը, Պատմա-բանասիրական հանդես, N 2, էջ 156-177:
- Պետրոսյան Ա. 2013, Հայկ նահապետի կերպարը. հնդեվրոպական և հին-արևելյան առնչություններ, Հայկազունիներ, Երևան, «Գիտություն», էջ 153-160:
- Պետրոսյան Ա. 2017, Հայ ժողովրդի ծագման խնդիրը, Երևան, «Անտարես», 256 էջ:
- Պետրոսյան Ա. 2018, Քաջ բառի ստուգաբանությունը. Հայերենագիտության արդի խնդիրներ, Երևան, «Էլ. հրատ.», էջ 87-91:
- Պետրոսյան Ա. 2019, Հին հնդեվրոպական օձ-վիշապը հայկական ավանդույթում և վիշապ քարակոթողները, Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին, Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., էջ 146-156:
- Պետրոսյան Հ. 2005, Տապանի իջման հինկտակարանյան դրվագը և Մասիսը Արարատ վերանվանելու պատմական և առասպելական հանգամանքները, Աստվածաշնչական Հայաստան, Երևան, «Նոյան տապան», էջ 91-99:
- Սարգսյան Գ. 1966, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 260 էջ:
- Абрамян Л.А., Демирханян А.Г. 1985, Мифологема близнецов и мировое дерево, Պատմա-բանասիրական հանդես, N 4, с. 66-84.
- Абрамян Л.А. 2013, Прикованный герой: перекрывающиеся ландшафты и мифы, Nakamura T, (ed.), Imagining the Landscape: Views from Armenia and Japan. Slavic Research Center, Hokkaido University, с. 5-25.
- Арутюнян Н.В. 1985, Топонимика Урарту, Ереван, изд. АН Арм. ССР, 308 с.
- Иванов В.В. (пер.) 1977, Луна, упавшая с неба. Древняя литература Малой Азии, Москва, «Художественная литература», 317 с.
- Иванов В.В. 1982, Кузнец. Мифы народов мира, т. 2, Москва, «Советская энциклопедия», с. 21-22.
- Иванов В.В. 1986, О мифопоэтических основах латышских дайн. Балто-славянские исследования, 1984, Москва, «Наука», с. 3-28.

- Иванов В.В., Топоров В.Н. 1974, Исследования в области славянских древностей, Москва, «Наука», 342 с.
- Миллер В.Ф. 2008, Кавказские предания о великанах, прикованных к горам, Фольклор народов Северного Кавказа, Москва, «Наука», с. 826-837.
- Петросян А.Е. 2004, Армянский Мхер, западный Митра и урартский Халди. Армянский эпос «Сасунские удалцы» и мировое эпическое наследие, Ереван, Типография «Лимуш», с. 42-60.
- Петросян А.Е. 2006, Два Апарата: гора Кордуены и Масис. Bütner R., Peltz E. (eds), *Mythical Landscapes Then and Now. The Mystification of Landscapes in Search for National Identity*, Yerevan, "Antares", с. 261-274.
- Саркисян Г.Х. 1966, Обожествление и культ царей в древней Армении, Вестник древней истории, N 2, с. 3-26.
- Судник Т.М., Цивьян Т.В. 1978, К реконструкции сюжета основного мифа в балто-балканской перспективе (фрагмент «Жена и дети Громовержца»), Конференция «Этнолингвистические балто-славянские контакты в настоящем и прошлом». Предварительные материалы, Москва. «Наука», с. 124-131.
- Топоров В.Н. 1977, Об отражении одного индоевропейского мифа в древнеармянской традиции, Պատմա-բանասիրական հանդես, N 3, с. 88-106.
- Топоров В.Н. 1980, Гора. Мифы народов мира, т. 1, Москва, «Советская энциклопедия», с. 311-315.
- Топоров В.Н. 1988, О ритуале. Введение в проблематику. Архаический ритуал в фольклорных и раннелитературных памятниках, Москва, «Наука», с. 7-60.
- Чиковани М.И. 1966, Народный грузинский эпос о прикованном Амирани, Москва, «Наука», 328 с.
- Элиаде М. 2000, Избранные сочинения, Москва, «Ладомир», 416 с.
- Ahyan S. 1982, Les débuts de l'histoire d'Arménie et les trois fonctions indo-européennes. *Revue de l'histoire des religions* CIC-3, p. 251-271.
- Dijkstra M. 1991, The Weather God on Two Mountains, *Ugarit-Forschungen*, Bd. 23, p. 127-140.
- Dumézil G. 1994. *Le roman des jumeaux*, Paris, Gallimard, 337 p.
- Güterbock H. G. 1951, The Song of Ullikummi: Revised Text of the Hittite Version of a Hurrian Myth, *Journal of Cuneiform Studies*, Vol. 5, N 4, p. 135-161.
- Fox R.L. 2008, *Travelling Heroes: Greeks and their Myths in the Epic Age of Homer*, New York, International Edition, 513 p.
- Haas V. 1994, *Geschichte der hettitischen Religion*, Leiden, New York, Köln, 1030 S.
- Hoffner H.A. 1990, *Hittite Myths*, Atlanta, Georgia, "Scholars Press", 121 p.

- Lincoln B. 1986, *Priests, Warriors, and Cattle. A Study in the Ecology of Religion*. Berkeley, Los Angeles, "University of California Press", 242 p.
- Markwart J. 1928, *Le berceau des arméniens*, *Revue des études arméniennes*, N 8, p. 210-232.
- Partsch J. 1888, *Geologie und Mythologie in Kleinasien*, *Philologische Abhandlungen*, Martin Hertz zum siebzigsten Geburtstage von ehemaligen Schülern dargebracht, Berlin, "W. Hertz", p. 105-122.
- Petrosyan A.Y. 2002, *The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic*, Washington DC, "Institute for the Study of Man", 236 p.
- Puhvel J. 1987, *Comparative Mythology*. Baltimore, London, "John Hopkins University Press", 302 p.
- Schwartz M. 1975, *Cautus and Cautopates*, Hinnells J. R. (ed.), *Mithraic Studies II*, Manchester, "Manchester University Press", p. 406-423.
- Schwartz M. 2012, *Transformations of the Indo-Iranian Snake-Man: Myth, Language, Ethnoarchaeology, and Iranian Identity*, *Iranian Studies*, Vol. 45, N 2, p. 275-279.
- Vian F. 1960, *La triade des rois d'Orchomène: Étéoclès, Phlégyas, Minyas*, *Homages à Georges Dumézil*, Brussels, "Latomus", p. 215-224.
- Watkins C. 1995, *How to Kill a Dragon*, New York, Oxford, "Oxford University Press", 613 p.

ՄԱՍԻՍ/ԱՐԱՐԱՏԸ՝ ՀԱՅՈՑ ՕԼԻՄՊՈՍ ԵՎ ՆՐԱ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ

Արմեն Պետրոսյան

Ամփոփում

Մասիսը՝ Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր, գեղեցիկ և սրբազան լեռը հայոց պատկերացումներում հանդես է գալիս որպես առասպելաբանական «աշխարհի կենտրոնում» տեղայնացած «տիեզերական լեռ»: Մասիսի վերաբերյալ հին առասպելները, վիպականացած տարբերակով, մեզ են հասել Խորենացու պատմությունից հայտնի «Վիպասանք» էպոսից: Եղած տվյալների հիման վրա կարող ենք վերականգնել հնագույն առասպելաբանության որոշ դրվագներ: Այսպես, Մասիսի վրա է տեղայնացվել ամպրոպի աստծու ծնունդը, իսկ լեռան տակ և ստորոտում՝ աստծու հակառակորդ Վիշապը և նրա հետևորդ վիշապազունները: Առասպելի պատմականացման և վիպականացման ընթացքում լեռան տակ՝ քարանձավում փակված Վիշապը նույնացվել է պատ-

մական արքա Արտավազդի հետ: Կարելի կարծել, որ Մասիսը վաղնջական ժամանակներում եղել է ոչ միայն ամպրոպի աստծու, այլ նաև մյուս աստվածների պաշտամունքի մի նշանավոր կենտրոն, հայկական Օլիմպոս: Հետագայում՝ XII-XIII դդ. հետո, Մասիսը վերջնականապես նույնացվում է աստվածաշնչյան Արարատի՝ Նոյյան փրկության լեռան հետ:

Բանալի բառեր՝ Մասիս, հայ առասպելաբանություն, ամպրոպային առասպել, առասպելական օձ-վիշապ, հայկական էպոս, «Վիպասանք», «Վահագնի երգը»:

МАСИС/АРАРАТ – АРМЯНСКИЙ ОЛИМП И ЕГО МИФЫ

Армен Петросян

Резюме

Гора Масис-Арапат – самая высокая, красивая и священная гора Армянского нагорья – в представлениях армян выступает как мифическая «мировая гора», локализованная в «центре мира». Древние мифы о Масисе до нас дошли в эпизированном варианте из эпоса «Випасанк», вошедшего в историю Мовсеса Хоренаци. На основе имеющихся данных можно реконструировать некоторые фрагменты древнейших мифов. Так, с горой Масис было связано рождение древнего бога грозы, а под горой и у подножья – обиталище его противника Змея-Вишапа и его последователей «драконидов». В процессе историзации и эпизации мифа Змей-Вишاپ был отождествлен с царем Артаваздом II. Можно полагать, что Масис в древнейшие времена был армянским Олимпом – центром не только культа бога грозы, но и других языческих богов. Впоследствии, начиная с XII-XIII вв., Масис стал отождествляться с библейским Арапатом – горой спасения Ноя.

Ключевые слова – Масис-Арапат, армянская мифология, грозовой миф, мифический змей, армянский эпос, «Випасанк», «песня Вахагна».

MASIS/ARARAT: THE ARMENIAN OLYMPUS AND ITS MYTHS

Armen Petrosyan

Abstract

Mount Masis-Ararat is the highest, most beautiful and sacred mountain of the Armenian Highland, in the mythological notions of Armenians appears as a mythical “cosmic mountain”, located in the “center of the world”. Ancient myths about Masis have come down to us in the epicised versions from the epic “Vipasank” known from the history of Khorenatsi. Based on the available data, some fragments of ancient myths can be reconstructed. Thus, on Masis, the birth of the ancient thunder god was localized, while under the mountain and its foot were the abodes of his adversary the Serpent-Vishap and its followers, the “dragonids”. Lately, in the process of myth’s historicization and epicization, the Serpent-Vishap was identified with the historical king Artavazd II. It can be assumed that Masis in ancient times was the Armenian Olympus, a significant center not only for the cult of the thunder god, but also for other pagan gods. Subsequently, from the 12th-13th centuries, Masis was finally identified with the biblical Ararat, the mountain of Noah’s salvation.

Key words – Masis-Ararat, Armenian mythology, thunder god myth, mythological serpent, Armenian epic, “Vipasank”, “Song of Vahagn”.

ՀՈՎՀԱՆ ՕԶՆԵՑՈՒ ՎԻՊԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ*

Տորք Դալայան

Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
էլ. հասցե՝ torqdal@yahoo.com

Հոդվածը ներկայացվել է 11.01.2020, գրախոսվել է 21.07.2020, ընդունվել է
տպագրության 05.08.2020

Ներածություն

Հովհան Օձնեցի Իմաստասեր կաթողիկոսը (717-728 թթ.) Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ամենասիրված սրբերից մեկն է: Դա պայմանավորված է VIII դարում նրա՝ չափազանց ազդեցիկ քաղաքական, կրոնամշակութային և կրթական գործունեությամբ: Պետականության բացակայության պայմաններում նա ստանձնում է Հայոց աշխարհի առաջնորդի դերը և անխոնջ պայքար ծավալում երկրի մշակութային ու կրոնական անկախության համար: Դրսևորելով դիվանագետի փայլուն հատկանիշներ՝ Օձնեցի կաթողիկոսը դաշնակցում է մուսուլման արաբների հետ և նրանց օգնությամբ ապահովում Հայաստանի կրոնամշակութային ժամանակավոր վերելքը¹:

Ներկա հոդվածն անդրադառնում է Հովհան Օձնեցու վիպական կերպարի ընդհանուր քննությանը՝ հատկապես կենտրոնանալով այն պատումների ու զրույցների վրա, որոնք ունեն իրական պատմական ատաղձ կամ զարգացել են VIII դարի իրադարձությունների հիմքի վրա: Դրանցում Օձնեցին նկարագրվում է որպես բանիմաց ու խորագետ, բազմապրոֆիլ

* Հոդվածի նախնական տարբերակը՝ «Հովհան Օձնեցու կերպարը բանահյուսության մեջ» վերնագրով, ներկայացվել է որպես զեկուցում 2017 թ. դեկտեմբերի 5-ին Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» Մատենադարանում տեղի ունեցած՝ «Հովհան Օձնեցի Իմաստասեր կաթողիկոսը եւ նրա ժամանակը» թեմայով գիտաժողովին՝ նվիրված Ս. Հովհան Օձնեցի կաթողիկոսի ծննդյան 1300-ամյակին:

¹ 701 թ. Դվինը գրավելուց հետո արաբները *Արմինա* վարչական միավորի տարածքում, որն ընդգրկում էր Հայաստանը, Վիրքը և Աղվանքը, որպես առաջնային քաղաքական դեմք էին ընդունում Հայոց Կաթողիկոսին (տե՛ս Тер-Гевондян 1977, 73-74, 79-82, Միքայելյան 2004, 27-30):

գիտնական ու հոգևորական, որը զուրկ չէ նաև արտաքին բարեմասնություններից:

Օձնեցու վիպական արտաքինը

Պատմագիրները մեծ ուշադրություն են դարձնում Հովհան Օձնեցու արտաքին հատկանիշների գովերգմանը՝ սկսած նրա մասին առաջինը հիշատակող Հովհաննես Դրասխանակերտցուց (IX-X դդ.): Օձնեցու արտաքին նկարագրության մեջ զգալի տեղ են գրավում հրաշագործ տարրերը: Սա ցույց է տալիս, որ նրա կյանքից երկու դար անց արդեն իր կերպարը վիպականացված էր:

Դրասխանակերտցու հաղորդմամբ՝ Հովհան Օձնեցին զգեստի տակից ոչ թե բրդյա, այլ այծի մազից գործված կոպիտ ու անտանելի քուրծ էր հագնում, մինչդեռ դրսից զարդարվում էր գունավոր ընտիր նյութից պատրաստված զգեստով: Նա, ոսկին խարտոցով մանրացնելով ու նրա հետ անուշահոտ խունկեր խառնելով, փչում էր ալեխառն մորուքին, որն իջնում էր մինչև զգեստի գրպանները²: Այս գծերը կարող են միանգամայն իրական լինել, սակայն կարելի է պատկերացնել, թե հասարակ ժողովրդի մեջ ինչ զգացողություն էր առաջացնում ոսկեզօծ մորուքով Օձնեցու վեհատեսիլ արտաքինը. այս փաստն արդեն իր ողջության օրոք կարող էր պատճառ դառնալ, որ իրեն սրբի գերբնական լուսապսակ վերագրեին: Ոսկեփայլ մորուքի մոտիվն իր դրսևորումն է ստանում նաև ուշ բանահյուսական պատումներից մեկում, որտեղ Օձնեցին համբուրում է զինվորների գլուխները, ընդ որում՝ այստեղ իր մորուքը նաև մոգական ներգործություն ունի:

Դրասխանակերտցուց շուրջ երեք դար անց Կիրակոս Գանձակեցին (1203-1271) Օձնեցու մասին գրում է. «Սա էր այր իմաստասէր եւ սուրբ, եւ վայելուչ հասակաւ մարմնոյն, եւ հոգւովն եւս առաւել գեղեցիկ... քանզի խարտեալ զոսկի եւ արկեալ զմօրուք իւրովք՝ եմուր առ նա»³: Նույն դարում Վարդան Արևելցի պատմագիրը հատուկ աշխատանք ունի գրած Հովհան Օձնեցու մասին, որը կոչվում է «Ճառ ի վերայ Յոհան Օձնեցոյ»: Այս երկում Օձնեցին կոչվում է Հայրապետ Յովհան Ուձնեցի: Վարդանի խոսքերով՝ արաբ մեծատոհմիկները ապշահար, բերանները բաց հիանում

² Հովհաննես Դրասխանակերտցի 1996, 104:

³ Կիրակոս Գանձակեցի 1961, 67:

էին Օծնեցու փառահեղ արտաքինով. «յաւագ արանց եւ ի զօրագլխոց որք եւ զարմացեալ հիանային եղեալ ձեռն ի ծնօտի, երանի տալով աշխարհին, որ այսպիսի ունիցի առաջնորդ»⁴:

Վարդան Արևելցիին Օծնեցուն համեմատում է [Գրիգոր] Լուսավորչի հետ. ինչպես որ Լուսավորիչը մնաց օծերի մեջ Խոր Վիրապում, այնպես էլ Օծնեցին անձնագոհաբար մտավ «օծաբարո արաբների» մեջ: Հայոց հայրապետը արաբական խալիֆայի պալատ է մտնում ճերմակ քող ունեցող վարսակալ-թագով, խաչանշան գավազանով «զինված»⁵: Գրիգոր Լուսավորչի հետ համեմատությունն առնչվում է նաև Օծնեցու պատմական կերպարին, քանի որ նա է վերականգնում Լուսավորչի հաստատած կրոնական տոները:

XIX դարավերջին Հովհան Օծնեցու մասին վիպական մի պատում է գրի առել գրող և բժիշկ Գաբրիել Տեր-Հովհաննիսյանը (Քաջբերունի) Վայոց ձորի Խաչիկ գյուղում՝ Թադոս բանասացից: Այստեղ Օծնեցին հանդես է գալիս ոսկեփայլ մորուքով և պճնազարդ հանդերձով, որի տակից հագնում էր քուրձ⁶:

Օծնեցու և արաբ խալիֆայի հանդիպումը

Վիպական պատումներում կենտրոնական տեղ է գրավում Հովհան Օծնեցու պատմական հանդիպումը Արաբական տերության խալիֆայի հետ: Այս հանդիպումը նկարագրվում է վիպական ժանրին բնորոշ գծերով:

Ինչպես պատմում է Հովհաննես Դրասխանակերտցին, Օծնեցուն տեսել էր Վլիթ անունով Հայոց մի ոստիկան⁷, որն արաբ ամիրապետին պատմել էր Օծնեցու վայելչության մասին, և ամիրապետը ցանկացել էր տեսնել նրան: Ըստ Վարդան պատմիչի՝ արաբ բարձրատոհմիկ պաշտոնյաները հաճախ մասնակցում էին հայոց եկեղեցական տոնախմբություններին, որոնց ընթացքում բազմիցս տեսել էին Օծնեցուն և նրա մասին բարեխոսել Օմար ամիրապետին⁸: Դրանից հետո է, որ Օմարը ցանկություն է հայտնում տեսակցելու Օծնեցուն: Օծնեցու՝ արաբների ամիրապետի

⁴ Վարդան Արևելցի 1888, 584:

⁵ Վարդան Արևելցի 1888, 585:

⁶ Քաջբերունի 1881, 84:

⁷ Վլիթ անվանաձևը պետք է արաբ. *Վալիդ* անվան մի տարբերակը լիներ (Теревондян 1977, 82):

⁸ Վարդան Արևելցի 1888, 584:

նստավայրը մեկնելուն առնչվող դեպքերի նկարագրությունը տալիս Գանձակեցին նշում է. «*Ջսա կոչեաց Հէշմ ի դուռն իւր, եւ վասն վայելչութեան երեսաց նորա մեծապէս պատուեաց զնա...*»⁹: Ինչպէս տեսնում ենք, ի տարբերություն Դրասխանակերտցու, որն անվանապէս չի հիշատակում արաբ ամիրապետին, Գանձակեցին նշում է նրա անունը՝ Հեշմ:

Դրասխանակերտցու պատումի համաձայն՝ Օձնեցուն մեծ պատվով բերում են արքունական քաղաքը, և ամիրապետը նրան պատգամ է հղում, որ նա զգեստավորվի սովորական, և ինքը նրան այդպէս տեսնի: Սակայն Օձնեցին, իր բարձրահասակ կերպարանքն է՛լ ավելի փայլուն զգեստներով զարդարելով և նոր ճերմակած մորուքը ոսկե ծաղիկների փնջի նման կազմելով ու ձեռքն առնելով ոսկենկար գավազանը, որ երենոյա փայտից էր, ահա այդպէս լավ գույն ունեցող ու թիկնավետ այդ մարդը մտնում է ամիրապետի մոտ¹⁰:

Արաբ ամիրապետը սկզբում դրական չի վերաբերվում Օձնեցու արտաքին շքեղությանը, սակայն երբ տեսնում է նրա հագուստի տակի կոպիտ քուրճը, մեծարում ու պատվում է Օձնեցուն, շքեղ հագուստներ նվիրում և ոսկու ու արծաթի գանձեր նրան պարգևելով՝ ուղարկում է Հայաստան: Օձնեցին ապրում է մի քանի տարի և վախճանվում հայրապետական աթոռին տասնմեկ տարի նստելուց հետո. «*Որոյ եկեալ եւ կեցեալ ամս սակաւ՝ վախճանի, կացեալ յաթոռ հայրապետութեան ամս մեքասան*»¹¹:

Գանձակեցին բերում է նույն երկխոսությունը Հեշմի և Հովհան Օձնեցու միջև, ինչ որ Դրասխանակերտցին, սակայն փոքր-ինչ այլ բառերով: Այս փաստը հուշում է, որ թերևս նշված երկու պատմագիրներն էլ անկախ օգտվել են ժողովրդական բանավոր կամ եկեղեցական գրավոր ավանդապատումներից¹²: Ըստ Գանձակեցու՝ Հեշմի այն հարցումին, թե «Ձեր

⁹ Կիրակոս Գանձակեցի 1961, 67:

¹⁰ Հովհաննես Դրասխանակերտցի 1996, 105-107:

¹¹ Հովհաննես Դրասխանակերտցի 1996, 106-107:

¹² Բանագետ-բանասեր Կ. Մելիք-Օհանջանյանը, որը հրատարակության է պատրաստել Կիրակոս Գանձակեցու աշխատությունը, դրա առաջաբանում նշում է, որ Գանձակեցին մեծապես արժանի է օգտագործել է բանավոր աղբյուրը՝ ժողովրդական ավանդագրույցները, ականատեսների և ականջալուրների պատմածները (Կիրակոս Գանձակեցի 1961, ԽԹ): Օձնեցու մասին Գանձակեցու հաղորդած ավանդագրույցները, ըստ Կ. Մելիք-Օհանջանյանի, վերաբերում են «եկեղեցական գրույցներին» կամ «կրոնա-ժողովրդական մանրապատումներին» (Կիրակոս Գանձակեցի 1961, ԾԱ):

Քրիստոսի մասին ասում են, թե չափազանց հեզ էր ու խոնարհ և աղքատությունը ավելի էր սիրում: ...Իսկ դու ինչո՞ւ ես այդպես զարդարվել», Օձնեցին պատասխանում է. «Դու քո ծառաներից ավելի ոչինչ չունես, բացի միայն թագավորական թագից ու հանդերձանքից. դրա համար վախենում են քեզանից ու մեծարում են քեզ: Մեր առաջին հայրերը հրաշագործներ ու վարքով սքանչելի էին, դրա պատճառով՝ նրանց ձեռքի տակ գտնվողները երկյուղում էին նրանցից ու նրանց հրամանները դողահար կատարում: Իսկ մենք այդպիսիք չենք, այդ պատճառով՝ հանդերձներով ու զարդերով զարդարվում ենք, որպեսզի մեր հրամանները չանտեսվեն»: Այս ասելով՝ Օձնեցին բացում է իր կուրծքը և ցույց տալիս այն մազեղեն հագուստը, որ կրում էր տակից¹³:

Հովհան Օձնեցու համեստ պահվածքն ու խոսքերն այնքան են ազդում Հեշմ ամիրապետի վրա, որ տիրակալը մեծարում ու պատիվների է արժանացնում Օձնեցուն: Նաև երաշխիք է տալիս, որ քրիստոնյաները հարկերից կազատվեն և ամենուրեք ազատ կկարողանան կատարել իրենց հոգևոր պաշտամունքը, և ոչ ոք չի ստիպի նրանց ուրանալ իրենց հավատը, դրա փոխարեն՝ հայ ազգը քաղաքական առումով կենթարկվի իրեն: Հեշմն իր մատանիով կնքում է այս համաձայնագիրը և մեծ պարգևներով ու զորքով Օձնեցուն հետ է ուղարկում Հայոց աշխարհը: Այնուհետև Հայոց կաթողիկոսը արաբների օժանդակությամբ Հայաստանից հալածում է բոլոր բյուզանդացիներին՝ «թե՛ վերակացուներին, թե՛ զինվորներին», և դրա շնորհիվ կարողանում է արդյունավետ պայքարել քաղկեդոնականության դեմ ու վերահաստատել Գրիգոր Լուսավորչի սահմանած տոները: Հետաքրքիր է, որ Օձնեցին սահմանում է նաև Դավիթ մարգարեի ու Հակոբ առաքյալի տոները դեկտեմբերի 25-ին, երբ «այլ ազգերը Տիրոջ ծննդյանն են տոնում...»¹⁴: Ինչպես տեսնում ենք, Օձնեցին լրջորեն զբաղվել է նաև հայոց եկեղեցական տոնացույցի կանոնակարգմամբ¹⁵:

Վարդան Արևելցի պատմագիրը արաբ խալիֆային կոչում է ոչ թե Հեշմ, այլ Օմար¹⁶: Ըստ Վարդանի՝ եկեղեցիներ կառուցելուց հետո Օձնե-

¹³ Գանձակեցի 1961, 67-68, 1982, 59-60:

¹⁴ Կիրակոս Գանձակեցի 1961, 69, 1982, 60-61:

¹⁵ Այս մասին մանրամասն տե՛ս Վարդանյան 1999, 198-199, 206, ինչպես նաև՝ Հալոբյան 2009, 40-41, Սարգսյան 2010, 260-265:

¹⁶ Այդպիսով, ըստ հայ պատմագիրների՝ Հովհան Օձնեցու այցը Դամասկոս տեղի է ունեցել կա՛մ Օմայան Օմար իբն Աբդ ալ-Ազիզ խալիֆայի (717-720), կա՛մ էլ Հեշմ/Հիշամ (724-743) խալիֆայի օրոք (տե՛ս Միքայելյան 2004, 27): Ա. Տեր-Ղևոնդյանը հակված էր

ցին մեծ շուքով կրոնական տոնախմբություններ էր կազմակերպում Հայաստանի տարբեր վայրերում, որոնց ներկա արաբ պաշտոնյաները բարեխոսում են Օմարի մոտ, և վերջինս Օձնեցուն հրավիրում է իր պալատը: Օձնեցու փառահեղ տեսքից այլայլված՝ դողահար Օմարը միայն որոշ ժամանակ անց է կարողանում ուշքի գալ և հարց ուղղել Օձնեցուն:

Այնուհետև տեղի է ունենում գրեթե նույն երկխոսությունը, որ նկարագրվում է մեր մյուս պատմիչների երկերում: Օձնեցին Օմարին ցույց է տալիս իր տակի հագուստը, և ապա Օմարը հրամայում է կանչել իր զորքերում եղած բոլոր հիվանդներին («նեղյալներին»), որոնց Հովհան Օձնեցին տեղում իսկ բժշկում է: Օմարը խոստանում է որդու նման կատարել ինչ որ հաճո է Օձնեցուն, և վերջինիս խնդրանքով՝ զորքեր է տրամադրում նրան: Օձնեցին Սմբատ Կյուրոպաղատի և արաբների զորագնդերի օգնությամբ հալածում է բոլոր բյուզանդացիներին «ի վերին աշխարհէն Հայոց»¹⁷:

«Հովհան Օձնեցի և արաբ ամիրապետ» վիպական դրվագի փոքրինչ փոփոխված մի տարբերակ է գրի առել Երվանդ Լալայանը և XX դարասկզբին հրատարակել իր «Բորչալու» ժողովածուում: Ցավոք սրտի, Լալայանը չի նշում իր բանասացներին: Լալայանի պատումում նկատելի է մեր միջնադարյան էպոսի՝ «Սասնա ծռերի» ազդեցությունը: Այսպես, օրինակ, Հեշմի կամ Օմարի փոխարեն հանդես է գալիս *Բաղդադի խալիֆան*¹⁸: Բացի այդ, զգացվում է նաև Դրասխանակերտցու, Գանձակեցու և Վարդան պատմագրի հաղորդած պատումների ազդեցությունը, սակայն հնարավոր է, որ դա անուղղակի ազդեցության արդյունք է՝ կապված ընդհանուր ժողովրդա-եկեղեցական աղբյուրից սնված լինելու հանգամանքի հետ: Չի բացառվում նաև բանասացներից ոմանց որոշակի ծանոթությունը միջնադարյան պատմագիրների երկերին:

Ըստ Ե. Լալայանի գրառած տարբերակի՝ *«Օհան Օձնեցին վեր է կենում, գնում Բաղդադի խալիֆի մօտ՝ օգնութիւն խնդրելու: Խալիֆան պատրուով ընդունում է նրան եւ տեսնելով նրա չափազանց շքեղ հանդերձը՝ յանդիմանում է... Օձնեցին առանց պատասխանելու բաց է անում կուրծքը,*

Օմար II (717-720)-ի օգտին՝ գտնելով, որ Հիշամի օրոք անհավանական կլիներ այդ այցը (Тер-Гевондян 1977, 83, ком. 47):

¹⁷ Վարդան Արևելցի 1888, 585-586:

¹⁸ Իրականում Օձնեցու հանդիպումը Արաբական տերության խալիֆայի հետ տեղի է ունեցել մայրաքաղաք Դամասկոսում (Тер-Гевондян 1977, 83), թեև ո՛չ Հովհաննես Դրասխանակերտցին, ո՛չ Կիրակոս Գանձակեցին, ո՛չ էլ Վարդան Արևելցին քաղաքի անունը չեն նշում:

եւ խալիֆան տեսնում է, որ գեղեցիկ հանդերձի տակ, մարմնի վրայ խաբազան է հագած, որի վրայ նոյն իսկ մանր մեխեր են անցկացրած, որ շարունակ ծակոտեն մարմինը»: Հատկանշական է այստեղ հագուստի տակից քուրձ հագնելու մոտիվի առավել սաստկացումը. ժողովրդական գունագարդված նկարագրությամբ՝ ավելացված են քուրձի վրայի մեխերը, որոնք բացակայում են վերոնշյալ պատմագիրների երկերում:

Այնուհետև, ըստ Լալայանի գրառած տարբերակի, բոլորովին նոր մի դրվագ է ավելանում Օձնեցու և արաբ ամիրապետի հանդիպման պատումին. «Մինչդեռ խալիֆան զարմացած նայում է, Օձնեցու մարմնից մի կաթիլ արիւն է թռչում խալիֆայի կոյր աչքին, որ իսկոյն բացում է: [Այնուհետև] Օհան Օձնեցին բռնում է խալիֆայի բորոպ ձեռքերը եւ տանում իր ծոցը, որոնք եւ իսկոյն բժշկում են: Խալիֆան այս հրաշքներից հիացած՝ խոստանում է կատարել Օհան Օձնեցու խնդիրը...»¹⁹: Ինչպես նշում է այս առնչությամբ Ա. Իսրայելյանը՝ սրբերի ամենաբնորոշ հատկանիշներից է բժշկելը: Այս դրվագում, ըստ նրա, ակնհայտ է Նոր Կտակարանի ազդեցությունը, որտեղ Հիսուսը, ձեռքով դիպչելով, բուժում է իրեն հավատացած բորոտին: Ավետարանում պատմվում են նաև կույրերի բուժման մի քանի դեպքեր, բայց ոչ արյան կաթիլներով: Արյան կաթիլներից կույր աչքերի ապաքինման մոտիվի օրինակ կա քրիստոնեական մի ավանդազրույցում²⁰: Այսպիսով, եթե Վարդան Արևելցու պատումում Օձնեցին բժշկում է հիվանդ զինվորներին, ապա Լալայանի տարբերակում արդեն բժշկվողը գլխավոր հերոսն է՝ արաբ խալիֆան:

Վայոց ձորում Քաջբերունու գրառած տարբերակում «Հոհան Օձնեցին», տեսնելով հայերի կրած նեղությունները բյուզանդացիներից, գնում է Մադինե քաղաք՝ օգնություն հայցելու արաբ խալիֆաներից, որոնց հետ նա արդեն ծանոթ էր²¹: Վանա լճի հյուսիսարևմտյան Բզնունիք գավառից հայտնի «Օխան Օձնելի» վերնագրված պատումում Օձնելին Մանազկերտի երկրամասի առաջնորդն է, իսկ նրա դաշնակիցը տաճիկ Մեհմեդն է, որը հետագա շարադրանքում բազմիցս կոչվում է միայն Մամադ, և ըստ պատումի՝ նրա նստավայրը Շամն է (Սիրիան), թեև նա համարվում է թուրք, ոչ թե արաբ: Օխան Օձնելու հակառակորդը Ուռումի թագավորն է, այսինքն՝

¹⁹ Լալայան 1903, 176, տե՛ս նաև Ավանդապատում, N 773 Դ, 305:

²⁰ Տե՛ս Իսրայելյան 2001, 72-73:

²¹ Քաջբերունի 1881₄, 84:

Բյուզանդիայի կայսրը, ընդ որում մի քանի անգամ նշվում է նաև նրա անունը՝ *Կոստանոս*²²:

Տեսնելով հասարակ ժողովրդի կեղեքումները բյուզանդացիներից՝ Օձնելին իշխանների խորհրդաժողով է հրավիրում, «*տկանց լեշի վերէն խագաւ մազեղէն գաբգբուն շապիկ, վերեւ էլա խագաւ սետուրբ գեստեր... առաւ ուր փոքրաւոր, գնաց գնաց ի Շամ*»: Մամադը ոտաբոբիկ դիմավորում է Օձնելին իր ապարանքի առջև, տանում ներս և զրույցի ընթացքում մի քանի անգամ «երեսով տալիս» Օձնելի շքեղ հագուստը: Երեկոյան, երբ առանձնանում են, Օձնելին արձակում է իր մեջքը, և «*Մամադ իշկեց մազեղէն շապիկ, ու էրկթէ գաբգաբներ մտեր ա մսի մէջ*»²³:

«Թուղթ ու գիր»

Ե. Լալայանի պատումը, Բաղդադի խալիֆայի բժշկման դրվագից սկսած, փաստորեն վիպական մի շարք է՝ հյուսված Հովհան Օձնեցու շուրջ: Սրա առաջին մասում առկա է Դրասխանակերտցու, Գանձակեցու և մասամբ Վարդան Արևելցու հաղորդած «Օձնեցի և Հեշմ (Օմար)» ավանդագրույցը, սակայն հետագա գործողությունների ծավալումը բնորոշ է վիպական բանահյուսական ընդարձակ ստեղծագործություններին: Այսպես, Լալայանի տարբերակում պատմվում է, որ «*Խալիֆան այս հրաշքներից հիացած՝ խոստանում է կատարել Օհան Օձնեցու խնդիրը, միայն ոչ թե ուղղակի զորք, այլ դրամ տալով, որպէսզի նա այդ դրամով ինքնակամ զորք պատրաստէ: Օհան Օձնեցին ճարահատած համաձայնում է*»: Երբ սկսում են խոսել զորքի քանակի մասին, Օձնեցին մի թղթի վրա ինչ-որ բան է գրում և տալիս խալիֆային՝ դրա քաշով մեկ ոսկի խնդրելով: Խալիֆան քմծիծաղով թուղթը դնում է կշեռքի մի նժարին, իսկ մյուսին ոսկիներ է շարում: Սակայն ինչքան էլ որ ավելացնում է ոսկեդրամները, այդ նժարը չի հավասարվում թղթի նժարին: Ի վերջո, համաձայնում է հինգ հարյուր գինվոր տալ Օձնեցուն²⁴: Այստեղ փոխաբերական պատկերով արժևորվում է Օձնեցու խոսքի ուժը: Ա. Իսրայելյանի մեկնաբանությամբ՝ նշված դրվագում ի հայտ է գալիս Օձնեցու՝ հմայագիր կատարելու,

²² Օխան Օձնելի 1898, 412-413: Այս պատումի Կոստանոս թագավորի մասին Վարդան Արևելցին գրում է. «...ի գալն կայսերն Կոստանդիա բարկութեամբ աւերել զաշխարհս...» (Վարդան Արևելցի 1888, 586):

²³ Օխան Օձնելի 1898, 413-414:

²⁴ Լալայեան 1903, 176, տե՛ս նաև Ավանդապատում, N 773 Դ, 305:

ժողովրդական խոսքով ասած՝ թուղթուգիր անելու ունակությունը²⁵։ Ուշագրավ է, որ VIII դարում տակավին «թղթե շերեփը» հաղթում էր «երկաթե շերեփին»։

«Թուղթուգիրի» դրվագն առկա է նաև Քաջբերունու գրառած տարբերակում։ Այստեղ Մադինեի *«խալիֆաները խորհրդակցելով կարդացողների հետ՝ վճռեցին տալ Օձնեցուն դրամական նպաստ եւ ոչ թէ մարդ»*։ Օձնեցին մատաչափ թղթի վրա մի աղոթք է գրում և խնդրում դրա կշռով դրամ տալ իրեն։ Խալիֆաների գիտունները հեգնելով սկսում են կշռել թուղթը, սակայն գանձարանի ամբողջ գումարը չի բավարարում, որ նժարը հավասարվի թղթի նժարին։ Դրանից հետո Օձնեցին համաձայնում է պալատականների նոր պայմանին՝ վերցնել քանի հազար մարդ, որ հարկավոր է, բայց *«որ ոչ մի մարդ այդ զօրքից չպակասի, ապա թէ ոչ՝ իւրաքանչիւր պակասած մարդու փոխարէն եօթը հայ մարդ պէտք է տար»*²⁶։

Օձնեցին և իր զորքերը

Հովհան Օձնեցին կարողանում է լուծել յոթ հայ մարդ չզոհաբերելու խրթին խնդիրը։ Քաջբերունու բանասաց Թադոսը պատմում է, որ արաբական զորքի հետ հասնելով մի մեծ գետի՝ առաջինն այն անցնում է Օձնեցին և կամրջի մյուս ծայրում Աստծուց հայցում, որ նա զինվորների՝ կամրջով անցնելու ժամանակ գետի մեջ անգլուխ ցույց տա այն զինվորների ստվերը, որոնք մեռնելու կամ սպանվելու են։ Աստված կատարում է Օձնեցու խնդրանքը, և նա «անգլուխ արաբ զինվորներին» ջոկում ու հետ է ուղարկում։ Իսկ մնացած զորքին միացնում է հայոց զորքը, և Օձնեցին զատ-զատ մոտենալով յուրաքանչյուր զինվորի՝ թե՛ հայի, թե՛ արաբի, հերթով համբուրում է նրանց գլխի մազափնջիկը։ Այստեղ հրաշագործ դեր է կատարում Օձնեցու «ոսկեփայլ» մորուքը, քանի որ երբ նա համբուրում էր սափրագլուխ զինվորների գլխի մազափնջերը կամ մեկ բառով ասած՝ գետերը, *«փնջիկի մէջտեղ, ուր դիպչում էին Օձնեցու շրթունքը, կոլոր ոսկի դուրս եկաւ, որից եւ ծագած է կըզըքաշ կոչումը, այն է՝ ոսկեգլուխ»*²⁷։

²⁵ Իսրայելյան 2001, 74։

²⁶ Քաջբերունի 1881₄, 84։

²⁷ Քաջբերունի 1881₄, 85։ Ըստ բանասաց Թադոսի՝ հնում *«բնիկ հայերիս մէջ գլխի վերայ մազ կրելու սովորութիւն չկար, ինչպէս կայ այժմ։ Ամբողջ գլուխը սափրում էին՝ թողնելով միայն գագաթի վերայ մազէ փնջիկ (քեաքու), որի մէջ տեղ, նոյնպէս բոլորակ սափրելով՝ մազէ փնջիկին տալիս էին շրջանի ձեւ։... Գագաթի վերայ մազէ փնջիկ թողնելը*

Սահրաժ գլխին երկար գես թողնելու սովորույթը, հատկապես ռազմիկների մեջ, Հայաստանում վկայված է դեռևս հեթանոսական ժամանակներից. ըստ Հովհան Մամիկոնյան պատմագրի՝ նման սովորույթ կար Տարոնում՝ Գիսանե աստծո հետևորդների մեջ: Գիսանեն ինքն էլ երկար ծամ ուներ, ըստ երևույթին նա համարվում էր ամպրոպի և ռազմի աստվածություն, որի կերպարը քրիստոնեության օրոք ժառանգել էր Սուրբ Կարապետը²⁸: Հետագայում այս սովորույթը տարածված է եղել տարբեր ժողովուրդների մեջ:

Զորքերի՝ կամրջով անցնելու դրվագն առկա է նաև Լալայանի տարբերակում. «Օհան Օձնեցին զօրքն առած գալիս է եւ երբ կամուրջից պիտի կենային, դիպում է, թէ որի [որ զինուորի] պարկերը [ն է, որ] գետում անգլուխ է երեսում: Եւ դրանից գուշակելով, որ այդ զինուորին վիճակուած է պարերազմում մեռնիլ, [նրան] վերադարձնում է խալիֆային եւ միմիայն 300 զինուոր առած գնում է: Այս ժամանակ երկնքից մի խաչանիշ թուր է վայր ընկնում, որ Օհան Օձնեցին վերցնում է եւ մէջքը կապում»: Այս հրաշքը տեսնելով՝ հոռոմների, այսինքն՝ բյուզանդացիների հրամանատարը հուսահատվում է և փախչում: Օհան Օձնեցին հալածում է բոլոր հոռոմներին Հայաստանից և գերի բռնում նրանց պատրիարքին, որը սպառնացել էր, թե եռացրած ջրի մեջ է ձգելու Օհան Օձնեցուն²⁹:

Օձնեցու խաչանիշ թուրը

Առասպելաբանական տեսանկյունից՝ երկնային թրի ձեռքբերման մոտիվն ամենահետաքրքրականներից մեկն է Օձնեցուն նվիրված վիպաշարում: Այդ դրվագում արդեն Հովհան Օձնեցին հանդես է գալիս ոչ միայն կրոնական, այլև ռազմական գործչի դերում, որը, դիցաբանական մտածողության համաձայն, օժտվում է ամպրոպային հերոսի հատկանիշներ

մնացել է Յոհան Օձնեցուց, շարունակեց խնամի Թադոսը, թէպէտ մենք չգիտենք, թէ ե՞րբ եւ քանի՞ տարի մեզանից առաջ է եղել Յոհան Օձնեցին...» (Քաջբերունի 1881⁴, 83):

²⁸ Այս մասին տե՛ս Հարությունյան 2001, 21-28:

²⁹ Լալայեան 1903, 176-177, տե՛ս նաև Ավանդապատում, N 773 Դ, 305-306: Խորհրդային շրջանում (1967 թ.) Ստեփանավանում գրառված մի տարբերակում, որն, ամենայն հավանականությամբ, գրական ճանապարհով ազդված է Ե. Լալայանի պատումից, բանասացն, անունները շփոթելով, հոռոմներին դարձրել է Հռոմի թագավոր, որից օգնական զորք է ստանում Հովհան Օձնեցին, որպեսզի պայքարի Լոռիին տիրած հույների դեմ (Գևորգյան 1999, 135-136, N 92, 230):

րով³⁰: Երկնային «խաչանիշ» թուր ստանալու մոտիվը Լալայանի գրառած տարբերակում ակնհայտորեն հիշեցնում է «Սասնա ծռեր» հերոսական էպոսի Թուր Կեծակիի և Խաչ Պատերազմիի մասին պատկերացումները, ինչպես նաև Հավլունի Թրի մասին ավանդագրույցները:

Եթե Լալայանի տարբերակում թրի մոտիվը շատ հպանցիկ է, ապա Քաջբերունու տարբերակն առավել մանրամասնորեն է անդրադառնում դրան: Ըստ Քաջբերունու բանասացի՝ «*Օձնեցին առաւ սուրը (թուրը), խաչանշանով օրհնեց եւ իբրեւ խաչի նշան՝ շինել փուեց պղնձէ խաչածեւ բալչախ (թուրքերէն) եւ հագցրեց նորան թրի գլուխը: Այս խաչածեւ պղնձէ բալչախը մինչեւ այժմ գործ է ածում մեր ասիական թրերի վերայ. ուրեմն նա մնացել է Օձնեցու ժամանակից: Օձնեցին ինքը իւր սուրբ ձեռքով սուրը կապեց Ալի զօրապետի մէջքը եւ ընկան ճանապարհ դէպի Հայաստան*»³¹: Հովհան Օձնեցու գլխավորած զորքը՝ առանց մի մարդ իսկ կորցնելու, Հայաստանից հալածում է բոլոր բյուզանդացիներին: Դրանից հետո նա անձամբ զորքերին տանում է Մաղինե, հանձնում խալիֆաներին, իսկ ինքը վերադառնում Հայաստան:

Հայկունու տարբերակում նույնպես թրի մոտիվը հպանցիկ է: Այստեղ պատմվում է, թե ինչպես Օխան Օձնելու օժած թրով (ինչի համար էլ նա կոչվում է Օձնելի) տաճիկ Մամաղը գրավում է աշխարհը, հասնում *Սփամբօլ* և հաղթում Կոստանոս թագավորին, որը գլխատվում է Մամաղի ծառայի (*արաբի*) կողմից: Պատումն ավարտվում է նրանով, որ «*Ամեն էլա մացին թուրքի ձեռաց փակը*»³² (ամենքն էլ մնացին թուրքի տիրապետության տակ): Ակնհայտ է այս տարբերակի երկրորդ մասի հարմարեցումը Օձնեցու ժամանակներից ավելի ուշ ձևավորված պատմական իրողություններին:

Խաչանիշ թրով զինված Օձնեցու դիցաբանական կերպարի պատմական հիմքը կարող էր լինել Օձնեցու իրական արտաքին նկարագիրը, ինչպես, օրինակ, տեսնում ենք Վարդան պատմիչի երկում՝ «*զինեալ խաչանշոյլ եւ ականակոռ գաւազանաւն*»³³: Ասել է թե՛ ըստ Վարդան Արևելցու՝ Օձնեցին զինված էր խաչանշան գավազանով, որի վրա թանկարժեք քարեր էին ագուցված: Այս կերպարն անմիջականորեն կապված էր նաև

³⁰ Հմմտ. նաև Իսրայելյան 2001, 77:

³¹ Քաջբերունի 1881, 84:

³² Օխան Օձնելի 1898, 414:

³³ Տե՛ս Վարդան Արևելցի 1888, 585:

Օձնեցու գաղափարաբանական համոզմունքներին, որոնցում կարևոր տեղ ուներ խաչի սրբազան գործառույթը: Պատահական չէ, որ իր երկերից մեկում Օձնեցին խաչը կոչում է «յաղթութեան նշան»՝ գրելով. «մեք զմիայնոյ միաձնի Որդւոյն աստուծոյ պաշտեմք զպատկեր եւ զնշան յաղթութեան»³⁴, և հենց խաչի՝ որպես «ամենահաղթ զենքի» պատկերացումն է արտացոլված «խաչանիշ թրի» մասին ավանդազրույցում³⁵:

Հատկանշական է, որ XIX դարավերջին, Կարնո և Կարսի զինագործների համայնական միավորման մեջ ընդունված ավանդության համաձայն՝ իրենց նախահայրը Հովհան Օձնեցին էր³⁶, այն է՝ Օձնեցին համարվում էր զինագործների հովանավոր-սուրբը: Այս երևույթի վրա ուշադրություն հրավիրած Գ. Աղանյանն իրավամբ նշում է, որ ճշմարիտ ուղղափառ հավատի պահպանման համար Հովհան Օձնեցու մղած զինյալ պայքարը հիմք էր հանդիսացել նրա ռազմական կերպարի ձևավորման համար: Կարևոր դեր էր խաղացել նաև երկաթով աղանդավորների ճակատը խարանելու հանգամանքը, որն անմիջականորեն առնչվում էր Օձնեցու գործունեությանը: Այսպիսով, «արդարադատության պատժող սուրը» Հովհան Օձնեցուն ուղղակիորեն կապել էր զինագործ-արհեստավորների հետ³⁷:

Հովհան Օձնեցին և Օձունի եկեղեցին

Ըստ պատմական ավանդության՝ իր հայրենի Օձուն գյուղում Հովհան Իմաստասեր կաթողիկոսը մի մեծ եկեղեցի է կառուցում, որը կանգուն է մինչև այսօր: Այս մասին առաջինը գրում է XIII դ. կեսերի պատմիչ Կիրակոս Գանձակեցին (մահացել է 1271-ին). «Շինէ եւ եկեղեցի մեծ ի գիւղն իւր Օձուն, որ հուպ է առ քաղաքն Լոռէ, եւ իւր ընտրեալ տեղի բնակութեան սակաւ մի ի բացեայ ի գիւղէն՝ անդ դադարէր»³⁸: Այսպիսով, նշված եկեղեցին Լոռե քաղաքի մոտ էր՝ «իր Օձուն գյուղում», իսկ գյուղից քիչ հեռու Օձնեցին ընտրել էր իր բնակության վայրը՝ նստավայրը³⁹:

³⁴ Յովհան Օձնեցի 1953, 47, Պետրոսյան 2004, 122:

³⁵ Տե՛ս Պետրոսյան 2004, 125, հմմտ. նաև Симомян 2015, 368-370, ком. 28:

³⁶ Մատանկոզեան 1891, N 65, 2, գ:

³⁷ Աղանյան 2000, 132:

³⁸ Կիրակոս Գանձակեցի 1961, 70:

³⁹ XVIII դարասկզբին Ստեփանոս Ռօշքան իր եկեղեցական ժամանակագրության մեջ գրում է. «Տէր Յոհան ի Տաշրաց, ի գեղջէն Օձնոյ, ամս Ժ» (Ստեփանոս Ռօշքայ 1964, 86):

Հաջորդ տեղեկությունը, որ վերաբերում է Հովհան Օձնեցու եկեղեցաշինական գործունեությանը, պատկանում է պատմիչ Վարդան Արևելցուն (մահացել է նույնպես 1271-ին, թեև որոշ հեղինակների մոտ մահվան թվականն այլ է)։ Նա Հովհան Օձնեցուն նվիրված ներբողում հայտնում է նրա կառուցած մի քանի քրիստոնեական տաճարների մասին։ *«Շինէր եւ ինքն ի բազում տեղիս եկեղեցիս որպէս եւ յիւրականն աւանի զերկնանմանն խորան, բարի առնելով քանն իւրոյ եւ ընտանեաց, որպէս դայեկաց եւ առաջին խանձարրաց...»*⁴⁰։

Ըստ Դրասխանակերտցու՝ Հովհան Օձնեցին եկեղեցու անշունչ քարերը տեսողությանը հաճելի խողտանք հաղորդելու համար պճնավորում էր գեղեցիկ զարդերով։ *«Եւ վասն զի ոչ այնպէս յաներեւոյթից ոմանց ահից զօրութիւն ընդոստոցանօղ մարդկան բերցի 'ի վարթարէն 'ի լան' որպէս յերեւելեացս գերաբուն զարդուց խտրականք, եւ վասն սորին իսկ այսորիկ կլաւ սովորութիւն գեղեցիկ զարդուք պճնագգեստել զանշունչ քարինս եկեղեցոյ...»*⁴¹։ Ենթադրվում է, որ Դրասխանակերտցու այս տեղեկությունը նույնպես անուղղակի մի վկայություն է Օձնեցու եկեղեցաշինական գործունեության մասին⁴²։

Թեև Օձնի եկեղեցու կառուցումը Հովհան Օձնեցու կողմից պատմականորեն արձանագրված է, սակայն Թ. Թորամանյանից սկսած՝ ճարտարապետության պատմության մասնագետներն այն համարել են ավելի վաղ շրջանի կառույց՝ ելնելով հորինվածքային ձևերի վերլուծությունից։ Թ. Թորամանյանը, ի մասնավորի, հաշվի է առնում նաև Օձնի հուշակոթողի տվյալները, *«որովհետեւ այդ յիշատակարան կոթողներու ոճը շարվադ հեթանոսական ծագում ունի, որ յետոյ փոխանցուեր է քրիստոնէութեան, առանց ընդհանուր ձեւը փոխուելու եւ հետզհետէ քրիստոնէական խորհրդանշաններով քանդակազարդուեր են փոխանակ հին հեթանոսականի»*⁴³։ Բացի այդ, Թ. Թորամանյանը նշում է «VIII դարուց մինչև X դար» Հայաստանում շինարարական կյանքի դադարի մասին։ Հարկ է, սակայն, նկատի ունենալ, որ Թորամանյանի այս կարծիքը հիմնված է

⁴⁰ Վարդան Արևելցի 1888, 584:

⁴¹ Հովհաննես Դրասխանակերտցի 1996, 104:

⁴² Շախկյան 2004ա, 118: Իսկ ընդհանրապես, վերոնշյալ երեք պատմագիրներից գատ, հայ միջնադարյան պատմագրության մեջ այլ վկայություններ չկան՝ Օձնեցու եկեղեցաշինության վերաբերյալ (Շախկյան 1983, 5, 57):

⁴³ Թորամանյան 1942, 1, 132:

առավելապես Շիրակ-Արարատյան տարածաշրջանի պաշտամունքային ճարտարապետության տվյալների վրա⁴⁴:

Խորհրդային տարիներին բազմաթիվ այն մասնագետները, որ անդրադարձել են Օձունի եկեղեցու թվագրմանը, արտահայտել են իրարամերժ և հակասական կարծիքներ: Այդ պատճառով է, որ գրականության մեջ եկեղեցու կառուցման ժամանակի տատանման պարբերությունը կազմում է շուրջ 300 տարի՝ ընդգրկելով V-VIII դարն ընկած ժամանակահատվածը⁴⁵: Օձունի բազիլիկն ավելի վաղ թվագրող մասնագետները ենթադրում են, որ Հովհան Օձնեցին պարզապես վերանորոգել է այն, որտեղից էլ գալիս է Կիրակոս Գանձակեցու տեղեկությունը: Այս հարցի առավել մանրակրկիտ քննարկումը դուրս է ներկա հոդվածի շրջանակից, քանի որ Հովհան Օձնեցու վիպական կերպարի վերլուծության տեսանկյունից որևէ տարբերություն չկա՝ նա կառուցել, թե՞ վերաշինել է Օձունի եկեղեցին: Երկու դեպքում էլ միանշանակ է, որ Օձունի եռանավ գմբեթավոր բազիլիկը, իր ճարտարապետական հորինվածքով և ինքնատիպ լուծումներով, կարծես ազգային անկախ քաղաքականության մարմնավորումն է, հայ քրիստոնեության ազգային ճանապարհի որդեգրման ճարտարապետական խորհրդանիշը⁴⁶:

Գրականություն

Աղանյան Գ. 2000, Հայկական զինագործությունը XIX դարում – XX դարի սկզբին (ըստ Կարնո և Ախալցխայի նյութերի), ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական կենտրոնի Գիտական աշխատություններ - 3, Գյումրի, «Գիտություն», էջ 129-136:

Գևորգյան Թ. 1999, Լոռի (Տաշիրք-Ձորագետ), Հայ ազգագրություն և բանահյուսություն (նյութեր և ուսումնասիրություններ), հ. 20, Երևան, «Գիտություն», 270 էջ:

⁴⁴ Տե՛ս Շախկյան 2004թ, 9-10. այսօր հանրահայտ են կարևոր հուշարձաններ (Սևանի Ս. Առաքելոց և Ս. Աստվածածին, Հայրավանք, Շողագավանք, Կոթավանք, Մաքենյաց վանք, Նորատուս, Արծվանիստ, Վանեվան, Շիրակավան, Տաթև և այլն), որոնք պատկանում են IX դարին: Ըստ Գ. Շախկյանի՝ Թորամանյանի այն միտքը, թե VIII-IX դդ. կեսերը շինարարական հիշատակումներ չկան, նույնպես չի հաստատվում պատմական աղբյուրներով և հնագիտական նոր պեղումների նյութով:

⁴⁵ Շախկյան 2004ա, 115:

⁴⁶ Ի դեպ, այն էական տարբերություններ է դրսևորում բյուզանդական գմբեթավոր բազիլիկներից, որն իր հոդվածում համեմատական քննությամբ ցույց է տվել Ս. Մնացականյանը (Мнацаканян 1978, 227, 234):

- Թորամանյան Թ. 1942, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, գիրք 1, Երևան, 1942, գիրք 2, Երևան, 1948, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 307 էջ:
- Իսրայելյան Ա. 2001, Ս. Հովհաննես Օձնեցին ժողովրդական ավանդության մեջ, Հայոց սրբերը և սրբավայրերը. ակունքները, տիպերը, պաշտամունքը, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (խմբ. Ս.Բ. Հարությունյան, Ա.Ա. Քալանթարյան), Երևան, «Հայաստան», էջ 71-78:
- Լալայեան Ե.Ա. 1903, Բորչալուի գաւառ (արտատպում՝ Ազգագրական հանդեսից), Թիֆլիս, 124 էջ:
- Կիրակոս Գանձակեցի 1961, Պատմութիւն Հայոց (աշխատասիրությամբ Կ.Ա. Մելիք-Օհանջանյանի), Երևան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., 428 էջ:
- Կիրակոս Գանձակեցի 1982, Հայոց պատմություն (աշխատասիրությամբ Վ. Առաքելյանի), Երևան, «Սովետական գրող», 351 էջ:
- Հակոբյան Մ. 2009, Սուրբ Հովհան Օձնեցի հայոց հայրապետի կանոնական և իրավագիտական ժառանգությունը, «Էջմիածին», Ա, էջ 38-42:
- Հարությունյան Ս.Բ. 2001, Մշո Սուրբ Կարապետ եկեղեցու պաշտամունքային նախահիմքերը, Հայոց սրբերը և սրբավայրերը. ակունքները, տիպերը, պաշտամունքը, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (խմբ. Ս.Բ. Հարությունյան, Ա.Ա. Քալանթարյան), Երևան, «Հայաստան», էջ 21-28:
- Մառանկոզեան Խ. 1891, Էրզրումի և Կարսի արհեստավորների համայնական կարգերը, «Մշակ», 19-րդ տարի, N 65 (հինգշաբթի, յունիսի 13), էջ 1-2, N 66 (շաբաթ, յունիսի 15), էջ 1-2, N 67 (երեքշաբթի, յունիսի 18), էջ 1-2, N 68 (հինգշաբթի, յունիսի 20), էջ 1-2:
- Միքայելյան Տ. 2004, Հովհաննես Օձնեցին և արաբները (Ը դարի կեսեր), ԱՂՕՀԺ, էջ 27-35:
- Յովհան Օձնեցի 1953, Յոհաննու Իմաստասիրի Աձնեցոյ մատենագրութիւնք (2-րդ տպագրութիւն), Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարի, 224 էջ:
- Հովհաննես Դրասխանակերտցի 1996, Յովհաննու Կաթողիկոսի Պատմութիւն Հայոց (աշխատասիրությամբ Գ.Բ. Թոսունյանի), Երևան, ԵՊՀ հրատ., 397 էջ:
- Շախկյան Գ. 1983, Օձունի եկեղեցին. ճարտարապետական-քննական ակնարկ, Երևան, «Սովետական գրող», 83 էջ:
- Շախկյան Գ. 2004ա, Հովհաննես Օձնեցի կաթողիկոսի շինարարական գործունեությունը, ԱՂՕՀԺ, էջ 112-120:

- Շախկյան Գ. 2004թ, Հայ ժողովրդի ճարտարապետական-շինարարական գործունեությունը VIII-IX դարերում, Երևան, «Անահիտ», 232 էջ:
- Պետրոսյան Հ. 2004, Հովհաննես Օձնեցին և խաչքարային մշակույթի ձևավորումը, ՍՀՈՀԻԺ, էջ 121-130:
- Սարգսյան Լ.Ա. 2010, Հայոց տոնացույցի ծագումն ու զարգացումը (4-8-րդ դդ.), Երևան, «Էդիթ Պրինտ», 300 էջ:
- ՍՀՈՀԻԺ – Սուրբ Հովհան Օձնեցի հայրապետը և իր ժամանակը. 2003 թ. հունիսի 3-5, Հաղպատի վանք (Գիտաժողովի նյութեր), Ս. Էջմիածին (գիտաժողովի նյութերը հրապարակման պատրաստեց պ.գ.դ. Ազատ Բոզոյանը), Մայր Աթոռ Ս. Էջմիածին. «Գարեգին Ա» հայագիտական-աստվածաբանական կենտրոն, 2004, 144 էջ:
- Ստեփանոս Բոջբայ 1964, Ժամանակագրություն կամ Տարեկանք եկեղեցականք (հրատարակեց Հ. Համազասպ Ոսկեան), Վիեննա, Մխիթարեան տպարան, 231 էջ:
- Վարդան Արևելցի 1888, Ճառ ի վերայ Յոհան Օձնեցույ ըստ խնդրոյ Համազասպ եպիսկոպոսի Հաղբատայ, «Արարատ», Վաղարշապատ, N 10, էջ 580-593:
- Վարդանյան Ռ.Հ. 1999, Հովհան Օձնեցու արմատական բարեփոխումները հայոց ճաշոց-տոնացույցում, Հայոց տոնացույցը (4-18-րդ դարեր), Երևան, «Գիտություն», էջ 198-206:
- Քաջբերունի (Գաբրիէլ Տէր-Յովհաննիսեան) 1881, Ճանապարհորդական նկատողութիւնք, Փորձ. ազգային եւ գրականական միամսեայ հանդէս, 5-րդ տարի, ապրիլ, N 4, Տփլիս, էջ 79-92:
- Օխան Օձնելի 1898, գրի է առել՝ Ս. Հայկունի, պատմել է Խլաթայ Փրխուս գիւղից Քրսեցի Արեւշատ (Սարիբէկ), «Արարատ», տպարան Մայր Աթոռոյ Սուրբ Էջմիածնի, թիւ Թ (սեպտեմբեր), 32-րդ տարի, էջ 412-414:
- Мнацаканян С.Х. 1978, К вопросу о генезисе крестовокупольных храмов Армении и Византии, Պատմա-բանասիրական հանդես, N 1, с. 225-240:
- Симонян Л. 2015, Народный культ Ованеса Одзунского. Страны и народы Востока, вып. XXXVI. Религии на Востоке (под ред. И.Ф. Поповой, Т.Д. Скрынниковой), РАН, Институт восточных рукописей, Восточная комиссия Русского географического общества, Москва, «Восточная литература», с. 362-377.
- Тер-Гевондян А. 1977, Армения и арабский халифат, Ереван, изд. АН Арм. ССР, 323 с.

ՀՈՎՀԱՆ ՕԶՆԵՑՈՒ ՎԻՊԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Տորք Դալալյան

Ամփոփում

Հովհան Օձնեցի Իմաստասեր կաթողիկոսը (717-728 թթ.) Հայաստան-յայց Առաքելական Եկեղեցու ամենասիրված սրբերից մեկն է: Դա պայմանավորված է VIII դարում նրա՝ չափազանց ազդեցիկ քաղաքական, կրոնամշակութային և կրթական գործունեությամբ: Պետականության բացակայության պայմաններում նա ստանձնում է Հայոց աշխարհի առաջնորդի դերը և անխոնջ պայքար ծավալում երկրի մշակութային ու կրոնական անկախության համար: Դրսևորելով դիվանագետի փայլուն հատկանիշներ՝ Օձնեցի կաթողիկոսը դաշնակցում է մուսուլման արաբների հետ և նրանց օգնությամբ ապահովում Հայաստանի կրոնամշակութային ժամանակավոր վերելքը: Հովհան Օձնեցու վիպական կերպարը բնութագրող պատումներն ու զրույցները ունեն իրական պատմական ատաղձ կամ զարգացել են VIII դարի իրադարձությունների հիմքի վրա: Դրանցում Օձնեցին նկարագրվում է որպես բանիմաց ու խորագետ հոգևորական և գիտնական:

Բանալի բառեր՝ վիպական կերպար, Հովհաննես Դրասխանակերտցի, Կիրակոս Գանձակեցի, Վարդան Արևելցի, հերոսավեպ, խաչանիշ թուր, Օձունի եկեղեցի:

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ЭПИЧЕСКОГО ОБРАЗА ОВАНА ОДЗНЕЦИ

Торк Далалян

Резюме

Католикос Армении (717-728) Ован Одзнеци Имастасер («Философ») является одним из самых почитаемых святых Армянской Апостольской церкви. Это обусловлено его чрезвычайно влиятельной политической, религиозно-культурной и образовательной деятельностью в VIII веке. В условиях отсутствия государственности Ован Одзнеци взял на себя роль лидера армянского народа, направив свою неиссякаемую энергию на достижение культурной и религиозной независимости страны. Проявив бле-

стоящие качества дипломата, католикос Одзнеци заключил союз с арабами-мусульманами и с их помощью обеспечил временную культурно-религиозную независимость Армении. Рассмотрение целостного эпического образа Ована Одзнеци базируется на изучении сказаний и легенд, имеющих реальный исторический фон либо основанных на тех или иных событиях VIII века. В них Одзнеци описывается как высокообразованный ученый и духовный деятель.

Ключевые слова – эпический образ, Ованнес Драсханакертци, Киракос Гандзакети, Вардан Аревелци, героический эпос, крестовидный меч, Одзунская церковь.

COMPARATIVE ANALYSIS OF THE EPIC IMAGE OF HOVHAN ODZNETSI

Tork Dalalyan

Abstract

Catholicos of Armenia (717-728) Hovhan Odznetsi Imastaser («the Philosopher») is one of the most favorite saints of the Armenian Apostolic Church. This is due to his extremely influential political, religious, cultural and educational activities in the 8th century. In the absence of statehood, he assumed the role of the Armenian leader and tirelessly pursued his country's cultural and religious independence. Demonstrating brilliant qualities of a diplomat, the Catholicos Odznetsi concluded an alliance with Muslim Arabs and with their help provided for a temporary cultural and religious independence of Armenia. This article examines the general image of Hovhan Odznetsi's epic character, focusing especially on epic stories and legends which have a real historical background or have developed on the basis of the events of the 8th century. In them, Odznetsi is described as a well-educated and profound, multidisciplinary scientist and clergy, who is not deprived of external advantages.

Key words – epic image, Hovhannes Draskhanakertsi, Kirakos Gandzaketsi, Vardan Areveltsi, heroic epic, crossed sword, Odzun church.

МОТИВ «СТРАНА МРАКА» В «ЦВЕТНИКЕ ИСТОРИЙ СТРАН ВОСТОКА» ИСТОРИКА ХЕТУМА

Гоар Карагезян

Кандидат филологических наук

Старший научный сотрудник Института литературы им. М. Абеяна НАН РА

РА, Ереван, ул. Григора Лусаворича 15

Эл. адрес: karapetyan.ruben@gmail.com

Статья представлена 23.01.2020, рецензирована 30.07.2020, принята к публикации 05.08.2020

Вступление

Рассказы о «стране мрака» в разные эпохи имели широкое хождение среди многих народов. В данной статье ставится задача исследования этого мотива во всемирно известном труде Хетума Патмича «Цветник историй стран Востока» («La Flor des Estoires de la terre d'Orient»), который содержит всеобъемлющую информацию по Востоку, истории Монгольской империи, данные о ее правителях, с привлечением богатого историографического и фольклорного материала, а также план организации крестового похода объединенными силами Запада, татар и христиан Востока.

Развитие мотива «Страна мрака» в «Цветнике историй стран Востока» историка Хетума

Среди античных авторов «страна мрака» упоминается Гомером, который локализовал ее по соседству с Аидом, в Боспоре Киммерийском¹.

Страбон, касаясь упомянутой Гомером «страны мрака», отмечает, что последний «на основании реальных сведений о том, что киммерийцы жили у Киммерийского Боспора, в мрачной северной области, ...перенес их в какую-то мрачную область по соседству с Аидом, подходящую местность для мифических рассказов о странствованиях Одис-

¹ «Там киммериян печальная область, покрытая вечно
Влажным туманом и мглой облаков; никогда не являет
Оку людей там лица лучезарного Гелиос

Ночь безотрадная там искони окружает живущих» (Гомер 1984, 14, 16).

сея»². Катабасис Одиссея предстаёт путешествием не по вертикали (спуск в преисподнюю), а по горизонтали – как дальнейшее плавание к дикой стране – «печальной области, покрытой вечно/ Влажным туманом и мглой облаков» (Одиссея, XI, 14-15).

Арабская географическая наука также не оставила без внимания тему «страны мрака», которую большинство комментаторов идентифицируют с Сибирью.

Арабский путешественник Ибн Фадлаллах ал-Умари (Омари) (1301-1349) в сочинении «Пути взоров по государствам разных стран» («Масалик ал-абсар фи мамалик ал-амсар») «страну мрака» локализует на крайнем севере, за землями Югры³.

Ибн-Батутта (1304 – ок. 1377), этот, по словам Рихарда Хеннига, «величайший путешественник всех времен до Магеллана» о «стране мрака» пишет следующее: *«Захотелось мне пробраться в страну мрака. Вход в нее через Булгар и между ними 40 дней пути. Потом я отказался от этого вследствие больших хлопот (потребных) на это и малой пользы (от такой поездки). Путешествие туда совершается не иначе, как на маленьких повозках, которые возят большие собаки, ибо в этой пустыне (езде) лед, на котором не держатся ни ноги человеческие, ни копыта скотины»*⁴.

Марко Поло также, посвящая «стране мрака» 217 главу своей «Книги» («Здесь описывается темная страна (страна Тьмы)»), располагает ее на севере: *«На север от этого царства (Кончи) есть темная страна; тут всегда темно, нет ни солнца, ни луны, ни звезд; всегда*

² Страбон 1994, 27.

³ «Купцы Булгарские ездят до Чулымана, а купцы Чулыманские ездят до земель Югорских, которые на окраине Севера. Позади их (уже) нет поселений, кроме большой башни, построенной Искендером на образец высокого маяка; позади ее нет пути, а (находятся) только мраки. Спросили его: что это у тебя за мраки? Он сказал: пустыни и горы, которых не покидают снег и мороз; над ними не восходит солнце: в них не растут растения и не живут никакие животные; они тянутся вплоть до Черного моря; там беспрерывно бывают дождь и густой туман и решительно никогда не встает солнце» (Сборник материалов, относящихся к истории Золотой Орды 1884, 240-241).

⁴ Сборник материалов, относящихся к истории Золотой Орды 1884, 297.

тут темно, так же, как у нас в сумерки. У жителей нет царя; живут они как звери, никому не подвластны»⁵.

Мотив темной страны присутствует и в книге Хетума Патмича «Цветник историй стран Востока» («La Flor des Estoires de la Terre d'Orient»).

В первой части хетумовской «Истории», а она состоит из четырех частей, дается описание четырнадцати стран Востока, включая Армению. «Страну мрака» Хетум располагает в Грузии, в области Hamsen⁶, в которой он столкнулся с неким чудом, о котором *«не смог бы рассказать, если бы не видел сам. Я был там и видел это. В Грузии имеется область, которую можно обойти за три дня и которую называют Hamsen. На всем протяжении области такая тьма, что ни один человек не в состоянии ничего узреть, и ни один человек не смеет войти в ту землю, ибо не сможет вернуться обратно. Жители тех земель рассказывают, что оттуда иногда доносятся человеческие голоса, петушиный крик и ржание лошадей. Река же, протекающая по этой местности, являет признаки того, что впрямь где-то там внутри обитают люди»⁷.*

Как видим, экспозиция рассказа довольно интригующая. Однако автор не довольствуется воссозданием специфики этого края, который он посетил самолично («Я был там и видел это»). Для большей убедительности он обращается к истории, апеллируя к неким армянским и грузинским источникам, позволяющим подтвердить вышесказанное. «Читая истории Армении и Грузии, – пишет Хетум, – находим, что некогда жил на свете один жестокий император Персии по имени Savoreus (Sapor – Шапур), который поклонялся идолам и люто преследовал христиан. И вот однажды он приказал всем жителям Азии принести идолам жертву и пригрозил, что те, которые не придут, будут преданы смерти. Одни христиане по своей праведности пред-

⁵ Книга Марко Поло 1956, 226.

⁶ Hamsen, Amsen—Համսեն.

⁷ Hayton 1906, 129-130.

почли мученичество идолопоклонству, другие поклонились идолам под страхом смерти.... Третьи же укрылись в горах»⁸.

Далее автором приводится конкретная история исхода христиан из области Mougan⁹ в Грецию и привязка сюжета к упомянутой местности Амшен: *«В те времена в стране, которая звалась Муган, жили добрые христиане, которые, оставив все свои блага, бежали в сторону Греции. Но когда они достигли вышеупомянутой области Амсен, их нагнал злой император и приказал всех христиан изрубить на части. И тогда воззвали христиане к Господу нашему Иисусу Христу, и тотчас наступила глубокая тьма, которая ослепила императора и всех его людей. Христиане были спасены, те же, кто погрузился во тьму, останутся там, как полагают и сказывают многие, до конца света (века)»¹⁰.*

Хетум Патмич, ссылаясь на истории армянских и грузинских авторов, в мифологизированной форме преподносит события, относящиеся к 780-ым годам VIII века армянской истории – переселение армян, предпринятое во главе с Шапухом Аматуни и его сыном Амамом в Грецию, и образование в гористом крае, расположенном на юго-восточном побережье Черного моря, армянского княжества Амшен (789–790)¹¹.

Упоминание об этом историческом факте содержится у армянского историка Гевонда – современника этих событий. По свидетельству Гевонда, Шапух и Амам Аматуни, потеряв в сражении с арабами свои владения в Артазе, вместе с 12000 армян переселились в подвластное Византии Понтийское царство. Вардапет (архимандрит) Гевонд в своей «Истории халифов» пишет: *«Лишившись всего имущества, голые, босые, голодные, нуждающиеся в пище, хотя уже и поздно, они решили перейти в страну греческую. Число их, говорят, было до 12000 мужей с женами и детьми. Предводителями их были Шапух, из рода*

⁸ Hayton 1906, 130.

⁹ В ряде рукописей Morgant, Mogan, Margan. Имеется в виду Мугань – историческая область в Персии.

¹⁰ Hayton 1906, 130.

¹¹ Название «Հաւշն» в армянской историографической традиции связывают с именем Амама Аматуни (Հաւաւիւն-Հաւաւշն-Հաւշն).

Аматуни, Хамам, сын его и другие из вельмож армянских и их всадников. Немилосердные неприятели погнались за ними и настигли их на пределах Иверии, в области Ког (Чпн), но были разбиты и обращены в бегство; а сами они перешли реку Акамписис¹², которая, протекая по стране тайской на северо-запад через Егерю, впадает в Понт. По переходе их через реку, слух о них скоро дошел до императора Константина, который призвал их к себе, наградил почестями вельмож и их всадников; а остальной народ поселил в плодотворной и богатой стране»¹³.

При сопоставлении истории, поведанной Гевондом, с рассказом Хетума обнаруживается общая сюжетная схема: завоеватель – иноверец (араб – у Гевонда, перс – у Хетума) преследует христиан – бегство христиан в Грецию через Амшен – обезвреживание врага [в результате боевых действий у Гевонда («были разбиты и обращены в бегство»), благодаря божественному вмешательству у Хетума)] – благополучный исход. Однако, несмотря на схожесть сюжетного построения, в рассказе Хетума мы сталкиваемся с явным перелицеванием истории. События, имевшие место в Армении в период арабских завоеваний, переносятся в «Цветнике историй...» Хетума в более раннюю эпоху – эпоху армяно-персидских войн. Видимо, имя Шапух-Шапур (Savoreus, Sapor) ассоциировалось не с домом Аматуни, а скорее с Сасанидским Ираном и с именем его правителей Шапухом I и, в частности, с Шапухом II, ко времени правления которого относятся первые в государстве Сасанидов гонения на христиан. Отсюда и привязка сюжета не к периоду арабского халифата, а к более раннему – периоду персидского владычества.

Возникает вопрос, почему Хетум, книга которого была посвящена освобождению христианского Востока и который всю свою жизнь сражался против Египетского султаната, упустил возможность лишний раз продемонстрировать, какое зло для христианского мира в целом и для

¹² Акамписис – Чорох.

¹³ Гевонд 1862, 116.

его родины, в частности, представляют арабские завоевания? Подобное перекраивание истории объясняется тем, что Хетум, безусловно, лукавил, говоря, что «читал истории Армении и Грузии», повествующие о вышеизложенных событиях. Было бы правдоподобнее сказать, что не читал, а слышал эту удивительную историю о крае Амшен, который посетил самолично. Наиболее вероятным источником информации послужила для историка устная традиция. Напрашивается вопрос, что представляет собой поведенная Хетумом история? Искусную компоновку различного материала или добросовестное изложение услышанного и увиденного («Я был там и видел это»)? И то, и другое. История об исходе христиан, представленная историческими источниками и имевшая, по всей вероятности, широкое распространение в регионе, излагается в увязке с рассказом о «стране тьмы». А страна эта действительно отличалась своей мглистостью. Так, Левон Хачикян в историческом очерке, посвященном области Амшен, отмечает, что «Амшен – это край непроходимых гор, глубоких ущелий, густых лесов, отрезанный от внешнего мира, замкнутый, темный и мгlistый»¹⁴.

Описание «страны тьмы» для автора имеет основополагающее значение. История же исхода играет вспомогательную роль: она призвана подтвердить факт существования «страны мрака», в которой глубокая тьма, ослепив безбожного императора и всех его людей, позволила христианам спастись. Таким образом предания о «стране мрака» господствуют над перестоящими занимать главную сюжетную линию историческими преданиями.

Невольно напрашиваются аналогии с мотивом «страны мрака» в различных версиях «Романа об Александре», который отправился в путешествие в эту «страну мрака» в поисках живой воды. Так, в мусульманской легенде об Искандере (Александре Македонском) последнего в так называемую «страну тьмы», к истоку живой воды, повел пророк Хизр. В истории, поведенной Хетумом, «страной тьмы», куда устремились армяне в поисках убежища, т.е. живой воды, является Hamsen.

¹⁴ Խաչիկյան 1981, 9:

Спаслись же они благодаря вмешательству, в мусульманской версии, – пророка Хизра¹⁵.

Привнесенный историком циркулирующий в регионе фольклорный материал – мотив исхода – выхода из безвыходного положения (переход через черные леса Амшена) получил свое дальнейшее развитие. «Экспортируясь» через века, этот мотив просочился в «Мученичество священника владыки Карапета Торослиеци», смерть которого, по уточненным данным Левона Хачикяна, имела место в 1780-ом году. Этот памятник житийной литературы был зарегистрирован уроженцем Трапезунда, этнографом-фольклористом Саркисом Айкуни. Согласно «Мученичеству...», армяне, жители села Торосли, расположенного в области Сев Гет и Амшен, спаслись от истребления, бежав *«на запад через густой и тернистый лес... Если бы видели эти леса, вы бы решили, что никто из прошедших через них не смог спастись, но я скажу, что одна десятая вышла к Баберду, одна пятая – к близлежащим к Трапизону местностям: Залпосу, Апиону, Калафке и другим местам, пять четвертая [людей], вышедших из лесов, перебрались в Джаник»*¹⁶.

Заключение

Таким образом, за мотивом «страна мрака» стоит многовековая традиция. Что касается историка Хетума, то он не ограничивается тем, что локализует «страну мрака» в ее этнокультурном пространстве. Подхватив тему «темной страны», он развивает ее сообразно своей нацио-

¹⁵ Этот мотив можно обнаружить в «Шах- Намэ» Фирдоуси (живая вода скрыта в пещере под названием Зулмат (мрак), которую Хизр пытается достать для Искандера), а также в поэме Алишера Навои «Фархад и Ширин»:

Я- Хызр. И здесь я пересек твой путь,

.....

Как Искандар, скитался годы я,

Как он, искал живую воду я.

Я вместе с ним ее искал и с ним

Был бедствиями страшными казним.

И с ним попал я в область вечной тьмы,

Где ночь и день равно черней сурьмы (Алишер 1972, 195).

¹⁶ Новые армянские мученики 1988, 226.

нально-культурной традиции и возвращает Западу в переработанном виде.

Литература

- Խաչիկյան Լ. 1981, Պատմական համառոտ ակնարկ, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ. 13, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., էջ 7-23:
- Алишер Навои 1972, Фархад и Ширин, Библиотека всемирной литературы, т. 26, Москва, «Художественная литература», 812 с.
- Гомер 1984, Одиссея, перевод В.А. Жуковского, песнь XI, Москва, «Правда», 317 с.
- История халифов вардапета Гевонда, писателя VIII века 1862, СПб., Типография Императорской Академии наук, 191 с.
- Книга Марко Поло 1956, перевод И.П. Минаева, Москва, Гос. изд. географич. лит-ры, 376 с.
- Новые армянские мученики 1988, перевод, предисловие и примечания К. Тер-Давтян, Ереван, «Наири», 329 с.
- Сборник материалов, относящихся к истории Золотой Орды 1884, пер. В.Г. Тизенгаузена, т. I, Извлечения из сочинений арабских, СПб., тип-я ИАН, 588 с.
- Страбон 1994, География, перевод, статья и комментарии Г.А. Стратановского, Москва, «Ладомир», 944 с.
- Hayton 1906, La Flor des Estoires de la terre d'Orient, Recueil des historiens des croisades: Documents armeniens, t. II, Paris, ed. Ch. Kohler, p. 113-253.

«ԽԱՎԱՐԻ ԵՐԿԻՐ» ՄՈՏԻՎԸ ՀԵԹՈՒՄ ՊԱՏՄԻՉԻ «ԾԱՂԻԿ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ ԱՐԵՒԵԼԻՑ ԱՇԽԱՐՀԻ» ԵՐԿԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Գոհար Կարապյոզյան

Ամփոփում

«Խավարի երկրի» մասին պատմությունները տարբեր ժամանակաշրջաններում լայն տարածում էին ստանում բազմաթիվ ժողովուրդների մեջ: Հեթում Պատմիչը «խավարի երկիրը» տեղակայում է Վրաստանում՝ Համշեն գավառում: Հղելով հայ և վրաց հեղինակներին՝ Հեթումը առասպելականացնելով ներկայացնում է հայ ժողովրդի պատմության՝ VIII դ. 780-ական թթ. վերաբերող իրադարձությունները՝ Շապուհ Ամատունու և նրա որդի Ամամի առաջնորդությամբ հայերի վերաբնակեցումը Հունաստանում, Սև ծովի հարավարևելյան ափի լեռնային շրջանում հայկական Համշեն իշխանության

կազմավորումը (789–790): Սակայն արաբական նվաճումների ժամանակաշրջանում Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները Հեթումի «Ծաղիկ պատմութեանց...» երկում տեղափոխվել են ավելի վաղ՝ հայ-պարսկական պատերազմների շրջան: Ըստ երևույթին, Շապուի-Շապուր (Savoreus, Sapor) անունը զուգորդվում էր ոչ թե Ամատունու տան, այլ ավելի շուտ, Սասանյան Իրանի և դրա տիրակալների՝ Շապուի I-ի և, մասնավորապես, Շապուի II-ի հետ: Պատմական աղբյուրներում ներկայացված և տարածաշրջանում՝ ըստ ամենայնի, լայնորեն տարածված պատմությունը քրիստոնյաների ելքի մասին «Ծաղիկ պատմութեանց...»-ում շարադրված է «խավարի երկրի» հետ կապակցված: «Խավարի երկրի» նկարագրությունը հեղինակի համար ունի հիմնարար նշանակություն: Մինչդեռ ելքի պատմությունը լրացուցիչ դերակատարություն ունի. այն կոչված է հաստատելու «խավարի երկրի» գոյության փաստը, որում խոր խավարը, կուրացնելով անաստված կայսրին և նրա մարդկանց, քրիստոնյաներին թույլ է տվել փրկվել: Այդպիսով, «խավարի երկրի» մասին առասպելներն իշխում են գլխավոր սյուժետային գիծը կազմող պատմական լեգենդների վրա: Հեթումը չի սահմանափակվում «խավարի երկիրը» իր ազգամշակութային տարածության մեջ տեղադրելով: «Խավարի երկրի» թեման վերցնելով՝ նա այն զարգացնում է իր ազգային-մշակութային ավանդույթներին համապատասխան և Արևմուտքին վերադարձնում վերամշակված տեսքով:

Բանալի բառեր՝ Հեթում Պատմիչ, «խավարի երկիր», դրդապատճառ, “La Flor des Estoires de la terre d’Orient”, Համշեն, ելքի շարժառիթ, էթնոմշակութային տարածք:

МОТИВ «СТРАНА МРАКА» В «ЦВЕТНИКЕ ИСТОРИЙ СТРАН ВОСТОКА» ИСТОРИКА ХЕТУМА

Գոար Կարաօեզյան

Резюме

Рассказы о «стране мрака» в разные эпохи имели широкое хождение среди многих народов. «Страну мрака» Хетум локализует в Грузии, в области Амшен. Ссылаясь на истории армянских и грузинских авторов, Хетум в мифологизированной форме преподносит события, относящиеся к 780-ым гг. VIII в. армянской истории – переселение армян, предпринятое во главе с Шапухом Аматуни и его сыном Амамом в Грецию, и образование

в гористом крае, расположенном на юго-восточном побережье Черного моря, армянского княжества Амшен (789–790). Однако события, имевшие место в Армении в период арабских завоеваний, переносятся в «Цветнике историй...» Хетума в более раннюю эпоху – эпоху армяно-персидских войн. Видимо, имя Шапух-Шапур (Savoreus, Sapor) ассоциировалось не с домом Аматуни, а скорее с Сасанидским Ираном и с именем его правителей Шапухом I и, в частности, с Шапухом II. История исхода христиан, представленная историческими источниками и имевшая, по всей вероятности, широкое хождение в регионе, излагается в «Цветнике историй...» в увязке с рассказом о «темной стране». Описание «страны тьмы» для автора имеет основополагающее значение. История же исхода играет вспомогательную роль: она призвана подтвердить факт существования «страны мрака», в которой глубокая тьма, ослепив безбожного императора и всех его людей, позволила христианам спастись. Таким образом, предания о «стране мрака» господствуют над перестоявшими занимать главную сюжетную линию историческими преданиями. Хетум не ограничивается расположением «страны мрака» в ее этнокультурном пространстве. Подхватив тему «темной страны», он развивает ее сообразно своей национально-культурной традиции и возвращает Западу в переработанном виде.

Ключевые слова – Хетум Патмич, мотив, «страна тьмы», «La Flor des Estoires de la terre d'Orient», Амшен, мотив исхода, этнокультурное пространство.

THE MOTIV OF “THE LAND OF DARKNESS” IN “THE FLOWER OF THE STORIES OF THE ORIENT” BY THE HISTORIAN HETOUM

Gohar Karagyozyan

Abstract

The tales about “the land of darkness” were widely spread among many peoples in different epochs. The aim of the present article is to study this motive in “The Flower of the Stories of the Orient” (“La Flor des Estoires de la Terre d'Orient”) by Hetoum Patmich (Hetoum, the Historian). Hetoum places “the land of darkness” in the province of Hamshen in Georgia. Making references to the stories by Armenian and Georgian authors, in a mythologized form, Hetoum

presents the events related to the Armenian history of the 780s (from 775 to 790): the resettlement of the Armenians in Greece led by Shapuh Amatuni and his son Hamam and the formation of the Armenian principality of Hamshen (789–790) in a mountainous region, located on the southeastern coast of the Black Sea. However, in “The Flower of the Stories of the Orient” by Hetoum, the events that took place in Armenia during the period of the Arab conquests are carried over to an earlier epoch, the epoch of the Armenian-Persian wars. Apparently, the name of Shapuh-Shapur (Savoreus, Sapor) was not associated with the Amatunis, but rather with the Sasanian Iran and its rulers called Shapuh I and Shapuh II, in particular. The story of the Christian exodus, presented with historical sources and, which, in all likelihood, was widely spread in the region, is set forth in “The Flower of the Stories of the Orient” in conjunction with the story of a “dark country”. The description of the “land of darkness” is of fundamental significance to the author. The story of the exodus plays an auxiliary role: it is intended to confirm the existence of a “land of darkness” where the deep darkness, blinding the godless emperor and his people, allowed Christians to be saved. Thus, the legends about “the land of darkness” prevailed over the historically traditional stories, which ceased to occupy the main plot line. Hetoum did not confine himself to placing “the land of darkness” in his own ethno-cultural space. Having taken up the theme of “the land of darkness”, he developed it in accordance with his national-cultural traditions and returned it to the West in a revised version.

Key words – Historian Hetoum, motive of “land of darkness”, “La Flor des Estoires de la Terre d’Orient”, Hamshen, motive of exodus, ethno-cultural space.

ԱՐԴԻ ԹԱՐԳՄԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Հասմիկ Բաղդասարյան

Բանասիրական գիտությունների դոկտոր
ԵՊՀ ռոմանական բանասիրության ամբիոն

ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 1

Էլ. հասցե՝ h.baghdasaryan@ysu.am

Հոդվածը ներկայացվել է 11.10.2019, գրախոսվել է 28.11.2019, ընդունվել է
տպագրության 05.08.2020

Ներածություն

XXI դարի սկիզբը նշանավորվում է թարգմանաբանական ուսումնասիրությունների հարացույցում տեղի ունեցող խոր փոփոխություններով: Լեզվական համակարգերի համեմատական քննությունից անցում տեքստային և միջտեքստային քննության, այնուհետև տեքստից՝ դիսկուրս, մշակույթ և մարդու մտածական գործունեություն, ահա այսպիսին են, ընդհանուր գծերով, թարգմանաբանության՝ որպես գիտակարգի ձևավորման ակունքներից ի վեր շրջադարձային փուլերը, որը ենթադրում է նաև թարգմանական ընդհանուր մեթոդների և ռազմավարությունների վերաբժնորում:

Այսօր թարգմանությունն ընկալվում է որպես միջլեզվական և միջմշակութային հաղորդակցության բարդ գործընթաց, իսկ թարգմանաբանության առանցքային հասկացությունը՝ համարժեքությունը, դիտարկվում է հաղորդակցական-գործառական և գործաբանական դիտանկյունից՝ բազմահարացուցային՝ խոսքաբանական, ճանաչողական, մեկնողական, մարդաբանական քննության մեթոդների կարևորմամբ:

Անդրադառնանք թարգմանաբանության զարգացման որոշ միտումների, քննելով նաև թարգմանության և ազգային մշակույթի փոխառնչության տարբեր խնդիրներ, որոնք նորովի են մեկնաբանվում արևմտաեվրոպական արդի թարգմանաբանական դպրոցում:

Թարգմանաբանության զարգացման արդի որոշ միտումների քննավերլուծական դիտարկում

Թարգմանաբանական տարբեր աշխատություններում այսօր առավել գործածվող հասկացություններից է *մշակութային շրջադարձը* (cultural

turn), որը թարգմանաբանության մեջ առաջին անգամ մանրամասն մեկնաբանվել է անցյալ դարի 90-ական թվականներին Ս. Բասնետի և Ա. Լեֆևերի հրատարակած «Թարգմանություն, պատմություն և մշակույթ» ժողովածուի մեջ՝ նշանավորելով նոր փուլ թարգմանաբանական ուսումնասիրություններում: Ելնելով տեքստի՝ որպես սոցիալ-մշակութային համակարգի բաղկացուցիչ տարրի գաղափարից՝ այս տեսաբանները գտնում են, որ տեքստաստեղծման և ընկալման խնդիրներն անհրաժեշտ է քննել լայն մշակութային համատեքստում, ընդ որում, թարգմանության գործառական միավորը ոչ թե բառն է, նախադասությունը կամ տեքստը, այլ մշակույթը¹:

Թարգմանության հանրամշակութային կաղապարներում նախ և առաջ հարկ է առանձնացնել Ի. Էվեն-Չոհարի և Գ. Տուրիի առաջադրած *բազմահամակարգի* և *նորմայի* հասկացությունները, որոնք կարևոր ներդրում են համարվում արդի թարգմանաբանության մեջ²: Ընդլայնելով թարգմանության ավանդական տեսության սահմանները, որն առավելապես հիմնվում էր լեզվական համակարգերի համեմատական քննության վրա և թարգմանական գրականությունը քննելով լայն մշակութային համատեքստում՝ այս թարգմանաբանների նոր՝ *նկարագրական ուսումնասիրությունների* շնորհիվ, Է. Գենտցլերի պատկերավոր բնութագրմամբ, թարգմանաբանությունը դուրս եկավ «պրեսկրիպտիվ էսթետիկայի» սահմաններից³:

«Մշակութային շրջադարձի» հիմնարար սկզբունքներից է այն գաղափարը, որ թարգմանել, ինչպես Ա. Լեֆևերը նշում է իր հայտնի *Translation, Rewriting and the Manipulation of Literary Fame* գրքում, նշանակում է *նորից գրել*: Հենց այս վերստեղծման ուժն է խթանում գրական-գեղարվեստական էվոլյուցիան և իր դրսևորումն է ստացել թարգմանության, պատմագրության, գրաքննադատության մեջ, ինչպես նաև կինո և հեռուստաադապտացիայում և վերստեղծման այլ ձևերում: Ա. Լեֆևերի կարծիքով՝ թարգմանությունն ունակ է հեղինակի կերպարն ու նրա ստեղծագործությունն արտապատկերել (*պրոյեկտել*) այլ մշակութային միջավայրում և ընդլայնել հեղինակի և նրա ստեղծագործության ընկալման սահմաններն այն ստեղծող մշակույթի շրջանակներից դուրս՝ rewriting-ը դիտարկելով

¹ Bassnett, Lefevere 1990, 12.

² Even-Zohar 1999, Toury 2004.

³ Gentzler 2001, 13.

որպես արդյունավետ մտաշահարկում⁴:

Արդի թարգմանաբանության առավել վիճելի խնդիրներից է այն, թե օտարալեզու հեղինակի ստեղծագործությունն ինչ չափով կարող է ներմուծվել (ներդրվել) թիրախ մշակույթում:

Լ. Վենուտին, ելնելով թարգմանության մեթոդների վերաբերյալ Ֆր. Շլայերմախերի դիրքորոշումից, թարգմանական գործընթացը քննում է որպես թարգմանական էթիկայի խնդիր: Ըստ Լ. Վենուտիի՝ թարգմանիչը կարող է ընտրել կա՛մ *տնայնացման մեթոդը* (domesticating method), այն է՝ օտարալեզու տեքստի էթնոկենտրոն կրճատում՝ թարգմանության լեզվի մշակութային արժեքներին համապատասխան, կա՛մ *օտարականացման մեթոդը* (foreignizing method), այսինքն՝ էթնոկենտրոն ճնշում այս արժեքների վրա օտարալեզու տեքստի լեզվամշակութային տարբերություններն արձանագրելու համար, այսպիսով, Ֆր. Շլայերմախերի պատկերավոր արտահայտությամբ, «ընթերցողին ուղարկելով ճամփորդության» իր լեզվամշակութային համայնքում ընդունված *գրական կանոնից* այն կողմ⁵:

Օտարականացման մեթոդը թույլ է տալիս նաև նվազեցնել համաշխարհային մշակութային արժեքների «տնայնացումը» անգլիախոս աշխարհի կողմից: Այս դեպքում շեշտադրվում են թարգմանվող լեզվի լեզվամշակութային արժեքները՝ չթաքցնելով թարգմանչի «ներկայությունը»: Որդեգրելով նման դիրքորոշում՝ Լ. Վենուտին, Ս. Բասնետը և այլք կարծում են, որ թարգմանիչը պետք է «տեսանելի» լինի՝ լեզվամշակութային փոխադրման գործընթացը *մտաշահարկումից* զերծ պահելու համար. թարգմանիչն ակտիվորեն մասնակցում է տարբեր գաղափարների կերտմանը, ինչպես նաև գեղագիտական և մտավոր արժեքների փոխադրման գործընթացին:

Արդի թարգմանաբանության մեջ լայն տարածում ունեն նաև թարգմանության ապակառուցողական մոտեցումները (Ժ. Դերիդա, Ռ. Առոխո և այլք), որոնք կարելի է դասել մեկնողական-փիլիսոփայական կաղապարների շարքում: Խոսքը թարգմանության այն տեսությունների մասին է, որոնք ծագում են Ժակ Դերիդայի՝ թարգմանության ակտի վերաբերյալ ապակառուցողական գաղափարներից և այսօր դարձել են ամենասուր

⁴ Lefevere 1992, 9.

⁵ Schleiermacher 2000, Venuti 2004, 20.

քննարկումների առարկա: Այստեղ առաջադրվում է նոր մոտեցում *բնագիր/թարգմանություն* երկատման վերաբերյալ, որտեղ, ի տարբերություն ավանդական մոտեցումների, բնագիրը ստորադասվում է թարգմանությանը, փորձ է արվում անտեսել թարգմանության առանցքային հասկացությունը՝ համարժեքությունը՝ ավելի կարևոր համարելով թարգմանչի մեկնաբանությունները⁶: Այս տեսանկյունից թարգմանությունն ընկալվում է որպես մեկնողական փոխակերպում, տարասեռ և ածանցյալ գործընթաց, որը վեր է հանում ելակետային տեքստի փոփոխուն և դինամիկ, այդ թվում՝ հակասական իմաստները, իսկ «թարգմանություն» հասկացությունը փոխարինվում է «փոխակերպում» կամ «վերափոխում» հասկացություններով:

Ինչ վերաբերում է թարգմանության մեկնողական կադապարներին, պետք է նշել, որ քննելով թարգմանության ժամանակ իմաստաստեղծման և ընկալման գործընթացի առանձնահատկությունները, դրանք հիմք են ծառայել նորագույն թարգմանական տեսությունների ստեղծման համար: Թարգմանությունը դիտարկելով որպես մարդակենտրոն ուղղվածությամբ բարդ մտածական և հաղորդակցական գործընթաց՝ այդ տեսություններում առանձնահատուկ շեշտադրվում է իմաստի դինամիկ բնույթը:

Ի մի բերելով արդի մշակութային և այլ ուսումնասիրությունների տարբեր դրույթներ՝ առանձնացնենք հետևյալ հիմնական առանցքային հասկացությունները, որոնք նորովի են իմաստավորում թարգմանության հանրամշակութային հայեցակերպը արդի թարգմանաբանության մեջ՝ *նորմեր* (Գ. Տուրի, Թ. Հերմանս, Ք. Նորդ), *ապակառուցողականություն* (Ժ. Դերիդա, Ռ. Առոխտ, Մ. Վիդալ Կլարամոնտե), *յուրացում* (Լ. Վենուտի), *թարգմանության հանրալեզվական հայեցակերպ* (Յու. Նայդա, Չ. Տաբեր), *ֆունկցիոնալիզմ* (Կ. Ռայս, Հ. Վերմեր, Հ. Հյոնիհ, Պ. Քուսմաույ), *հետգաղութային դիսկուրս* (Օ. Կարբոնել ի Կորտես), *մրաշահարկում* (Ի. Էվեն-Ջոհար, Գ. Տուրի), *մշակութային միջնորդություն* (Բ. Հաթիմ, Լ. Մասոն), *քաղաքական անհամաչափություն* (Է. Պրունչ) և այլն:

Վերոհիշյալ հասկացություններն իրենց նորարարական և համարձակ հարցադրումներով այսօր արմատապես փոխել են մշակութային ուսումնասիրությունների հարացույցը, թեև թարգմանաբանության մեջ *պոստմոդեռնիզմի* որոշ գաղափարներ դարձել են սուր քննարկումների և քննա-

⁶ Vidal Claramonte 1995, 89-91.

դատությունների առարկա⁷:

Թարգմանության՝ որպես միջմշակութային հաղորդակցության խնդիրներին նվիրված արդի որոշ ուսումնասիրություններում թարգմանական գործունեությունը դիտվում է նաև «ոչ սովորական» հարացույցի շրջանակներում՝ քննելով *այլմշակութային* հանրությունների հետ հարաբերությունները: Թարգմանությունը ոչ միայն մշակույթների միջև կամուրջ է կամ երկխոսություն, այլ նաև ոչ «անմեղ» հաղորդակցության միջոց, որը կարող է ծառայել որպես «բաժանման հենք», «տարբերությունների հնոց»՝ վերահաստատելով գաղափարական ուղղվածությամբ հին նախատիպեր կամ էլ ստեղծելով նորերը⁸: Թիրախ մշակույթի գաղափարախոսական համատեքստում թարգմանությունը կարող է դառնալ մշակութային գերիշխանության միջոց՝ օգտագործելով գաղութային կամ հետգաղութային դիսկուրսին հատուկ ռազմավարություններ: Թարգմանության և սոցիալ-քաղաքական շահերի այս սերտ կապն ավելի ակնհայտորեն է դրսևորվել գաղութային տիրապետման ժամանակաշրջանում, երբ թարգմանությունը՝ որպես խոսքային գործունեություն, ծառայել է նաև գաղութայնացման նպատակներին՝ ընդգծելով մի մշակույթի գերազանցությունը մյուսի նկատմամբ: Այսպես օրինակ՝ Հեռերո Ռոդեսը նշում է, որ բրիտանական կայսրությունը, հավատ ընծայելով իր գերիշխող դերին, իրեն իրավունք է վերապահել *համագործակցելու* այլ մշակույթների ինքնությունների կազմավորման խնդրում: Դրա մասին է վկայում պարսիկ բանաստեղծ Օմար Խայամի հայտնի թարգմանիչ էդվարդ Ֆիցջերալդի խոստովանությունն իր կատարած թարգմանությունների մասին, որտեղ ոչ միայն արդարացնում, այլ նաև անհրաժեշտ է համարում թարգմանության միջոցով ներգործել պարսկական պոեզիայի վրա⁹: Ավելի ուշ բացահայտվել է, որ էդվարդ Ֆիցջերալդի թարգմանություններից միայն 49-ն են բնագրին հարազատ, 44-ը նույնանման քառյակների խմբավորում են, իսկ մնացածը ազատ թարգմանություններ են՝ գրված խայամական ոգով¹⁰: Լինելով վերստեղծում կամ մեկնաբանություն՝ թարգմանությունը տվյալ դեպքում ծառայել է որոշակի դիսկուրսի հաստատմանը, որտեղ *այլմշակութային* ինքնությունը ներկայացվում է նոր տեսանկյունից:

⁷ Бузаджи 2009, Мошонкина 2016, Фёфелов 2014.

⁸ Carbonell i Cortés 1997, Carbonell i Cortés 1999.

⁹ Herrero Rodes 1999, 94.

¹⁰ Մինասյան 1974, 92:

Թարգմանության և քաղաքականության սերտ առնչության խնդիրները, հետևելով Ս. Բասնետին և Ա. Լեֆների, լայն քննության առարկա են դարձել տարբեր հեղինակների աշխատություններում: Այսպես, «Թարգմանություն և իշխանություն» գրքի նախաբանում նրա խմբագիրները՝ Մարիա Տիմոչկոն և Էդվին Գենտլերը, նշում են, որ թարգմանությունը երբեք չի եղել «անբիծ» գործունեություն: Իմաստավորելով թարգմանության դերը հասարակության կյանքում՝ այս հեղինակները գտնում են, որ որոշ դեպքերում թարգմանությունը զբաղվում է «գաղտնի կողերի կեղծարարությամբ, աղավաղմամբ, նմանակմամբ և մշակմամբ: Բոլոր այս գործողություններում թարգմանիչները, ինչպես և գրողներն ու քաղաքական գործիչները, մասնակցում են հասարակության կառավարմանը՝ ձևավորելով գիտելիք և մշակույթ»¹¹:

Որոշ թարգմանական հետազոտություններում, չափազանցնելով մշակույթի դերը թարգմանության մեջ, նույնիսկ այն քննվում է որպես թարգմանության միավոր¹²: Այսինքն՝ թարգմանության արդի որոշ կաղապարներում ակնհայտ է «լեզվական մոտեցումների անընդհատ աճող լքվածություն՝ հոգուտ անդրմշակութայինի»¹³: Կարծում ենք, որ թարգմանության նոր հարացույցի փնտրտուքի ճանապարհին հնարավոր չէ ամբողջովին ժխտել թարգմանության զուտ լեզվական էությունը: Կարևորելով լեզվական և արտալեզվական գործոնների փոխազդեցությունն ու փոխներգործությունը՝ պետք է նշել, որ թարգմանությունը բարդ, բազմահայեցակերպային գործունեություն է, որտեղ նորագույն, այսպես կոչված *մշակութային ուսումնասիրությունները* լրացնում են թարգմանության լեզվաբանական տեսություններում առկա բացը:

XXI դարում թարգմանական տարբեր խնդիրների քննությունը սերտորեն առնչվում է մարդու և նրա մտածական գործունեության հետ: Ռուսական թարգմանաբանական որոշ դպրոցներում (Մոսկվայի, Պերմի, Տվերի, Տամբովի դպրոցները և այլն) ձևավորվել են նոր ավանդույթներ, որտեղ թարգմանությունը դիտվում է որպես մտածական գործունեություն՝ *խոհածություն* (рефлексия): Այս դպրոցների ներկայացուցիչները կարծում են, որ թարգմանական գործընթացը կապված է ոչ այնքան թարգմանչի լեզվական իրազեկության, որքան նրա մտածական գործունեության հետ:

¹¹ Tymoczko, Gentzler 2002, xxii.

¹² Vidal Claramonte 1998, 51.

¹³ Buesa Gómez 1995, 33.

Հիմնվելով *գործունեության գոյաբանության* հիմնական սկզբունքների վրա՝ մշակվել են գեղարվեստական թարգմանության նոր կաղապարներ, որտեղ մեծ նշանակություն ունեն հոգելեզվաբանության, լեզվամշակութաբանության, լեզվաճանաչողության արդի ձեռքբերումները: Այս կաղապարները, թարգմանությունը ուսումնասիրելով որպես լեզվական անհատի խոսքամտածական բարդ գործընթաց, արտացոլում են թարգմանության մարդակենտրոն ուղղվածությունը:

Թարգմանության *գործունեության տեսության* հիմքերը մշակել է Ն.Լ. Գալեևան: Այս տեսության հիմքում ընկած է «մտագործունեության գոյաբանությունը»¹⁴, գործունեության մեջ միահյուսված մտածողությունը: Թարգմանության գործունեության տեսության մեջ Գալեևան առանձնացնում է մի քանի սկզբունք՝ կարևորելով համագործակցության սկզբունքը, նորմի և նրա իրագործման հակադրության սկզբունքը, որում դրսևորվում է թարգմանական գործունեության ստեղծագործական բնույթը և այլն: Համագործակցության սկզբունքն իրագործվում է թարգմանության տարբեր մակարդակներում: Գիտնականը այն դիտարկում է ինչպես միջմշակութային համագործակցության, այնպես էլ հաղորդակցության տարբեր սուբյեկտների (բնագրի հեղինակի, բնագրի ընկալողների, իր գործունեության մեջ տարբեր դիրքորոշումներ համադրող թարգմանչի, թարգմանության ընկալողների) համագործակցության տեսանկյունից: Նման դիտանկյունից թարգմանությունը քննելիս խախտվում են հեղինակի և թարգմանչի միջև ստեղծված ավանդական հարաբերությունները, երբ թարգմանությունն ընկալվում էր որպես թարգմանող և թարգմանվող լեզուների լեզվահամակարգերի համեմատական քննություն կամ էլ որպես թարգմանող և թարգմանվող լեզուների տեքստերի միջև ձևական համապատասխանությունների ստեղծում, որի դեպքում թարգմանչի ամեն մի որոշում կախման մեջ է բնագրի տեքստից:

Վերոհիշյալ գաղափարները դրսևորվել են Լ. Կուշնինայի առաջադրած թարգմանական կաղապարում, որը կարող է ծառայել թարգմանության՝ որպես միջմշակութային և միջլեզվական հաղորդակցության ռազմավարություն: Վերջինս թարգմանության մարդաբանության տեսանկյունից ներկայացնում է թարգմանական գործընթացի նոր ընկալում: Ըստ այս

¹⁴ Галеева 1997, 27.

կադապարի՝ թարգմանության տեքստի ինտեգրված իմաստը թարգմանական տիրույթի (переводческое пространство) իմաստային դաշտերի սիներգետիկ փոխներգործության արդյունք է։ Սա նշանակում է, որ թարգմանական տիրույթում կատարվում է բնագրի իմաստների համակարգի կազմակերպման առավել կատարյալ և արդյունավետ հնարների ընտրություն և ոչ արդյունավետ, իր *էներգետիկ* ներունակությունը կորցրած իմաստների «խտտանում», իսկ հնարավոր բազմաթիվ իմաստների շարքից համակարգն ընտրում է այն, ինչ կարող է առավել բնականորեն ինտեգրվել ընդունող մշակույթում, որի պատճառով միևնույն տեքստի թարգմանության ժամանակ ընտրության հնարավորություններն անսահման են և անկանխատեսելի¹⁵։ Թարգմանական տիրույթում առանձնացվում են 3 տեքստային դաշտ և 3 սուբյեկտիվ դաշտ։ Թարգմանիչը դրանք վերլուծում է, և նրա ուղեղում առաջ է գալիս տեքստի պատկեր-գեշտալտը (սա դիտարկվում է որպես թարգմանության միավոր), իսկ սիներգետիկ ազդեցության շնորհիվ երևան է գալիս նոր իմաստը։ Լ. Կուշնինան, թարգմանության գործընթացի դինամիկան սիներգետիկայի տեսանկյունից նորովի մեկնաբանելով, որպես թարգմանական գործընթացի նոր «աշխարհընկալում», առաջարկում է «թարգմանական տիրույթի» ներդաշնակության հայեցակետը¹⁶։ Սա ունի ոչ գծային ուրվագիծ, կազմակերպված է տարածաժամանակային անընդհատականության տեսքով, ձևավորվում է բնագրի տեքստի շուրջ և տարածվում մինչև թարգմանության տեքստի բովանդակություն։

Արդի թարգմանաբանության մեջ մարդաբանական մոտեցումը էապես ընդլայնում է թարգմանական հետազոտությունների հարացույցը և շեշտադրում թարգմանության դիսկուրսիվ գոյաբանությունը։ Սա ենթադրում է թարգմանության՝ որպես հաղորդակցական բարդ գործընթացի **սուբյեկտների**՝ հեղինակի և թարգմանչի, **օբյեկտների**՝ ելակետային և թարգմանության տեքստերի, **հասցեատերերի**՝ ելակետային և թարգմանության տեքստերի ընկալողների «անքակտելի համագոյությունը» («неразделимое со-бытие»)¹⁷։ Ընդհանուր առմամբ, թարգմանության դիսկուրսիվ գոյաբանությունը հիմնվում է երեք դիսկուրսիվ փուլերի (ստեղծագործական, վերակերտող և ընկալողական) շրջանակում թարգմանական գործընթացը պայմանավորող երեք հիմնարար տարրերի («միջոցներ», «հա-

¹⁵ Кушни́на 2014a, 47.

¹⁶ Кушни́на 2014b, 14-15.

¹⁷ Леонтьева 2010, 82.

ղորդակցություն», «մարդիկ») փոխներգործուն փոխազդեցության վերլուծության վրա, որը հնարավորություն է ընձեռում վեր հանելու գեղարվեստական թարգմանության գործընթացի դինամիկան:

Խոսելով արդի թարգմանաբանության զարգացման խնդիրների մասին՝ հարկ է անդրադառնալ նաև կորպուսային լեզվաբանության և թարգմանական ուսումնասիրությունների սերտ առնչություններին, որն այսօր ենթադրում է, ինչպես հուշում է Գլորիա Կորպասի գրքի վերնագիրը, «նոր հարացույցի մարտահրավերներ»¹⁸: Արդի թարգմանական ուսումնասիրությունների այս նոր մեկնակետը հնարավորություն է տալիս ձեռք բերելու նոր՝ հավաստի տվյալներ և ի ցույց դնելու թարգմանական գործընթացի որոշ միտումներ, որոնք կարող են դիտարկվել որպես թարգմանական ընդհանրույթներ:

Եզրակացություններ

Մեր ամփոփ քննությամբ կարելի է եզրակացնել, որ թարգմանության գոյաբանության քննության մեջ տարբեր ուղղությունների և մոտեցումների առկայությունը նոր մարտահրավերներ է առաջադրում թարգմանության արդի տեսաբաններին, իսկ տեքստակենտրոն քննությունից «հաղորդակցակենտրոն» քննության անցումը պահանջում է թարգմանական գործընթացի դինամիկայի ուսումնասիրության նոր մեթոդներ, միջգիտակարգային՝ ինտեգրացված մոտեցում, որտեղ մեծ կարևորություն են ստանում գործաբանական լեզվաբանության, լեզվամշակութաբանության, ճանաչողական լեզվաբանության, դիսկուրսի տեսության, հանրալեզվաբանության, հոգելեզվաբանության ձեռքբերումները:

Նոր իմաստային բովանդակություն են ստացել թարգմանության առանցքային հասկացությունը՝ *համարժեքությունը*, ինչպես նաև թարգմանության այնպիսի երկատումներ, ինչպիսիք են, օրինակ, հեղինակ/թարգմանիչ, բնագիր/թարգմանություն, թարգմանչի տեսանելիություն/անտեսանելիություն երկատումները: Արդի որոշ տեսություններում թարգմանությունն ուսումնասիրվում է ոչ այնքան որպես լեզվական, որքան մշակութային փոխադրություն (Ա. Լեֆևեր, Ս. Բասնետ և այլք), իսկ թարգմանության մեկնողական-փիլիսոփայական մոտեցումներում առանձնահատուկ նշանակություն ունի ապակառուցողականության գաղափարը: Կարծում

¹⁸ Corpas Pastor 2008.

ենք, որ թարգմանության նոր՝ ավելի արդյունավետ հարացույցի փնտրտուքի ճանապարհին պետք է առաջին հերթին կարևորել թարգմանության միջգիտակարգային բնույթը, ինչպես նաև քննության բազմահարացուցային մեթոդները:

Գրականություն

- Մինասյան Ա.Մ. 1974, Խայամի քառյակները օտար լեզուներով, Լրաբեր հասարակական գիտությունների, N 10, էջ 90-99:
- Басснетт С. 2016, Истоки и развитие переводоведения в 1975-2016 гг., Вестник СПбГУ. Серия 9. Филология. Востоковедение. Журналистика, вып. 4, с. 31-44.
- Бузаджи Д.М. 2009, Переводчик прозрачный и непрозрачный, Вестник НГЛУ, Лингвистика и межкультурная коммуникация, вып. 4, Нижний Новгород, с. 20-29.
- Галеева Н.Л. 1997, Основы деятельностной теории перевода, Тверь, Твер. гос. университет, 79 с.
- Кушни́на Л.В. 2014а, Теория перевода как междисциплинарная антропология, Вестник ПНИПУ, Проблемы языкознания и педагогики, N 10, с. 45-53.
- Кушни́на Л.В. 2014б, Переводческое пространство как стратегия межкультурного взаимодействия. Лингвокультурный компонент в переводческом пространстве: коллективная монография (отв. ред. Э.М. Рянская), Нижневартовск, изд. Нижневарт. гос. университета, с. 6-37.
- Леонтьева К.И. 2016, Дискурсивная онтология перевода: к обоснованию статуса, Вестник ТвГУ. Серия «Филология», N 10, вып. 2, с. 78-85.
- Мошонкина Е.Н. 2016, Лоуренс Венути и «French Theory»: о постструктуралистских корнях новейшей теории перевода, Вопросы философии, N 3, с. 61-71.
- Прунч Э. 2015, Пути развития западного переводоведения. От языковой асимметрии к политической, Москва, «Р. Валент», 512 с.
- Фефелов А.Ф. 2014, Взаимосвязи перевода и культуры в трактовке С. Басснетт, Вестник Новосиб. гос. университета. Серия «Лингвистика и межкультурная коммуникация», т. 12, вып. 1, с. 90-97.
- Bassnett S., Lefevere A. (eds.) 1990, Translation, History and Culture, London: Pinter Publishers, 133 p.

- Buesa Gómez C. 1995, Enfoques transculturales de la traducción literaria, *Cultura sin fronteras*, Encuentros en torno a la traducción, Alcalá de Henares: Universidad de Alcalá de Henares, p. 32-41.
- Carbonell i Cortés O. 1997, Traducir al Otro: Traducción, exotismo, post-colonialismo, Cuenca: Ediciones de la Universidad de Castilla-La Mancha, 190 p.
- Carbonell i Cortés O. 1999, Traducción y cultura. De la ideología al texto, Salamanca: Ediciones Colegio de España, 322 p.
- Corpas Pastor G. 2008, Investigar con corpus en traducción: los retos de un nuevo paradigma. Fráncfort: Peter Lang, 297 p.
- Even-Zohar I. 1999, La posición de la literatura traducida en el polisistema literario, *Teoría de los Polisistemas* (Estudio introductorio, compilación de textos y bibliografía por M. Iglesias Santos), Madrid: Arco, p. 223-231.
- Gentzler E. 2001, *Contemporary Translation Theories*, 2nd ed., Clevedon: Multilingual Matters Publ., 232 p.
- Herrero Rodes L. 1999, La traducción entre culturas: la traducción de los marcadores culturales específicos en la novela angloindia de la década de los noventa. Tesis Doctoral, Universidad de Alicante, 503 p.
- Lefevere A. 1992, *Translation, Rewriting and the Manipulation of Literary Fame*, London, New York: Routledge Publ., 184 p.
- Schleiermacher F. 2000, Sobre los diferentes métodos de traducir (traducción y comentarios de Valentín García Yebra), Madrid: Gredos, 141 p.
- Toury G. 2004, Los estudios descriptivos de traducción, y más allá. Metodología de la investigación en estudios de traducción (traducción al español por R. Rabadán y R. Merino), Madrid: Cátedra, 376 p.
- Tymoczko M., Gentzler E. (eds.) 2002, *Translation and Power*, Amherst, Boston: University of Massachusetts Press, 272 p.
- Venuti L. 2004, *The Translator's Invisibility: A History of Translation*, London/New York: Routledge Publ., 353 p.
- Vidal Claramonte M. C. Á. 1995, Traducción, manipulación, desconstrucción, Salamanca: Ediciones Colegio de España, 135 p.
- Vidal Claramonte M. C. Á. 1998, El futuro de la traducción: últimas teorías, nuevas aplicaciones, Valencia: Institució Alfons el Magnànim, 150 p.

ԱՐԴԻ ԹԱՐԳՄԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԳԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐԶ

Հասմիկ Բաղդասարյան

Ամփոփում

Արդի թարգմանաբանության մեջ լայն քննարկման նյութ են դարձել թարգմանության և ազգային մշակույթի փոխհարաբերության տարբեր խնդիրներ, որոնք նորովի են մեկնաբանվում ժամանակակից արևմտաեվրոպական թարգմանաբանական դպրոցում: Առանձնահատուկ կարևորվում են նաև թարգմանության ապակառուցողական մոտեցումներին, թարգմանության դիսկուրսիվ գոյաբանությանը, ինչպես նաև թարգմանական հետազոտությունների և կորպուսային լեզվաբանության առնչություններին վերաբերող տարբեր հարցեր:

Թարգմանության գոյաբանության քննության մեջ տարբեր մոտեցումների առկայությունը նոր մարտահրավերներ է առաջադրում թարգմանության արդի տեսաբաններին, պահանջում թարգմանական գործընթացի դինամիկայի ուսումնասիրության նոր մեթոդների և ռազմավարության մշակում:

Բանալի բառեր՝ թարգմանություն, ազգային մշակույթ, միջմշակութային հաղորդակցություն, ապակառուցողականություն, մտածական գործունեություն, դիսկուրսիվ գոյաբանություն, թարգմանության միջգիտակարգային էություն:

О НЕКОТОРЫХ ТЕНДЕНЦИЯХ РАЗВИТИЯ СОВРЕМЕННОГО ПЕРЕВОДОВЕДЕНИЯ

Асмик Багдасарян

Резюме

В современном переводоведении особое внимание уделяется различным проблемам взаимодействия перевода и национальной культуры, которые по-новому интерпретируются современной западноевропейской переводческой школой. Не менее ключевыми являются различные проблемы, касающиеся деконструктивных подходов к переводу, дискурсивной

онтологии перевода, а также взаимосвязей переводческих исследований и корпусной лингвистики.

Наличие разнообразных подходов в анализе онтологии перевода предъявляет новые вызовы современным теоретикам перевода в плане апелляции к новым методам и выработки стратегии в рассмотрении динамики переводческого процесса.

Ключевые слова – перевод, национальная культура, межкультурная коммуникация, деконструкция, рефлексия, дискурсивная онтология, междисциплинарная сущность перевода.

ON SOME TENDENCIES IN DEVELOPMENT OF CONTEMPORARY TRANSLATION STUDIES

Hasmik Baghdasaryan

Abstract

In contemporary translation studies, particular attention is given to different problems of interconnection between translation and national culture, which is interpreted anew in the modern West European school of translation studies. Various issues concerning the deconstructive approaches of translation, discursive ontology of translation, as well as the correlation between translation studies and the corpus linguistics are given specific importance.

The existence of different approaches within the ontological study of translation creates new challenges for the contemporary translation theorists and requires an elaboration of new methods and strategies for studying the dynamics of the translation process.

Key words – translation, national culture, cross-cultural communication, deconstruction, reflection, discursive ontology, interdisciplinary nature of translation.

INTERPENETRATION OF MYTH AND SIGN IN AXEL BAKUNTS' "MTNADZOR" COLLECTION

Naira Hambardzumyan

PhD, Associate Professor

Institute of Literature after Manuk Abeghian

National Academy of Sciences of Republic of Armenia

Armenia, Yerevan, 15 Grigor Lusavorich

E-mail: nairahambardzumyan@yahoo.com

The article has been delivered on 07.04.2020, reviewed on 07.05.2020, accepted for publication on 05.08.2020

Introduction

Mythological and semiotic thinking is mainly intrinsic to the 20th-century literature that is characterized in the realms of the artistic style and the author's perception, since the perception of the world of the other side is beyond the boundaries of consciousness and cognition and contradicts its identity. In the 1920s, when modernism was realized, various innovative perceptions emerged that had numerous meanings, so the modernists' reference to the "myth" and the "sign" phenomena was not accidental. Through the usage of the myth, they sought to answer the questions of remodeling and reconfiguration of human nature and the harmony of nature, here and now, as in the core of the mythical thinking lies mythical archetypes in relation to other phenomena. All possible attributes of myth and sign are observable in the domains of sense discovery, in the realm of harmonizing between the real and the ideal, when the myth ceases to act as a myth, the sign as a sign, they transfer into indistinguishable states of reflection as the boundaries between the natural and the supernatural, the unity of object-subject are missing. By the help of semiotics, on the contrary, the domain of collective unconsciousness at different levels of language use is overcome, particularly in the process of text-making, as the sign is born in the same way.

Interpenetration of Myth and Sign

Myth and sign are closely intertwined, revealing the exit of images from their own boundaries through inner-textual interpenetration, with the utmost supremacy of the meaning. In this context, Axel Bakunts's "Mtnadzor" (The

Dark Valley) collection is noteworthy, in particular the "Alpine Violet", "Mtnadzor", "Mtnadzor Evil", "Mina Bibi" narratives in which myth-sign interaction and author's linguistic orientations are juxtaposed only after collision when the sign materializes the image, but is not identical to the myth and is not characterized by the feature of separation of text. In the "Alpine Violet" they are united in the **personal**: "How long has it passed since that day? And it is possible that they have two lookalike faces, even the same lips. The shapes of the eyes were the same as the other one, that was thin and be tall. Her dress was rustling, her skirts were down to her bare heels. That woman also had rustling clothes, was wearing a gray coat, a black velvet hat, the long pin of which, had universal orange head" **and environmental transformations**, "perhaps the Basuta River mixed with another river reaches the sea, on the shore of which, on the sand, one day the woman and the artist were sitting"¹. In the right professional domain (voice, color, sensation) are referred to as metaphors.

Roland Barthes² sees the sign at the three levels of consciousness transmission:

a. sign consciousness, which denotes the depth of the image and views the world in the world-image-form relation as an external multifaceted, infinite and omnipotent cavern (Abgrund), which is constantly expanding in line with the proportional movements of consciousness, as the form-content relation is being constantly updated;

b. paradigmatic, according to which, in order to attain meaning, it is enough for one to simply dig into their own memory or imagine the final forms of the material;

c. syntagmatic, when as the consciousness evolves one no longer sees (or hardly sees) the sign, but manages to participate in its development.

In Barthes's sign system, the ontological inner-subconscious layers are comprehended, which direct the reader to the author's-text psychophysiological sub-layers, since the process of creation is materializing the consciousness in the interval of spirituality and materialism.

Therefore, text poetry assumes author-text equality by regulating also author-text contrast. This relates to the discovery of the cosmic microcosm of

¹ Բակունց 1976, 184-185:

² Барт Ролан 1994, 246-252.

the text as the author's psychic and psychophysiological content, and is transformed into macro and micro universes, revealed by substrates of cosmic elements and energies. In this case, the myth is perceived as an early form, and a category, that has already historically overcome the stages of development that is able to first be purified and sanctified, then to unite the text as culture and culture as a whole in the context of different cultural realities. In the Bakunts' narratives, fore-memory is paramount, as the inner cultural meaning and content of the text are understandable especially from the point of view of mapping and chronology of the world, its content and means, when the natural life of things and the chain process of history are materialized in the author's domain of thought as in "Mtnadzor" story the structure demonstrates the above mentioned conventionality of the text: the preposition showing he mythical times is gradually approaching the time of the sign, which eventually transcends the present time presented by the author and leads to concrete realities. Or as in "Alpine Violet" story, "It was the story of a fortress in his head, the words in parchment registration books about the days when armored horse hooves were hitting the iron entrance and his adjutants returning from the destruction were shaking their swords. From behind the glasses, the trained eyes could see the armored, parchment writer praising with a cane, and he heard the drumming sound of ancient horses"³.

The existence of such a psychophysiological layer, in some traces, reveals the cultural-nature interaction in mythical texts, in particular the pre-cultural ("when a superstitious man was trying to control the phenomena of the nature")⁴ the essence of mythological-poetic questions: "Kakavaberd stones seemed like were awaken and talking to the archaeologist..., when he called from the edge of the pyramid that he had found the tomb of Prince Bakur or that gold treasures were buried on the top of Kakavaberd"⁵. Such reflections are plausible, reasoned by the text, accidental and spontaneous, and suppose the text as a psychophysiological opposite structure, disintegrating: "The woman sitting next to the fire <...> seemed to be a priestess guessing the movements of the ward in front of a tripod"⁶. The myth, in this case, is in the do-

³ Բալունց 1976, 181:

⁴ Фрезер Джеймс 2011, 280-282.

⁵ Բալունց 1976, 182:

⁶ Բալունց 1976, 185:

main of the objectively tangible and epistemologically from the other side (and not metaphorical) subconscious, which is at the same time a fact of Bakunts' discovery and surpasses the author not only as an individual but also as a writer. This is an ontology, a direct fact of being, which ensures the presence of the true myth and its cultural vitality. Therefore, Bakunts' intrinsic conceptions of creation as prelude to the duality of the Jung's archetypes⁷: "It seems as if Mtnadzor was a forgotten corner from the days when there was no man yet, and the fossil dinosaur felt as free as the bear in our day. Maybe the world was like this when huge layers of coal were created and there were traces of long-lost plants and reptiles on the layers"⁸.

The sub-layers of mythical and archetypal images in Bakunts' narratives are created through ideas, images, matrices, signs, prototypes, systems, structures, at the same time forming the cultural axis of the text and its starting point. Though Bakunts is simplifying Panin's myth "they were making a lot of stories about him", and from the domain of the internal spatial unity of the text, "his horror was far-fetched", transcends the psychological domain of symbolism: "no one knew his nationality, nor faith and origin", emphasizing Panin's cruel image to the most. This process is by no means the result of necessity, so the actions of incorporating different realities into the text are followed by mythological-poetic tricks by Bakunts, emphasizing the topic of the myth:" They used to say he was a former officer, he killed a man, was sent to jail and then went to the forest. In one of the northern forests he killed his wife one night, hunting, or rather, ordered the dogs to hunt down and tear up the woman"⁹.

Myth and sign transitions in Bakunts' practice and practicality create a semiotic two-dimensional text: "Whip froze in the evening cold winter breeze" and "it seemed as if a satan in Mtnadzor was cackling" by "whip" and "satan" signs highlights and intensifies the alternating the abundance of mythical images, which, despite certain structural commonalities, avoids identifying with other texts, creating a re-imagined and changing model of the same text in the inner domain. Noteworthy are also introspective forms of perception of the text, the differences of which lead to the inaccuracy of the textual features. The

⁷ Ст'у Юнг 1996.

⁸ Բակունց 1976, 11:

⁹ Բակունց 1976, 13:

meaning relates to the word, highlighting the mythological and psychological all-encompassing interpretation of the signs: "One person was a linen, the other was a red beetroot. Panin spit it out as a Mtnadzor bear"¹⁰, although referring to classical psychoanalysis (Freud), it is also possible to find more original principles of interpretation of the text. In the inner domains of intralinguistic and extralinguistic transitions, space encompasses the text, and the myth is not perceived as an unintentional psychosis, the objects involved here have their boundaries of creation, or are correlated with the existing, in other words, at its absolute other-a-limit, the almighty of creation.

Roland Barthes writes

"Myth is a word, and anything that is in the domain of discourse can become a myth. The myth clarifier is not the subject of the program but the means by which it is transmitted"¹¹. In this context, the myth is the functional substance of the author's language, though the comparison with it does not change anything in the inner domain of the language, as it is passed by in words and is given to the saying: "Panin was like a wild boar. He was a monster in a forester costume, with a cockade hat on his head. Suddenly he would come out of hiding, roaring so that even the bears would wake up and roar in the dens. The lumberman was left to run away or twirl like a snake under Panin's whip"¹².

The meaningful word breaks up its own case in the upsurge. The past, the present and the future merge into one universal time domain, and beyond that, as systems, cross the boundary of resimultaneity. A third space-time (as a system) is created, which has the characteristics of the previous two space-times, penetrating into the mythical space of the text and deepening into the realities of the past. In this context, it is possible to say that the myth-making in the mythical "Mtnadzor" story reaches perfection, since the mythical essence is created not through style, form or meta-logic, but through the story within it "One looks and can't decide whether Avi is old or still young, where his voice comes from, maybe he is not a human but a scarecrow; maybe he is a skeleton under the man outfit <...> And one does not know whether he is angry or that

¹⁰ Բալինյոց 1976, 14:

¹¹ Барт Ролан 2010, 265.

¹² Բալինյոց 1976, 12:

the old hunter is smiling..."¹³. The ever-evolving and narrative myths about hunter Avi and Panin help to discover not only the author's linguistic but also the intrinsic qualities of sound when the meaning is awakened and disconnected from its original basis in the highest sphere of the word perception, bringing the mind to the absolute, the secret, where the author excels himself and stands out from the text as a being, "Panin was cackling like a satan, his foot on a bear's corpse"¹⁴. In this context, Alexei Losev's thought is remarkable: "One must be extremely short-sighted or even just blind in science, not to notice that the myth is in its clearest, the most effective and strained reality. And this is not the fictitious but the most colorful and precise reality. This is the most necessary order of thought and life, away from any kind of accident and arbitrariness"¹⁵. Losev clarifies the idea of a myth in terms of its initial perception and formation of myth consciousness, and it is noteworthy that the myth as "the most viable and most strained reality" is not only reflected in the domain of science. The experience of rethinking the past (proving the individual in the domain of eternity), in this case, is perceived as an expression of psychological types and culturally sustainable models. "In this case the mythological motifs are often hidden in modern figurative language, that is, instead of the eagle of Zeus or the Bird of Fate, a plane appears, instead of a fight with a dragon, a car crash, instead of a dragon-wielding hero is a heroic tenor of an urban opera, instead of the chronic mother, a chubby grocery saleswoman, and Proserpina's abductor Pluto appears as a dangerous driver. But a very important fact for literature is that the manifestations of collective unconsciousness have a compensatory nature in their relation to the nature of consciousness"¹⁶.

In general, all genres of literature are directed to the preliminary layer of myth contained in some aspect of human consciousness and activity; therefore, when certain images are not mythologically separated, they become preliminary and final points of judgment in the context of the text, which are even though unequivocal, they do preserve the duality of the meaning in their axis: "In the dream, it seemed to Sakan that he had seen Mtnadzor, a woman in a

¹³ Բալյուճ 1976, 17:

¹⁴ Բալյուճ 1976, 16:

¹⁵ Лосев 2008.

¹⁶ Юнг 2003, 104.

white robe was running after him in a canyon, approaching to catch him, the woman would stop, laugh and run back up the crayon"¹⁷. Therefore, it is also possible to clarify: the culturological information is not only what the human scientifics, but also what one can know, because the myth in its cosmology may not only be immortal but also mortal in order to create new myths. (In this case, it is already perceived as an individual-author myth, thus opposing the classical creation of the myth, but remaining and perceived as a myth.) In "Mtnadzor" collection, the author's myth is mainly in the domain of meaningful tricks, by which the author also expands the space-time perceptions of the stories. The myths and signs in the Bakunts' narrations are sequenced, appearing in a single chain as interconnected rings or endless loops. In other words, the reality of the word stands out from the meaning, and all the rings together complete the inner domain of the text. Language becomes an object through which Bakunts overcomes the reality of the text, because "the myth is the primary function of the language, it is transmitted by words, it fully finds its domain of expression"¹⁸, and as the verbal state is not separated from its, the author's, pre-perception; and author - text interaction is formed in the text by the existence of the author. Authors of mythological-poetic and semantic texts (also Bakunts) have their own individual perceptions, they do not lead the characteristics of the object by way of physical or emotionally primitive description, but rather create an intuitive understanding of the text by completing the **myth +metaphor** relations, "Mina Bibi was opening the millennium book of the village in front of Elya's eyes, each page of which was a martyrdom of a victim of ignorance, under the horror of a mother-in-law, a description of a woman's torture under a tyrannical husband's heel, or a story of a secretly smothered children <...> Elya was appalling and it seemed as if in the village, in the corners of the dark huts, the condensated darkness and evil spirit of the centuries yet remained"¹⁹.

¹⁷ Բալունց 1976, 144:

¹⁸ Леви-Стросс 2008, 241:

¹⁹ Բալունց 1976, 102:

Conclusion

In the 20th century, the myth ensures the harmony between human consciousness and worldview. In different societies, it is manifested by different structural features, perceived within the unity of differentiation of societies' different working styles and perceptions, for the simple reason that breaking the mythological portion is always dangerous on the one hand for the policy development and for the corrosion of the latter on the other. Each period includes the incompatible individual and the story, legalizes its myth perceptions and its understandings of myth territory, its conjectures on the boundary of material and spiritual, and the author living in this period (in this case, Bakunts) finds his geography of perceptions of the things which also directly relates to his inner world.

Գրականություն

- Բակունց Ա. 1976, Երկեր չորս հատորով, հ. 1, «Ալփիական մանուշակ», Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 670 էջ:
- Барт Р. 1994, Избранные работы. Семиотика. Поэтика. Воображение знака (1962, «Arguments»), Москва, «Прогресс», 616 с.
- Барт Р. 2010, Мифология, Москва, «Академический проект», 265 с.
- Леви-Стросс К. 2008, Структурная антропология, Москва, «Академический проект», 555 с.
- Лосев А. 2008, Диалектика мифа. Миф есть чудо, Москва, «Академический проект», 304 с.
- Фрезер Д.Д. 2011, Золотая ветвь, Москва, изд. Аст. Астрель, 767 с.
- Юнг К.Г. 1996, Душа и миф: шесть архетипов, Киев, Государственная Библиотека Украины для юношества, 384 с.
- Юнг К.Г. 2003, Дух в человеке, искусстве и литературе, Минск, «Харвест», 384 с.

ՄԻՖԻ ԵՎ ՆՇԱՆԻ ՓՈԽՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄՆԵՐԸ ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ «ՄԹՆԱՁՈՐ» ԺՈՂՈՎԱԾՈՒՈՒՄ

Նաիրա Համբարձումյան

Ամփոփում

1920-ական թթ. գրականությանն առավել բնորոշ է միֆոլոգիական ու նշանաբանական մտածողությունը: Միֆի և նշանի հնարավոր բոլոր հատկանիշները տեսանելի են իրականի ու իդեալականի ներդաշնակման տիրույթում: Միֆը ենթադրում է առարկայորեն շոշափելի և իմացաբանորեն տրանսցենդենտ ենթագիտակցության առկայություն (ոչ մետաֆորային), որն այս դեպքում արտահայտել է Ակսել Բակունցը: Բակունցի՝ միֆը տեքստին զուգադրելու փորձը, կառուցվածքային համակարգում ստեղծում է նշանագիտական երկշերտ տեքստ, որը, խուսափելով նույնականացումից, ի հայտ է բերում որոշակի ընդհանրություններ՝ նույն տեքստում ստեղծելով վերաիմաստավորվող և փոփոխվող մեկ այլ մոդել: Այս համատեքստում ուշաբժան են նաև նոր մոդելների սուբյեկտիվ՝ հեղինակային կամ ոչ հեղինակային ընկալումները: Դրանց տարբերություններն արտահայտում են տեքստաբանական հատկանիշների անկրկնելիությունը:

Բանալի բառեր՝ միֆ, գոյաբանություն, տրանսցենդենտալ իրողություն, Ակսել Բակունց, երևակայություն, ֆենոմենոլոգիա, ենթագիտակցություն:

ВЗАИМОПРОНИКНОВЕНИЕ МИФА И ЗНАКА В СБОРНИКЕ АКСЕЛЯ БАКУНЦА «МТНАДՋՈՐ»

Наира Амбарцумян

Резюме

Наиболее характерной составляющей литературы 1920-х годов является мифологическое и семиотическое мышление. Все возможные атрибуты мифа и знака присутствуют в гармонии реального и идеального. Миф предусматривает наличие предметно осязаемого и когнитивно трансцендентного подсознания (неметафорического), что в данном случае было выявлено Акселем Бакунцем. Попытка Бакунца объединить миф с текстом в структурном плане привела к созданию двухмерного семиотического

текста, который подчеркивает ряд общностей, избегая идентификаций, внутри того же текста создавая модель переосмысленного и измененного текста. В контексте сказанного заслуживает внимания субъективное восприятие новых моделей как авторами, так и неавторами. Их отличия отражают неповторимость текстологических признаков.

Ключевые слова – миф, онтология, трансцендентальная реальность, Аксель Бакунц, воображение, феноменология, подсознание.

INTERPENETRATION OF MYTH AND SIGN IN AXEL BAKUNTS' "MTNADZOR" COLLECTION

Naira Hambardzumyan

Abstract

The most characteristic of the 1920s literature is mythological and semiotical thinking. All possible attributes of myth and sign is visible in the realms of the harmony of the real and the ideal. The myth assumes an area of objectively tangible and ideologically transcendental subconscious (non-metaphorical), which in this case was revealed by Axel Bakunts. Bakunts's attempt to combine myth with text creates a two-dimensional semiotical text in the structural system, which avoiding identification reveals certain similarities, creating another redifined and changing model within the same text. In this context, the subjective perception of new models with the perception of the author or non-author is also noticeable. Their differences reflect the uniqueness of the textual features.

Key words – myth, ontology, transcendental reality, Aksel Bakunts, imagination, phenomenology, subconsciousness.

ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ԾԱՌԱԴԱՐԱՆԸ¹

Մարատ Յավրումյան

Բանասիրական գիտությունների թեկնածու
ԵՊՀ, արաբագիտության ամբիոն
ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 1
Էլ. հասցե՝ myavrum@ysu.am

Աննա Դանիելյան

ԵՊՀ, արաբագիտության ամբիոն
ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 1
Էլ. հասցե՝ adanielyan@ysu.am
Հոդվածը ներկայացվել է 10.02.2020, գրախոսվել է 10.02.2020, ընդունվել է
տպագրության 05.08.2020

Ներածություն

Բնական լեզուների մշակման հետազոտական ուղղությունը վերջին քսան տարում մեծ առաջընթաց է արձանագրել շարահյուսորեն ծանոթագրված կորպուսների շնորհիվ, որոնք անփոխարինելի են լեզվի կամ լեզվի մի առանձին շրջանի վիճակագրական վերլուծության ու մեքենական ուսուցման ալգորիթմների միջոցով լեզվաբանական հետազոտությունների ավտոմատացման համար: Այսպիսի կորպուսներում քերականությունների ձևայնացման ու տվյալների ծանոթագրման համակարգերը շատ հաճախ տարբերվում են միմյանցից հիմնականում տվյալ լեզվի նկարագրության քերականական որոշակի ավանդույթի կամ էլ հետազոտողների շրջանում ընդունված տեսական այս կամ այն մոտեցման պատճառով: Այս հանգամանքը դժվարացնում է տեքստերի գոյություն ունեցող մեքենական մշակման գործիքների կիրառումը նոր լեզուների մեքենական վերլուծության համար և սահմանափակում արդյունքների համադրելիությունը²: Խնդիրը

¹ Սույն հոդվածի թեզերը զեկուցվել են Արցախի Հանրապետության «Գրիգոր Նարեկացի» համալսարանի Արեւմտահայերէնի, հայագիտութեան գիտահետազոտական Լուտովիկա եւ Յակոբ Այնթապեան կեդրոնի և ՈՒԳԸ կազմակերպած «Հայոց լեզուն անաղարտ պահենք» գիտաժողովում, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի Գանձասարի մասնաճյուղ, 27 մայիսի 2019 թ.:

² Nivre et al. 2007.

հաղթահարելու փորձերն առավելապես ուղղվել են ծանոթագրման միասնական համակարգի միջոցով լեզվաբանական համադրելի տվյալներ ապահովելուն³ կամ այդպիսիք ծանոթագրման անհրաժեշտ համակարգի փոխարկելուն⁴, կամ էլ երկուսը միասին⁵: Լեզվաբանական տվյալների համադրելիության սկզբունքն իր հիմքում ունի «Universal Dependencies (UD) Համընդհանուր կախվածություններ» նախագիծը, որի շրջանակում մշակվել է արդի գրական արևելահայերեն նախադասությունների շարահյուսական կախումների ծառերի բանկ («Հայերենի ծառադարան»), և ձևայնացվել հայերենի քերականությունը:

«Հայերենի ծառադարան» նախագծի մասին

«Հայերենի ծառադարան» նախագիծը⁶ մաս է կազմում Universal Dependencies (UD)–«Համընդհանուր կախվածություններ» հարթակի⁷, որը, տիպաբանական և կիրառական հետազոտական նպատակներով, քերականությունների ձևայնացման և տեքստերի լեզվաբանական ծանոթագրման միասնական մեթոդ է առաջարկում բնական լեզուների մեքենական մշակման համար⁸: UD համակարգը կախվածությունների բացահայտման մեթոդով շարահյուսական ամբողջական կառույցների (որպես կանոն՝ նախադասությունների) վերլուծություն է: UD-ն հիմնվում է բայ-ստորոգյալի գերադասության և նախադասության բայակենտրոն կառուցվածքի մասին պատկերացումների վրա: Նախադասությունների իմաստաշարահյուսական կառուցվածքի վերլուծության ընթացքում որպես «շարահյուսական նվազագույն միավոր» նախադասության մեջ իրար անմիջականորեն ստորադրվում են բառերը՝ իբրև լրացական հարաբերություններ:

³ Zeman et al. 2012.

⁴ McDonald et al. 2013.

⁵ Tsarfaty 2013.

⁶ Նախագիծն իրականացվել է ՀՀ «Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամի» (ԳԿՀԱՀ, ANSEF) Lingu-4595 և Lingu-5008, ինչպես նաև ISTC Research Grant դրամաշնորհային ծրագրերի շրջանակում, YerevaNN (<https://yerevann.com/>) հետազոտական լաբորատորիայի հետ համագործակցությամբ և ֆ.մ.գ.թ. Հրանտ Խաչատրյանի համադնակավարությամբ: Նախագծի տարբեր փուլերում ծրագրում ընդգրկված են եղել Գոռ Առաքելյանը (ԵՊՀ, YerevaNN), Մարտին Միրաքյանը (ՀԱՀ, YerevaNN): Ծրագրի մասին հանգամանորեն տե՛ս <https://armtreebank.yerevann.com/>: Համացանցային հղումների հասանելիությունը ստուգվել է 02.02.2020 թ.:

⁷ Նախագծի կայքը՝ <https://universaldependencies.org>:

⁸ Nivre et al. 2016.

րով միմյանց կապակցված անջատ միավորներ, և քերականական կախվածություններն արտապատկերվում են շրջված ծառի տեսքով՝ որպես նախադասության շարահյուսական կախումների ծառ:

Նախագիծը 2019 թ. նոյեմբերի դրությամբ ներառում է շարահյուսական ծառերի՝ նույն սկզբունքով ծանոթագրված 157 բանկ⁹ աշխարհի 90 լեզուներով¹⁰:

UD նախագծի շրջանակում 2017 թվականից կառուցվում է արդի գրական արևելահայերեն նախադասությունների շարահյուսական կախումների ծառերի UD_Armenian-ArmTDP բանկը (treebank, ծառադարան), որի 2.5 տարբերակը պարունակում է 2.502 նախադասություն և 52.265 բառանիշ (թողարկվել է 2019 թ. նոյեմբերին): Այս ընթացքում մշակվել է արդի գրական արևելահայերենի ձևային քերականություն¹¹, որը համարվել է նմուշային և ներառվել UD-ի տիպային քերականությունների շարքում:

Հայերենի ծառադարանի տեքստերը վերցված են հայ գեղարվեստական գրականությունից (բացառապես արձակ) և էլեկտրոնային մամուլից (հարցազրույց, մեկնաբանություն, հաղորդագրություն, լուր, բլոգ): Կան նաև իրավական տեքստեր (կառավարության որոշումներ, օրինագծեր, դատական վճիռներ) և դասագրքային օրինակներ: Ամենավաղ թվագրվող նմուշը 1976 թվականից է:

Ծանոթագրումը կատարվում է հետևյալ կերպ. «Հայերենի ծառադարան» կայքում տեքստի մուտքագրումից ու մատենագիտական նկարագրությունից հետո հատույթավորման կամ բառանջատման մեքենական մոդուլի միջոցով տեքստը տրոհվում (tokenization) է պարբերությունների, նախադասությունների և բառանիշերի (token)¹²: Այս փուլից հետո, կրկին մեքենական մոդուլի միջոցով, հիմնվելով նախապես մշակված բառարանների

⁹ Տեսական առումով բանկը դիտարկվում է իբրև լեզվաբանական համապատասխան տեղեկությամբ համալրված տվյալների համախումբ:

¹⁰ UD ծառադարանները հասանելի են <http://hdl.handle.net/11234/1-3105> կայքում:

¹¹ Հայերենի քերականության ձևայնացման սկզբունքները համառոտագրված են <http://universaldependencies.org/hy> կայքէջում: Ամբողջական նկարագրությունները առանձին հոլումների տեսքով հասանելի են նույն էջից: Հայերենի քերականության ձևայնացման ընթացքում ուղենշային են եղել հետևյալ աշխատանքները՝ Ջահուկյան 1974, Աբրահամյան և ուրիշներ 1974, Պետրոսյան 1987, Ջահուկյան և ուրիշներ 1980, Իշխանյան 1986:

¹² Բառանջատման մեքենական այս մոդուլը, որը հիմնվում է հայերեն տեքստերի հատույթավորման կանոնների վրա, հասանելի է <https://armtreebank.yerevann.com/tokenization/process/> հասցեով:

վրա, կատարվում է բառանիշերի ձևաբանական վերլուծություն: Բառանիշերից յուրաքանչյուրին վերագրվում է համապատասխան բառույթը (lemmatization)՝ հիմնվելով իմաստային և քերականական հատկանիշների վրա, ապա բառանիշերը խմբավորվում են հատուկ դասերում, այլ կերպ ասած՝ սահմանվում է նրանց խոսքիմասային արժեքը (POS-tagging): Հատուկ պիտակների միջոցով թվարկվում են բառանիշերի իմաստային-քերականական խմբերը և քերականական կարգերը, եթե այդպիսիք առկա են (ձևաբանական պիտակավորում): Ապա ծանոթագրողները ստուգում և անհրաժեշտության դեպքում փոխում են բառանիշերի սահմանները, և եթե նոր բառանիշը չի նույնականացվում բառարանում (այսինքն՝ բառամթերքը նոր է), ապա մեխանիկական եղանակով ավելացվում է համապատասխան բառույթը և ձևաբանորեն պիտակավորվում: Ձևային նկարագրության վերջին փուլում նախադասություն կազմող բառանիշերը գնահատվում են որպես շարահյուսական բառեր, և վեր են հանվում վերջիններիս միջև անմիջական կախումները: Ծանոթագրողները բառանիշերի միջև նշում են շարահյուսական կապերը, և կախումների ծառը պահվում է UD ծառերի բանկերին հարմարեցված CoNLL-U տիպի նիշքում¹³, որն էլ բուն ծառադարանն է:

Ձևաբանական վերլուծություն

UD-ում ձևաբանական նկարագրությունը ձևակազմական կամ ձևույթային ավանդական վերլուծություն չէ, այն ամբողջական բառանիշի համար քերականական հատկանիշների թվարկում է վերջինիս վերագրվող պիտակների տեսքով: Քերականական կարգերն ու հատկանիշներն արտածվում են բառաձևերից (ըստ կազմության) և քերականական կախվածություններից (ըստ գործառության) ու ներկայացվում երեք մակարդակում.

- բառույթի մակարդակ (ներկայացնում է բառիմաստը),
- խոսքիմասային պատկանելության մակարդակ (ներկայացնում է քերականական արժեք ունեցող վերացարկված իմաստը, որը զուգորդվում է տվյալ բառի հետ),

¹³ Նիշքի կառուցվածքի մասին տե՛ս <http://universaldependencies.org/format.html>: Հայերենի ծառադարանի նիշքում ձախից աջ տրվում է նախադասության մեջ բառանիշի նույնական համարը, ապա տրվում են բառանիշը, բառույթը, խոսքի մասը, քերականական հատկանիշները, շարահյուսական կապը, կախումը նախադասության մյուս բառանիշից, հավելյալ նշումներ/տառադարձում:

- քերականական բնութագրերի մակարդակ (ներառում է տվյալ բառին բնորոշ իմաստային-քերականական կամ զուտ քերականական հատկանիշները):

UD նախագծում բառանիշերը խմբավորում են վիճակագրական մոտեցմամբ ընդհանրական՝ *բաց (լիմաստ)* և *փակ (սպասարկու, թեր-իմաստ)*, ու մնացորդային սկզբունքով՝ *այլ* դասերում: Առանձնացվում է 17 խոսքի մաս (տե՛ս Աղ. 1), որոնք Google universal part-of-speech tags-ի (UGT)¹⁴ վերանայված տարբերակներն են: Խոսքի մասերի դասակարգման հիմքում իմաստագործառական սկզբունքն է, վիճելի դեպքերում առաջնություն է տրվում գործառական (շարահյուսական) սկզբունքին:

«Հայերենի ծառադարանում» կիրառվում են բոլոր 17 խոսքի մասերը, որոնք պարտադիր են UD նախագծում ներառված ծառադարանների համար: Համեմատությամբ ավանդական հայ քերականությունների՝ առանձին խոսքի մաս է հատուկ անունը (PROPN), տարանջատված են համադասական (CCONJ) և ստորադասական (SCONJ) շաղկապները, դերանվանական որոշիչները (DET) և առարկայանիշ (PRON) դերանունները, առանձնացվում է նաև օժանդակ բայը (AUX): «Հայերենի ծառադարանի» 2.5 տարբերակից սկսած՝ օժանդակ բայեր են գնահատվում նաև *պեղք է* և *պիտի* եղանակիչները: Դերանունները հատկանշային-մակբայական կիրառության դեպքում մակբայներ են: Ածականական դերբայները (հարակատար, ենթակայական, ապառնի II) հիմնականում դիտարկվում են ածական: Ածականներ են բոլոր դասական թվականները (գործառական սկզբունքի հիմքով): Տեքստի մեքենական հատույթավորման և ծանոթագրման առանձնահատկություններից ելնելով՝ առանձին խոսքի մասեր են տվյալ լեզվի կետադրական նշանները (PUNCT), տվյալ լեզվի համար կետադրական չհամարվող այլ գրանշանները, պատկերանշանները, հղումները, էլ. փոստի հասցեները (SYM), նաև տառային, տառաթվանշային կամ գրանշանային շարքերը, որոնք հնարավոր չէ խմբավորել խոսքիմասային մյուս դասերում (X)¹⁵: Նման մոտեցումը թույլ է տալիս բոլոր բառանիշերի համար ունենալ խոսքիմասային պատկանելության պիտակ:

¹⁴ Slav Petrov et al. 2012.

¹⁵ UD նախագծում հայերենի խոսքի մասերի սահմանման առանձնահատկությունները տե՛ս <http://universaldependencies.org/hy/pos/index.html>:

ԲԱՅ ԴԱՍԻ ՄԻԱՎՈՐՆԵՐ	ՓԱԿ ԴԱՍԻ ՄԻԱՎՈՐՆԵՐ	ԱՅԼ ՄԻԱՎՈՐՆԵՐ
ADJ – Ածական (Adjective)	ADP – Կապ (Adposition)	PUNCT – Կետա- դրություն (Punctuation)
ADV – Մակբայ (Adverb)	AUX – Օժանդակ բայ (Auxiliary)	SYM – Նիշեր (Symbol)
INTJ – Ձայնարկություն (Interjection)	CCONJ – Համադասական շաղկապ (Coordinating conjunction)	X – Այլ (Other)
NOUN – Գոյական (Noun)	DET – Դերանվանական որոշիչ (Determiner)	
PROPN – Հատուկ անուն (Proper noun)	NUM – Թվական (Numeral)	
	PART – Վերաբերական (Particle)	
	PRON – Առարկայանիշ դերանուն (Pronoun)	
VERB – Բայ (Verb)	SCONJ – Ստորադասական շաղկապ (Subordinating conjunction)	

Աղ. 1. Խոսքի մասերը և դրանց պիտակավորումը UD նախագծում

Համակարգը, բացի խոսքիմասային պիտակավորումից, յուրաքանչ-յուր բառանիշի վերագրում է քերականական բնութագրեր՝ ըստ տվյալ խոսքի մասին բնորոշ քերականական կարգերի (հոլով, դեմք, թիվ, եղանակ և այլն): UD-ում առանձնացվում է 17 համընդհանուր այդպիսի կարգ՝ բայական և անվանական: «Հայերենի ծառադարանում» օգտագործվում է դրանցից 13-ը (չեն օգտագործվել սեռի (Gender), անվան դասի (NounClass), անձներականության (Clusivity) ու բացարձակ ստույգ (հավաստի) գործողության (Evident) քերականական կարգերը)¹⁶: Ի տարբերություն խոսքիմասային՝ քերականական հատկանիշների պիտակավորումն ավելի ճկուն է և հնարավոր է ավելացնել տվյալ լեզվին բնորոշ հատկանիշներ՝ ընտրելով պիտակների Intersect interlingua for morphosyntactic tagsets ցանկից¹⁷: Հայերենի համար առանձնահատուկ են դիտվել ըստ դեմքի (Person[psor]) և ըստ թվի (Number[psor]) դիմաստացականության քերականական կարգերը: Դիմավոր բայերի հաստատական և ժխտական ձևերի նկարագրության զուգաձևությունը պահպանելու համար ժխտական դերբայը դիտվել է

¹⁶ UD նախագծում հայերենի իմաստային քերականական խմբերի ու քերականական կարգերի ամբողջական ցանկը և նկարագրությունը տե՛ս <http://universaldependencies.org/hy/feat/index.html>:

¹⁷ Daniel Zeman et al. 2008.

որպես ժխտման բույան տիպի հատկանիշ¹⁸ ունեցող պայմանական եղանակի դիմավոր բայածն (Connegative)¹⁹:

ԱՆՎԱՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ	ԲԱՅԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ
Gender – Քերականական սեռ	VerbForm – Դիմավոր և անդեմ ձևեր
Animacy – Անձի և ոչ անձի (իրի) առում	Mood – Եղանակ
NounClass – Անվան դաս	Tense – Ժամանակ
Number – Թվի կարգ	Aspect – Կերպ
Case – Հոլով	Voice – Բայի սեռ
Definite – Աոկայացում (որոշյալություն)	Evident – Բացարձակ ստույգ (հավաստի) գործողություն
Degree – Համեմատության աստիճաններ	Polarity – Ժխտում
+Person[psor] – Դիմաստացականություն (աոկայացում) ըստ դեմքի	+Connegative – Ժխտման բայածն (ժխտ. դերբայ)
	Person – Դեմք
+Number[psor] – Դիմաստացականություն (աոկայացում) ըստ թվի	Polite – Հարգանքի (հարգական) հոգնակի
	Clusivity – Անձներականություն

Աղ. 2. Քերականական կարգերի պիտակները և անվանումները UD նախագծում

Բացի քերականական կարգերից, հայերենի համար առանձնացվել է 15 իմաստային-քերականական խումբ՝ համընդհանուր 6-ի դիմաց:

ԻՄԱՍՏԱՅԻՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԽՄԲԵՐ	
PronType	Դերանունների տեսակներ
+Distance	Ցուցականության շարքեր
NumType	Թվականների տեսակներ
+NumForm	Թվականների տիպեր (արաբական, հռոմեական, հայկական և այլն)
Poss	Ստացականություն (բույան հատկանիշ)
Reflex	Անդրադարձություն (բույան հատկանիշ)
+NameType	Հատուկ անվան տեսակներ (տեղանուն, անձնանուն, մականուն և այլն)
+AdpType	Կապերի տեսակներ (նախադրություններ, հետադրություններ, նախդրավորներ)

¹⁸ Ֆունկցիա բույան հանրահաշվում և մաթեմատիկական տրամաբանության մեջ: UD-ում այն օգտագործվում է չհակադրվող հատկանիշները պիտակավորելու համար:

¹⁹ Դիմավոր և անդեմ բայերը UD համակարգում, զուտ փորձարարական օրինաչափություններից ելնելով, տարբերակվում են առավելապես եղանակի քերականական կարգի հատկանիշով:

+ConjType	Շաղկապների տեսակներ (զուգադրական կիրառություններ)
Abbr	Հապավում, համառոտագրություն (բուլյան հատկանիշ)
+Hyph	Հատվածական բաղադրությունների առաջին, անավարտ (գծիկավոր) բաղադրիչ
Foreign	Օտարալեզու (օտարագիր) բառեր, ոչ փոխառություններ (բուլյան հատկանիշ)
+Style	Ոճեր (ժողովրդական, խոսակցական, հնացած և այլն)
+Echo	Կրկնավոր հարադրությունների փոփոխված բաղադրիչ
+Typo	Տառախախտված բառանիշեր (բուլյան հատկանիշ)

Աղ. 3. Իմաստային քերականական խմբերի պիտակները և անվանումները UD նախագծում

Շարահյուսական կախումների բացահայտում

Շարահյուսական ծանոթագրումը UD-ում հիմնված է կախվածությունների բացահայտման Ստենֆորդի մոդելի վրա²⁰ և ունի քերականական կախվածության 37 հարաբերություն: Մոդելը շեշտադրում է նյութական իմաստ արտահայտող (լիմաստ) բառերի միջև կախումների բացահայտումը, սպասարկու բառերը դիտվում են անմիջապես կախված վերջիններից և մշտապես եզրային (ծայրային) հանգույցներ են, որոնց վրա ընդհատվում են կախվածության շղթաները: Մոտեցման նպատակը կրկին նկարագրության համադրելիությունը պահպանելն է. նյութական իմաստ արտահայտող բառերի կապակցելիությունը զուգաձև է տարբեր լեզուներում, մինչդեռ սպասարկու բառերով արտահայտվող լրացական հարաբերությունները կարող են արտահայտվել վերջավորություններով կամ գրոյական ձևերով:

Հայերեն նախադասությունների շարահյուսական կախումների ծանոթը կազմելու համար օգտագործվել է հայերենին բնորոշ 15 կախվածության հարաբերություն, բացի համընդհանուր կիրառելի 36-ից (չի օգտագործվել ընդամենը 1 հարաբերություն, clf)²¹: Հայերենի համար ընդունվել են բառերի միջև կախումների հետևյալ կանոնները. ենթական կախյալ է ստորոգյալից (nsbj), կապերը կախված են խնդրառվող գոյականից (case, case:loc), ածականի իմաստը ճշգրտող մակբայը կախված է ածականից (advmod), ածականի կամ մակբայի իմաստը մասնավորեցնող գոյականները

²⁰ de Marneffe et al. 2006, de Marneffe et al. 2008, de Marneffe et al. 2014.

²¹ «Հայերենի ծառադարանում» կիրառված շարահյուսական կապերի ամբողջական ցանկը տե՛ս <http://universaldependencies.org/hy/dep/index.html>:

(*վարքով հայտնի*) կախված են դրանցից (obl), գոյականի իմաստը ճշգրտող խոսքի մասերը՝ գոյականից (nomod, amod, advmod:emph): Կախումները դրսևորվում են խնդրառությամբ, համաձայնությամբ և առդրությամբ:

Հայերենի ծառադարանում ուղիղ և հանգման խնդիրները (որպես ուղղական/հայցական և սեռական/տրական հոլովներով բայական լրացումներ) վերլուծվում են որպես անցողական և անանցողական բայերի *անմիջական, բուն լրացումներ* (core arguments), ընդ որում, բայի հետ վերջիններիս շարահյուսական կապը՝ կախումը ստորոգյալից, նշվում է որպես obj (խնդիր), իսկ հանգման խնդրի դեպքում մասնավորեցվում որպես անուղղակի խնդիր (iobj) միայն այն դեպքում, երբ միաժամանակ առկա են բայի և՛ ուղիղ, և՛ անուղղակի խնդիր լրացումներ: Մյուս հոլովներով և կապերով արտահայտված խնդիրներն ու պարագաները վերլուծվում են որպես «խոսոր» *խնդիրներ և պարագաներ* (obl - oblique arguments and adjuncts):

Բայերի՝ միայն մակբայներով արտահայտված պարագայական լրացումները նկարագրվում են advmod, իսկ պարագայական երկրորդական նախադասությունները՝ advcl լրացական հարաբերությամբ: Բայի բուն լրացում է համարվում նաև ենթական (nsubj), որը կարող է արտահայտվել նախադասությամբ (csbj): Բայական լրացումների շարահյուսական դիրքում իրացված երկրորդական նախադասությունների կախվածությունը բացահայտվում է ccomp և xcomp շարահյուսական կապերի միջոցով²²:

Շարահյուսական ccomp (clausal complement) կապը կիրառվում է ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները վերլուծելիս: Այս կապով է բացահայտվում նաև հայերենի «դիմավոր բայ+անորոշ դերբայի ուղիղ ձև» կապակցությամբ արտահայտված բարդ ստորոգյալների անորոշ դերբայը, եթե վերջինիս գործողն անհայտ է: Բարդ ստորոգյալների անորոշ դերբայները բուն բային ստորադրվում են նաև xcomp (open clausal complement) կապի միջոցով, երբ դրանց գործողը/ենթական հայտնի կամ վերականգնելի է նախադասության իմաստից: xcomp կապը կիրառվում է չեզոք, նաև վերադրառու (վերացական) բայերի միջոցով ենթակային վերագրվող հատկանիշը ծանոթագրելիս, այլ կերպ ասած՝ անվանաբայական ստորոգյալները վերլուծելիս (*թվալ գեղեցիկ, երևալ խելացի, համարել*

²² «Հայերենի ծառադարանում» ccomp և xcomp շարահյուսական կապերի նկարագրությունը տե՛ս <https://universaldependencies.org/hy/dep/ccomp.html> և <https://universaldependencies.org/hy/dep/xcomp.html>:

դավաճան) ընդունվում է, որ առկա է կրկնակի ստորոգում՝ տրամաբանական ենթականերով:

Կապակցող սպասարկու բառերը, որոնք հայ քերականությունները նախադասության ինքնուրույն անդամ չեն համարում, UD-ում նախադասության կառուցվածքի անմիջական տարրեր են ծայնարկությունների, ներդրյալ միավորների (parataxis, discourse) հետ մեկտեղ: Շարահյուսորեն վերլուծելի են նաև օժանդակ բառերը (օժանդակ բայ, եղանակիչ, ժխտական բառ-մասնիկ, թարմատար), որոնք հայ քերականություններում բառաձևի առանձին գրվող բաղադրիչներ են:

Կայուն բառակապակցությունները (հարադրություններ, բաղադրյալ անվանումներ, դարձվածքներ) դիտարկվում են «բազմաբառ արտահայտություններ» (multiword expressions), որոնցում կախյալները, որպես եզրային հանգույց, ծանոթագրվում են կախվածության, ըստ էության, բառակազմական արժեք ունեցող հարաբերություններով (compound, flat, fixed, goeswith):

Եզրակացություններ

«Հայերենի ծառադարանը» կիրառելի է ինչպես հայերեն տեքստերի մեքենական վերլուծության գործիքներ, վիճակագրական մոդելներ մշակելու, այնպես էլ տեքստի մեքենական մշակման համակարգերի թեստավորման ու գնահատման համար: Առաջին հնարավորությունն օգտագործվել է տվյալահենք (data-driven) կիսահիմնուրույն ուսուցման (semi-supervised learning) COMBO նեյրոնային ցանցի²³ հենքով հայերեն տեքստի մեքենական վերլուծության առցանց համակարգ ստեղծելու համար²⁴:

«Հայերենի ծառադարան» նախագծում աշխատանքները շարունակվելու են երեք ուղղությամբ. ընդլայնվելու է արևելահայերենի ծառադարանը մինչև նվազագույնը 100 հազար բառանիշ, հղկվելու է արևելահայերենի ձևայնացված քերականությունը՝ որպես ոլորտային հետազոտություններում կիրառելի ստանդարտ: Նույն ճանապարհը կրկնվելու է արևմտահայերենի համար:

²³ Piotr Rybak et al. 2018.

²⁴ Մանրամասները տե՛ս <https://github.com/Armtreebank/End-to-end-Parser>, գործիքի առցանց փորձնական տարբերակը հասանելի է <https://parser.yerevann.com/> կայքում: Նախագծի շրջանակում նմանատիպ մեկ այլ լուծման մասին հանգամանալից՝ Arakelyan et al. 2018.

Գրականություն

- Աբրահամյան Ս.Գ., Պառնասյան Ն.Ա., Օհանյան Հ.Ա. 1974, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Ձևաբանություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 587 էջ:
- Իշխանյան Ռ. 1986, Արդի հայերենի շարահյուսություն: Պարզ նախադասություն, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 340 էջ:
- Պետրոսյան Հ.Զ. 1987, Հայերենագիտական բառարան, Երևան, «Հայաստան», 686 էջ:
- Ջահուկյան Գ. Բ. 1974, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 586 էջ:
- Ջահուկյան Գ. Բ., Աղայան Է.Բ., Առաքելյան Վ.Դ., Քոսյան Վ.Ա. 1980, Հայոց լեզու: Ներածություն, հնչյունաբանություն, բառագիտություն, դարձվածաբանություն, 1-ին մաս, Ա պրակ, Երևան, «Լույս», 528 էջ:
- Zeman D., Resnik Ph. 2008, Cross-Language Parser Adaptation between Related Languages. In Proceedings of the IJCNLP-08 Workshop on NLP for Less Privileged Languages, p. 35-42.
- Zeman D., Mareček D., Popel M., Ramasamy L., Štěpánek J., Žabokrtský Z., Hajič J. 2012, HamleDT: To Parse or not to Parse? In: Proceedings of the 8th International Conference on Language Resources and Evaluation (LREC), p. 2735-2741.
- Arakelyan G., Hambardzumyan K., Khachatryan H. 2018, Towards JointUD: Part-of-speech Tagging and Lemmatization using Recurrent Neural Networks. In: Proceedings of the CoNLL 2018 Shared Task: Multilingual Parsing from Raw Text to Universal Dependencies, p. 180-186.
- Nivre J., Megyesi B. 2007, Bootstrapping a Swedish Treebank Using Cross-Corpus Harmonization and Annotation Projection, In: Proceedings of the 6th Workshop on Treebanks and Linguistic Theories (TLT), p. 97-102.
- Nivre J., de Marneffe M.-C., Ginter F., Goldberg Y., Hajič J., Manning C.D., McDonald R., Petrov C., Pyysalo C., Silveira C., Tsarfaty H., Zeman D. 2016, Universal Dependencies v1: A Multilingual Treebank Collection, In: Proceedings of the Tenth International Conference on Language Resources and Evaluation (LREC'16), p. 1659-1666.
- de Marneffe M.-C., MacCartney B., Manning C.D. 2006, Generating Typed Dependency Parses from Phrase Structure Parses, In: *Proceedings of the Fifth International Conference on Language Resources and Evaluation (LREC'06)*, p. 449-454.

- de Marneffe M.-C., MacCartney B., Manning C.D. 2008, The Stanford Typed Dependencies Representation. In: *Proceedings of the Workshop on Cross-Framework and Cross-Domain Parser Evaluation*, p. 1-8.
- de Marneffe M.-C., Dozat D., Silveira N., Haverinen K., Ginter Ph., Nivre J., Manning C.D. 2014, Universal Stanford Dependencies: A Cross-Linguistic Typology, In: *Proceedings of the Ninth International Conference on Language Resources and Evaluation (LREC'14)*, p. 4585-4592.
- Rybak P., Wroblewska A. 2018, Semi-Supervised Neural System for Tagging, Parsing and Lemmatization, In: *Proceedings of the CoNLL 2018 Shared Task: Multilingual Parsing from Raw Text to Universal Dependencies*, p. 45-54.
- Tsarfaty R. 2013, A Unified Morpho-Syntactic Scheme of Stanford Dependencies, In: *Proceedings of the 51st Annual Meeting of the Association for Computational Linguistics*, vol. 2: Short Papers, p. 578-584.
- McDonald R., Nivre J., Quirmbach-Brundage Y., Goldberg Y., Das D., Ganchev K., Hall K., Petrov S., Zhang H., Täckström O., Bedini Cl., Castello N.B., Lee J. 2013, Universal Dependency Annotation for Multilingual Parsing, In: *Proceedings of the 51st Annual Meeting of the Association for Computational Linguistics*, vol. 2: Short Papers, p. 92-97.
- Petrov S., Das D., McDonald R. 2012, A Universal POS Tagset, In: *Proceedings of the Eighth International Conference on Language Resources and Evaluation (LREC'12)*, p. 2089-2096.

ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ԾԱՌԱԴԱՐԱՆԸ

Մարատ Յավրումյան, Աննա Դանիելյան

Ամփոփում

Վերջին տարիներին զգալիորեն աճել է հետաքրքրությունը ծանոթագրման համակարգերի նկատմամբ, որոնք կարող են օգտագործվել բազմաթիվ լեզուներում: Հիմնվելով ձևաբանական և շարահյուսական ծանոթագրման միասնականացման վրա՝ «Universal Dependencies (UD) -Համընդհանուր կախվածություններ» նախագիծը նպատակ ունի ստեղծել տարբեր լեզուների համար կիրառելի խոսքիմասային պիտակների, ձևաբանական հատկանիշների

և կախվածության հարաբերությունների հավաքածու, ինչպես նաև շարահյուսական ծառերի նույն կերպ ծանոթագրված մեծ քանակությամբ բանկեր (ծառադարան):

Արդի գրական արևելահայերենի ծառադարանի (UD_Armenian-Arm TDP) օրինակով ներկայացված են ծանոթագրման UD կաղապարները՝ ծանոթագրման առանձնահատկությունների նկարագրությամբ: Արդյունքները հասանելի են <http://armtreebank.yerevann.com/> հղումով:

Բանալի բառեր – բնական լեզվի մշակում, «Համընդհանուր կախվածություններ (UD)», արևելահայերենի ծառադարան, ծանոթագրման UD կաղապարներ, կախվածության հարաբերություններ, ձևաբանական հատկանիշներ, բառանջատում:

УНИВЕРСАЛЬНЫЕ ЗАВИСИМОСТИ И ТРИБАНК АРМЯНСКОГО ЯЗЫКА

Марат Яврумян, Анна Даниелян

Резюме

В последнее время наблюдается значительный интерес к схемам аннотаций, которые могут быть использованы во многих языках. Проект «Универсальные зависимости» (Universal Dependencies, UD) ставит целью представить кросс-лингвистически применимый набор тегов частей речи, морфологических признаков и отношений зависимостей, а также огромный массив единообразно размеченных банков синтаксических деревьев. На примере банка синтаксических деревьев восточноармянского языка (UD_Armenian-ArmTDP) детализирована схема аннотации по стандарту UD с описанием особенностей аннотации. Результаты доступны на сайте <https://armtreebank.yerevann.com/>.

Ключевые слова – обработка естественного языка, «Универсальные зависимости (UD)», синтаксически аннотированный корпус восточноармянского языка, схемы аннотаций UD, отношения зависимостей, морфологические признаки, токенизация.

UNIVERSAL DEPENDENCIES AND THE ARMENIAN TREEBANK

Marat Yavrumyan, Anna Danielyan

Abstract

There has been a recent significant interest in annotation schemes which can consistently be applied to various languages. Considering the current efforts made in order to unify morphological and syntactic annotations, the Universal Dependencies (UD) project attempts to present quantities of uniformly annotated treebanks, a cross-linguistically applicable part-of-speech tag-set, a feature inventory and a set of dependency relations. We present UD treebank for Eastern Armenian (UD_Armenian-ArmTDP) and details of annotations, according to the Universal Dependencies standard, with discussion of certain challenges. The results are available in at <https://armtreebank.yerevann.com/>.

Key words – natural language processing, «Universal Dependencies», Eastern Armenian Treebank, UD annotation schemes, dependency relations, morphological features, tokenization.

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**ВНУТРИЭТНИЧЕСКИЕ И МЕЖЭТНИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ
АМКАРСТВ (БРАТСТВ) АРМЯНСКИХ МУЗЫКАНТОВ В
ТРАДИЦИОННОЙ КУЛЬТУРЕ**

Рипсима Пикичян

Кандидат исторических наук

Кафедра культурологии ЕГУ

Алека Манукяна 1

Институт искусств НАН РА

РА, Ереван, пр. Маршала Баграмяна 24/г

Эл. адрес: riposh@mail.ru

Статья представлена 06.11.2019, рецензирована 25.07.2020, принята к публикации
05.08.2020

Вступление

В традиционной культуре Армении отношения между членами профессиональных амкарств (братств, цехов, эснафств и гильдий) регулировались как внутри объединений, так и между членами амкарств с представителями других социальных групп. Несмотря на то, что эти отношения не документировались письменно, тем не менее они строго соблюдались в рамках традиционного права. Внутренние и внешние отношения между членами профессиональных групп, правовые нормы различных сфер и способы их деятельности записывались и обретали силу закона для всех членов данных обществ. Кроме того, соблюдались также единые для всех амкарств и профессиональных сообществ каноны, о чем свидетельствуют многочисленные архивные документы, разного рода административные отчеты, записи путешественников и этнографические публикации и т.д.¹ Этнологическое исследование данной проблемы, а также полевые материалы можно найти в специальной литературе. В. Абрамян является автором всестороннего исследова-

¹ Об этом подробно смотри: Егиазаров 1891, 230-250, Шопен 1852, 840-900, Ахвердов 1882, 5-30, Դաւիթբեկյան 1898, 3-71, Հակոբյան 1971, 171-201:

ния, посвященного деятельности армянских амкарств Закавказья². А в исследовании К. Сехбосяна рассматриваются традиции и быт гюмрийских ремесленников³.

Известно, что амкарства основывались, главным образом, в городах по принципу солидарности и с целью защиты прав ремесленников своей отрасли, а также для сотрудничества с другими структурами. Амкарства музыкантов⁴ создавались на основе двух разных принципов. В одном случае они объединяли музыкантов-исполнителей, играющих на однотипных инструментах (зурначи, сазандары) или выполняющих ту же функцию (ашуг, мастер-изготовитель муз. инструментов). В другом случае объединялись представители той же сферы – мастера по изготовлению инструментов, струнные мастера, ашуги и музыканты-исполнители. В наиболее крупных многослойных амкарствах были представлены все вышеперечисленные профессиональные группы.

В свете сказанного предметом нашего исследования стали отношения между народными музыкантами, не вовлеченными в амкарства, а также нормы, регулирующие отношения внутри музыкальных сообществ и между музыкантами и обществом (так называемые неписанные законы). Работа базируется на материалах, полученных в результате

² Մրիհիմյան 1971:

³ Սեհբոսյան 1974, 158–252:

⁴ Согласно архивным данным М. Тамразяна и Н. Никогосяна, приведенным в книге В. Абрамян, в списке ремесленников г. Александрополя (Восточная Армения) во второй половине XIX в. отдельную группу составляли работавшие в лавках ремесленники, изготавливавшие струны из кишок (килачи), и музыканты-зурначи, а также работавшие вне лавок ашуги (сазандары). Общее число музыкантов в городе составляло – 6 мастеров, 12 подмастерьев (годовой доход 300 р.), а в сельской местности – 10 мастеров, 55 подмастерьев (годовой доход 1600 р.), с. 56–58. В 1865 г. в г. Александрополе было 8 мастеров по изготовлению музыкальных инструментов (годовой доход 300 р.), а в сельской местности – 44 мастера (годовой доход 1400 р.), с. 56. В г. Карине (Западная Армения) в первых трех десятилетиях XIX в. отдельную группу составляли струнные мастера (кириджи) и музыканты-исполнители (чалыхчи): данные взяты из статьи С. Егизаряна, изданной в журнале «Мшак» (Մրիհիմյան 1971, 66–67). В той же книге по спискам амкарств музыкантов в 1865–1867 гг., в г. Александрополе было 7 мастеров зурначи, 7 подмастерьев (с. 60), в Нахиджеване – 3 мастера (с. 62), в Ордубаде – 5 мастеров, 7 учеников (с. 63), в Нор Баязете – 15 мастеров (с. 64). В г. Ереване было 4 мастера по изготовлению тара, 7 учеников (с. 50–51), зурначи и музыкантов – 10 коренных жителей, 2- из беженцев (Шопен 1852, 44).

проведенных нами полевых исследований в разных регионах РА (1980–2000 гг.) методом личных наблюдений и бесед, а также на сопоставлении этих материалов с данными из специальной литературы.

Амкарство и сельский музыкант

Лишь лучшие из сельских музыкантов вступали в амкарские структуры. Благодаря своей высокой квалификации они занимались профессиональной деятельностью не только по месту жительства, но и в городах: участвовали в народных празднествах, состязаниях, обслуживая различные социальные и этнические слои населения. Кроме того, благодаря родственным и дружеским связям с городскими музыкантами они получали возможность общаться с членами городских сообществ. Такого рода встречи содействовали развитию исполнительского мастерства для обеих сторон, расширению репертуара, формированию общих профессиональных принципов и критериев. Разработке и применению регулирующих норм деятельности сельских музыкантов способствовали именно эти музыканты, выполнявшие связующую и информативную функцию для земляков и городских музыкантов. Из города в сельскую среду проникали новые музыкальные стили и общевосточные жанры, а в городе получали распространение наиболее традиционные, истинно народные наигрыши и мелодии. Не удовлетворяющие критериям высокого мастерства деревенские музыканты хотя и не были вовлечены в состав братств, но тем не менее в профессиональных взаимоотношениях руководствовались канонами и уставами амкарств, которые составлялись применительно к условиям сельской жизни. Таким образом, в сельских регионах Армении отношения между музыкантами (внутри- и межгрупповые), их права и обязанности регулировались известными всем и приемлемыми для всех *неписаными законами*. Эти нормы можно кратко классифицировать следующим образом:

- отношения между сельскими музыкантами
- отношения между музыкантами разных поселений
- отношения между музыкантом и обществом

- отношения между музыкантами и местной администрацией.

Ниже представляем иерархическое деление групп музыкантов согласно зафиксированным данным⁵.

⁵ Излагается по нашим полевым материалам. Информаторы – Мартиросян Соломон Абелович, 1905 г. рождения, село Варденик (зурна, дудук, шви, тутак). Играл во всех населенных пунктах Севанского бассейна. Гевондян Беглар Арутюнович, 1902 г. рождения, село Айгеовит (зурна, дудук). Играл во всех населенных пунктах Тавушского марза. Амирян Мушег, 1880 г. рождения, село Айгеовит (дхол). Играл в населенных пунктах Иджеванского района. Гукасян Дереник Мушегович, 1925 г. рождения, село Айгеовит, мастер-самоучка по духовым инструментам (шви, сринг, тутак), музыкант. Оганян Баграт Маркосович, 1904 г. рождения, село Хаштарак (саз, пку). Играл в населенных пунктах Иджеванского района. Оганян Айказ, 1930 г. рождения (зурна, дудук, шви). Играл в населенных пунктах Иджеванского района. Вардапетян Адам Григорович, 1904 г. рождения, село Ачаджур, самоучка (зурна, дудук). Играл в населенных пунктах Иджеванского района). Сафарян Самсон Аршакович, 1906 г. рождения, село Ачаджур (дхол). Играл в населенных пунктах Иджеванского района. Мелкумян Джахан, 1903 г. рождения, село Арцваберд, мастер по изготовлению саза, музыкант-сазист. Известен в Шамшадинском, Иджеванском и Ноемберянском районах как мастер, музыкант и певец. Аракелян Иван, 1901 г. рождения, село Арцваберд (тар, саз). Известен в Шамшадинском, Иджеванском и Тоузском районах как исполнитель ашугских любовных песенных сказов. Косакян Артавазд, 1904 г. рождения, мастер по изготовлению сазов, исполнитель-сазист. Известен в Шамшадинском, Иджеванском и Тоузском районах, выступал в Ереване. Хечоян Саргис Арутюнович, 1900 г. рождения, село Арцвашен (сазист и певец). Выступал во всех армянских и соседних азербайджанских селах Тавушского марза. Саямян Акоп Унанович, 1909 г. рождения, село Норашен (зурна, дудук). Играл в селах Иджевана и Шамшадина. Казарян Зинавен Багратович, 1933 г. рождения, село Гладзор, самоучка-исполнитель на дхоле, исполнитель ашугских и народных песен, выступал в Вайоцдзорском, Араратском, Армавирском, Эчмиадзинском, Талинском районах. Тадевосян Грачик Тагианосович, 1930 г. рождения, село Гладзор, мастер по изготовлению дхола, исполнитель на дхоле, выступал в Вайоцдзорском, Араратском районах. Шахбазян Айрик Оганнесович, 1921 г. рождения, село Малишка, самоучка-исполнитель ашугских песен, выступал в селах Вайоцдзорского района. Токмаджян Ваган Рафаелович, 1906 г. рождения, Ахалкалак (зурна, дудук, тутак, *саламур*). Играл в разных населенных пунктах Джавахка, в Тифлисе, Махачкале. Ованнисян Артавазд Амаякович, 1909 г. рождения, село Сулда (дудук, шви), играл в разных населенных пунктах Джавахка. Куджоян Мехак, 1907 г. рождения, село Сулда, самоучка-дамкаш (зурна, дудук, шви), играл в разных населенных пунктах Джавахка. Петросян Крист Вардеванович, 1903 г. рождения, село Сулда, мастер-самоучка по изготовлению паркапзука (волынка) (паркапзук, пку, шви). Выступал в разных населенных пунктах Джавахка, продавал свои инструменты в селах района. Тамамян Володя, 1934 г. рождения, село Геташен (кяманча, аккордеон, гармонь, дудук, зурна, кларнет, дхол). Играл в селах Ханларского и Каратского (Дашкесанского) районов, в Кировабаде, Баку.

Первую, самую высокую ступень занимал мастер (варпет, уста). Такого статуса достигал лишь тот музыкант, который имел природные данные, учился у одного из известных мастеров, в период учебы приобрел профессиональные знания и опыт. Имел разнообразный музыкальный репертуар, изучил общеармянские и общевосточные, наиболее распространенные песни и мелодии и овладел искусством импровизации. В эту группу входили как высококвалифицированные музыканты, игравшие на традиционных духовых (дудук, зурна, сринг, шви) и струнных (тар, саз, кяманча, кемани...) инструментах, известные ашуги, неоднократно принимавшие участие в музыкальных состязаниях, так и мастера по изготовлению струн и духовых, ударных и струнных инструментов⁶ и реставраторы.

Хотя и большинство вовлеченных в эту группу музыкантов жили в сельской местности, но благодаря своей высокой квалификации и авторитету они зарабатывали на жизнь в основном *профессиональной деятельностью*.

На второй ступени стояли музыканты-аккомпаниаторы (ударники, духовики-дамкаши и струнники-сазандары), а также местные ашуги и мастера по изготовлению инструментов. Все они учились у мастеров и обладали навыками в определенных сферах деятельности и музыкальных жанрах. Поскольку они не были конкурентоспособными вне своего места жительства, то зарабатывали на жизнь сельским хозяйством и ремеслами.

На третьей ступени находились только те музыканты-самоучки, певцы и мастера по изготовлению инструментов, которые занимались этой деятельностью в рамках своих общин. Это были простые крестьяне или сельские ремесленники, которые играли, пели либо по мере надобности реставрировали инструменты благодаря приобретенным навыкам.

Известные мастера-музыканты имели собственные ансамбли. *Варпет имел право* выбирать лучших музыкантов – коллег, особенно, когда готовился участвовать в региональных праздниках и торжествах

⁶ Լևոնյան 1903, 39–92, 1904, 129–160, 1906, 87–111, Պիկիչյան 2012, 188–211:

или получал приглашение выступить на свадьбах в знатных семьях. Традиционные ансамбли пользовались большим спросом не только среди местного населения, но и были востребованы и в других этнических регионах. Самыми популярными в сельской местности были трио духовых и ударных инструментов (зурначей или дудукистов и дхолчи), или же небольшие струнные ансамбли – дуэты, трио или квартеты, в состав которых входили музыканты, играющие на сазе, таре, кяманче, кемани и ударных инструментах – дап (бубен), дхол. Для каждого события мастер составлял соответствующий репертуар и, как ведущий музыкант, играл во время всех ритуальных церемоний. Поскольку он был хорошо знаком с традиционными праздниками, ритуалами и их музыкальными составляющими, то становился одним из организаторов церемоний. В случае отсутствия священнослужителя музыкант часто выполнял функции священника, от имени участников группы вел переговоры с заказчиком, получал и раздавал музыкантам деньги за работу. В его обязанности входило обеспечить качество, соответствующее профессиональному рейтингу музыкантов, поддерживать честные и уважительные отношения с партнерами и заказчиками и иметь активное участие в жизни амкарства и общины, передавать свои знания и опыт ученикам.

Сфера деятельности мастера

Внутриэтнические связи. Как было отмечено выше, варпет выбирал своих музыкантов-партнеров с учетом их исполнительского мастерства, личных качеств и известности, а также требований заказчика, его предпочтений и платежеспособности. Например, получив приглашение из соседних деревень и областей, он старался привлечь местных музыкантов с целью поощрения, а также в знак солидарности с ними, тем самым экономил на текущих расходах (питание, транспорт, ночлег).

Межэтнические связи. Варпет был активной личностью, пользовался известностью в соседних этнических группах, получал заказы от клиентов разных национальностей и вероисповедания, нес полную от-

ветственность как перед партнерами, так и перед заказчиками. Например, получив приглашение от айсорских, курдских, езидских, персидских, турецких, греческих и других заказчиков, исходя из цели приглашения, музыкальных предпочтений и культурных особенностей, мог вовлечь в группу известных местных музыкантов, отведя им главенствующее место в церемониале. Согласно информантам, при наличии приглашения от мусульман в музыкальную группу вовлекались также певцы-мусульмане, которые были искусны в исполнении мугамов. Тем не менее, многие из армянских сазандаров и ашугов Тавуша, Вайоц дзора, Ханлара, Кировабада могли петь и на армянском, и на турецком, и на персидском, и на грузинском, исполнять знаменитые ашугские любовные баллады и состязаться с чужеземными исполнителями. Музыканты других национальностей в качестве исполнителей на музыкальных инструментах обычно выполняли роль аккомпаниаторов или же заменяли друг друга, давая возможность отдохнуть приглашенному мастеру. В остальных случаях первенство принадлежало музыкантам - армянам, которые получали частые приглашения, приобщаясь тем самым к обычаям и музыкальным вкусам соседних народов, усваивая их язык и нравы. Они были сдержанны в общении, искусны в исполнении их традиционных песен и мелодий и полностью соответствовали музыкальным вкусам и пристрастиям заказчика. Независимо от национальной принадлежности и вероисповедания музыканты обычно пользовались уважением и были желанными гостями⁷.

Образ мастера

Образ и статус мастера дополняли его внешность, поведение и музыкальный инструмент. Например, музыкальный инструмент варпета часто был украшен золотыми и серебряными пластинами и перламутровой инкрустацией, а инструмент дамкаша имел более скромный вид, был украшен гравировкой по дереву. Во время торжеств варпет наде-

⁷ Отдельной проблемой является культурологическое исследование состава, репертуара, внутренних взаимоотношений и деятельности многонациональных музыкальных ансамблей в крупных городах Закавказья.

вал серебряный пояс с висевшим на нем маленьким кинжалом, характерный для данной местности головной убор и принимал достойную позу. Одежда остальных музыкантов почти не отличалась от одежды односельчан. Информанты свидетельствуют, что в формировании рейтинга, кроме профессиональных качеств, не меньшую роль играли его человеческие качества. Особенно ценились уравновешенность, сдержанность, достоинство и уважительное отношение к людям разного возраста, пола и национальности. Приобщаясь к религиозным особенностям и тому или иному жизненному укладу, варпет расширял свой кругозор и обретал опыт, что сказывалось на его образе и поведении.

Участие в жизни общины

Как и члены различных амкарств, музыканты также участвовали в мероприятиях, направленных на решение социальных и духовных проблем. Например, собирали пожертвования на благоустройство своего места жительства, строительство мостов, дорог, родников, церквей и т.д. Часть своего дохода музыканты отдавали на опеку сирот, на их свадьбе или крестинах играли бесплатно, а собранные во время пиршеств деньги (*шабаш*) дарили новобрачным. Во время больших христианских праздников (Затик-Пасха, Вардавар-Преображение Христа) организовывали жертвоприношения и раздавали жертвенное мясо членам общины.

Варпет пользовался особым уважением в обществе, что позволяло ему выполнять миссию регулятора социальных отношений. В случае необходимости он в качестве делегата вел переговоры с различными группами и административными органами. Для ведения переговоров и примирения в случае раздоров внутри общины или проблем в семье, разногласий между общиной и звеньями власти его приглашали в качестве опытного, знающего и бескорыстного человека, пользующегося доверием всех прослоек общества, чтобы он принял взаимовыгодное решение (ср. с ашугом)⁸.

⁸ Լևոնյան 1904, 147-160, Պիկիջյան 2012, 206-210:

Внутригрупповые отношения музыкантов были также строго нормированы. Так, при болезни или несчастном случае для члена музыкального братства и его семьи организовывали сбор денег, продуктов и топлива. В случае необходимости устраивались концерты и состязания, доход с которых отдавали нуждающимся семьям. Для собратьев по цеху безвозмездно выступали на пиршествах, семейных праздниках и ритуалах, а денежную прибыль – *шабаш* отдавали семье в качестве вклада в свадьбу, приданое, в строительство нового дома для детей и их будущей семьи.

Регулирующие нормы межгрупповых отношений были направлены на установление солидарности между музыкантами одного поселения и сбалансированных гармоничных отношений с заказчиком. В традиционной культуре соблюдение этих норм особенно четко проявлялось во время массовых праздников, обрядов и паломничеств. Так, среди паломников можно было увидеть и представителей групп из крупных сообществ-амкарств, а также представителей разных социальных прослоек из деревень и городов вместе с музыкантами, канатоходцами, ашугами и отдельными исполнителями. Во время больших церковных праздников, а также паломничеств та или иная группа либо община старалась пригласить музыкальный ансамбль, чтобы достойно отметить праздник. Разумеется, на подобных празднествах присутствовали такие отдельные музыканты либо музыкальные группы (оказавшиеся здесь по собственной инициативе), которые готовы были принять любое приглашение. Однако, согласно установленному правилу, с музыкантами договаривались, заранее обговаривая вопросы об оплате и её сроках и т.д. На свадебной церемонии эти группы без разрешения приглашающей стороны не имели права обслуживать других. Во время паломничества приглашающая сторона для других гостей могла заказать музыку своей *дасте* (оркестру). Распространенной практикой была организация состязаний между музыкальными коллективами, которые проводились по согласию приглашающей стороны и музыкантов. Такие состязания могли стать судьбоносными особенно для молодых музыкантов. Поэтому перед организацией праздников музыкальные кол-

лективы тщательно отбирались в соответствии с их статусом и авторитетом. В свою очередь музыканты также со всей ответственностью готовились к празднику и к возможному состязанию подбором песенного репертуара. Это была именно та среда, где сходились прибывшие из разных мест музыканты. В результате активного межнационального общения получали распространение песни, мелодии, танцы разных народов, популяризировались даже их обычаи.

Во время свадебных церемоний регулирующие нормы межгрупповых отношений определяли также отношения между приглашенными с обеих сторон музыкальными группами. Так, если жених и невеста были из разных районов или гости со стороны невесты предпочитали пировать до прихода или после ухода сватов, то отец невесты имел право пригласить любую музыкальную группу. Однако после прихода музыкантов со стороны жениха варпет музыкальной группы со стороны невесты должен был поприветствовать варпета со стороны жениха, усадить его, поскольку тот устал в пути. Затем он должен был обратиться к варпету жениха, чтобы тот разрешил сыграть, и сказать, что не имеет претензий в отношении полученного дохода. Согласно обычаю, *даста* невесты без разрешения не имела права играть в присутствии жениха.

Тем не менее, варпет со стороны жениха обязан был воздать ответные почести, одарить вышедшего ему навстречу варпета невесты и проявить великодушие, отдав ему собранную сумму либо ее часть.

Согласно принятому правилу, «официально приглашенная *даста* была хозяином всей церемонии». Если для проведения свадебного обряда были приглашены сельские зурначи или сазандары, но во время свадьбы выяснялось, что среди гостей с обеих сторон присутствовали музыканты более высокого класса, то последние имели право играть лишь с разрешения приглашенного варпета. Одновременно они не могли распоряжаться собранным во время свадьбы шабашем, поскольку на это имел право только приглашенный варпет. Конечно, чтобы проявить уважение к гостю-музыканту, варпет мог выделить ему долю из полученного дохода. В таком случае гость с благодарностью отказывался от предложения варпета, проявившего к нему великодушие и

уважительное отношение. Было принято также собранную сумму дарить новобрачным от имени двух варпетов, что сопровождалось бурными аплодисментами гостей и произношением здравицы в честь обоих варпетов.

Отношения варпет-заказчик

Честолюбие было одной из главных черт образа варпета, составляло основу его поведения и профессиональной идентичности, что отражалось его общественном рейтинге. Таким образом, слово варпета было равнозначно его авторитету. Если он давал слово принять участие в какой-либо свадьбе или празднике, то не имел права отказываться от него даже при условии, если поступало приглашение от зажиточного или влиятельного человека. Только в исключительных случаях, исходя из интересов общины, он мог изменить свое прежнее решение. В этом случае, если не было возможности перенести дату свадьбы, то в качестве компенсации он должен был либо преподнести подарок прежнему клиенту, либо принять кратковременное участие в свадебном церемониале или же предложить им высокопрофессиональную музыкальную группу.

Если приглашали варпета из другого района, то он должен был выяснить, почему не зовут местного мастера-музыканта, и дать согласие, если местный мастер был болен или заранее был приглашен другими. Если же причина крылась в разногласии сторон, то варпет отказывался от предложения и пытался примирить стороны, поскольку, согласно принципу партнерской солидарности, «мастер не подрывает авторитет другого мастера». Если заказчик приглашал одновременно как местных, так и музыкантов из других местностей, то варпет давал согласие.

В доме, в котором проходила свадебная церемония, перед входной дверью специально для музыкантов накрывали стол, напротив сидел крестный отец-кавор. Музыканты должны были видеть кавора,

чтобы сыграть соответствующую мелодию⁹ в ответ на произносимые тосты (кавор вместе с новобрачными садился в глубине комнаты – верин глух). Музыканты старались оставить свободное пространство перед столом, чтобы гости могли подойти и дать шабаш. Почти во всех регионах Армении было принято отдавать деньги от шабаша невесте, поскольку шабаш давали за исполнение ею танца невесты. Она в свою очередь могла выделить музыкантам некоторую сумму из этих денег. Очень часто на месте решался вопрос передачи этих денег одной из нуждающихся семей – на крестины или свадьбу. Во время традиционной брачной церемонии в обязанности музыканта входило также объявление подарков и расхваливание дарителя. Например, наращиванием темпа и усилением звука дхолчи привлекал внимание гостей и выразительно восклицал: «Да здравствует дядя жениха, отдал 10 рублей или двух баранов!». В конце церемонии, когда подарки и деньги были собраны, музыкант опять восклицал: «Да здравствует общество, нашим молодым дали столько денег. Пусть всевышний десятикратно воздаст им!». Собранные деньги возвращали семье жениха, из этой суммы 10% выделялось в пользу варпета. Все это способствовало тому, чтобы музыкант старался своим красноречием, шутками и хвалебными речами добиться от него большего вознаграждения.

Способы оплаты

Оплата музыкантов была обусловлена культурными особенностями региона и материальными возможностями приглашающей стороны, авторитетом мастера, родственными связями, расстоянием от пункта назначения (дорогой, ночлегом, количеством дней). Помимо денег оплата музыкантов могла быть произведена продуктами, домашними животными или даже земельным участком. Самой распространенной формой дележа прибыли было выделение 10% доли варпету. Оставшуюся часть поровну делили между варпетом, дамкашем и дхол-

⁹ Pikichian 2001, 214-260. Интересно отметить, что в 1960-ые годы в Вайоц дзоре варпет, кроме исполнения песен, во время тостов читал также стихи Паруйра Севака (информатор – Зинавен Казарян).

чи, если они были низкой квалификации и несли основную нагрузку при исполнении мелодий (3-я категория). При наличии высокой квалификации доход делился поровну между всеми музыкантами, не считая подарков, преподнесенных варпету.

Музыканты, нарушившие вышеприведенные нормы, независимо от квалификации и в дальнейшем не приглашались на общинные и семейные праздники. Эти нормы и правила действуют и в наши дни, однако их сопоставление и сравнение с традиционными требуют отдельного исследования.

Литература

- Արրահամյան Վ.Ա. 1971, Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում (18-20-րդ դարի սկիզբը), Երևան, «Հայաստան», 254 էջ:
- Թառայեանց Ս. 1898, Հայ ժողովրդի արհեստագործութիւնը, Ազգագրական հանդես, գիրք Գ, N 1, Թիֆլիս, էջ 3-71:
- Լեւոնեան Գ., Աշուղների մասին. Պատմական-քննական հայեացք, Ազգագրական հանդես, Գիրք X, Թիֆլիս, 1903, էջ 39-92, Ազգագրական հանդես, Գիրք XI, Թիֆլիս, 1904, էջ 129-160, Գիրք XIII, Թիֆլիս, 1906, էջ 87-111:
- Հակոբյան Թ. 1971, Երևանի պատմությունը. 1500-1800, խմբ. Ս. Պողոսյան, Քաղաքի տնտեսական-հասարակական կյանքը 16-18-րդ դդ., Երևան, Երևանի պետական համալսարանի հրատ., 524 էջ:
- Պիկիչյան Հ. 2012, Երաժշտությունը հայոց ավանդական առտնին և տոնածիսական կյանքում, Երևան, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, «Ամրոց գրուպ», 240 էջ:
- Պիկիչյան Հ., Դաշտային ազգագրական նյութեր (ԴԱՆ), Տավուշի մարզ 1980-1982, Շիրակի մարզ 1982-1983, Գեղարքունիքի մարզ 1984, Արագածոտնի մարզ 1985, Վայոց Ձորի մարզ 1997-1998, Լոռու մարզ 1991, Սիսիան 1993, Դաշտային Արցախ 1985, Ջավախք 1982, 1986, 1999:
- Սեդրոսյան Կ. 1974, Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները Լենինականցիների կենցաղում (պատմա-ազգագրական ուսումնասիրություն), ՀԱԲ, հ. 6, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., էջ 159-251:

- Ахвердов Ю. 1883, Тифлиссские амкары. Из записок Ю.Ф. Ахвердова. Записка 1, Тифлис, тип. И. Питоева, 99 с.
- Егиазаров С. 1891, Исследование по истории учреждений в Закавказье, ч. II, Городские цехи, Казань, тип. Имп. ун-та, 450 с.
- Шопен И. 1852, Исторический памятник состояния Армянской области в эпоху её присоединения к Российской империи, С. Петербург, тип. Императорской АН, 1232 с.
- Pikichian H. 2001, The Wedding Tree; The Call of Zurna, in: Armenian Folk Arts, Culture and Identity, Ed. by L. Abrahamian and N. Sweezy, Bloomington and Indianapolis, Indiana Univ. Press, p. 214-260.

ՀԱՅ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԻ ՀԱՄՔԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԷԹՆԻԿ ԵՎ ՄԻՋԷԹՆԻԿ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

Հռիփսիմե Պիկիչյան

Ամփոփում

Հայոց ավանդական կյանքում կանոնակարգված էին սոցիալական բոլոր խավերի և հասարակության տարբեր շերտերի միջև առկա փոխհարաբերությունները: Թեև դրանք գրավոր վավերացում չունեին, սակայն խստագույնս պահպանվում էին սովորության իրավունքով (*չգրված օրենքներով*): Մասնագիտացված խմբերի՝ համքարությունների անդամների ներքին և արտաքին փոխհարաբերությունները, ինչպես նաև գործունեության հիմնական ոլորտներն ու եղանակները համակարգող նորմերը գրանցվում և օրենքի ուժ էին ստանում համքարության բոլոր անդամների համար: XIX դ. վերջին և XX դ. գյուղական վայրերում գործող և համքարության մեջ չներգրավված ժողովրդական երաժիշտների ներքին, ինչպես նաև երաժիշտ-հասարակություն հարաբերությունները կարգավորող նորմերը դեռևս համակողմանիորեն հետազոտված չեն: ՀՀ տարբեր բնակավայրերում մեր կատարած դաշտային-ազգագրական հետազոտությունները (խորացված հարցազրույցներ և անձնական դիտարկումներ) համադրվել են մասնագիտական գրականության տվյալների հետ: Հայաստանի գյուղական բնակավայրերում գործող երաժիշտների փոխհարաբերությունները (ներխմբային, միջխմբային)՝ իրավունքներն ու պարտականությունները կանոնակարգվում էին հենց այն *չգրված օրենքներով*, որոնք

հայտնի և ընդունելի էին բոլորի համար: Այդ նորմերը քննել ենք հետևյալ դաս-դասամբ՝

1. Գյուղական երաժիշտ-համքարություն փոխհարաբերություն

- գյուղական երաժիշտների ներքին փոխհարաբերություններ,
- երաժիշտների միջբնակավայրային փոխհարաբերություններ,
- երաժիշտ և հասարակություն փոխհարաբերություններ,
- երաժիշտների և տեղական կառավարման մարմինների հարաբերու-

թյուններ:

2. Վարպետ երաժշտի (նվագարանագործի) կերպարը և գործառույթները

- իրավունքներ և պարտականություններ
- գործունեության շրջանակ
- մասնակցություն համայնքային կյանքին
- ներէթնիկ և միջէթնիկ փոխհարաբերություններ
- պատվիրատու - վարպետ փոխհարաբերություն (վարձատրության կարգը):

Վերոնշյալ նորմերը խախտողները վարկաբեկվում էին հանրության և գործընկերների առջև ու զրկվում մասնագիտական պատվերներից: Այդ նորմերից շատերը կենսունակ են նաև մեր ժամանակներում:

Բանալի բաներ՝ երաժիշտ, նվագարանագործ, համքարություն, համայնք, ավանդական մշակույթ, նորմեր, ներէթնիկ և միջէթնիկ փոխհարաբերություններ:

ВНУТРИЭТНИЧЕСКИЕ И МЕЖЭТНИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ АМКАРСТВ (БРАТСТВ) АРМЯНСКИХ МУЗЫКАНТОВ В ТРАДИЦИОННОЙ КУЛЬТУРЕ

Рипсима Пикичян

Резюме

Нормы, упорядочивающие внутренние и внешние отношения членов профессиональных групп (амкарства, гильдии), а также сферы и способы их основной деятельности, обретали силу закона для всех членов амкарства. В свете сказанного предметом нашего исследования стали отношения между народными музыкантами, не вовлеченными в амкарства, а также нормы, регулирующие отношения внутри музыкальных сообществ и между музыкантами и обществом (так называемые неписанные законы) в конце XIX – начале XX века. Основой для их изучения стали полевые этнографические исследования, проведенные нами в разных регионах РА (под-

робные интервью и личные наблюдения), которые были сопоставлены с данными специальной литературы. Внутриэтнические и межэтнические отношения музыкантов, их права и обязанности регулировались в соответствии с общеизвестными и общепринятыми *неписаными законами*. Эти нормы рассмотрены нами в следующей классификации:

1. Взаимоотношения между сельскими музыкантами и амкарством

- внутренние взаимоотношения между сельскими музыкантами
- межобщинные взаимоотношения музыкантов
- взаимоотношения музыкантов и общества
- отношения между музыкантами и органами местного управления

2. Образ и обязанности мастера (музыкант и мастер по изготовлению муз. инструментов)

- права и обязанности
- сфера деятельности
- участие в жизни общины
- внутриэтнические и межэтнические взаимоотношения
- взаимоотношения между заказчиком и мастером (порядок оплаты).

Нарушители норм, описанных выше, утрачивали доверие и лишались профессиональных заказов. Многие из этих норм действуют и поныне.

Ключевые слова – музыкант, мастер по изготовлению муз. инструментов, амкарство, община, традиционная культура, нормы, внутриэтнические и межэтнические взаимоотношения.

INTRA-AND INTER-ETHNIC RELATIONSHIPS BETWEEN ARMENIAN MUSICIANS AMKAREBI (GUILD) IN TRADITIONAL CULTURE

Hripsime Pikichian

Abstract

In traditional Armenian public life, relations were regulated both within and between different social groups. Although the principles of such regulation have never been documented, nevertheless, they were strictly observed based on the customary law (unwritten law). The rules governing the internal and external relationships of members of professional groups (amkarebi, guilds), as well as the major areas and methods of their main activity, were written down and have had the

force of law for all members of amkarebi. The subject of our study, within this context, is the rules governing the internal relationships between the folk musicians from rural areas who were not members of amkarebi in the late 19th and early 20th centuries, as well as the relationship between the musicians and the community. Until today, a comprehensive analysis of these topics has not been carried out.

Our study was based on field ethnographic research conducted in various settlements of Armenia (detailed interviews and personal observations). The results of the research were compared with the data presented in the specialized literature. Intra- and inter-group relations between musicians in rural communities of Armenia, their rights and obligations were regulated by following well-known and generally accepted unwritten laws. We have examined those norms within the following classification:

1. The relationship between the musician and amkarebi in the village
 - internal relationships between rural musicians
 - intercommunity relationships of musicians
 - relations between musicians and community
 - relations between musicians and local government
2. The image and responsibilities of the master of musical instruments
 - the rights and responsibilities
 - the field of activity
 - participation in community life
 - intra-ethnic and inter-ethnic relations
 - the relationships between the customer and the master (payment procedures).

Violators of the norms described above would lose confidence in the society and among colleagues, consequently losing their professional orders. Many of these standards are still valid today.

Key words – folk musicians, musical instrument maker, traditional community life, amkarebi, guilds, intra-ethnic and inter-ethnic relations.

**ԿՈՒՐՍԱՆՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ
ԴՐՂԱՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ**

Լուսինե Սահակյան

ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի ՍԱՂ և ՌԻՊ ամբիոնի
ռազմական մանկավարժության և հոգեբանության ցիկլի դասախոս, հոգեբանական
գիտությունների թեկնածու, մայոր

ՀՀ, Երևան, Նոր Նորքի 6-րդ միկրոշրջան, Շոպրոնի փող., 77 շենք
Էլ. հասցե՝ hrachja@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 25.11.2019, գրախոսվել է 22.11.2019, ընդունվել է
տպագրության 05.08.2020

Ներածություն

Մեր երկրի գերակա խնդիրն այսօր անվտանգությունն է: Իսկ այդ անվտանգության հիմնական երաշխավորն է հայկական բանակը: Հայրենիքի պաշտպանությունը մեր առաջնահերթ խնդիրն է եղել դարեր շարունակ: Մեզ միշտ սպառնալիք են եղել պետականության կորուստն ու բնաջնջումը: Պատերազմներն ու պայքարը եղել են մեր գոյատևման միակ ուղին ու ճանապարհը: Մեր գոյությունն է եղել հայոց զինվորականի հեղինակության միակ ցուցանիշը: Նախկինում, երբ բացակայել են տարրական նյութական, տնտեսական և կենցաղային պայմանները, սպայի մասնագիտությունը ընտրող նվիրյալների թիվը քիչ չի եղել: Պատերազմը, հայրենիքը կորցնելու վախն ու ահազանգը գաղափար են դարձել նվիրյալ հայորդիների անձնվեր պայքարի համար:

Զինվորական գործունեությունն իր նորմատիվությամբ և աֆեկտիվ տարրերով խիստ տարբերվում է մասնագիտական գործունեության մյուս տեսակներից¹: Մեր երկրում զինվորական ծառայությունը գործունեության ամենաբարդ ու պատասխանատու ոլորտներից մեկն է², հագեցած կյանքի ու առողջության նկատմամբ սպառնալիքներով, խրամատային ծառայության հոգեբանական, կենցաղային ու ֆիզիկական բարդություններով³: Մարտական իրադրությունը՝ որպես կյանքի ու առողջության նկատմամբ

¹ Զամայլան 2008, 75:

² Хатингтон 2002, 51-53.

³ Moskos 1977, 43.

սպառնալիք⁴, զինծառայողից պահանջում է ոչ միայն մասնագիտական բարձր գիտելիքներ, այլև նվիրվածություն բանակին, հայրենասիրություն, պատասխանատվության մեծ զգացում, անձնագոհություն, սեփական ընդհանուրին ծառայեցնելու առաքելություն⁵: Յանկալի կլինի, իհարկե, որ մեր ռազմաուսումնական հաստատություններում սովորող կուրսանտների վարքի մասնագիտական կողմնորոշման դրդապատճառներ հանդիսանան հենց վերը թվարկվածները, սակայն այսօր զինվորական ծառայությունը որպես եկամուտ ապահովող սովորական աշխատանք դիտարկելու մոտեցումներ նույնպես կան:

Ժամանակակից օտարերկրյա զինվորական սոցիոլոգները, զարգացնելով Չ. Մոսկոսի⁶ տեսությունը, համեմատության մեջ են դնում զինվորական ծառայության անցնելու և այն շարունակելու երկու տիպի դրդապատճառ՝ **ինստիտուցիոնալ և պրագմատիկ**⁷:

Առաջինին հիմնականում պատկանում են ներքին դրդապատճառները՝ հայրենասիրություն, սեփական անձը փորձելու և կատարելագործելու ցանկություն, հայրենիքին ու հասարակությանը պիտանի լինելու ձգտում, հայրենիքին ծառայելու միջոցով բարձր հեղինակություն վայելելու ցանկություն⁸:

Պրագմատիկ դրդապատճառի դեպքում զինվորական ծառայությունը դիտարկվում է որպես աշխատաշուկա, որն առաջարկում է սոցիալական երաշխիքներ ընդգրկող գրավիչ աշխատանք, երաշխավորված եկամուտ⁹: Իհարկե, կլինեն զինծառայողներ, որ կունենան զուգորդված դրդապատճառային համակարգ:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ ինստիտուցիոնալ դրդապատճառները գերադասելի են պրագմատիկ դրդապատճառներից, քանի որ զինվորական ծառայության խոչընդոտները հաղթահարելու համար անհրաժեշտ անձնային որակներ դրսևորելու համար հիմք են հանդիսանում ներքին դրդապատճառները, և որոնք հոգեբանական տեսանկյունից ավելի ուժեղ ու կայուն են համարվում¹⁰:

⁴ Урбанович 2003, 113.

⁵ Մարգարյան 2009, 136:

⁶ Moskos 1986, 377-379.

⁷ Griffith 2008, 232.

⁸ Бобков, Виноградова 2012, 118-119.

⁹ Ткаченко 2002, 32.

¹⁰ Соловьев 1996, 19-22.

Զինվորական կառավարման պրակտիկայում կարևոր է հասկանալ, թե տարբեր դրդապատճառային համակարգերով առաջնորդվող զինծառայողն¹¹ ինչքանո՞վ է նվիրված իր գործին, բոլորիս համար խիստ կարևոր համարվող ինքնաիրականացման պահանջմունքը բավարարվա՞ծ է, թե՞ ոչ:

Հետազոտության նպատակն է պարզել կուրսանտների զինվորական մասնագիտության ընտրության դրդապատճառների տիպերը, համեմատել գերակշռող դրդապատճառներն առաջին և ավարտական կուրսերում, գտնել մասնագիտության նկատմամբ վերաբերմունքի և վարքի դրդապատճառի կապը¹²:

Փորձարարական խմբեր են հանդիսացել Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի 1-ին կուրսի 24 և 4-րդ կուրսի 30 կուրսանտներ:

Ռազմաուսումնական հաստատությունները սպայական կադրերի պատրաստման և վերապատրաստման հիմնական կազմակերպություններն են, և այդ պատճառով էլ կարևոր է մասնագիտական սոցիալիզացիան, որի հիման վրա ձևավորվում են զինվորական ծառայության նկատմամբ վերաբերմունքի արժեքներն ու հիմքերը:

Մասնագիտական ընտրության գերակշռող դրդապատճառի հետազոտման նպատակով գնահատումը եղել է առավելագույնը 5 և նվազագույնը 1 միավոր, որի հիման վրա որոշվել են մասնագիտական ընտրության սուբյեկտիվ հիմքերը:

Հարկ է նշել, որ առաջին կուրսեցիների զինվորական մասնագիտության ընտրության հիմքում մինչև ռազմաուսումնական հաստատություններ (ՌՈՒՀ) ընդունվելն եղած արժեքային կողմնորոշումներն են, որոնք ձևավորվել են ընտանեկան դաստիարակության, հասարակական սոցիալիզացիայի հետևանքով: Իհարկե, այդ կողմնորոշումները տարբերվում են բարձրկուրսեցիների մասնագիտական գործունեության դրդապատճառներից, քանի որ վերջիններս կրում են արդեն զինվորական սոցիալիզացիայի ու մասնագիտական կողմնորոշման ազդեցությունը: ՌՈՒՀ-երում ուսումնառության ընթացքում ընտրած մասնագիտության նկատմամբ առաջին կուրսեցիների հույզերով ու զգացմունքներով համեմված դիրքորոշումը փոփոխության է ենթարկվում: Զինվորական նորմերի և արժեքների ներքնայնացմամբ սկզբնական արժեհամակարգը ավարտական կուրսում փո-

¹¹ Նալչաջյան 1991, 368-374:

¹² Карлова 2018, 127.

փոխվում է, կուրսանտն ինտեգրվում է զինվորամասնագիտական հասարակությանը, նրանց մեջ ձևավորվում է զինվորական նույնականացում:

Ըստ հետազոտության արդյունքների՝ զինծառայողի մասնագիտական ընտրության դրդապատճառները բաժանվեցին 3 տեսակների (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Ռազմաուսումնական հաստատություն դիմելու դրդապատճառները

Հ/Հ	Տեսակ	Դրդապատճառ	Գնահատական	
			1-ին կուրս	4-րդ կուրս
1.	1	Ինձ համար հետաքրքրական մասնագիտության տիրապետման հնարավորությունը	4,0	4,2
2.	1	Սպայական կարիերայի ծգտումը	4,0	4,5
3.	1	Զինվորական գործի ու կրթության հեղինակությունը	4,3	4,5
4.	1	Կյանքի համար վտանգավոր պայմաններում հերոսության և խիզախության դրսևորման հնարավորությունը	4,2	3,2
5.	1	Հայրենիքի նկատմամբ պարտքը կատարելու ցանկությունը	4,2	4,4
6.	1	Անձնային կարևոր որակների ձեռքբերումը (խիզախություն, կամային որակներ, դիմացկունություն, նպատակասլացություն)	4,0	4,2
7.	1	Զինվորական տեխնիկայի հետ աշխատելու հնարավորությունը	4,0	4,4
$\overline{X_1}$ միջին միավորը			4,10	4,20
σ_1 միջին քառակուսիական շեղումը			0,12	0,42
1.	2	Համեմատաբար բարձր աշխատավարձը	4,6	3,7
2.	2	Երաշխավորված աշխատանքը ՀՀ զինված ուժերում	4,8	4,2
3.	2	Բարձրագույն անվճար կրթություն ստանալու հնարավորությունը	4,9	3,6
$\overline{X_2}$ միջին միավորը			4,77	3,83
σ_2 միջին քառակուսիական շեղումը			0,12	0,26
1.	3	Ծնողների կամ հարազատների խորհուրդը	1,0	1,1
2.	3	Ընտանեկան ավանդույթը պահպանելու ցանկությունը	3,0	2,5
3.	3	Որպես ժամկետային զինվորական ծառայության այլընտրանք	1,1	1,0

4.	3	Դեպքերի պատահական ընթացքով պայմանավորված ՌՈՒՀ ընդունվելը	1,0	1,4
$\bar{X}_3$ միջին միավորը			1,53	1,50
σ_3 միջին քառակուսիական շեղումը			0,85	0,60

Աղյուսակ 1-ում դրդապատճառի յուրաքանչյուր տեսակի համար հաշվարկված են նաև միավորների $\bar{x}$ միջին արժեքը և σ միջին քառակուսիական շեղումը:

$$\sigma = \sqrt{\frac{\sum_{i=1}^n (x_i - \bar{x})^2}{n}}, \quad (1)$$

որտեղ դրդապատճառի յուրաքանչյուր տեսակի համար. x_i -ն՝ i -րդ միավորն է, n -ը՝ դրդապատճառների քանակն է, $\bar{x}$ -ը՝ միջին միավորն է, որը հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝

$$\bar{x} = \frac{(x_1 + x_2 + \dots + x_n)}{n} = \frac{\sum_{i=1}^n x_i}{n}; \quad (2)$$

Աղյուսակից 1-ից պարզ երևում է, որ 4-րդ կուրսում հարցում անցած կուրսանտների շրջանում գերակշռում են առաջին տեսակի (ինստիտուցիոնալ) դրդապատճառները, 1-ին կուրսում՝ երկրորդ (պրագմատիկ): Իհարկե 4-րդ և 1-ին կուրսերում կային կուրսանտներ, որ հավասարաչափ նախընտրությունը տվել էին և՛ առաջին, և՛ երկրորդ տեսակի դրդապատճառներին:

Ուշագրավ էր այն, որ 4-րդ կուրսում հարցում անցած կուրսանտներից ոմանք 0 միավոր էին գնահատել երրորդ տեսակի (սկեպտիկներ) մասնագիտական կողմնորոշման դրդապատճառները, այն դեպքում, երբ ցածրագույն միավոր սահմանվել էր 1-ը: Եթե 4-րդ կուրսում չկային սկեպտիկներ, ապա առաջին կուրսում մասնագիտական կողմնորոշման ամենաթույլ դրդապատճառներ ընտրած կուրսանտների թիվը 4-ն էր: Երրորդ տեսակում ընդգրկված վարքային դրդապատճառներն էին՝

- ծնողների կամ հարազատների խորհուրդը,
- ընտանեկան ավանդույթը պահպանելու ցանկությունը,

- որպես ժամկետային զինվորական ծառայության այլընտրանք,
- դեպքերի պատահական ընթացքով պայմանավորված՝ ՌՌԻՀ ընդունվելը:

Հարցման արդյունքներով կարելի է եզրակացնել, որ 1-ին կուրսի հուզական, զգացմունքային վերաբերմունքը, մասնագիտության յուրացմանն ու զինվորական ծառայության ինտեգրմանը զուգահեռ, փոխարինվում է առավել գիտակցված ու զուսպ վերաբերմունքով, որը երևում է հարցաթերթիկի՝ «Կյանքի համար վտանգավոր պայմաններում հերոսության և խիզախության դրսևորման հնարավորությունը» պնդմանը վերաբերմունքով (1-ին կուրսում միջին միավորը կազմել է 4,2, իսկ 4-րդ կուրսում՝ 3,7):

4-րդ կուրսում, ի տարբերություն 1-ին կուրսի, սպայական կարիերա ունենալու ցանկության ու ձգտման առավել բարձր ցուցանիշները խոսում են այն մասին, որ կա առավել հաստատուն ու հիմնավորված մասնագիտական գործունեության կողմնորոշում (միջին միավորը համապատասխանաբար՝ 4,5 և 4,0): 4-րդ կուրսում զինվորական մասնագիտություն ձեռք բերելու հիմնավոր ու գիտակցական դրդապատճառի մասին է վկայում նաև «Եթե հիմա կանգնած լինեիք ընտրության առջև, կրկին կընտրեի՞ք սպայի մասնագիտությունը» հարցադրման նկատմամբ վերաբերմունքը (հարցին պատասխանել են «Այո»՝ 4-րդ կուրսում՝ 30 կուրսանտից 26-ը, 1-ին կուրսում՝ 24 կուրսանտից 16-ը):

Հետաքրքիր էր նաև զինվորական ծառայության հեղինակավոր լինելու և այն առավել բարձրացնելու 1-ին և 4-րդ կուրսերի կուրսանտների մոտեցումների վերլուծությունը: 1-ին կուրսում զինվորական գործի հեղինակությամբ պայմանավորված մասնագիտական ընտրության միջին ցուցանիշը 4,3 է, իսկ հեղինակության բարձրացման վերաբերյալ պատկերացումներն ավելի ընդհանուր են և ոչ էական: Հեղինակության բարձրացման հետ կապված՝ առաջին կուրսեցիների մոտ գերակշռում են հետևյալ պատկերացումները.

- զինծառայողի հեղինակությունը բարձր է, այն պետք չէ բարձրացնել - 46%,
- համազգեստի կրման կանոնների պահպանմամբ - 21%,
- բարձր աշխատավարձով - 12,5%,
- դժվարանում են պատասխանել - 20,5%:

Չորրորդ կուրսում հեղինակությամբ պայմանավորված մասնագիտական ընտրության միջին ցուցանիշը կազմել է 4,5, իսկ զինծառայողի և

զինվորական գործի հանդեպ հեղինակության բարձրացումն անհրաժեշտ է համարվում, ուղիներն ու միջոցներն էլ՝ առավել հիմնավորված: Հեղինակության բարձրացման հետ կապված՝ 4-րդ կուրսեցիների մոտ գերակշռում են հետևյալ պատկերացումները.

- հասարակության մեջ զինվորական գործի կարևորության լուսաբանումը ու ճիշտ քարոզարշավը - 26,7 %,
- ընտանեկան ճիշտ դաստիարակությունը - 20%,
- զինծառայողի գործի ու անձի հանդեպ ուշադրությունը, որն առավել սուր դրսևորվում է սահմանին լարվածության աճի ժամանակ - 40%,
- սպայական կադրերի ճիշտ ընտրությունը (կուրսանտները մատնացույց էին անում հիմնականում 2,5-ամյա ունկնդիրներին)- 13,3:

Պարզվում է, որ ավարտական կուրսում հրամանատարական աշխատանքի և դասախոսական կազմի նպատակամետ աշխատանքի շնորհիվ փոփոխության են ենթարկվում կուրսանտների մասնագիտական ընտրության և հետագա ծառայության նկատմամբ դիրքորոշումներն ու վարքի դրդապատճառները:

Փորձառու սպաների հետ շփումը, զինվորական տեխնիկայի հետ աշխատելու կարողությունների ու հմտությունների ձևավորումն ու զարգացումը, զինվորական գործի հանդեպ հետաքրքրասիրությունն ու հայրենիքի պաշտպանի պատասխանատվությունն իր ուսերին վերցնելու ձգտումը հիմք են մասնագիտական գործունեության այնպիսի դրդապատճառների ձևավորման համար, որոնք կապահովեն զինվորական ծառայության արդյունավետությունը:

Եզրակացություններ

1. Կուրսանտների դրդապատճառների տիպերի հետազոտությունը ցույց տվեց, որ, ընդհանուր առմամբ, նկատվում է պրագմատիկ արժեքների ու մոտեցումների աճ՝ սակայն զուգակցվելով ավանդական հայրենասիրական արժեքների հետ:

2. Առավել հեռանկարային ծառայության, զինվորական ինքնության ձևավորման, երկարատև և արդյունավետ ծառայելու ցանկության միտումներ դրսևորած կուրսանտներն ունեին մասնագիտական և հայրենասիրական ուղղվածություն: Այս դրդապատճառները վարքի առավել հուսալի ու հաստատուն շարժիչներ են, քան պրագմատիկ դրդապատճառները

(աշխատավարձ, անվճար բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություն):

3. Հետազոտությամբ պարզվեց, որ 1-ին և 4-րդ կուրսերի մասնագիտական ընտրության դրդապատճառներում դրսևորվում է ինստիտուցիոնալ արժեհամակարգի աճի միտում՝ պայմանավորված մասնագիտական գիտելիքների յուրացման, արժևորման, հրամանատարական և դասախոսական կազմի նպատակաուղղված աշխատանքով:

Առաջարկություններ

1. 1-ին կուրսի կուրսանտների հետ իրականացնել մշակութաժամանցային այնպիսի միջոցառումներ, որոնք կնպաստեն ինստիտուցիոնալ դրդապատճառների ձևավորմանն ու աճին (օրինակ՝ հանդիպում 2016 թ. ապրիլյան քառօրյա մարտական գործողությունների հերոսների հետ):

2. ՌՌԽՀ-երի գրավչությունը բարձրացնող աշխատանքների առավել ընդգրկում կազմակերպում (կուրսանտներն առաջարկում էին այդ աշխատանքներում ընդգրկել նաև իրենց):

Գրականություն

Մարգարյան Վ.Հ. 2009, Մարտական գործունեության հոգեբանական հիմունքները (մենագրություն), Երևան, Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 284 էջ:

Նալչաջյան Ա.Ա. 1991, Հոգեբանության հիմունքներ, Երևան, «Լույս», 512 էջ:

Ջամալյան Դ.Վ. 2008, Ռազմական հոգեբանության հիմունքներ: Մաս 2, Երևան, «Լինգվա», 172 էջ:

Бобков О.Б., Виноградова Г.А. 2012, Факторы, влияющие на формирование учебно-профессиональной мотивации курсантов военного вуза, Известия Самарского научного центра Российской академии наук, т. 14, N 2, с. 116-122.

Соловьев С.С. 1996, Трансформация ценностей военной службы, Социологические исследования, N 9, с. 17-25.

Современная военная психология: хрестоматия 2003, сост. А.А. Урбанович, Минск, «Харвест», 576 с.

Ткаченко В.А. 2002, Формирование мотивации военно-профессиональной деятельности курсантов вуза: дисс. кандидата наук, Челябинск, 207 с.

Хатингтон С. 2002, Военная служба как профессия, Отечественные записки, Москва, N 8, с. 49-60.

- Карлова Е.Н. 2018, Типы мотивации курсантов и их связь с различными показателями отношения к военной профессии, Социологические исследования, N 7, с. 95-104.
- Moskos C.C. 1977, From Institution to Occupation:Trends in Military Organization, Armed Forces & Society, N 4 (1), p. 41-50.
- Moskos C.C. 1986, Institutional/Occupational Trends in Armed Forces: An Update, Armed Forces and Society, Vol. 12, p. 377-382.
- Griffith J. 2008, Institutional Motives for Serving in the US Army National Guard: Implications for Recruitment, Retention, and Readiness, Armed Forces and Society, Vol. 34, p. 230-258.

ԿՈՒՐՍԱՆՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԴՐՊԱՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

Լուսինե Սահակյան

Ամփոփում

Կուրսանտների մասնագիտական և արժեքային կողմնորոշումների ուսումնասիրումը հոգեբանության բնագավառի կարևորագույն խնդիրներից է: Ըստ զինվորական մասնագիտության ընտրության դրդապատճառների, կուրսանտները պատկանում են 3 տարբեր տեսակների՝ իդեալիստներ, պրագմատիկներ և սկեպտիկներ (թերահավատներ): Զինվորական մասնագիտության ընտրության դրդապատճառը կախված է զինվորական ծառայության նկատմամբ վերաբերմունքից: Իդեալիստական դրդապատճառային համակարգը, ի տարբերություն մասնագիտության ընտրության մյուս դրդապատճառային համակարգերի, ապահովում է զինվորական գործունեության բարձր արդյունավետություն:

Բանալի բառեր՝ զինվորական սոցիոլոգիա, կուրսանտ, մասնագիտական կողմնորոշում, ինստիտուցիոնալ դրդապատճառներ, դրդապատճառային համակարգ, զինվորական նույնականացում, զինվորական մասնագիտություն:

ИССЛЕДОВАНИЕ МОТИВОВ ПРОФЕССИОНАЛЬНОЙ ОРИЕНТАЦИИ КУРСАНТОВ

Лусине Саакян

Резюме

Изучение профессиональных и ценностных ориентаций курсантов – важнейшая задача психологии. По мотивам выбора военной профессии курсанты относятся к трем разным типам: идеалисты, прагматики и скептики. Мотивация выбора военной профессии связана с отношением к военной службе. Идеалистическая мотивационная система, в отличие от других мотивационных систем выбора профессии, обеспечивает высокую эффективность военной деятельности.

Ключевые слова – военная социология, курсант, профессиональная ориентация, институциональные мотивы, мотивационная система, военная идентификация, военная профессия.

RESEARCH TOWARDS MOTIVES OF CADETS' PROFESSIONAL ORIENTATION

Lusine Sahakyan

Abstract

The study of professional and value orientations of cadets is the most important task in the field of psychology. For reasons of choosing a military profession, cadets belong to three different types: idealists, pragmatists, and skeptics. The motivation for choosing a military profession is related to the attitude to military service. An idealistic motivational system, unlike other motivational systems for choosing a profession, ensures high efficiency of military activities.

Key words – military sociology, cadet, professional orientation, institutional motives, motivational system, military identification, military profession.

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՂԽԱԶՔԱՐԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԻ ԵԶԱԿԻ ՆՄՈՒՇ ՃԱՄԲԱՐԱԿԻՑ

Արսեն Հարությունյան

Պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան

ՀՀ, Երևան, Չարենցի փ. 15

Էլ. հասցե՝ ars.vimagraget@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 06.06.2019, գրախոսվել է 06.06.2019, ընդունվել է
տպագրության 05.08.2020

Ներածություն

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքը կազմավորվել է երեք հարևան գյուղերի միացումից. դրանք են՝ Կրասնոսելսկ (նախկինում՝ Միխայլովկա, 1920-1972 թթ.՝ Կարմիր, 1972-1991 թթ.՝ Կրասնոսելսկ, 1991-ից՝ Ճամբարակ), Ներքին և Վերին Ճամբարակ գյուղերը: Միխայլովկան հիմնադրվել է դեռևս XVIII դ. կեսերին՝ Ռուսաստանից տեղափոխված մոլոկանների կողմից: 1971-ին ներառելով Ներքին և Վերին Ճամբարակ գյուղերը՝ բնակավայրը ձեռք է բերել քաղաքատիպ ավանի, իսկ Հայաստանի անկախացումից մի քանի տարի անց՝ 1996 թ., քաղաքի կարգավիճակ: Գետիկի հովտում սփռված քաղաքի տարածքում փաստագրվել են դեռևս մ.թ.ա. II-I հազարամյակներով թվագրվող ամրոց, քարայրներ, միջնադարյան մի քանի խոնարհված եկեղեցի, գյուղատեղիներ, ծիթհան, գերեզմանոցներ և մի քանի տասնյակ խաչքարեր, որոնք թվագրվում են առնվազն X-XIV դդ.¹:

Մեր ներկա ուսումնասիրության առարկան Վերին Ճամբարակ թաղամասի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հարևանությամբ գտնվող արձանագիր խաչքարն է (1,64 x 1, 10 x 0,28 մ), որի 989 թվականն իրավամբ կարող է համարվել միջնադարյան բնակավայրի գոյության քարտեզն «անձնագիրը»: Նշենք, որ ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշար-

¹ Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան 1991, 599, հմմտ. Հակոբյան, Հակոբյան 2015, 335:

ձանների ցանկում եկեղեցին սխալմամբ թվագրված է 1029-ով², որի համար հիմք է հանդիսացել եկեղեցու հարավային կողմում կանգնեցված վերոհիշյալ խաչքարի թվականը, որը վիմագրագետ Աբրահամ Շահինյանը տասնամյակներ առաջ ՆՀԸ, այսինքն՝ 1029 է կարդացել³:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին

Նախքան խաչքարի պատկերագրության և արձանագրության վերաբերյալ նկատառումներ անելը նշենք, որ անմշակ քարերով շարված և եռանակ բազիլիկ հորինվածքով եկեղեցին կիսավեր ու վթարային վիճակում է, մասնավորապես՝ մասնակի կանգուն են արևելյան խորանն ու գմբեթարդը, զույգ ավանդասենյակները, արևմտյան և հյուսիսային պատերը (նկ. 4): Միակ մուտքը, ըստ ամենայնի, հարավային կողմից է եղել, որից գրեթե ոչինչ չի պահպանվել: Այն, որ եկեղեցին քանիցս նորոգվել ու վերաշարվել է, վկայում են որմերի տարբեր հատվածներում օգտագործված, ժամանակագրորեն X-XIII դդ. բնորոշ մեկ տասնյակից ավելի խաչքարերը, որոնք թերևս XVII-XVIII դդ. արդեն դիտվել են իբրև շինաքարեր՝ առանց կարևորելու խաչքարի՝ սրբազան կոթողի նշանակությունը: Մեր այս դատողության օգտին է վկայում հիշյալ խաչքարերի՝ երբեմն թեք ու հակառակ դիրքերով պատերին ագուցված լինելու հանգամանքը, իսկ շատերի կոթունների (պոչերի) առկայությունը հուշում է, որ դրանք նախապես ոչ թե պատերին ագուցված, այլ պատվանդաններին կանգնեցված խաչքարեր են եղել: Քանդակային-հորինվածքային տեսանկյունից Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու որմերին ագուցված, ավագ խորանին կանգնեցված կամ պատերին հենած խաչքարերը տարաբնույթ են՝ վաղ խաչքարերին բնորոշ պարզունակ լուծումներից մինչև հիմնախորանում կրկնախաչ հորինվածքով, խաղողի ողկույզներով ու խաչքրտերով համակցված խաչքարեր (նկ. 1-3):

1993 թ. ճամբարակցի Ազատ Զազյանի նախաձեռնությամբ և մի խումբ տեղացիների աջակցությամբ եկեղեցին մաքրվել է հողալիցքից, սակայն կառույցն այսօր դարձյալ անմխիթար վիճակում է, ամրակայման ու բարեկարգման կարոտ⁴:

² ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակ. Գեղարքունիքի մարզ 2003, 19, N 5:

³ [Շահինյան] 1984, 37:

⁴ Ճամբարակցիներն այսօր էլ պատրաստ են համայնքի միջոցներով գոնե ամրակայել եկեղեցին ու բարեկարգել տարածքը: Այս խնդրով գրություն է պատրաստվել և



Նկ. 1-3. Խաչքարեր Ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ներսում և պատերի շարվածքում, X-XIII դդ.

Խաչքարը

Դառնալով եկեղեցու հարավային կողմում՝ գերեզմանոցի մեջ կանգնեցված խաչքարին, նախ, պետք է փաստենք, որ Ա. Շահինյանը միջնադարյան Հայաստանի կոթողային հուշարձաններին նվիրված իր աշխատության էջերում համառոտ ներկայացրել է խաչքարի տեղագրությունը, չափերը, արձանագրությունն ու լուսանկարը, այսպես. «1029 թվակիր ծվածն մի խաչքար ունենք Ճամբարակից (Կրասնոսելսկի շրջան)՝ կանգնեցված տաճարի շինության առթիվ: Բարձրությունը 1,55 մ է, լայնքը կենտրոնական մասում՝ 1,10 մ, հաստությունը՝ 0,20-0,25 մ (նկ. 83): Արձանագրությունը փորագրված է խաչքարի ներքևում, 4 տողով, իսկ թվականը՝ խաչաքանդակի հորիզոնական թևի ձախ կողմի ներքևի արանքում»⁵: Մեր հերթական անդրադարձը պայմանավորված է վիմագրում թվականը հստակեցնելու, նախորդ ընթերցման որոշ հատվածներ ուղղելու և, իհարկե, կոթողի պատկերագրությանն առանձնակի անդրադառնալու հանգամանքով:

Մինչև վերջերս խաչքարը կիսով չափ թաղված էր հողում և տեսանելի է եղել միայն թվականի հատվածը, որը խաչաթևերի հատման ձախակողմում է, իսկ ստորին հատվածի քառատող վիմագիրը վերաբացվել է 2019 թ. գարնանը, քանի որ Ա. Շահինյանի լուսանկարում ևս ամբողջական է: Նորաբաց խաչքարի և վիմագրի լուսանկարները մեզ էր ուղարկել Ճամբարակի բնակիչներից Հայկ Պողոսյանը (ծնվ. 1986 թ.), և քանի որ 2019 թ. սեպտեմբերի 14-ին նշվելու էր Ճամբարակի հազարամյակը (հիմք՝

<< կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության համապատասխան թույլատրության դեպքում մասնագետի հսկողությամբ աշխատանքները կմեկնարկեն:

⁵ [Շահինյան] 1984, 37:

խաչքարի՝ Ա. Շահինյանի վերծանած ՆՀԸ (1029) թվականն է), նպատակահարմար գտանք այցելել բնակավայր և տեղում ուսումնասիրել հուշարձանը:

Պատկերագրությունը

Առաջին հայացքից արդեն իսկ ակնհայտ էր, որ մենք գործ ունենք ժամանակագրորեն վաղագույն՝ IX-X դդ. բնորոշ խաչքարերից մեկի հետ, որը հարազատ է Գեղարքունիքի, մասնավորապես՝ Մաքենիսից հայտնի խաչքարերի դպրոցին: Վաղ շրջանի խաչքարերին բնորոշ է սալաքարի վերևում կամարաձև կամ ընդհանուր ձվաձև մշակումը (Դաշտադեմ, Մաքենիս, Սևանավանք, Մեծ Մագրա, Վարդենիկ, Վարսեր և այլն), ինչը հիմնականում արվում էր կոթողի վերնամասը շեշտելու նպատակով, քանի որ IX-X դդ. խաչքարերի հորինվածքում քիվը, որը երկնային խորհրդաբանության կրողն է, հիմնականում բացակայում էր: Հնագետ, մշակութաբան Համլետ Պետրոսյանի բնորոշմամբ՝ վաղ խաչքարերում քիվի բացակայությունն արտահայտվում էր կոթողի վերնամասին կամարաձևություն տալու, եզակի դեպքերում նաև երկնային լուսատուների տեղադրության միջոցով⁶, մի հանգամանք, որը տիպական է մեր կողմից քննվող խաչքարի քանդակային հորինվածքին:

Ըստ Հ. Պետրոսյանի՝ լուսային նշանները խաչքարային հորինվածքում «կապվում են երկու թեմաների՝ Խաչելության ու Երկրորդ գալուստի հետ: Որպես կանոն՝ պատկերվում են արևն ու լուսինը, որոշ դեպքերում նաև մեկ աստղ, եզակի հորինվածքներ խաչը ներկայացնում են լուսատուներով պսակված երկնքի հենքի վրա»⁷: Կարծում ենք՝ հիշյալ բնութագրականը լիովին համահունչ է Ճամբարակի խաչքարի հորինվածքին, երբ որոշակիորեն խորանացված հիմնախաչից զատ, կոթողի վերնամասում վարպետը երկնային լուսատուների համայնապատկերին Քրիստոսի խաչելությունը խորհրդանշող մեկ այլ փոքր խաչ է պատկերել: Սովորաբար, խաչին նայելիս ձախ կողմում արևն է, աջ կողմում՝ լուսինը («Ամենափրկիչ» խաչքարերը, որպես կանոն, ունեն նաև համապատասխան գրություններ), որոնք քննվող պատկերագրության մեջ ներկայացված են շրջաններում ընդգծված հավասարաթև խաչերի տեսքով: Խաչաձև արևից և լուսնից բացի, Ճամբարակի խաչքարի վերնամասում պատկերված են նաև եր-

⁶ Պետրոսյան 2008, 274:

⁷ Պետրոսյան 2008, 271:

կուական մեծ և փոքր շրջանաձև պարզունակ աստղեր, որոնց ընդհանուր համակցությունը ստեղծում է երկնային լուսատուների ամբողջական համայնապատկեր: Այսպես կոչված՝ փոքր աստղերը, որոնք տեղ են գտել փոքր խաչի երկու կողմում, հավանական է նաև, որ Տիրամոր և Հովհաննես ավետարանչի խորհրդանիշներն են, որոնք, իբրև կանոն, պատկերված են լինում Խաչելության տեսարաններում: Ինչ վերաբերում է արևի և լուսնի պատկերագրությանը, ապա առաջին հերթին այն կապվում է Քրիստոսի մահվան ժամանակ տեղի ունեցած խավարման երևույթի հետ. «Եւ համարեա կէսօր էր եւ խաւար եղաւ ամբողջ երկրի վրայ մինչեւ ժամը երեքը. Արեգակը խաւարեց» (Ղուկ., ԻԳ 44, նաև՝ Մատթ., ԻԷ 45, Մարկ., ԺԵ 33), ինչպես նաև երկրորդ գալստյան ժամանակ տեղի ունենալիք երկնային հրաշագործությամբ, երբ. «արեգակը պիտի խաւարի, եւ լուսինը իր լոյսը չպիտի տայ, եւ աստղերը երկնքից պիտի ընկնեն, ու երկնքի զօրութիւններ պիտի շարժուեն» (Մատթ., ԻԴ 29, նաև՝ Մարկ., ԺԳ 24-25, Ղուկ., ԻԱ 25-26)⁸: Նշված երկնային լուսատուները խորհրդանշում են նաև հին (հեթանոսական) ու նոր (քրիստոնեական) հավատի փոխակերպումը, երբ հնի ոչնչացումից ճառագեց նորն իբրև արև⁹, ինչպես նաև սրանք կապվում են Ահեղ դատաստանի և Աստծու հաստատուն վիճակի հետ (արև)՝ ի հակադրություն սատանայի (լուսին) փոփոխականության¹⁰:

Փաստելի է, որ կոթողի արևմտահայաց մակերեսի կենտրոնում պատկերված հիմնախաչը գրեթե հավասարաթև է, խաչահատումը, որն *Ակն* է կոչվում, վաղ խաչքարերին բնորոշ շեշտված քառանկյուն գնդի տեսքով է, որն իբրև լույսի աղբյուր՝ ակնեղենի միջոցով գրեթե միշտ շեշտվել է¹¹: Խաչաթևերն ունեն երկգնդաձև վերջավորություն, բաղադրիչներ, որոնք բնորոշ են հենց IX-X դդ. խաչքարային արվեստին: Հորինվածքում ինքնատիպ է կենացճառային կերպավորմամբ հիմնախաչը չորս կողմից ընծյուղաձև արմավագարդերով պարուրելու երևույթը: Խաչաթևերի միջանկյալ դաշտը քանդակագործը լրացրել է աջակողմյան վերին և ստորին հատվածներում զույգ խաչաքանդակներով, իսկ ձախ մասում մի պարզունակ խաչով և թվականի փորագրմամբ: Ինչ վերաբերում է խաչահիմքում սովորաբար պատկերվող պատվանդանին (վարդյակին), որն

⁸ Покровский 2001, 458.

⁹ Холл 1996, 474.

¹⁰ Մաթևոսյան, Ավետիսյան 1993, 76:

¹¹ Պետրոսյան 2008, 269:

առավելապես խորհրդանշում է բարձունքը՝ երկնային ու երկրային Գողգոթան, որի վրա վեր է խոյացել երկրպագության առարկա սրբազան խաչը¹², ապա խնդրո առարկա խաչքարն ունի միայն թույլ արտահայտված կոթուն, որն ինչ-որ տեղ քողարկվել է, քանի որ կոթունի վրա է նաև փորագրվել հիմնական քառատող արձանագրությունը:



Նկ. 4-5. Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին և խաչքարի ընդհանուր տեսքը (ձախից) նախքան հողից ամբողջովին բացվելը (նկ. Հ. Ստեփանյանի)



Նկ. 6. Ճամբարակի խաչքարի վերնամասի լուսատուները

Արձանագրությունը

Ինչպես վերը նշեցինք, վիմագիրը երկմաս է. թվականը տեղ է գտել հիմնախաչի հորիզոնական ձախ թևի ստորին հատվածում՝ 4 տող, իսկ բուն արձանագրությունն ընդհանուր հորինվածքի ստորին մասում՝ դարձյալ 4 տող: Վիմագիրն աչքի է ընկնում տառաձևերի անհամաչափությամբ՝ ներկայացված երկաթագրի ու բոլորգրի խառնուրդով: Տողերի սահման-

¹² Պետրոսյան 2008, 278, 283-284:

ներն ու ընդհանուր փորագրման ոճն անկանոն է, որը ցուցում է, որ փորագրիչ վարպետն այնքան էլ արհեստավարժ չէ: Խաչքարի վայելուչ տեսքից դատելով՝ հմուտ քանդակագործը կա՛մ կարևորություն չի տվել արձանագրության ճոխ ու գեղագիր լինելուն, կա՛մ էլ այն փորագրվել է մեկ այլ վարպետի ձեռքով: Բովանդակությունը հետևյալն է.

ՀԱՅՆՈՅ ԹՎԱԿԱՆՍ ՆԼԸ (438+551=989):

+ ՅԱՆՈՒՆ ԱՅ, ԵՍ՝ ՊԱՂՈՍ ԵՐ/ԵՑ, ԾԱՌԱՅ ՅԱՒԻ,

ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵՂ/ԵՑՎԱՆՍ ԻՄ ՀՈԳՈՅՍ ԵՒ

ԿԱՆ/ԳԼՆԵՑԻ ԽԱԶՍ ԱՆՈՒԴԲ ԳՐԻԴՈՐ:

Արձանագրության առաջին հրատարակիչ Աբրահամ Շահինյանը բնագրի ԵԿԵՂԵՑՎԱՆՍ բառի վերջին՝ ՎԱՆՍ բաղադրիչը վերծանել է ՎԱՄՆ՝ համարելով գրչի վրիպակ¹³: Կարծում ենք՝ այդ մոտեցումն այնքան էլ համոզիչ չէ, քանի որ ՎԱՆ-ն ինքնին բացատրվում է նաև իբրև ՎԱՆՔ¹⁴, որից էլ՝ Վանստան, Վանեվան, այսինքն՝ վանական կենտրոն, եկեղեցատեղ նշանակությամբ: Ըստ այդմ՝ Պաղոս երեցը¹⁵, որն իրեն բնութագրում է իբրև Հիսուսի (այստեղ սեռական հոլովաձևով պիտի լիներ՝ ՅԻ-Յիսուսի, այլ ոչ՝ ՅՍ-Յիսուս, կամ՝ ՔԻ - Քրիստոսի) ծառա, եկեղեցի է կառուցել իր հոգու փրկության համար, ինչի առթիվ նաև խաչքար է կանգնեցրել Ս. Գրիգորի անունով:



Նկ. 7. Պաղոս երեցի՝ եկեղեցու կառուցման առթիվ կանգնեցրած Ս. Գրիգոր խաչքարը, 989 թ. (գրչանկարները մերն են)

¹³ [Շահինյան] 1984, 37, ծնթ. 43:

¹⁴ Մալխասեանց 1945, 298:

¹⁵ Սա նույն Պողոս-Պաղոս (Պաղոս) անձնանվան միջնադարյան դրսևորումներից է, որը սկզբնաղբյուրներում հանդիպում է նաև Պաղանոս, Պաղիս և նմանօրինակ այլ անվանաձևերով:

Այն, որ խաչքարերի կանգնեցման գործառույթներից էին նաև եկեղեցիների, հյուրատների¹⁶, կամուրջների¹⁷ և այլ շինությունների կառուցումն ու նորոգումը, հայտնի իրողություն է։ Սրա լավագույն օրինակը Տաթևի վանքի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու կառուցման առթիվ տաճարի արևմտյան պատին՝ արտաքուստ ագուցված արձանագիր խաչքարն է, որի երկու եզրագոտիներին հիշատակված է շինարարությունը նախաձեռնած տեր Հովհաննես եպիսկոպոսի անունը. «Զտէր Յովանէս՝ շինող սրբո եկեղեցեացս, Տէր իմ յիշեա»¹⁸։ Արձանագրության հնագրական առանձնահատկություններն ու բովանդակությունը հուշում են, որ այն թվագրելի է առնվազն X դարասկզբով։ Ներկայումս Գորիսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում ցուցադրվող, ծագումով Տաթևից¹⁹ ՆԽ (991) թվակիր արձանագիր խաչքարը ևս կերտվել է տաճարի կառուցման առթիվ. «Յիշեա՛ ՔՍ զերիցակ Սինեաց վանական, շինող տաճարիս, թ(վին) ՆԽ (991)»²⁰, իսկ Տանձատափ գյուղի (Սյունիք) «Սվարանցի խաչ» վայրում այժմ էլ կանգուն Ս. Աստվածածին խաչքարը կերտվել է եկեղեցու նորոգման առթիվ²¹, այնպես ինչպես մեր կողմից վերջերս փաստագրված Հայոց ՉԼ (1281) թվակիր խաչքարը Տաթև-Սվարանց ճանապարհի աջակողմում գտնվող

¹⁶ Հյուրատների կառուցման առթիվ կանգնեցված խաչքարեր հայտնի են Սևանից, Մակարավանքից, Նորավանքից և այլ հոգևոր կենտրոններից։ Նորավանքի տնտեսական շինությունների ավերակների մեջ այսօր էլ տեսանելի է մի մատռանման շինություն, որի ներսում՝ հարավային պատին կից, կանգնեցված է մի մեծ խաչքար՝ ընդարձակ արձանագրությամբ, ըստ որի՝ Սարգիս եպիսկոպոսն իր պարոնների օժանդակությամբ XIII դ. երկրորդ կեսին հյուրատուն է կառուցել ու մի շարք կալվածքներ (գյուղ, հողամաս, ջաղաց և այլն) վանքին հատկացրել (Դիվան հայ վիմագրության 1967, 246, արձ. 813)։

¹⁷ Ներկայիս Ալավերդի քաղաքում գտնվող Սանահինի հայտնի կամուրջը կառուցվել է XII դարավերջին, Զաքարե և Իվանե Զաքարյանների քույր, Կյուրիկյան Աբաս թագավորի կին Վանենիի նախաձեռնությամբ՝ ի հիշատակ վաղամեռիկ ամուսնու։ Կառուցման առթիվ խաչքար է կանգնեցվել՝ թիկունքին ընդարձակ արձանագրությամբ։ Այն ներկայումս գտնվում է Սանահինի վանքում (Դիվան հայ վիմագրության 2012, 20, արձ. 1)։

¹⁸ Դիվան հայ վիմագրության 1960, 14, արձ. 3։

¹⁹ Ա. Շահինյանի պատկերագրքում ծագման վայր է նշված Սյունիքի Արծվանիկ գյուղը ([Շահինյան] 1984, նկ. 73)։

²⁰ Դիվան հայ վիմագրության 1960, 32, արձ. 62։

²¹ Դիվան հայ վիմագրության 1960, 40, արձ. 94։

Գյուների վանքում, որի վիմագրի համաձայն՝ ոմն Էլպեկ խաչքար է կանգնեցրել ի նշան եկեղեցու վերստին նորոգման²²:

Անվանաբանությունը

Ինչ վերաբերում է խաչքարի՝ Ս. Գրիգորի անունը կրելու հանգամանքին, ապա այստեղ կարելի է մի քանի վարկած շրջանառել: Օրինաչափ է խաչքարի կանգնեցումը Ս. Գրիգորի անունով, քանի որ հայ իրականության մեջ բազմաթիվ խաչքարեր կանգնեցվել են տարբեր սրբերի անուններով՝ ի նշան այս կամ այն իրադարձության կամ պարգապես «վասն հոգու փրկութեան ու բարեխոսութեան», երբ խաչքարերն օժտում էին հատկապես անվանակից սրբերի անուններով: Հ. Պետրոսյանի բնորոշմամբ՝ խաչքարերի անվանաբանական համակարգում առանձնակի տեղ են զբաղեցնում սրբերի անվանակոչմամբ խաչքար-կոթողները, որպիսիք հայտնի են Կեչուտից՝ Ս. Գևորգի անունով (886 թ.), Գավառից՝ Ս. Սարգսի (1000 թ.), Կարմրաշենից՝ Ս. Պողոս-Պետրոսի (1291 թ.), Հավուց թառից՝ Ս. Սարգսի, Տաթևից՝ Ս. Աստվածածնի (XIII դ.) և այլ հուշարձաններից²³: Անխոս, անվանակիր վաղ խաչքարերի շարքում իր ուրույն տեղն ունի նաև Ճամբարակի խաչքարը՝ կանգնեցված Ս. Գրիգոր Լուսավորչի անունով: Ակնհայտ է, որ Պաղոս երեցի կանգնեցրած Ս. Գրիգոր խաչքարն անվանակցման հետ որևէ կերպ չի առնչվում, այստեղից հետևություն, որ այն ոչ թե կանգնեցնողի, այլ եկեղեցու անվանակիցն է:

Խաչքարի արձանագրությունն ինքնին շինարարական բնույթ ունի, միայն թե՛ եթե այլ հուշարձաններում եկեղեցիների կառուցման կամ նորոգման վիմագրերը տեղ են գտել հիմնականում մուտքերի բարավորներին ու ճակատակալ քարերին, ապա այս դեպքում խաչքար է կանգնեցվել այդ կապակցությամբ, որի վրա էլ անթեղվել է եկեղեցու կառուցման միակ գիրը՝ ՆԼԸ -989 թվականին²⁴, Պաղոս երեցի նախաձեռնությամբ, անվամբ Ս. Գրիգորի: Արձանագրության բովանդակային կառուցվածքը լիովին պարզ է. կոթողի (խաչի) կանգնեցման շարժառիթը եկեղեցու կառուցումն է, նպատակը՝ կանգնեցնողի՝ տվյալ դեպքում Պաղոս երեցի հոգու փրկու-

²² Վիմագիրը դեռևս անտիպ է, ընդօրինակել ենք 2019 թ. մեր դաշտային հավաքչական աշխատանքների ընթացքում (16.08.2019):

²³ Պետրոսյան 2002, 71-77:

²⁴ Մենք ուղղում ենք թվականի՝ պարզորոշ ընթերցվող Լ տասնավորը, ուստի եկեղեցու կառուցումն ու խաչքարի կանգնեցումը 40 տարով ավելի են հնանում:

թյունը հանդերձյալ կյանքում: Խաչքարի՝ սրբի անունով անվանակոչումն, ըստ էության, ենթադրում էր որոշակի սրբազան գործառույթի իրագործում, տվյալ սրբի մասունքի անթեղում, որն այս դեպքում կարելի է մեկնաբանել Ս. Գրիգոր եկեղեցու կառուցմամբ և խորանում նշխարների ամփոփմամբ:

Եզրակացություններ

Վերը շարադրածն ի մի բերելով՝ կարելի է արձանագրել հետևյալը.

Պատմական Գեղարքունիքի մշակութային ժառանգության ինքնատիպ դրսևորումներից են խաչքարային արվեստի հուշարձանները, որոնց վաղ շրջանի, այն է՝ IX-X դդ. օրինակներից մեկն էլ Ճամբարակի 989 թվակիր խաչքար-կոթողն է: Նշանավոր «Էջմիածնի» Ավետարանի (ՄՄ, ձեռ. 2374) հասակակիցը համարվող կոթողն իր քանդակային-պատկերագրական արվեստի կատարելությամբ, այլև վիմագրի բովանդակության բացառիկությամբ ժամանակի եզակի հուշարձանների շարքին է դասվում: Այն Ճամբարակի միջնադարյան պատմության և քարեղեն գրավոր մշակույթի վաղագույն վկայագիրն է, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցման միակ ու փաստական աղբյուրը, որը, ի դեմս իր ավելի քան հազարամյա տարիքի, իրավամբ համարվում է բնակավայրի ծննդյան քարե «անձնագիրը»:

Գրականություն

- Դիվան հայ վիմագրության 1960, պր. II, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, կազմող Ս. Բարխուդարյան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 239 էջ:
- Դիվան հայ վիմագրության 1967, պր. III, Վայոց Ձոր. Եղեգնաձորի և Ագիգեկովի շրջաններ, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 425 էջ:
- Դիվան հայ վիմագրության 2012, պր. IX, Լոռու մարզ, կազմեցին՝ Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Սաղումյան, Երևան, «Գիտություն», 612 էջ, 430 նկ.:
- Հակոբյան Ս., Հակոբյան Ա. 2015, Հայաստանի Հանրապետություն. Պատմական հանրագիտարան, Երևան, Հեղինակային հրատ., 1047 էջ:
- Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ. 1991, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երևան, ԵՊՀ հրատ., 992 էջ:

- ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակ.
Գեղարքունիքի մարզ 2003, Երևան, 311 էջ:
- Մաթևոսյան Կ., Ավետիսյան Ա. 1993, Ավետարանական պատկերներ. տերու-
նական շարքի 12 գլխավոր պատկերները, Երևան, ԵՊՀ հրատ., 103 էջ:
- Մախասեանց Ստ. 1945, Հայերէն բացատրական բառարան, հ. չորրորդ,
Երեւան, ՀՍՍՌ պետ. հրատ., 646 էջ:
- [Շահինյան Ա.] 1984, Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները.
IX-XIII դարերի խաչքարերը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 77 էջ, 67 թ. նկ.:
- Պետրոսյան Հ. 2002, Խաչքարերի անվանաբանական համակարգը և Ս. Սար-
գիս խաչքարերը, «Ս. Սարգիս» նստաշրջանի նյութեր (խմբ. Ս. Հարու-
թյունյան, Ա. Քալանթարյան), Երևան, «Մուղնի», էջ 60-79:
- Պետրոսյան Հ. 2008, Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը,
իմաստարանությունը, Երևան, «Փրինթինֆո», 393 էջ:
- Покровский Н. 2001, Евангелие в памятниках иконографии, Москва, «Про-
гресс-Традиция», 564 с.
- Холл Дж. 1996, Словарь сюжетов и символов в искусстве, перевод с англий-
ского А.Е. Майкапара, Москва, «КРОН-ПРЕСС», 656 с.

ՎԱՂԽԱԶՔԱՐԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԻ ԵԶԱԿԻ ՆՄՈՒՇ ԾԱՄԲԱՐԱԿԻՑ

Արսեն Հարությունյան

Ամփոփում

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքի Ս. Գրիգոր Լուսավորիչ կիսավեր եկեղեցու հարավային կողմում կանգուն է մնացել IX-X դդ. բնորոշ մի արձանագիր խաչքար: Այն աչքի է ընկնում քանդակային արվեստի ինքնատիպ լուծումներով, մասնավորապես՝ հիմնախաչի վերին հատվածում վարպետը ստեղծել է Խաչելությունն ու Երկրորդ գալուստը խորհրդանշող երկնային համայնապատկեր, որտեղ ներկայացված են երկնային լուսատուները՝ արևը, լուսինն ու աստղերը: Ըստ քառատող վիմագրի՝ 989 թ. Պաղոս երեցն իր հոգու փրկության համար եկեղեցի է կառուցել և այդ առթիվ Ս. Գրիգորի անունով խաչքար կանգնեցրել: Այն, որ միջնադարում խաչքարերը կանգնեցվում էին նաև եկեղեցիների կառուցման և նորոգման առթիվ, հայտնի իրողություն է: Սրա վաղագույն օրինակը Տաթևի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու արևմտյան մուտքի վերնամասում ագուցված խաչքարն է, որտեղ հիշատակված է եկեղե-

ցու կառուցումը նախաձեռնած Հովհաննես եպիսկոպոսի անունը: Քիչ չեն նաև խաջարերը սրբերի անուններով կոչելու օրինակները, որոնց հավաստի վկաները հենց խաջարային արձանագրություններն են: Հետաքրքիրն այն է, որ Ճամբարակի կոթողը ոչ թե կանգնեցնողի, այլ թերևս հարևանությամբ գտնվող կիսավեր Ս. Գրիգոր եկեղեցու անվանակիցն է, որի կառուցման արձանագրությունը համարվում է բնակավայրի միջնադարյան պատմության վաղագույն վկայագիրը:

Բանալի բառեր – խաջար, երկնային համայնապատկեր, արև, լուսին, աստղեր, արձանագրություն, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի:

УНИКАЛЬНЫЙ ОБРАЗЕЦ РАННЕГО ПЕРИОДА ИСКУССТВА ХАЧКАРА ИЗ ЧАМБАРАКА

Арсен Арутюнян

Резюме

В городе Чамбарак Гегаркуникского района Армении, к югу от полуразрушенной церкви Св. Григория Просветителя установлен хачкар (крест-камень) с памятными надписями, который можно датировать, по всей вероятности, IX-X веками. Обращает на себя внимание своеобразное оформление хачкара, в частности, верхняя часть над основным крестом являет собой панораму, символизирующую Распятие и Второе пришествие. Здесь же находим изображение небесных светил – солнца, луны и звезд.

Согласно четырехстрочной памятной надписи, в 989 году священник Пагос во спасение своей души построил церковь и по этому случаю воздвиг хачкар в память о Св. Григории. Известно, что в средние века хачкары устанавливались также по случаю постройки либо реставрации церкви. Подобным наиболее ранним образцом является хачкар (в стене над западным входом церкви Св. Погоса-Павла в монастыре Татев), где упомянуто имя епископа Ованеса, предпринявшего строительство церкви. Нередко хачкары называли именами святых, достоверным свидетельством чего являются имеющиеся на них памятные надписи. Примечательно, что памятник в Чамбараке назван не именем своего заказчика, а увековечил название находящейся поблизости полуразрушенной церкви Св. Гри-

гория, памятная надпись о строительстве которой считается наиболее ранним свидетельством средневековой истории данной местности.

Ключевые слова – хачкар (крест-камень), панорама, солнце, луна, звезды, надпись, церковь Св. Григория Просветителя.

A UNIQUE EXAMPLE OF EARLY CROSS-STONE ART FROM CHAMBARAK

Arsen Harutyunyan

Abstract

On the southern side of St. Gregory Illuminator dilapidated church of Chambarak (province of Gegharkunik of Republic of Armenia) a cross-stone (Khachkar) with inscription is standing which is typical for the 9-10th centuries. It is remarkable by its unique decorations of sculptural art: particularly at the top of the general cross the master has created heavenly panorama which symbolizes the scenes of Crucifixion and the Second arrival of Christ. In abovementioned iconography are presented heavenly luminaries – sun, moon and stars.

According to epigraphy consisting of 4 lines, vicar Paghos built a church for the salvation of his heart and on this occasion he erected a cross-stone after St. Gregory in 989. In fact, in the Middle Ages cross-stones were erected also to build or repair churches. The earliest example of this tradition was kept in inscription of the small cross-stone of Tatev Monastery which is placed on the western wall of St. Paul-Peter temple where the name of Hovhannes bishop, the initiator of the construction works, is mentioned. There are also examples of naming cross-stones by the names of saints, reliable testimonies of which are inscriptions on those stones. It is interesting that Chambarak's monument is a namesake with the nearby St. Gregory church and not with the vicar who erected it. The inscription of cross-stone is considered to be the earliest medieval evidence of the history of the settlement.

Key words – khachkar (cross-stone), panorama, sun, moon, stars, inscription, St. Gregory Illuminator church.

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑ Ս.Ֆ.Հ. ՔՐԱԹԵՐՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (1920 թ.)

1920 թ. հունիսի 1-ին ԱՄՆ-ի կոնգրեսը մերժեց Հայաստանի մանդատը ստանձնելու՝ նախագահ Վ. Վիլսոնի առաջարկը: Դեմ քվեարկած սենատորների համար ամենաբարձրաձայնվող հակափաստարկը Անդրկովկասում բուլշևիկյան Ռուսաստանի դիրքերի ամրապնդումն էր, և ըստ այդմ, ուղղակի ռազմական առճակատման հնարավոր վտանգը¹: Սակայն կար նաև մեկ այլ միտում, որը թերևս ծայրայ, բայց աստիճանաբար գայթակղիչ էր դառնում ամերիկյան գործարար և քաղաքական շրջանակների համար: Դա քեմալական Թուրքիային Ամերիկայի հովանավորության և, հետևաբար, ազդեցության տակ վերցնելու շահավետ հեռանկարն էր: Կարեկցանքին ու մարդասիրությանը փոխարինելու էին գալիս առևտրային շահը և սառը հաշվարկը: 1919 թ. Կ.Պոլսում ԱՄՆ-ի գերագույն հանձնակատար նշանակված ծովակալ Մարկ Լամբերթ Բրիստոլը (Mark Lambert Bristol)² զուգահեռաբար համակարգում էր ԱՄՆ-ի ռազմական և դիվանագիտական գործառնությունները Օսմանյան կայսրությունում: Բրիստոլը ամենևին էլ Մորգենթաու չէր³: Նա դարձավ ամերիկյան թուրքամետ քաղաքականության հիմնադիր հայրերից մեկը: Իր նպատակին հասնելու համար Բրիստոլը չէր խորշում ուղղորդված հաշվետվություններ կազմելուց, որտեղ հատկապես հայերը և հույները վատաբանվում էին, իսկ քեմալականները՝ գովաբանվում⁴:

Ստորև ներկայացնում ենք ամերիկյան ԵԲԸ-ի (Երիտասարդաց քրիստոնեական ընկերակցության)⁵ աշխատակից Ս.Ֆ.Հ. Քրաթերնի (S.F.H. Crathern)⁵ Հայաստանի Հանրապետություն կատարած այցելության մասին հաշվետվությունը: Այցելությունն իրականացվել է ծովակալ Բրիսթոլի հանձնարարությամբ՝ 1920 թ. օգոստոս – սեպտեմբեր ամիսներին:

¹ Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, Երևան, 2010, 156-157:

² Mark Lambert Bristol (1868-1939).

³ Ureneck, Lou 2015, The Great Fire, Harper-Collins Publishers, New York, 247.

⁴ Ureneck, 97.

⁵ Տե՛ս Համբարձումյան Վ. 2016, Երիտասարդաց քրիստոնեական ընկերակցության աշխատակից Ս.Ֆ.Հ. Քրաթերնի հաշվետվությունը Մարաշի պաշարման մասին (20.I – 11.II.1920), Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, Երևան, 304-305:

Փաստաթղթի բնօրինակը պահպանվում է ԱՄՆ-ի Մինեսոտայի համալսարանի Է.Լ. Անդերսոնի անվան գրադարանի Քաուֆս ընտանիքի ԵԲԸ արխիվներում⁶: Այն հրապարակվում է առաջին անգամ: Կատարվել են մասնակի ուղղագրական կամ կետադրական շտկումներ: Մեր միջամտությունները արված են ուղղագիծ փակագծերով, իսկ մեկնաբանությունները տրվել են տողատակով կամ ծանոթագրություններով:

ՎԱՐԴԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

COPY

Beirut, Syria,
January 20, 1921.

ROOM 1008
RECEIVED
MAY – 2 1921

Frederik Bird⁷, Esq⁸.,
American Vice Consul in Charge,
Beirut, Syria

Sir:

In compliance with you request, I make the following statement concerning the political conditions in the Caucasus and the interior of Asia Minor as I have recently observed them.

It was with the knowledge and consent of Admiral Bristol, the American High Commissioner in Constantinople, that I made the journey under the auspices of the American Y. M. C. A. for the purpose of investigating conditions and reporting on the same, so that our office might have some data to work on before determining when and where to locate our organization.

⁶ Kautz Family YMCA Archives, University of Minnesota Libraries, Minneapolis (MN), USA: International Division: Box -Turkey 1884-1929.

⁷ Ֆրեդրիկ Օ. Բըրդ (ծնվ. 1896 թ.). եղել է ամերիկյան Կարմիր խաչի աշխատակից, 1920 թ. մարտի 8-ին նշանակվել է Բեյրութում ԱՄՆ-ի փոխիյուպատոս (տե՛ս Register of the Department of the State, Washington DC:Government Printing Office 1922, 92).

⁸ Esquire – էսքույր՝ պատվավոր տիտղոս Անգլիայում, նամակագրության մեջ Esq. հապավումը գործածվում է նաև ազնվագարն պարոն իմաստով:

I left Constantinople August 7th, 1920, on the U. S. Destroyer WHIPPLE, 217, and, after brief stops at Konstanza⁹, Sebastopol¹⁰ and Yialti¹¹, we arrived in Batoum¹². From Batoum I proceeded to Tiflis and Armenia. In Erivan I had an interview with the Minister of War¹³ and several cabinet ministers¹⁴ and was impressed with their desire to establish the new republic on the firm moral, educational and financial basis. But they deplored the lack of men and money to carry out their purposes. From all the evidences I saw they appeared to me as men who were making bricks without straw and terribly handicapped because of the political agitations and the uncertainty and unrest of the people. Refugees were coming and going most [of] the time, and it would seem as if hundreds of them were on a perpetual joy ride, going from one place to another without any particular aim or purpose in life. There was a great deal of poverty in the city: a great deal of laziness and unconcern on the part of a great many people. Some of them complained of the terror of the Bolsheviks which threatened them on the borderlines. Some of the companies of people to whom I spoke in public audience I informed that the Bolsheviks they needed to fear where the Bolsheviks that were right at their own door, - the Bolsheviks of dirt, and laziness, and fleas, indifference, unconcern with regard to the great moral issues of the time.

I had an interview with the Armenian Catholico[u]s¹⁵, a man of great physical, but of rather mediocre mental caliber. He complained bitterly because America had not assumed the political mandate of Armenia, and was rather resentful of America's attitude in bringing under her influence so many thousands of Armenian orphans, as if he were afraid of America was there for religious propaganda and not with the sincere desire to meet the necessities of the situation. I informed him, rather warmly, that, although America had not assumed the political mandate of Armenia, she has assumed the food mandate of Armenia and had fed thousands of orphans and poor refugees who, for her help, would surely have starved to death:

⁹ Constanta – Կոնստանցա՝ քաղաք Ռումինիայում:

¹⁰ Sevastopol – Սևաստոպոլ՝ քաղաք Ղրիմում:

¹¹ Yalta – Յալթա՝ քաղաք Ղրիմում:

¹² Batumi – Բաթում՝ քաղաք Վրաստանում:

¹³ 1920 թ. մայիսի 5-ից նոյեմբերի 25-ը Հայաստանի Առաջին հանրապետության զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյան (1882–1951 թթ.):

¹⁴ 1920 թ. մայիսի 5-ից նոյեմբեր 25-ը Հայաստանի Առաջին հանրապետության կառավարություն՝ վարչապետ Համազասպ Օհանջանյանի (1873–1947 թթ.) ղեկավարությամբ:

¹⁵ 1911–1930 թթ. Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Տփղիսեցի (Սուրենյանց) (1847–1930 թթ.):

she had assumed the clothing mandate of Armenia, and had clothed multitudes of poor naked men, women and children who would have perished but for her help: she had assumed the educational mandate of Armenia and was educating at that moment thousands of boys and girls, giving them the rudiments of an education so that they might go out into the world better prepared to work out their own salvation: she had assumed the industrial mandate of Armenia and had given thousands of men and women an opportunity to learn various trades, so that they might support themselves by their own handiwork: and that the Armenians ought to be eternally grateful to America for the noble part she had played when all other nations apparently were indifferent to their plea. He seemed somehow impressed by this statement and volunteered an expression of appreciation for that America had done along these lines.

The Armenians in the Caucasus have not been very successful in commanding themselves to the favorable consideration of many American workers. There seems to be a different type of Armenians in the Caucasus to what I have met with in the territory of Turkey. They have lacked educational advantages and moral and physical and spiritual tones are very much lower. They appear to me to be a different grade of individual. There are some finer elements amongst them, however, and it is to those finer elements that the Armenian people must look for leadership and redemption.

In Alexandropol the Near East Relief Committee ^{1 1} are gathering to orphans into a common center. Here there are several thousands in most capacious orphanages with plenty of open[-]air space and indoor room. The orphanages have splendidly conducted schools and hospitals, and industries are in full operation, and there is every evidence of a magnificent work being done. Surely the hope of the Armenian Republic lies in these thousands of boys and girls who are to be under American tutelage for several years to come. If it were not for this work and the bright prospects of its success, I should have very little confidence in the future of the Armenian Republic. The fear of a great many Armenians has been that the onrushing tide of Bolshevism might inundate their land and their Government, and, from which I saw and heard during my brief visit in the capital of the Republic and other cities, I should not be at all surprised if their fears were realized. It may be that the Government will have to accept Bolshevism to save itself. Many are still hoping that help will come to them from America, both as an administrative and a financial kind. There is great disappointment everywhere, of course, that America did not assume the mandate, but more or less appreciation for all America has done for the relief of the people during the war and these last days of crisis.

In the Republic of Georgia there was evidently a more substantial government. In Tiflis conditions seemed quite normal, except that the streets were crowded with Russian refugees evidently of the better class, many of whom were well-dressed and seemed to possess all the money necessary to sustain life and to produce a certain kind of happiness. There was the Bolshevik Commission¹⁶ in Tiflis, and the members of that Commission were evidently desirous of making themselves conspicuous, as they were frequently seen touring the city in a large automobile with the flag of the Soviet government waving above them. A great many of the people also were inclined to Bolshevism, particularly among the laboring classes. Batoum especially being under the head of the labor people. It would not surprise me to find that Georgia had adopted the Soviet form of government, and with Georgia and Armenia in the hands of the Bolsheviks they would have a highway to Persia.

The conditions of the Greek refugees in Batoum when I was there in September was rather deplorable. Hundreds of them had been brought down by the Greek Government to the coast, for the purpose of transporting them to Thrace or to other parts occupied by the Greeks, but unfortunately they were detained in Batoum, and with no food and very miserable accommodations they were allowed to shift for themselves and presented a most pitiable appearance. Scabies, malaria, and malnutrition and even the black plague entered their midst and decimated their ranks, and it was not until the American relief workers and doctors came on the ground that any attempt was made to save life or to secure cleanliness and provide medical attention. So impressed was I with the miserable conditions of the people that before help had reached them from the Near East Relief[,] I threatened the doctors of the city to wire the Government at Athens if no attempt was made to relieve the situation. When I returned from my visit to Armenia[,] I found conditions much improved. The plague was being fought with fine success and the city had brought under sanitary conditions that made it possible that the disease that had been so rampant would be stamped out.

In the early part of October I reached Samsoun¹⁷ for the purpose of going the interior. All through Anatolia the conditions appeared very favorable. Peace and prosperity seemed to prevail all along the line. The great military highway from the interior, leading to the coast, was daily thronged with caravans of camels,

¹⁶ 1920 թ. օգոստոսին Թիֆլիսում ընթանում էին հայ-ռուսական բանակցություններ: Բ. Լեգրանը ղեկավարում էր բոլշևիկյան Ռուսաստանի պատվիրակությունը:

¹⁷ Samsun – Սամսուն՝ քաղաք Պոնտոսում, Սև ծովի ափին:

mules and ox-teams, laden with the products of the country, taking them to the coast for shipment to Constantinople and other parts. The road was well policed by the Nationalists¹⁸. Everywhere I went I was received with very courteous consideration and given every opportunity to carry on my work. Public officials in Samsoun and in Marsovan¹⁹ were very gracious and courteous. It was not until I arrived in Sivas²⁰ that I experienced any difficulty with the government authorities. There I was hel[d] up and unable to proceed to Harpoot²¹. Dr. Dodd, of Near East whom I met there, thought it expedient to proceed to Angora²² to interview Mustapha Kemal, for the purpose of persuading him to instruct military service of the interior to let up on their restrictions to Americans and give them more freedom of action. What success he had I do not know but a few days later word came that we could proceed to Harpoot.

In Harpoot I found the relations seemed strained between the government officials and the American relief workers, chiefly perhaps because of the suspicions of the Government that the Kurds were favorable to Americans and antagonistic to the Turks. Mr. Riggs, I am sure, was very noble in his dealings with the Turkish Government, and no man could have been wiser or more discreet in his attempts to conciliate the officials and persuade them of his neutrality than Mr. Riggs.

In November we reached Diarbekir²³ and Urfa²⁴. I found no difficulty in getting out of Diarbekir, but in Urfa, with several other Americans who had been there for from four to six months, I was detained by the Turkish authorities, the Mutifsurriff²⁵ informing us that he could not permit us to leave the city because of fighting on the west side of the Euphrates. He was very courteous in his reception of us but very insistent in his denial of our request that we be permitted to proceed on our journey to Aleppo. He informed us that he was holding us for our good, as he did not wish us to run into any danger that might involve him in controversy with the American Government. We were very careful to be obedient to the rules

¹⁸ Թուրք ազգայնականներ՝ քեմալականներ:

¹⁹ Merzifon – Մարզվան՝ քաղաք Սեբաստիայի վիլայեթում, Սամսունից 105 կմ հարավ-արևմուտք:

²⁰ Սեբաստիա՝ համանուն վիլայեթի կենտրոնը, Մարզվանից 254 կմ հարավ-արևելք:

²¹ Խարբերդ՝ համանուն վիլայեթի կենտրոնը, Սեբաստիայից 313 կմ հարավ-արևելք:

²² Ankara – Անկարա՝ քաղաք, որտեղ գտնվում էր քեմալականների կենտրոնակայանը:

²³ Diyarbakir – Դիարբեքիր (Տիգրանակերտ)՝ համանուն վիլայեթի կենտրոնը, Խարբերդից 154 կմ հարավ-արևելք:

²⁴ Sanliurfa – Ուռհա (Եդեսիա)՝ քաղաք Հալեպի վիլայեթում, Խարբերդից 179 կմ հարավ-արևմուտք:

²⁵ Mutassarif – գավառապետ:

and regulations of the city government, but when we learned from Turkish officers that the way was open and that it was perfectly safe to proceed to Aleppo, Dr. Stewart and the other Americans decided to leave the city without permission. They made a last appeal to the Mutifsurriff, but when they were again denied, they considered that they were within their rights to leave without his knowledge. With the party of orphans they had brought down from Mardin²⁶[,] they left the city on December the 27th and, making a wide detour south across the river at Rakka in Arab territory, they proceeded without detention or molestation to Aleppo, where they arrived a few days later. This act on the part of the Americans provoked the Turkish officials. I went immediately to see the Mutifsurriff and told him for what reason the Americans had gone, – that it was with no desire to disregard his wishes but simply because they had important business to attend to and they felt they ought not to be detained. In a few days the Mutifsurriff was somewhat reconciled to their departure., and as I especially urged permission to leave for myself, he said he would make a special appeal to the higher authorities and would let me know in a few days if I might go. About a week later he informed me that he had been given permission to allow the Americans proceed on their journey. We were escorted to the border by a Turkish officer and entertained by him at Berejik²⁷ over night. The following morning we made [our] way across the Euphrates, with proper credentials to the Governor of Gerobalus²⁸, who furnished us with a Turkish gendarme and a Turkish flag for the purpose of protection along the highway to Membidhe²⁹.

At Membidge we found the Arabs were in occupation, and that Hachem Pasha³⁰, the Chief of the Arab tribe opposing the French forces, made his headquarters there. We had an interesting interview with him and found considerable excitement among the Arab population, and a great many Bedouin solders from the desert fully armed and equipped for warfare. The informed us that they would soon drive the French out of Bab³¹ and proceed to occupy the city of Aleppo. The

²⁶ Մարդին (Մարտին)՝ քաղաք Դիարբեքիի վիլայեթում, Ուռհայից 189 կմ արևելք:

²⁷ Birecik – Բիրեցիկ (Պիր)՝ քաղաք Հալեպի վիլայեթում, Եփրատի ձախ ափին, Ուռհայից 80 կմ արևմուտք:

²⁸ Jarabulus – Զարաբուլուս՝ քաղաք Սիրիայում, Եփրատի աջ ափին, Բիրեցիկից 20 կմ հարավ:

²⁹ Manbi j– Մանբիջ՝ քաղաք Սիրիայում, Զարաբուլուսից 30 կմ հարավ:

³⁰ Hashim Khalid al-Atassi (1875–1960) – Հաշիմ Խալիլ ալ Աթասի՝ 1918 թ. սկսած Սիրիայի ազգային շարժման առաջնորդներից, հետագայում (1936–1939, 1949–1951, 1953–1954 թթ.) Սիրիայի Հանրապետության նախագահ:

³¹ Al Bab – Ալ Բաբ՝ քաղաք Սիրիայում, Մանբիջից 46 հարավ-արևմուտք, Հալեպից 43 կմ հյուսիս-արևելք:

were very resentful of French occupation and determined at all hazards to fight for their liberty and independence. From Membidge we proceeded to Bab, where we found the French occupying the city. A French aeroplane came out to meet us, evidently with the intention of discovering who we were. We proceeded to the headquarters and had an interesting interview with the French Colonel, who assured us that the road was open and perfectly safe to Aleppo. We found the road well policed and had no difficulty in reaching the city.

From Aleppo to Ryak³² there were French troops on the train, with machine guns on flat oars, and no trouble was encountered on the journey and the train arrived practically on time in Beirut.

As far as the Nationalist government is concerned, in the interior the Turkish people seem to accept it without any antagonism. It was not until we arrived within the zone of occupation by the French that we had found any alarming or disturbing conditions, but there is a very general feeling that the French occupation of the country is detrimental to the best interests of the people.

Respectfully,
(Signed) C. F. H. CRATHERN
Field Secretary
Y. M. C. A.


¹ ԵԲԸ-ն հիմնադրվել է 1844 թ. հունիսի 6-ին Լոնդոնում: Արդեն 1855 թ., շնորհիվ արագ տարածման, դարձել է համաշխարհային շարժում (տե՛ս Shedd, Clarence Prouty and others: "History of the World's Alliance of Young Men's Christian Associations", London, 1955): Լինելով քրիստոնեական արժեքները հիմնովին ընդունող մի կազմակերպություն ու սկիզբ առնելով Բրիտանական կայսրությունում՝ ԵԲԸ-ն ի սկզբանե ունեցել է բողոքական հենք: Սակայն, ժամանակի ընթացքում տարածվելով աշխարհով մեկ, այն դարձել է համակերպական շարժում: Այսօր ԵԲԸ-ն գործում է աշխարհի 119 երկրում և ունի շուրջ 58 միլիոն անդամ: Այն համարվում է աշխարհում ամենահաջողակ, ամենաերկարակյաց ու ամենատարածված հասարակական նախաձեռնություններից մեկը:

³² Riyaq – Ռյաք՝ քաղաք Լիբանանում, Հալեպից 320 կմ հարավ, Բեյրութից 66 կմ արևելք:

¹¹ Մերձավոր Արևելքի օգնության կոմիտե (Near East Relief -NER) կամ Ամերկոմ: Հիմնադրվել է 1918 թ.¹ ԱՄՆ-ի Կոնգրեսի որոշմամբ: Սկզբում կոչվել է Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտե (American Committee for Relief in the Near East - ACRNE): Փոխարինել է 1915 թ. ի վեր գործող Հայկական ու Սիրիական օգնության ամերիկյան կոմիտեին (American Committee for Armenian and Syrian Relief - ACASR): Կոնգրեսի 1919 թ. օգոստոսի 6-ի որոշմամբ վերանվանվել է Մերձավոր Արևելքի օգնության կոմիտե: 1930 թ. վերանվանվել է Մերձավոր Արևելքի հիմնադրամ (Near East Foundation - NEF) և այդ անվամբ գործում է գայսօր:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԱԳԻԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, Գիրքը և գրադարանային-տեղեկատվական մշակույթը Արցախում: Ուսումնական ձեռնարկ, Երևան, Հեղ. հրատ., 2020, 108 էջ:



Ժամանակակից կրթության և գիտության նորարարական զարգացումներում առանձնահատուկ տեղ ու ռազմավարական նշանակություն ունի գրադարանային-տեղեկատվական և մատենագիտական բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստումը, որը հիմնականում իրականացվում է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ում: Բնական է, որ այդ ուղղությամբ տարվող ուսումնական գործընթացների արդյունավետությունը բարձրացնելու, տեսության և պրակտիկայի փոխադարձ կապերն էլ՝ ավելի ամրապնդելու առումով առաջնակարգ նշանակություն ունի մասնագիտական գրականության ստեղծումը:

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Սուքիասյանի հեղինակած «Գիրքը և գրադարանային-տեղեկատվական մշակույթը Արցախում» ուսումնական ձեռնարկը կոչված է լրացնելու ծրագրային գրականության այդ բացը՝ կազմելով «Գրադարանային տեղեկատվական մշակույթը ՀՀ-ում, Արցախում և հայկական սփյուռքում» դասավանդվող առարկայի մի մասը: Այն ստեղծվել է հեղինակի գիտամանկավարժական հարուստ փորձի և ուսումնասիրությունների շնորհիվ:

Ուսումնական ձեռնարկը բնորոշվում է մեթոդաբանական յուրահատուկ կառուցվածքով, արծարծած խնդիրների գիտական քննությամբ, պատմատեսական նյութերի, բազմանուն գործիչների ու գրադարան-մատենադարանների վերաբերյալ վիճակագրական հարուստ տվյալների համակողմանի վերլուծություններով, որոնք օգտվողների մեջ կձևավորվեն գիտենալու, կարողանալու և տիրապետելու նոր հմտություններ: Առաջին ենթաբաժնում հստակ պատկերա-

ցում է տրված գրադարանային-տեղեկատվական մշակույթի (ԳՏՄ) էության, առանձնահատկությունների և դրանում ձևավորված մի շարք հասկացությունների իմաստաբանական ու կիրառական նշանակության մասին:

Այնուհետև ժամանակագրական կարգով հեղինակն անդրադարձել է Արցախի պատմության մեջ ԳՏՄ-ի, հետևաբար՝ ընթերցանության զարգացման ընթացքին: Բազմաթիվ աղբյուրների հիշատակմամբ ու խոր վերլուծությամբ նա ներկայացրել է XIX դարում Շուշիում հիմնված գրադարանների դերը և կրթադաստիարակչական նշանակությունը հասարակական կյանքում:

«Գրատպության պատմական զարգացումը հայկական Արցախում (XIX-XXI դդ.)» ենթաբաժնում նշանակություն տալով Շուշիին՝ հայ մշակույթի ու քաղաքակրթության կենտրոններից մեկին, նշվում է նաև Երևանում (2010 թ.) և Շուշիում (2012 թ.) կայացած գիտաժողովների մասին, որոնք նվիրված էին հայկական տպագրության 500-ամյակին (էջ 21): Հետաքրքիր տեղեկություններ են տրվում Ստեփանակերտում՝ Արցախի ժուռնալիստների միության դահլիճում, 2018 թ. հուլիսի 12-ին կազմակերպված՝ Շուշիի գրատպության 190-ամյակին նվիրված միջոցառման մասին, որին մասնակցում էին գիտության, կրթության, մշակույթի և լրատվական ոլորտների ներկայացուցիչներ (էջ 21): Հեղինակի կարծիքով, Հայկական գրատպության 500-ամյակի՝ որպես միջազգային հնչեղություն ստացած պատմամշակութային խոշոր իրադարձության մասին պետք է նշել նաև դպրոցական դասագրքերում:

Ձեռնարկում ծավալուն տեղ է հատկացված նաև Արցախում խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանների ԳՏՄ զարգացման հարցերի նորովի լուսաբանմանը՝ շրջանառության մեջ դնելով բազմաթիվ փաստական նյութեր և վիճակագրական տվյալներ, որոնք ուսուցողական կարևոր նշանակություն ունեն:

Արցախյան ազատագրական պատերազմի և հետպատերազմյան շրջանների գրադարանային գործին առնչվող տեղեկություններն ավելի են բարձրացնում գրքի ճանաչողական արժեքը, գրադարանային-մատենագիտական, վիճակագրական և համեմատական վերլուծություններով ցույց են տրվում XXI դ. առաջին տասնամյակներին Արցախում գործող Մեսրոպ Մաշտոցի և Հովհ. Թումանյանի անվան հանրապետական, Մուրացանի անվան քաղաքային, ինչպես նաև Շուշիի, Ասկերանի, Հադրութի, Մարտունու, Մարտակերտի և Բերձորի կենտրոնական գրադարանային-տեղեկատվական համակարգերի (տե՛ս կառուցվածքային գծապատկերը, էջ 47) զարգացման ու սպասարկման առանձնահատկությունները, ֆոնդերի քանակը (գրքեր, պարբերական հրատարակություններ և այլն): Այդ համատեքստում հեղինակն անդրադարձել է նաև բուհական և դպրոցական գրադարանների գործունեությանն ու գործա-

ռույթներին, Գանձասարի վանքին կից ստեղծված Մատենադարանին, որի դերն ու կարևոր նշանակությունը Արցախի նորագույն պատմության մեջ անգնահատելի է: Ի դեպ, Արցախի պետական համալսարանի գիտական գրադարանին նվիրված ենթաբաժնում բերված գրացանկից տեղեկանում ենք, որ գրադարանային ֆոնդում պահվում են նաև 1862-1921 թթ. հրատարակված հազվագյուտ գրքեր:

Կարևորելով Հայաստանի և Արցախի հանրապետություններում գրադարանային-տեղեկատվական գործի զարգացման ռազմավարության և կառավարման հարցերը, որոնք կարևոր են գիտակրթական ոլորտի և գրադարանային հանրության համար, Գ. Սուքիասյանը ներկայացրել է այդ հարցերի լուծման իր մեթոդաբանությունը (էջ 67-72), որը հայ գրադարանագիտական, մատենագիտական և գրքագիտական մտքի զարգացման գործում անվերապահորեն նոր մոտեցում է:

Գրքում մի առանձին բաժին է հատկացվել հայկական մատենադարանների ու տարատեսակ գրադարանների պատմությանն ու գործունեության դիտարկումներին (սկսած հեթանոսական դարաշրջանից)՝ տեղեկատվական աղբյուրների բազմազանությամբ և արդիական գնահատումներով հանդերձ:

Գրախոսվող ձեռնարկն աչքի է ընկնում արժեքավոր հետևություններով ու եզրահանգումներով, ինքնաստուգման հարցերով ու գործնական առաջադրանքների լայն ընդգրկումներով, օգտագործված հայալեզու և ռուսալեզու գրականության մատենագիտական ցանկերով, որոնցում քիչ չեն վաստակաշատ գիտնականի հրապարակումները:

Այս եզակի ուսումնասիրությունն ունի հայագիտական, ըստ հեղինակի՝ արցախագիտական և սփյուռքագիտական մեծ նշանակություն, որի միջոցով ընթերցողը հաղորդակից է դառնում հայ ժողովրդի՝ հազարամյակների մշակութային ժառանգությանը: Որպես ավարտ՝ արժե հիշատակել գրքի մասին Գագիկ Սուքիասյանի հետևյալ սահմանումը. «Գիրքը մարդկության պատմության, բոլոր գիտելիքների ու գիտությունների նյութականացված հիշողություն է՝ գրված քաղաքակրթության արյունով՝ թանաքով» (էջ 106):

ԱՐՄԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԳԵՎՈՐԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Երկերի ժողովածու, երկու հատորով, հ. 1, 644 էջ, հ. 2, 512 էջ, Երևան, «ՎՄՎ-Պրինտ» ՍՊԸ հրատ., 2019:



Այն արգասավոր գրական-ստեղծագործական ճանապարհը, որ անցել է բանաստեղծ, դրամատուրգ, բեմադրիչ Գևորգ Կարապետյանը՝ սկսյալ 70-ական թվականներից, վերջին շուրջ քառորդդարյա մեր գրականության պատմության մեջ ուշարժան է նոր մտածողության ձևավորման, բանաստեղծական խոսքի ու ոճավորումների, մտածելակերպի ընդլայնման առումով, և

ոչ միայն: Մանավանդ որ Գևորգ Կարապետյանը այդ տարիների սերնդի այն ներկայացուցիչներից էր, որոնք ուխտել էին ժամանակի գրական բարձրին համընթաց *չգնալու* իրենց հանդուգն կեցվածքը ներկայացնել թե՛ հրապարակային բանավեճերի միջոցով, թե՛ բանաստեղծական շարքերով կամ ժողովածուներով:

Առաջին՝ «Արև և հող» (1976) ժողովածուի հրատարակմամբ Գ. Կարապետյանը ներկայացրել է բանաստեղծական հոգևոր պոռթկումի մի այնպիսի *հայր*, որտեղ արդեն իսկ պարզորոշ նշմարելի էին նրա բանաստեղծական հետագա ճանապարհի ուրվագծերը, որոնք տարիներ անց սաղմնավորվեցին և «միս ու արյուն» առանձն կերպավորելով նրա՝ բանաստեղծի ապրումներն ու մտայնությունները՝ խիստ տարբեր այդ տարիների բանաստեղծների աշխարհընկալումներից:

Անցյալի հիշողությունների շրջաժիրը, ապրումները, անցյալից հորդահոսած զգայնությունների պոռթկուն ընթացքը, Երկիր-դրախտավայրի (Վան-Վասպուրական աշխարհի՝ իրեն «հալածող» տեսիլքներով) կորուստը Գևորգ Կարապետյանի ստեղծագործության մեջ խորությամբ միշտ առկա և զգայացունց պատկերներով էին տեսանելի՝ համեմված ներքին գրգիռներով՝ դրանցով իսկ ոգեղինացող «Գույների ձայն» (1981), «Սեր և գոյություն» (1988), «Քարե արծիվ» (1998), «Ռեքվիեմ դյուցազնական» (1999) և մնացյալ ժողովա-

ծունեքում, որոնք հրատարակվել են նրա կենդանության օրոք, բանաստեղծի ներքին դրամատիզմով հագեցած աշխարհի սերն ու գործվանքն են հաղորդում ընթերցողին, և սա ստեղծագործական ուրույն ճանապարհ անցած մտավորական – գեղագետին բնորոշող ամենաարժանահավատ փաստն է, իրողություն, որ ամփոփված է «Երկերի ժողովածուում»:

Առանձին-առանձին չխոսելով ժողովածուում հրատարակված բանաստեղծությունների, պոեմների, թարգմանությունների, պիեսների, հուշագրությունների տիպական, գեղարվեստական ուրույն արժեքի և խորհրդածությունների մղող առանձնահատկությունների մասին (այն, ինչ ըստ կարելվույն արել ենք մեր՝ «Բանաստեղծի ինքնապատում ըստ Գևորգ Կարապետյանի» առաջաբանում)՝ հպանցիկ անդրադառնանք նրա՝ մտավորականի հախուռն, ներքին ընդդիմություն ունեցող և արտաքին անիրավություններ չհանդուրժող կերպարին, դրանով իսկ ստեղծագործ նկարագրին, այն, ինչ «Երկերի ժողովածուի» երկրորդ հատորում չափազանց ճշգրիտ ու ինքնաբուխ դրսևորվել է ժամանակակիցների հուշապատումներում:

Բանաստեղծ լինելու «հանգամանքը» Գևորգ Կարապետյանին չէր կարող չօժտել դրամատուրգ ու բեմադրիչ լինելու նույնքան կարևոր և, ըստ էության, անհրաժեշտ «հանգամանքով»՝ իր բոլոր հուզական դրսևորումներով: Ինչ որ անհրաժեշտ է ներքին աշխարհ ունենալու և այդ աշխարհի պոռթկումներից *ծերբազադելու* համար, հատկապես իր տեսակի մտավորականի համար՝ թե՛ արվեստում և թե՛ առօրյայում, մանավանդ որ, իր պաշտելի Կոստան Զարյանի բնորոշմամբ, «Ես միշտ մենակ եմ եղել իմ ծանոթների շրջանում». այս տողերը ճշգրիտ բնորոշում են Գևորգ Կարապետյանին. նա նաև հավատալիորեն է եղել այս խոսքերի՝ բառի բովանդակային առումով: Այն մտավորականի, որը մշտապես «անպակաս» է եղել իր սերնդի ընկերախմբից՝ իհարկե, ուրույն տվայտանքներով, թե՛ անձնական կյանքում և թե՛ գրական միջավայրում, մանավանդ որ տարիներ անընդմեջ գրական չինովնիկական կարծրատիպերի նկատմամբ նրա անթաքույց վերաբերմունքը չեն հանդուրժել, և նա առավել ևս ձգտել է մեկուսի ապրելու իր բախտաբաժինը տնօրինելու «արվեստը»: Իսկ արվեստը Գևորգ Կարապետյանը յուրովի էր ընկալում և մեկնաբանում՝ հատկապես դրամատիկական ստեղծագործություններում, մասնավորապես, երբ պատմական իրողություններին էր *ականջալուր*: Այս դեպքում արդեն ներկայանալով առավել հախուռն կեցվածքով, մեր իրականության մեջ նկատվող ինչ-ինչ հոգեբանական նրբերանգներ *զուգահեռելով* անցյալի այս կամ այն շրջանի դեպքերի, դեմքերի հետ: Ընդհանրապես, բանաստեղծ և դրամատուրգ Գևորգ Կարապետյանի ստեղծագործությունների մտածողական ենթահողը, այլ խոսքով՝ ստեղծագործելու շարժառիթը եղել և մնում է Հայի նախաստեղծ,

անկորնչելի հոգեբանության մտակեցվածքի նկատմամբ նրա անպարագրելի սերն ու հավատը, առավել ևս, որ Վան-Վասպուրական աշխարհի արյան կանչին միշտ ունկնդիր՝ նա խորապես հավատացած էր, որ... վանեցիները սերվել են հին ուրարտական հայոց տիպարից: Ուրեմն Գ. Կարապետյանը յուրովի էր ընկալում, հավատում, համոզորեն ներկայացնում Հայ ոգու անխաթար շարունակականությունը, վերարթնացումը, և այս կերպ՝ ստեղծագործաբար ապրելը նրա համար հարկ էր հոգեկան:

Ժողովածուն այնքան ամբողջական չէր լինի, եթե երկրորդ հատորում չտպագրվեին հուշապատումները Կոստան Զարյանի, Վահրամ Փափազյանի, Հովհաննես Շիրազի չափազանց հետաքրքրաշարժ առօրյան լուսաբանող մի երիտասարդի կողմից, որին մեծանուն դեմքերը վստահության էին արժանացրել: Նրանցից յուրաքանչյուրի խոսքը, կենցաղային աննշան թվացող միջադեպը, ի վերջո, արվեստի, գրականության և ընդհանրապես հայաշխարհի մասին «հայտնած» ամեն լուր, դրվագ, երիտասարդ Գևորգի համար ուսանելի են եղել, իսկ այսօր՝ ուսանելի, խորհրդածությունների մղող նաև նոր սերնդի համար: Գ. Կարապետյանը, որ այդ ամենը «ամբարել է» իր մեջ, ապրել նրանց կողքին տարիներ անընդմեջ և, ի վերջո, «խիզախել» է գրառել – հրատարակել սկզբնապես առանձին գրքույկներով, դեռևս կենդանության օրոք: Եվ սա ոչ ավել, ոչ պակաս ողջամիտ «ծառայություն» է սերունդներին, որոնք դժբախտաբար չեն տեսել, չեն վայելել մեր մեծերի «կյանքային» արվեստը, ինչպիսին էին նրանք խորհրդային ժամանակներում:

Գևորգ Կարապետյանի «Երկերի ժողովածուն» հրատարակվեց իր ծննդյան 80-ամյակի առիթով: Նրա որդին՝ Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի Երևանյան գրասենյակի նախագահ Սամվել Կարապետյանը, անմիջապես նախաձեռնեց այս երկհատորյակի հրատարակումը՝ կարծես թե կանխագգալով, որ հրաժեշտ է տալու երկրային կյանքին՝ ցավ պատճառելով թե՛ մերձավորներին և թե՛ Հայրենիքի ներկայով ու ապագայով ապրողներին: Գևորգ Կարապետյանի «Երկերը» ասես իմ հոգեեղբայր Սամվելի հայտնագործած և կյանքի կոչած ամենավերջին հուշարձանն է:

ԱՐԹՈՒՐ ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. ԱԿԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ



Լրացավ ականավոր գիտնական և հասարակական գործիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ նախագահի մրցանակակիր Նիկոլայ Հովհաննիսյանի ծննդյան 90 տարին:

Նա ծնվել է 1930 թ. հունիսի 10-ին Լենինականում (ներկայիս Գյումրի): 1953 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, իսկ 1956 թ.՝ ասպիրանտուրան: 1968 թ. ստացել է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, իսկ 1971 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 2006 թ. ընտրվել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ:

Պրոֆ. Հովհաննիսյանը ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի և արդի հայ արևելագիտության հիմնադիրներից է: Նրա ջանքերով Հայաստանում հիմնադրվեց, կայացավ և արևելագիտության ոլորտում իր ուրույն տեղը գրավեց հայ արաբագիտությունը: Նա այսօր էլ ՀՀ-ում արաբագիտական

պատմագիտական դպրոցի կարևոր հիմնասյուներից է և ավելի քան քառասուն տարի (1962-2003 թթ.) գլխավորել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժինը: 1995-2006 թթ. պրոֆ. Հովհաննիսյանը զբաղեցրել է Արևելագիտության ինստիտուտի տնօրենի պաշտոնը: Գիտության զարգացման համար այդ դժվարին շրջանում նրան հաջողվեց ոչ միայն պահպանել հայ արևելագիտական դպրոցն ու դրա ձեռքբերումները, այլև այն համալրել երիտասարդ և խոստումնալից կադրերով, որոնք այսօր Արևելագիտության ինստիտուտի գիտական կորիզն են: Նրա ղեկավարման տարիներին Արևելագիտության ինստիտուտը դարձավ կարևոր գիտական կենտրոններից մեկը՝ իրականացնելով նաև ռազմավարական առաքելություն: 2003 թ. Նիկոլայ Հովհաննիսյանն ստանձնեց նաև ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղարի տեղակալի պարտականությունները: Զգալի է նրա դերը Արևելագիտության ինստիտուտում Արևելյան Ասիայի երկրների բաժնի (որն ավելի ուշ ընդլայնվեց և վերանվանվեց Միջազգային հարաբերությունների բաժին) կազմավորման և կայացման գործում:

Ն.Հովհաննիսյանը ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենի խորհրդական է և միաժամանակ Միջազգային հարաբերությունների բաժնի վարիչն է, իսկ 2007-2018 թթ. եղել է նաև ՀՀ պաշտպանության նախարարության Դրաստամատ Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի պետի խորհրդականը:

Վստահորեն կարող ենք փաստել, որ նաև պրոֆ. Հովհաննիսյանի բեղուն գիտական գործունեության շնորհիվ հայ արաբագիտությունը դարձել է համաշխարհային արաբագիտության կարևոր բաղադրիչը: Նրա ուսումնասիրությունները համալրում, լրացնում և հարստացնում են հայրենական և համաշխարհային արևելագիտության ձեռքբերումները:

Տասնյակ տարիներ ականավոր արևելագետ-միջազգայնագետի ուսումնասիրությունների կենտրոնում դրված են արաբական երկրների նորագույն պատմության, միջազգային և տարածաշրջանային հարաբերությունների, «քաղաքական իսլամի», հայ-արաբական, այդ թվում՝ միջպետական հարաբերությունների արդիական հիմնահարցերը: Նա առաջիններից էր, որ Խորհրդային Հայաստանում անդրադարձավ արաբական երկրների ազգային-ազատագրական շարժումների ուսումնասիրությանը և ընթերցողի սեղանին դրեց արժեքավոր մենագրական ուսումնասիրություններ՝ «Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում» (Երևան, 1963 թ., հայերեն. Բեյրութ, 1974 թ., արաբերեն), «Սիրիական անկախ հանրապետության ստեղծումը» (Մոսկվա, 1968 թ., ռուսերեն), «Ազգային-ազատագրական շարժումը Իրաքում» (Երևան,

1976 թ., ռուսերեն), «Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը (1975-1982 թթ.)», Երևան, 1982 թ. և այլն:

Պրոֆ. Հովհաննիսյանը ԽՍՀՄ-ում առաջիններից էր, որ միջարաբական հարաբերությունները սկսեց դիտարկել իբրև միջազգային հարաբերությունների ուսումնասիրության առանձին և կարևոր բաղադրիչ: Իր աշակերտների հետ նա սկսեց ուսումնասիրել այդ բարդ հիմնախնդիրը, որի արդյունքը դարձավ թեմատիկ առումով նրա եզակի մենագրությունը՝ «Իրաքի Հանրապետության հարաբերություններն Արաբական Արևելքի երկրների հետ» (Երևան, 1985 թ., ռուսերեն):

Ն. Հովհաննիսյանը լուրջ ներդրում է ունեցել նաև «քաղաքական իսլամի»՝ մասնավորապես «Իսլամի քաղաքականացման և քաղաքականության իսլամացման» հայեցակարգի մշակման գործում: Նրա ղեկավարությամբ հայ արաբագետները Խորհրդային Միությունում առաջիններից էին, որ իրենց ուսումնասիրություններում կենտրոնական տեղ հատկացրին իսլամի ակտիվացմանն ու դրա դրդապատճառների ուսումնասիրությանը. տպագրվեց «Իսլամն արդի Մերձավոր և Միջին Արևելքի երկրների քաղաքական կյանքում» կոլեկտիվ աշխատությունը (Активизация ислама: характер, специфика и последствия, – в кн. Ислам в политической жизни стран современного Ближнего и Среднего Востока, коллектив авторов, Ер., 1986).

Հաշվի առնելով նրա ծառայություններն իսլամագիտության բնագավառում՝ ԽՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտը 1985 թ. Ն. Հովհաննիսյանին նշանակեց Հայաստանում իսլամագիտական ուսումնասիրությունների համակարգող:

Ն. Հովհաննիսյանի ուսումնասիրություններում կարևոր տեղ է զբաղեցնում նրա «Արաբական երկրների պատմություն (VII դ. - 2005 թ.)» քառահատոր աշխատությունը¹, որը բացառիկ է իր նշանակությամբ: Պատահական չէ, որ այս լայնածավալ աշխատանքը 2007 թ. արժանացավ ՀՀ նախագահի

¹ Նիկոլայ Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն. Արաբները VII դարից մինչև 1516 թ., հ. I, Երևան, 2003, 418 էջ, Արաբական երկրների պատմություն. Օսմանյան տիրապետության շրջան. 1516-1918, հ. II, Երևան, 2004, 677 էջ, Արաբական երկրների պատմություն. Անկախության և ինքնիշխանության դարաշրջան. 1918-2005 թթ., Ալժիր, ԱՄԷ, Բահրեյն, Եգիպտոս, Եմեն, Թունիս, Իրաք, Լիբանան, Լիբիա, Կատար, հ. III, Երևան, 2006, 840 էջ, Արաբական երկրների պատմություն. Անկախության և ինքնիշխանության դարաշրջան. 1918-2005 թթ., Հորդանան, Մավրիտանիա, Մարոկկո, Պաղեստինի Ինքնավարություն, Սաուդյան Արաբիա, Սիրիա, Սուդան, Քուվեյթ, Օման, հ. IV, Երևան, 2007, 767 էջ:

մրցանակի, իսկ 2011 թ. թարգմանվեց արաբերեն և հրատարակվեց Հալե-պում՝ իր տեղը գրավելով նաև արաբալեզու պատմագրության մեջ:

Ն. Հովհաննիսյանի ուսումնասիրությունների շրջանակից դուրս չեն մնացել նաև էթնոքաղաքական հակամարտությունները, այդ թվում՝ Ղարաբաղյան հիմնախնդիրը, ինչպես՝ «Ղարաբաղյան հիմնախնդիրը. Անկախության և ազատության փշե ճանապարհը» (Երևան, Վենետիկ՝ անգլերեն, Հոմ՝ իտալերեն), ԱՄՆ-ում՝ Մերիլենդի համալսարանում հրատարակված «Էթնոքաղաքական առճակատումներն Անդրկովկասում. նրանց արմատները և լուծումները» հետազոտությունները և այլն:

Պրոֆ. Հովհաննիսյանի գիտական հետաքրքրությունների շարքում հատուկ տեղ է զբաղեցնում Հայոց ցեղասպանության հայեցակարգային հիմնախնդիրների ուսումնասիրությունը, որին նվիրված է հետազոտությունների մի ամբողջ շարք: Այդ տեսանկյունից կարելի է առանձնացնել «Հայոց ցեղասպանություն. հայասպանությունը որպես ամենագենոցիդային գենոցիդ. Աշխարհի տասը լեզուներով՝ անգլերեն, գերմաներեն, ռուսերեն, ֆրանսերեն, թուրքերեն, հունգարերեն, ճապոներեն, հայերեն, արաբերեն, պարսկերեն», բազմապլանային հետազոտությունը, որին ավելի ուշ ավելացան նաև կորեերենով և ռումիներենով հրատարակությունները: Այս հիմնարար աշխատանքն արժանացել է ՀՀ մշակույթի նախարարության առաջին կարգի դիպլոմի: Ն. Հովհաննիսյանի ջանքերով միջազգային լայն տարածում է ստացել «Արմենոցիդ» եզրը՝ որպես «Հայասպանության» հոմանիշ (Նիկոլայ Հովհաննիսյան, Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է, Երևան, «Ձանգակ-97», 2010, 263 էջ): Պրոֆ. Հովհաննիսյանի հրատարակած աշխատությունների թիվը 563 է, որից ավելի քան 87-ը մենագրական ուսումնասիրություններ են:

Ականավոր գիտնականի ակտիվ ղեկավարությամբ և մասնակցությամբ Արևելագիտության ինստիտուտում ձևավորվեց արաբագիտական տարբեր գիտաժողովներ անցկացնելու ավանդույթը: Մասնավորապես առանձնանում է 1985 թ. Երևանում անցկացված խորհրդային արաբագետների 4-րդ համամիութենական համաժողովը՝ Արաբական երկրների ժամանակակից քաղաքական և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները խորագրով, որին մասնակցում էին Խորհրդային Միության մի շարք առաջատար արաբագետներ (Ե. Լեբեդև, Ն. Հովհաննիսյան, Ռ. Անդրեասյան, Օ. Կաջայա, Գ. Միրսկի, Է. Փիր-Բուդաղովա, Ե. Պիրլին և այլք): Այն խորհրդային արաբագետների վերջին գիտաժողովն էր, որի զեկուցումները տպագրվել են Երևանում 1988 թ. (Изучение новой и новейшей истории арабских стран между III и IV Всесоюзными конференциями арабистов (1969-1985 гг.) – в кн. Современные политические и социально-экономические проблемы арабских стран, I, Ереван, 1988): Գի-

տաժողովի ավարտին մասնակիցների ընդունած որոշման մեջ ամրագրված է. «Գիտաժողովը փաստում է, որ Խորհրդային Հայաստանի մայրաքաղաք Երևանում բազմիցս կազմակերպվող արաբագիտական տարբեր գիտաժողովների անցկացումը վկայում է, որ Հայաստանում գոյություն ունի արաբագիտական բարձր մակարդակի դպրոց, ինչպես նաև աղբյուրագիտական համապատասխան հենք և բարձրորակ կադրեր, որը բացատրվում է ինչպես հանրապետությունում արևելագիտության ընդհանուր զարգացվածությամբ, այնպես էլ հայ-արաբական տարաբնույթ պատմական և մշակութային կապերի առկայությամբ»:

2016 թ. հոկտեմբերի 18-19-ը Կահիրեի համալսարանի Հումանիտար գիտությունների ֆակուլտետը և նրա կազմում ընդգրկված Հայագիտական հետազոտությունների կենտրոնը կազմակերպել էին կենտրոնի վեցերորդ միջազգային գիտաժողովը, որի ընթացքում հատուկ զեկուցում հնչեց՝ նվիրված պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի գիտական գործունեությանն ու գիտական վաստակի գնահատմանը, նրա բացառիկ ներդրմանն արաբագիտության և լայն առումով արևելագիտության զարգացման գործում: «Նիկոլայ Հովհաննիսյանի գիտնականը» խորագրով զեկուցմամբ հանդես եկավ Հայագիտական հետազոտությունների կենտրոնի ղեկավարներից դոկտոր, պրոֆեսոր Մահմուդ Ալավին, որն իր զեկուցում նշեց. «Նիկոլայ Հովհաննիսյանը պատմաբան-գիտնական է, որ գրել է հանրագիտարանային նշանակություն ունեցող արաբական երկրների պատմության քառահատորյակը: Այս ուսումնասիրությունը խորքային վերլուծություն է, որն ընթերցողին բազմատեսակ և լայն գիտելիքներ ու տեղեկություններ է հաղորդում արաբական երկրների պատմության մասին՝ սկսած ամենավաղ շրջանից մինչև քսաներորդ դարն ընկած ժամանակահատվածը: Այդ մեծանուն գիտնականն արաբագիտության ոլորտում հեղինակել է մոտավորապես հինգ հարյուր գիրք և աշխատասիրություն, որոնք տպագրվել են նաև արաբական և եվրոպական երկրներում: Նիկոլայ Հովհաննիսյանը մեծ մասնագետ է և լայն համբավ ունի արևելագիտության ոլորտում: Նա Հայաստանում արաբագիտության հիմնադիրն է և քառասուն տարուց ավելի մեծ նվիրումով ղեկավարել է այդ ոլորտը: Նիկոլայ Հովհաննիսյանը նաև 2007 թ. Կահիրեի համալսարանի հումանիտար գիտությունների ֆակուլտետում ստեղծված հայագիտական հետազոտությունների կենտրոնի հիմնադիրներից է»:

Վաստակաշատ գիտնականի գիտական ղեկավարությամբ ավելի քան 50 պատմաբաններ պաշտպանել են թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ, այդ թվում՝ Սիրիայից, Եգիպտոսից, Լիբանանից, Հորդանանից, Իրանից, Վրաստանից, Ռուսաստանից և արտասահմանյան այլ

երկրներից: Մեծ է նրա դերն արաբագետների մի քանի սերունդների պատրաստման գործում: Ն. Հովհաննիսյանի աշակերտներից շատերն այսօր իրենց աշխատանքն են շարունակում նաև ՀՀ պետական մարմիններում՝ մասնավորապես արտաքին գործերի նախարարությունում և այլ դիվանագիտական հաստատություններում: Նրանց գիտելիքներն ու փորձը մեծապես օգտագործվում են պետական տարբեր մարմիններում:

Զգալի է Նիկոլայ Հովհաննիսյանի ներդրումը նաև հասարակական ոլորտում: Նա զբաղեցրել է խորհրդա-արաբական բարեկամության և մշակութային կապերի ասոցիացիայի փոխնախագահի պաշտոնը, եղել է Ասիայի և Աֆրիկայի համերաշխության խորհրդային կոմիտեի և նրա վարչության անդամ, Հայ-արաբական բարեկամության ընկերության նախագահ, «ԽՍՀՄ-Իրաք» բարեկամության ընկերության փոխնախագահ, «ԽՍՀՄ-Լիբանան», «ԽՍՀՄ-ԵժԴՀ» բարեկամության ընկերությունների վարչությունների անդամ և այլն: 1975 թ. Լիբանանում բռնկված երկրորդ քաղաքացիական պատերազմի տարիներին, երբ լիբանանահայ համայնքը կանգնած էր լուրջ մարտահրավերների առջև, պրոֆ. Հովհաննիսյանը խորհրդային Հայաստանից Լիբանան մեկնած պատվիրակության կազմում ակտիվ դերակատարում է ունեցել համայնքին ցուցաբերած աջակցության կազմակերպման և դրա գոյության համար բարենպաստ քաղաքական մթնոլորտի ձևավորման գործում: Այս կապակցությամբ կարելի է նշել ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար (1974-1988 թթ.) Կարեն Դեմիրճյանի անտիպ գրառումներում Ն. Հովհաննիսյանին նվիրված հատվածը: Կարեն Դեմիրճյանը նշում է. «Ն. Հովհաննիսյանին մենք գործողեցինք Լիբանան (այդ պատրվակի տակ նա պետք է այցելեր նաև Մերձավոր Արևելքի այլ երկրներ) ավելի լայն շրջանակների խնդիրներ լուծելու համար (օգտագործելով նրա լայն կապերն այդ ռեգիոնի շատ հասարակական գործիչների հետ): Այնպես որ նա պատվիրակության կազմում ընդգրկված էր հատուկ նպատակների համար: Եվ ի պատիվ իրեն պետք է ասել, որ նա հենց հատուկ առաջադրանքները կատարեց բավական հաջող: Մեզ, Հայաստանի ղեկավարությանը, շատ էր հետաքրքրում նաև Խոմենյիի վերաբերմունքը հայերի նկատմամբ: Ն. Հովհաննիսյանը, իրոք, լուրջ աշխատանք տանելով Իրանի տարբեր շրջանակների (հասարակական գործիչների) հետ, մեզ հաղորդեց, որ այաթոլլահ Խոմենյին կվարի հայանպաստ քաղաքականություն: Ն. Հովհաննիսյանը մեր իսկ առաջադրանքով շոշափել է նաև գազի մատակարարման հարցը և ստացել դրական պատասխան՝ 1979 թ. Հայաստան գազ մղելու մասին»:

Կառավարական պաշտոնական պատվիրակությունների կազմում պրոֆ. Ն. Հովհաննիսյանն այցելել է Լիբանան, Սիրիա, Իրաք, Հորդանան, Լիբիա,

Հնդկաստան, Չինաստան և այլ երկրներ, մասնակցել Իրաքի նախագահ Ահմադ Հասան Ալ-Բաքրի, Սիրիայի նախագահ Հաֆիզ Ասադի, Լիբանանի նախագահ Սուլեյման Ֆրանժիեի և վարչապետ Ռաշիդ Սոլիի, Պաղեստինի ազատագրության կազմակերպության ղեկավար Յասիր Արաֆաթի, Իրանի Իսլամական Հանրապետության պաշտպանության նախարար և Հեղափոխական խորհրդի նախագահ, այաթոլլահ Խոմեյնիի հատուկ ներկայացուցիչ Մուստաֆա Չամրանի և այլ երկրների բարձրաստիճան պետական այրերի հետ բանակցություններին:

Պրոֆ. Հովհաննիսյանն արտասահմանյան մի շարք ակադեմիաների և գիտական ընկերությունների անդամ է, այդ թվում՝ Փարիզի «Արարատ» միջազգային ակադեմիայի, Նյու Յորքի գիտությունների ակադեմիայի, Գերմանիայի Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի, Մոսկվայի Ազգային անվտանգության հիմնախնդիրների գիտությունների միջազգային ակադեմիայի, Աշխարհի ժողովուրդների հոգևոր միասնության միջազգային ակադեմիայի (Մոսկվա), Սիրիայի արաբական գիտության պատմության ընկերության, ԱՄՆ-ի Ազգային աշխարհագրական ընկերության, Ցեղասպանագիտության միջազգային ասոցիացիայի և այլն: 1989 թ. Բրիտանական ակադեմիայի հրավերով նա գիտական ուսումնասիրություններ է իրականացրել Լոնդոնի, Օքսֆորդի և Էդինբուրգի համալսարաններում, Ֆուլբրայթի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 1993-1994 թթ. գիտահետազոտական աշխատանքներ է կատարել ԱՄՆ-ի Ջորջ Վաշինգտոնի համալսարանում, իսկ 1995 թ.՝ Մերիլենդի համալսարանում, ապա նաև Սիրիայի, Լիբանանի, Եգիպտոսի և Իրաքի գիտական հաստատություններում:

Պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը պարգևատրվել է Մովսես Խորենացու, ՀՀ պաշտպանության նախարարության «Սպարապետ Վազգեն Սարգսյան» և «Հայկական զինված ուժեր. 1992-2012», «Բարեկամության բնագավառում ներդրման համար» (Մոսկվա) մեդալներով, ՀՀ կառավարության «Հայոց Մեծ եղեռն» ոսկեզօծ մեդալով, Ֆրիտյոֆ Նանսեն հուշամեդալով, ԼՂՀ «Ղարաբաղյան շարժում» մեդալով, ՀՀ ԳԱԱ գովեստագրով, ՀՀ Ազգային ժողովի նախագահի պատվոգրով, «Հայաստան-Եգիպտոս. Դիվանագիտական հարաբերություններ. 15 տարի. Բարեկամություն և Համագործակցություն» մեդալով: 2015 թ. Արևելագիտության ինստիտուտը Ն. Հովհաննիսյանին շնորհեց շնորհակալագիր՝ ընդգծելով վերջինիս ներդրումը համայն աշխարհում հայրենական արևելագիտության մասնագիտական համբավի տարածման գործում: 2015 թ. հոկտեմբերի 28-ին ծննդյան 85-ամյակի կապակցությամբ և ԼՂՀ մատուցած ծառայությունների համար գիտնականը պարգևատրվեց «Երախտագիտություն» մեդալով: 2016 թ. հունվարի 23-ին «Հայրենիքին մատուցած ծա-

ռայությունների համար» պրոֆեսորը պարգևատրվեց նաև 2-րդ աստիճանի մեդալով:

Քեմբրիջի (Անգլիա) Միջազգային կենսագրական կենտրոնը հայ մեծանուն գիտնականին 2004 թ. հռչակել է «Աշխարհի առաջատար գիտնական», 2005-ին՝ ճանաչել «XXI դարի ականավոր գիտնական», իսկ 2009 թ. ներառել «100 բարձրակարգ գիտնականների» ցանկում:

Շնորհավորում ենք պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանին ծննդյան 90-ամյակի կապակցությամբ, ցանկանում քաջառողջություն և գիտական նորանոր ձեռքբերումներ, որոնք կհարստացնեն ու կհամալրեն հայրենական արևելագիտության նվաճումները:

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ նախագահ


ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն

**ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՆԽՈՆՋ ՏԱՐԵԳԻՐԸ
(Կլիմենտ Հարությունյանի 80-ամյակի առթիվ)**



Լրացավ Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության պատմության հիմնահարցի լուսաբանման նվիրյալ տարեգիր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կլիմենտ Ամասիայի Հարությունյանի ծննդյան 80-ամյակը:

Կ. Հարությունյանը ծնվել է 1940 թ. մայիսի 1-ին Սյունիքի մարզի Կապան քաղաքում՝ շիկահողցի ծնողների ընտանիքում: Հայրը՝ Ամասիա Ռուբենի Հարությունյանը, մինչև պատերազմը աշխատել է Շիկահող գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես տնօրեն, կամավոր մեկնել ռազմաճակատ և 1942-1943 թթ. Հայկական 89-րդ հրաձգային Թամանյան դիվիզիայի 390-րդ հրաձգային գնդի շարքերում ակտիվորեն մասնակցել Կովկասի ճակատամարտին, ծանր վիրավորվել, պարգևատրվել Կարմիր աստղի և Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշաններով, որպես 2-րդ կարգի հաշմանդամ զորացրվել բանակից: Վերադառնալով հայրենի Կապան՝ աշխատել է ՀԼԿԵՄ շրջկոմի 1-ին քարտուղար, կոմունալ բաժնի վարիչ, միաժամանակ հեռակա կարգով ավարտել է Երևանի պետական մանկավարժական ինստիտուտի պատմության, ապա Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետները, Կապանում կառուցել տարածաշրջանի խոշորագույն տրիկոտաժի

Ֆաբրիկան, դարձել նրա հիմնադիր տնօրենը: Թոշակի անցնելուց հետո մինչև մահը՝ 2006 թ. սեպտեմբերի 3-ը, աշխատել է շրջանի Հայրենական մեծ պատերազմի վետերանների միությունում: Մայրը՝ Բարուշկա Փեդրովի Մինասյան-Հարությունյանը, պատերազմի նախօրյակին ավարտել էր Կապանի բժշկական տեխնիկումը, աշխատել Շիկահողի ենթաշրջանային հիվանդանոցում, ապա Կապանի քաղաքային պոլիկլինիկայում՝ որպես բուժքույր: Ավագ որդուն՝ Կլիմենտին, դաստիարակում էր Հայրենական մեծ պատերազմին սկզբից մինչև վերջ մասնակցած իր եղբայրների՝ մայոր Անդրանիկի, փոխգնդապետ Օնիկի, Նովոռոսիյսկի «Փոքր հողում» («Малая земля») հերոսաբար զոհված կրտսեր եղբոր՝ Պարզևի, Չեխոսլովակիայում զոհված հորեղբոր՝ մայոր Շմավոն Մինասյանի ոգով: Պատահական չէր, որ հետագայում ավագ որդին ողջ կյանքը նվիրաբերեց Հայրենական մեծ պատերազմում հայ ժողովրդի զավակների ներդրած ավանդի հետազոտման ծանր ու դժվարին, բայց շատ շնորհակալ աշխատանքին և դարձավ այդ հիմնահարցի լուսաբանման նվիրյալ մասնագետը Հայաստանում:

Կ. Հարությունյանը 1947-1957 թթ. սովորել և ավարտել է Կապանի թիվ 2 միջնակարգ դպրոցը: Դպրոցական տարիներին մասնակցել է քաղաքային գրադարանին կից գրական խմբակի պարապմունքներին, պատմվածքներ ու բանաստեղծություններ տպագրել շրջանային «Պղնձի համար» թերթում, «Ղափան» գրական ամսանախում, ակտիվ թղթակցել «Պիոներ» ամսագրին և «Պիոներ կանչ» թերթին: 1961-1966 թթ. Կ.Ա. Հարությունյանը սովորել և գերազանց գնահատականներով ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: Ուսանողական տարիներին Կ. Հարությունյանն ակտիվորեն թղթակցել է ինստիտուտի «Մանկավարժ» թերթին, ղեկավարել Հայոց պատմության գիտական ընկերության աշխատանքները, հանդես եկել «Մեծ եղեռնը», «Հայ կամավորական շարժումը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին» հետաքրքիր, այն ժամանակվա համար շատ համարձակ զեկուցումներով, 1966 թ. ապրիլի 25-28-ին մասնակցել է Բաթումում կայացած Անդրկովկասյան հանրապետությունների մանկավարժական ինստիտուտների ուսանողական գիտական նստաշրջանին, կարդացել «Արևմտահայերի ազգային-ազատագրական շարժումը 1914-1916 թթ.» զեկուցումը: 1966 թ. սեպտեմբեր – 1968 թ. դեկտեմբեր ամիսներին Կ. Հարությունյանն աշխատել է Հայաստանի նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվում՝ որպես կրտսեր, ապա ավագ գիտաշխատող, ձեռք բերել արխիվային փաստաթղթերի հետ աշխատելու փորձ, «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսում տպագրել իր առաջին գիտական հոդվածները: Այսպես, օրինակ, «Բանբերի» 1967 թ. 3-րդ

և 1968 թ. 1-ին համարներում լույս են տեսել նրա «Հարստանում են պետական կենտրոնական արխիվների ֆոնդերը» և «Ազնավությանների անձնական գործերը» հոդվածները: Արխիվում աշխատելու տարիները զգալի չափով նպաստել են ապագա պատմաբան-գիտնականի ձևավորման և կայացման գործընթացին: 1968 թ. դեկտեմբերին Կ. Հարությունյանն ընդունվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ասպիրանտուրան (արտադրությունից կտրված) և 1971 թ. ավարտել այն: Ավարտելուց հետո մինչև այսօր նա աշխատում է նույն ինստիտուտի նորագույն պատմության բաժնում՝ սկզբում որպես կրտսեր, ապա ավագ և առաջատար գիտաշխատող, իսկ 1994 թ. հունիսից՝ «Հայ ժողովրդի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմներին» բաժնի վարիչ, այնուհետև՝ «Հայ զինվորականության պատմությունը» թեմատիկ խմբի ղեկավար, 2015 թ.՝ գլխավոր գիտական աշխատող: 1979 թ. ստացել է պատմական գիտությունների թեկնածուի, իսկ 1994-ին՝ դոկտորի գիտական աստիճան: Նա մասնագիտացել է Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմներին հայ ժողովրդի մասնակցության, հայկական ազգային զորամիավորումների և զինվորական մամուլի պատմության, հայ մարշալների, ծովակալների և Հայկական բանակի գեներալների կենսագրությունների անհայտ էջերի լուսաբանման հիմնահարցերում: Գիտնականն առ այսօր հրատարակել է 35 մենագրություն, համահեղինակ է 14 այլ գրքերի, մասնակցել է արխիվային փաստաթղթերի ու նյութերի 4 ժողովածուի և «Հուշամատյան» հիմնական քառահատորյակի կազմման և խմբագրման աշխատանքներին, տպագրել ավելի քան 100 գիտական, 110 թերթային հոդվածներ, միջազգային, հանրապետական և ակադեմիական գիտաժողովներում հանդես եկել 60-ից ավելի զեկուցումներով, տպագրել Հայրենական մեծ պատերազմի հայ ժողովրդի մասնակցության հիմնահարցին վերաբերող 3 լայնածավալ պլակատ, որոնք բաժանվել են հանրապետության բոլոր դպրոցներին ու զորամասերին, ուղարկվել Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Վոլգոգրադ, Մինսկ և այլ քաղաքներ: Գրքերի և հոդվածների մի զգալի մասը հրատարակվել է նաև ռուսերեն: Բացի վերոհիշյալից՝ հայերեն և ռուսերեն կազմել է քարտեզներ՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցությանը, որոնք տեղ են գտել «Հայաստանի ազգային ատլաս» (հ. Բ, Ե., 2008) և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ատլաս» (Ե., 2009) հիմնական ատլասներում: Կ. Հարությունյանը խմբագրել է 32 և գրախոսել 15 գիրք: Նրա ղեկավարությամբ պատրաստվել է 4 թեկնածուական՝ ընդդիմախոսությամբ, պաշտպանվել 5 ատենախոսություն: Գիտահետազոտական աշխատանքի և գիտական կադրեր պատրաստելուն զուգընթաց՝ տարիներ շարունակ զբաղվել է նաև մանկավար-

ժական աշխատանքով, մի շարք բուհերում (Երևանի պետական համալսարանի Իջևանի բաժանմունք, Գավառի պետական համալսարան, Դավիթ Անհաղթ համալսարան) եղել է պետական քննական հանձնաժողովների նախագահ: Կ. Հարությունյանը ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի անդամ է, երկար ժամանակ ինստիտուտի արհկոմի նախագահն է:

Կ. Հարությունյանի հիմնական աշխատություններից է 2002 թ. լույս տեսած «Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ.», որտեղ առաջին անգամ հայ պատմագրության մեջ լուսաբանվել է հայկական զինուժի պատմությունը: Վաստակաշատ պատմաբանի գործերից է նաև «Հայ ժողովրդի մասնակցությունը Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմին (1941-1945 թթ.)» ռուսերեն մենագրությունը (2004 թ.), որտեղ ՌԴ պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվից (Մոսկվայի մարզ, ք. Պողոտսկ), ՌԴ ՊՆ ռազմածովային նավատորմի կենտրոնական արխիվից (Լենինգրադի մարզ, ք. Գատչինա), ՌԴ ռազմապատմական պետական կենտրոնի արխիվից (Մոսկվա) և այլ արխիվներից հայտնաբերած նորահայտ վավերագրերի, համապատասխան մասնագիտական գրականության ու մամուլի տվյալների հիման վրա հանգամանորեն ու նորովի բացահայտվել է հայ ռազմիկների դերը պատերազմի գլխավոր ճակատամարտերում տարած հաղթանակում, ցույց է տրվել թիկունքի աշխատողների հերոսական աշխատանքը, հայ պարտիզանների ու սփյուռքահայերի ներդրումը ֆաշիզմի ջախջախման գործում: Գրքի հավելվածում տրվել են Խորհրդային Միության հայ հերոսների, Փառքի շքանշանի լրիվ ասպետների, մարշալների, գեներալների ու ծովակալների ճշգրտված ցուցակները: Գիրքը լրացումներով հրատարակվել է նաև 2018 թ. (ռուսերեն, ծավալը 768 էջ+96 էջ լուսանկարներ, ֆորմատը 70x100/16):

Վաստակաշատ գիտնականի գրչին են պատկանում նաև մարշալներ Ի.Ք. Բաղդամյանի, Հ.Խ. Բաբաջանյանի, Ս.Ա. Խուդյակովի (Ա.Ա. Խանփեդյանց), Ս.Ք. Ագանովի, Խորհրդային Միության նավատորմի ծովակալ Ի.Ս. Իսակովի մասին ռուսերեն մենագրությունները, որոնք շարադրված են արխիվային նորահայտ փաստաթղթերի հիման վրա և զգալի ներդրում են անվանի զորավարների կենսագրությունները լուսաբանելու գործում:

Կ. Հարությունյանի ուսումնասիրության ոլորտում հատուկ տեղ են գրավում Ստալինգրադի, Լենինգրադի, Կուրսկի, Մոսկվայի, Ղրիմի Բելոռուսիայի, Չեխոսլովակիայի, Հունգարիայի և Ավստրիայի համար մղված մարտերին հայ ժողովրդի զավակների մասնակցության հիմնահարցերը, որոնք հայերեն և ռուսերեն հրատարակվել են առանձին գրքերով:

Պատմագիտության դոկտորի գրչին են պատկանում «Գրիգոր Արտեմի Հարությունյանի կյանքն ու գործունեությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945)» մենագրությունը, որտեղ լուսաբանվել է Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Արտեմի Հարությունյանի գործունեությունը պատերազմի ծանր տարիներին:

Պատմաբանն ուսումնասիրել է նաև հայ պատմագրության տեսադաշտից դուրս մնացած Խորհրդա-ֆիննական պատերազմին հայերի մասնակցության թեման և 2008 թ. հրատարակել «Հայ ռազմիկների մասնակցությունը Խորհրդա-ֆիննական պատերազմին (30.11.1939-13.03.1940)» մենագրությունը:

Վաստակաշատ պատմաբանի տեսադաշտից չեն վրիպել նաև Հայրենական մեծ պատերազմին Արցախի, Զապախքի և Սյունիքի հայության մասնակցության հարցերը, որոնք առանձին գրքով հրատարակվել են 2009, 2014 և 2017 թթ.:

Կ. Հարությունյանն զգալի ավանդ ունի նաև Հայկական 76-րդ և 89-րդ հրաձգային դիվիզիաների պատմության և մարշալ Բաղրամյանի գործունեությունը լուսաբանող արխիվային փաստաթղթերի ու ժողովածուների կազմման գործում: Բացի այդ, նա գրել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի՝ 2010 թ. հրատարակած «Հայոց պատմություն» 4-րդ հատորի 1-ին գրքի 9-րդ գլխի 6-րդ ու ԵՊՀ-ի՝ 2012 թ. հրատարակած «Հայոց պատմության» դասագրքի 2-րդ գլխի 5-րդ ենթաբաժինները:

Մեծանուն գիտնականն անդրադարձել է նաև Հայաստանի երկրորդ Հանրապետության զինված ուժերի պատմությանը: 2007 թ. հրատարակել է «Գնենրալ-մայոր Վլադիմիր Ասատուրի Հայրապետյան» աշխատանքը, որտեղ լուսաբանել է ՀՀ զինված ուժերի հիմնադիրներից մեկի՝ ՀՀ ՊՆ հրթիռահրետանային զորքերի վարչության հիմնադիր, առաջին պետ (1992-2003 թթ.), այնուհետև՝ ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր բարձրագույն սպայական հանձնաժողովի նախագահ, գնենրալ-մայոր Վ.Ա. Հայրապետյանի կենսագրությունը, ԽՍՀՄ, ապա ՀՀ զինված ուժերում նրա գործունեությունը, հրետանու գործի հմուտ մասնագետ հրամանատարի դերը Հայկական բանակի հրետանային զորքերի կազմավորման ու Արցախյան ազատագրական պատերազմում մարտական կիրառման, հրետանային կադրերի պատրաստման բնագավառում:

Կ. Հարությունյանը պ.գ.դ. Մարատ Սահակյանի հետ 1988 թ. հայերեն հրատարակել է «Նրանք մարտնչել են հանուն հայրենիքի» գիրքը, որտեղ առաջին անգամ լուսաբանվել են ՀԽՍՀ ԳԱ համակարգում աշխատող Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների ռազմաճակատային սխրանքներն ու աշխատանքային գործունեությունը: Այս գիրքը (որոշ լրացումներով

ռուսերեն հրատարակվել է 2001-ին՝ «Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի աշխատակիցների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941-1945)» վերնագրով:

Իր աշխատանքային գործունեության ընթացքում Կ. Հարությունյանը սերտորեն համագործակցում է նաև Բելառուսի և Ռուսաստանի իր գործընկերների հետ: Դրա շնորհիվ՝ 2010 թ. Մինսկում լույս է տեսել «Խորհրդային Միության հայ հերոսները Բելառուսի համար մղված մարտերում (1941-1944)» աշխատությունը՝ Բելառուսի ԳԱԱ պատմության ինստիտուտի ռազմական պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր Ա.Մ. Լիտվինի համահեղինակությամբ: 2019 թ. Մինսկում հրատարակվեց «Հայ ռազմիկները Բելառուսի համար մղված մարտերում (1941-1944 թթ.) ստվարաձավալ աշխատությունը (համահեղինակներ՝ Կ.Ա. Հարությունյան, Ա.Մ. Լիտվին, Ա.Վ. Խեչոյան, Ռ.Վ. Աթոյան, Ե.Գ. Վոլսկայա և Ե.Ա. Գուրինով): 2010 թ. Երևանում հրատարակված «Հայ ժողովրդի ավանդը Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում (1941-1945)» ռուսերեն աշխատության (Կ.Ա. Հարությունյան, Հ.Ռ. Պողոսյան) առաջաբանը գրել է ՌԴ ԳԱ պատմության ինստիտուտի ռազմական կենտրոնի վարիչ, ՌԴ ԳԱ ակադեմիկոս Գ.Ա. Կոմանյովը: Մինչ այդ՝ 2009 թ., Սանկտ Պետերբուրգում լույս է տեսել Կ. Հարությունյանի «Հայերը Լենինգրադի համար մղված մարտերում» ռուսերեն գրքույկը: Վերոհիշյալ բոլոր աշխատությունները գրված են հարուստ արխիվային նյութերի հիման վրա, որոնք ունեն աղբյուրագիտական կարևոր արժեք:

Կ. Հարությունյանը 2000 թ. մասնակցել է Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի, 2011-2015 թթ.՝ ՌԴ Կեմերովոյի մարզի Յուգրա քաղաքի համալսարանի ռազմապատմական միջազգային գիտաժողովների աշխատանքներին և տպագրվել համապատասխան ժողովածուներում:

Նա հայ այն եզակի պատմաբաններից է, որ, սկսած 1970 թ. մինչև 2015 թ., անընդմեջ աշխատել է Ռուսաստանի ռազմական և ծովային, Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Վոլգոգրադի, Կուրսկի, Բրյանսկի, Մինսկի, Բրեստի, Թբիլիսիի, Երևանի պետական կենտրոնական արխիվներում ու ռազմապատմական թանգարաններում, մասնակցել է ՌԴ նախագահի՝ 2012 թ. կազմակերպած «Մենք հաղթեցինք միասին» միջազգային ամենամյա համաժողովի աշխատանքներին, որոնք տեղի են ունենում ԱՊՀ տարբեր քաղաքներում (Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Վոլգոգրադ, Կուրսկ, Բրյանսկ, Մինսկ, Մախաչկալա, Տուապսե, Աստանա):

Վաստակաշատ պատմաբանի գիտահետազոտական 50 տարիների կատարած աշխատանքն ամփոփված է 2020 թ. մարտի վերջերին հրատարակված «Կենսամատենագիտություն» աշխատության մեջ, որտեղ, բացի կեն-

սագրական տվյալներից, տրված են նաև նրա մենագրությունների և գիտահրապարակախոսական աշխատանքների ցուցակները, հարազատների, աշխատանքային ընկերների և ստացած պարգևների լուսանկարները:

Գիտական բեղմնավոր և հայրենասնվեր աշխատանքի համար Կ. Հարությունյանը պարգևատրվել է «Մովսես Խորենացի», «Մարշալ Բաղրամյան», «Գարեգին Նժդեհ», «Վազգեն Սարգսյան», 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում տարած Հաղթանակի 65, 70 և 75-ամյակի, «Մ.Ա. Շոլոխովի 100-ամյակի», «Հունան Ավետիսյան» և այլ մեդալներով, ՀՀ ԳԱԱ գովեստագրով և վաստակագրով, ՌԴ ԳԱ Պատվավոր դիպլոմով, ԱՊՀ վետերանների միջազգային միության «Պատվո նշան» կրծքանշանով, ՀՀ պաշտպանության նախարար Դ. Տոնոյանի պատվոգրով և այլն:

Սրտանց շնորհավորելով ավագ գործընկերոջս՝ որին ճանաչում եմ ավելի քան 45 տարի, նրա ծննդյան 80-ամյակի և ավելի քան 50-ամյա գիտահետազոտական աշխատանքի հոբելյանի առթիվ ցանկանում եմ առողջություն, գիտական նորանոր նվաճումներ և ամենայն բարիք:

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

Հայերեն նյութերի բաժնի խմբագիրներ՝ **Մելանիա Միքայելյան**
Սեդա Քուփեյան
Ռուսերեն նյութերի բաժնի խմբագիր՝ **Գայանե Հարությունյան**

Редакторы армянского отдела – **Меланья Микаелян**
Седа Купелян
Редактор русского отдела – **Гаянэ Арутюнян**

Editors of Armenian part **Melania Mikaelyan**
Seda Kupelyan
Editor of Russian part **Gayane Harutyunyan**

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ **Արմինե Պետրոսյանի**
Компьютерный дизайн и пагинация – **Армине Петросян**
Computer design and pagination **Armine Petrosyan**

Հրատ. պատվեր N 1029
Ստորագրված է տպագրության 05.08.2020 թ.:
Տպագրական 20 մամուլ: Տպաքանակը՝ 200:
ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:
Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ:
Հեռ.՝ 581902:

Подписано к печати 05.08.2020 г.
20 печ. л. Тираж – 200. Типография НАН РА,
Ереван, пр. Маршала Баграмяна 24.
Адрес редакции: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24г
Тел. 581902

Signed for printing 05.08.2020
20 print. sheets. Printed copies – 200. NAS RA Press,
Yerevan, Marshal Baghramyan av. 24.
Editorial office address: 0019, Yerevan, Marshal Baghramyan av. 24c
Tel. 581902

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ <http://Iraber.sci.am>
Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ Iraber@sci.am
Официальный сайт журнала: <http://Iraber.sci.am>
Электронная почта журнала: Iraber@sci.am
Official site of the Journal: <http://Iraber.sci.am>
E.mail of the Journal: Iraber@sci.am